© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2007

Հայաստանի Հանրապետության

կենտրոնական բանկ

Տարեկան հաշվետվություն

2006

Տարեկան հաշվետվություն
2006

Ներկայացվում է
Հայաստանի Հանրապետության
Ազգային Ժողովին

ՀՀ ԿԲ նախագահ  Տ. Սարգսյան

Բովանդակություն

Ներածություն 7

1. Գնաճի հաշվետվություն 11
1.1. Գնաճի զարգացումներ 11
Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճ 11

1.2. Գնաճի գործոններ 15
Արտաքին միջավայր 15

Վճարային հաշվեկշիռ 19
Ընթացիկ հաշիվ 20
Կապիտալի և ֆինանսական հաշիվ 23

Տոկոսադրույքներ, փոխարժեք և դրամավարկային զարգացումներ 23
Տոկոսադրույքներ 23
Փոխարժեք 26
Դրամավարկային զարգացումներ 28

Համախառն պահանջարկ և առաջարկ 31
Համախառն պահանջարկ 31
Համախառն առաջարկ 34

Աշխատանքի շուկա 36

Ներմուծման գներ և արտադրողների գներ 36
Ներմուծման գներ 37
Տեղական արտադրանքի գներ 38

1.3. Մակրոտնտեսական կանխատեսումներ 40
Արտաքին միջավայրի զարգացումներ 40

Ներքին տնտեսության զարգացումներ 41
Համախառն առաջարկ 41
Համախառն պահանջարկ 42
Պետական պահանջարկ 42

Գնաճի կանխատեսումներ 42
Արտաքին միջավայր 42
Ներքին միջավայր 43

1.4. ՀՀ ԿԲ խորհրդի նիստերի արձանագրություններ 44

2. ՀՀ ֆինանսական կայունություն 53
2.1. Ֆինանսական կայունությունը մակրոտնտեսական միջավայրում 53
Իրական հատված 53
Հարկաբյուջետային հատված 55
Արտաքին հատված 56

2.2. ՀՀ ֆինանսական շուկայի կայունություն 59
Փողի և կապիտալի շուկաներ 59
Արժութային շուկա 60

2.3. ՀՀ ֆինանսական հաստատություններ 62
Բանկային համակարգը 2006 թվականին 62
Վարկային կազմակերպություններ 70
Ապահովագրական ընկերություններ 71
Արժեթղթերի շուկայի մասնակիցներ 72
Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետերը և արժութային դիլերներ 72
Ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ 73

2.4. Ֆինանսական կայունությունը ՀՀ ֆինանսական ենթակառույցներում 74
Վճարահաշվարկային համակարգ և իրավական դաշտ 74

3. Ֆինանսական ենթակառույցների զարգացումը 77
3.1. Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը 77
Անկանխիկ վճարումների խրախուսում 77
Վճարային համակարգերի հսկողություն 77
Վճարահաշվարկային ծառայություն մատուցող կազմակերպություններ 77
Արտարժութային և արժեթղթերի շուկայի գործառնությունների հաշվարկային ընթացակարգեր 78
ՀՀ վճարահաշվարկային բնագավառի հիմնական ցուցանիշներ 78
Էլեկտրոնային վճարումների համակարգ 79
Համախառն բոլթային վճարումների համակարգ 80
Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ 80
Պլաստիկ քարտերի շուկա 81
Միջազգային փոխանցումների համակարգեր ... 82

3.2. Կանխիկ դրամաշրջանառություն 84
Հնամաշ դրամանիշերի փոխարինում 86
Յուշադրամների թողարկում 86
Դրամանենգության դեմ պայքար 87

3.3. ՀՀ ֆինանսական համակարգի օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններ 88
Ֆինանսական համակարգի օրենսդրական դաշտի փոփոխություններ 88
Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ 94
Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի փոփոխություններ 95
Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտի փոփոխություններ 96
Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների կարգավորման դաշտի փոփոխություններ 97

3.4. Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար 98
Տեղեկությունների ստացում, վերլուծություն և տրամադրում 98
Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի բարեփոխումներ 98
Միջազգային համագործակցություն 99
Ներպետական համագործակցություն 99
Ուսուցում և վերապատրաստում 99

«Գերմանա-հայկական հիմնադրամ» ծրագրի կառավարման գրասենյակ 101

4. Կառավարում 103
4.1. Միջազգային պահուստների մակարդակը և կառավարումը 103
4.2. Կադրային քաղաքականություն 104

ՀՀ կենտրոնական բանկի կառուցվածքը 107

ՀՀ ԿԲ տարեկան ֆինանսական հաշվետվություն 109

Հավելված 157

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2006 թվականի հունվարին ՀՀ կենտրոնական բանկը հանդես եկավ հայտարարությամբ, ըստ որի՝ գործելով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի սահմաններում, 2006 թվականի հունվարի 1-ից ՀՀ կենտրոնական բանկը ընդունել է գնաճի կառավարման նոր մոտեցում՝ անցում կատարելով գնաճի նպատակադրման ռազմավարությանը:

Մինչ այդ կիրառվող փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարությունը ՀՀ ԿԲ-ն ընդունել էր 1994 թվականին, երբ, 1993 թվականի վերջին ազգային արժույթը ներդնելուց հետո, սկսել էր իրականացնել ինքնուրույն դրամավարկային քաղաքականություն: Սա ենթադրում էր վերջնական նպատակի սահմանում, այնուհետև, վերջնական նպատակին հասնելու համար, միջանկյալ նպատակի կամ որ նույնն է՝ անվանական խարսխի սահմանում: Վերջնական նպատակը գնաճն էր, միջանկյալը՝ տնտեսությունում փողի առաջարկը կամ զանգվածը, որը ԿԲ-ն կառավարել է գործառնական նպատակի՝ փողի բազայի միջոցով: Այսինքն՝ գործել է *փողի բազա - փողի զանգված - գնաճ* շղթան: Չնայած ԿԲ-ն վերջին տարիներին հասել է գնաճի նպատակային ցուցանիշին, փողի ագրեգատների նպատակադրման ռազմավարություն իրականացնելիս առկա են եղել հիմնախնդիրներ: Մասնավորապես, վերջին տարիներին անկայուն էր դարձել *փողի զանգված - գնաճ* կապը՝ պայմանավորված տնտեսությունում փողի պահանջարկի տատանողական վարքագծով, բարձր դոլարայնացման պայմաններում փողի զանգվածում կառուցվածքային փոփոխություններով, ինչպես նաև գնաճի վրա ոչ մոնետար գործոնների զգալի ազդեցությամբ (արտաքին ցնցումներ և այլն): Եվ քանի որ ԿԲ գլխավոր նպատակը գների կայունության ապահովումն է, որն օրենսդիրը «ՀՀ պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով ամրագրում է որպես գնաճի որոշակի մակարդակ, ապա վերոնշյալ կապի թուլացման պայմաններում ԿԲ-ն, նախապատվությունը տալով գնաճի նպատակային ցուցանիշին, դրամավարկային քաղաքականության իրականացման ժամանակ պարբերաբար վերանայել է փողի զանգվածի իր ծրագրած ցուցանիշը: Փաստորեն, փողի ագրեգատների անվանական խարիսխն արդյունավետ չէր ծառայում իր նպատակին, քանի որ սահմանափակված լինելով օրենսդրի՝ գնաճի որոշակի մակարդակի ապահովման պահանջով, ԿԲ-ն բազմիցս հարկադրված էր դիմելու հայեցողականության:

2006 թվականից անցնելով գնաճի նպատակադրման ռազմավարության, որի վերջնական նպատակը գնաճի նպատակային մակարդակն է, իսկ որպես անվանական խարիսխ է սահմանվում գնաճի կանխատեսված մակարդակը, ԿԲ-ն այլևս չի ուղղորդվում փողի ագրեգատների ցուցանիշով: Որպես գործառնական նպատակ՝ ընդունվում է կարճաժամկետ տոկոսադրույքը, սակայն, ֆինանսական կայունության ապահովման նկատառումներից ելնելով, ԿԲ-ն կիրառելու է նաև ծավալային կարգավորման մոտեցումներ: Գնաճի մոդելի միջոցով կանխատեսելով ապագա ժամանակահատվածի գնաճը, ԿԲ-ն գնահատում է նպատակային ցուցանիշից դրա շեղումը և քաղաքականությունը ուղղորդում նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղման վերացմանը: Գործում է *տոկոսադրույք - գնաճի կանխատեսված մակարդակ - գնաճ* շղթան: Նախկին ռազմավարության նկատմամբ գնաճի ուղղակի նպատակադրման հիմնական առավելությունն այն է, որ եթե առաջինի պարագայում գնաճը պայմանավորող գործոն էր համարվում միայն փողի զանգվածը, ապա երկրորդի դեպքում դիտարկվում է հավանական տարբեր ազդեցություններ ունեցող գործոնների լայն դաշտ՝ ներառյալ հասարակության սպասումները ապագայի վերաբերյալ:

Գնաճի նպատակադրման ռազմավարություն իրականացնելիս առավել կարևորվում է ԿԲ գործունեության հաշվետվելիությունն ու թափանցիկությունը: Այդ նպատակով ԿԲ-ն պարբերաբար կհրապարակի գնաճի կանխատեսված ցուցանիշը՝ Գնաճի հաշվետվությունների միջոցով, որոնք 2006 թվականից թողարկվում են եռամսյակային պարբերականությամբ («ՀՀ կենտրոնական բանկի բանբեր»)՝ ներկայացնելով քաղաքականության իրականացման ընթացքը: Այդպիսով, հասարակությունը կարող է հետևել ԿԲ գործունեությանը, իրականացված քաղաքականության և հատկապես արձանագրված շեղումների վերաբերյալ ստանալ բացատրություններ: Այս գործընթացը նպատակաուղղված է Կենտրոնական բանկի, ազգային դրամի նկատմամբ հասարակության վստահության և դրամային խնայողությունների աճին, դրամավարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

Գնաճի կառավարման նոր ռազմավարության պայմաններում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքում 2006 թվականին տարեկան գնաճը կազմել է 5.2%: Գնաճը հիմնականում ձևավորվել է պարենային ապրանքների գների 6.6% և ծառայությունների սակագների 5.3% աճի հետևանքով, որոնք գնաճին համապատասխանաբար նպաստել են 3.6 և 1.6 տոկոսային կետով: Պարենային ապրանքների գների աճը հիմնականում պայմանավորվել է «Բանջարեղեն», «Միրգ» և «Շաքարավազ» ապրանքախմբերի փոփոխություններով (նպաստումը համապատասխանաբար՝ 3.3, 1.4 և 0.5 տոկոսային կետ), իսկ ծառայությունների սակագների աճը՝ «Բուժսպասարկման ծառայությունների» և «Բնակկոմունալ ծառայությունների» ցուցանիշների աճով (նպաստումը համապատասխանաբար՝ 0.9 և 0.3 տոկոսային կետ):

Ինչպես նախորդ տարիներին, 2006 թվականին ևս արձանագրվել է տնտեսական բարձր աճ. տարվա արդյունքում՝ 13.4%: Դա այս տարի ևս ապահովվել է հիմնականում շինարարության և ծառայությունների ավելացված արժեքների իրական աճի բարձր մակարդակների հաշվին: Այդ ոլորտների տարեկան աճը համապատասխանաբար կազմել է 37.2% և 14%: Նշված զարգացումները, մասնավորապես զբոսաշրջության աճի տեմպի արագացումը, տնտեսությունում արտարժույթի ներհոսքի խթանման հետ մեկտեղ, նպաստել են նաև բնակչության եկամուտների աճին, որը մասնավոր սպառման աճի միջոցով որոշակի գնաճային ճնշումներ է ձևավորել սպառողական շուկայում:

Տնտեսության իրական հատվածի մյուս երկու ճյուղերում՝ արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում, աճի տեմպերը դանդաղել են: Ընդ որում, եթե արդյունաբերության ավելացված արժեքի նվազումը պայմանավորվել է միջազգային շուկայական պայմանների փոփոխությամբ, ապա գյուղատնտեսության վրա բացասական ազդեցություն են ունեցել անբարենպաստ բնակլիմայական պայմանները: Արդյունքում, 2006 թվականին արձանագրվել է արդյունաբերության արտադրանքի իրական նվազում՝ տարեկան 0.9% (2005 թ-ին՝ 7.4% աճ), իսկ գյուղատնտեսության տարեկան աճը կազմել է ընդամենը 0.4%՝ նախորդ տարվա 11.2%-ի փոխարեն:

Տարվա ընթացքում ներքին պահանջարկի աճը կազմել է տարեկան 13.7%, իսկ մասնավոր հատվածի ծախսումների աճը՝ 13.2%: Բավականին բարձր է եղել արդյունքը մասնավոր ներդրումների ոլորտում՝ տարեկան 27.9% աճ, որը հիմնականում պայմանավորվել է չորրորդ եռամսյակում արձանագրված աճով: Կապիտալ ներդրումների աճը մեծ մասամբ արտահայտվել է շինարարության աճի տեմպերի արագացմամբ, հատկապես՝ բնակարանային շինարարության ոլորտում:

2006 թվականի ընթացքում 9.2%-ով ավելացել է մասնավոր սպառումը, որը, զուգակցվելով բուսաբուծության ոլորտում բերքի ծավալների նվազմամբ, որոշակիորեն խորացրել է գնաճային ճնշումները սպառողական շուկայում:

Աշխատանքի շուկայում 2006 թվականին շարունակվել են վերջին 5 տարիներին դրսևորված՝ գործազրկության կրճատման և աշխատավարձի աճի միտումները: Տնտեսության միջին անվանական աշխատավարձի տարեկան աճը կազմել է 23.5%, իսկ աշխատավարձի իրական աճը՝ 20.8%, ընդ որում՝ աճ է արձանագրվել տնտեսության բոլոր ճյուղերում: Գործազրկության մակարդակը կազմել է 7.4%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: Տնտեսությունում արտադրողականության աճը շարունակում է զիջել աշխատավարձերի աճի ցուցանիշին, ինչը սպառողական շուկայում ստեղծել է գնաճային ճնշումներ:

Հաշվետու ժամանակահատվածում ներմուծման դոլարային գները ավելացել են 15.2%-ով, որն էապես գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը (6.7%): Սակայն դրամի արժեքավորումը և Կառավարության կողմից գազի սակագների ավելացման սուբսիդավորումը հիմնականում չեզոքացրել են ներմուծման դոլարային գների աճը, և դրամային արտահայտությամբ դրանք աճել են ընդամենը 3.6%-ով: 2006 թ. ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է (159.2 մլն ԱՄՆ դոլարով), իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 5.3%՝ նախորդ տարվա 3.9%-ի փոխարեն: Մինչդեռ, եթե հաշվի առնենք ոչ բանկային հատվածի միջոցով կանխիկ արտարժույթի զուտ ներհոսքի վերաբերյալ ԿԲ գնահատումները, ընթացիկ հաշիվը դառնում է հավելուրդային՝ կազմելով 346.3 մլն ԱՄՆ դոլար և ՀՆԱ-ի 5.4%-ը:

Տարվա ընթացքում ֆինանսական ներհոսքի զգալի աճը նպաստել է համախառն պահանջարկի աճին և ճնշումներ է առաջացրել գնաճի վրա: Սակայն, մյուս կողմից, Կենտրոնական բանկի վարած լողացող արժութային քաղաքականության արդյունքում զսպվել են գնաճի վրա ֆինանսական միջոցների մեծածավալ ներհոսքի ճնշումները:

2006 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է չեզոք ազդեցություն: Ընդ որում, չեզոք ազդեցությունը դրսևորվել է և՛ ծախսերի, և՛ եկամուտների մասով: Բյուջեի կատարման գործընթացում պահպանվել են նախորդ տարիներին դրսևորված միտումները. եկամուտների մասով՝ տարեկան ծրագրի գերակատարում, իսկ ծախսերի մասով՝ խնայողությունների ձևավորում տարվա առաջին եռամսյակում և համեմատաբար մեծածավալ ծախսումներ տարվա վերջին:

2006 թվականին դրամավարկային հատվածի զարգացումները բնութագրվել են մակրոտնտեսական միջավայրի երկու հիմնական առանձնահատկությամբ: Նախ, դրսևորվել են ԿԲ գլխավոր խնդրի իրագործման հետ կապված հիմնական ռիսկերը, որոնք սպասվում էին տնտեսության մյուս հատվածներից: Մասնավորապես՝ ոչ բարենպաստ եղանակի պատճառով բուսաբուծության համախառն բերքի նվազման պայմաններում արձանագրվել է «Միրգ» և «Բանջարեղեն ու կարտոֆիլ» ապրանքախմբերի գների բարձր աճ՝ համապատասխանաբար 29.5% և 37.9%: Միևնույն ժամանակ, արտաքին հատվածում գրանցվել է էներգակիրների, մասնավորապես՝ նավթի գների աճ: Արդյունքում՝ արձանագրվել է կանխատեսվածից բարձր գնաճ: Այդ պարագայում ԿԲ-ն վերանայել է գնաճի ծրագրային ցուցանիշը (տարեվերջին տարեկան մինչև 3%-ի փոխարեն՝ 5% $\pm$ 1.5%)՝ նաև ֆինանսական շուկայում գնային կտրուկ տատանումներ թույլ չտալու նկատառումներից ելնելով:

Երկրորդ առանձնահատկությունը կապված է տարվա կեսից դրամայնացման գործընթացի զգալի աշխուժացման հետ (դրամային զանգվածի տեսակարար կշիռը փողի զանգվածում 2006-ի վերջին, նախորդ տարվա վերջի համեմատ, աճել է շուրջ 15%-ով), ինչը ևս նպաստել է դրամի պահանջարկի, հետևաբար և՝ ԿԲ կողմից ապահովված առաջարկի աճին: Տարվա արդյունքներով՝ դրամային զանգվածն ավելացել է 52.3%-ով, փողի բազան՝ 41.1%-ով, իսկ փողի զանգվածը՝ 32.9%-ով:

Ըստ 2007 թվականի գնաճի կանխատեսումների՝ ակնկալվում է, որ 2007 թ. շարունակվելու է կապիտալ շինարարության և ծառայությունների ոլորտների զարգացումը՝ պայմանավորված բնակչության եկամուտների աճով և Հայաստանում զբոսաշրջության զարգացմամբ, ինչը կխթանի համախառն պահանջարկը՝ պատճառ դառնալով գնաճային ճնշումների:

Արտաքին միջավայրից բխող հիմնական ռիսկերը կապված են ինչպես նավթի և հումքային ապրանքների գների, այնպես էլ հանրապետություն ներհոսող մասնավոր տրանսֆերտների՝ սպասվածից ավելի աճի հետ:

Նշված պայմաններում ակնկալվում է, որ 2007 թ. գնաճը կկազմի 4.1%, որը տարեկան 4% + 1.5% ծրագրային միջակայքի սահմաններում է: Ընդ որում, գնաճի բարձր կամ ցածր լինելու ռիսկերը որևէ ուղղությամբ գերակայություն չունեն: Ուստի, տարվա ընթացքում ԿԲ-ն մշտապես կհետևի տնտեսության ներքին և արտաքին միջավայրերի զարգացումներին և ռիսկերի ի հայտ գալու պարագայում համապատասխանաբար կարձագանքի և կչեզոքացնի գնաճը նպատակային ցուցանիշից շեղող ռիսկերը:

Ֆինանսական կայունության գրավականը ֆինանսական համակարգի անխափան գործունեությունն է, որի դեպքում ֆինանսական հաստատությունները միջոցներ են ներգրավում և արդյունավետ տեղաբաշխում: Ֆինանսական կայունությամբ են ապահովվում իրացվելիության անհրաժեշտ մակարդակը, անկանխիկ գործարքների անխափան իրականացումը, ռիսկերի գնահատումն ու կառավարումը, ընձեռվում շոկային իրավիճակներում առաջացած ռիսկերի կլանման հնարավորություն: Լայն իմաստով՝ ֆինանսական կայունությունը ճգնաժամերի բացակայությունն է, որի պայմաններում ֆինանսական համակարգի երեք հիմնական բաղադրիչները՝ ֆինանսական շուկան, ֆինանսական ինստիտուտները և ֆինանսական ենթակառուցվածքները արդյունավետ և անխափան կատարում են իրենց գործառույթները:

Ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերը տարաբնույթ են ու տարածին: Անհրաժեշտ է գնահատել ինչպես ֆինանսական համակարգի ներքին ռիսկերը, այնպես էլ տնտեսության բոլոր հատվածներում առաջացող ռիսկերը և դրանց անթույլատրելի բարձր մակարդակի բացահայտման դեպքում՝ արագ արձագանքել: Ուսումնասիրության օբյեկտը և՛ մակրոմիջավայրն է, և՛ ֆինանսական համակարգի երեք բաղադրիչները՝ ֆինանսական շուկան, ֆինանսական ինստիտուտները և ֆինանսական ենթակառուցվածքները:

Իրական հատվածից բխող ռիսկերը հիմնականում կապված են տնտեսության առանձին ճյուղերում տեղի ունեցող շարժերի, ազգաբնակչության եկամտային և պարտքային ցուցանիշների, գների ընդհանուր մակարդակի, մասնավո-

րապես՝ անշարժ գույքի գների տատանումների հետ: Հարկաբյուջետային հատվածից բխող ռիսկերի հիմնական աղբյուրը պետական պարտքի մեծությունն է, պետական բյուջեի պակասուրդը, դրա ֆինանսավորման աղբյուրները և հնարավոր հետագա զարգացումները: ՀՀ ֆինանսական կայունության ապահովման համար արտաքին հատվածի ռիսկերի բացահայտումը կարևորագույն խնդիրներից է, քանի որ համախառն տնօրինվող եկամտի մեջ բավական մեծ տեսակարար կշիռ ունեն արտերկրից ստացվող տրանսֆերտները և գործոնային եկամուտները:

Ընդհանուր առմամբ՝ մակրոմիջավայրից բխող ռիսկերը հիմնականում կարող են ֆիզիկական և իրավաբանական անձանց եկամուտների, ինչպես նաև ակտիվների գների (հատկապես անշարժ գույքի) հնարավոր զարգացումների հետևանք լինել, որոնք կարող են առաջ բերել ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վարկերի ներգրավման և մարման, ինչպես նաև ավանդների տեղաբաշխման նկատմամբ դրսևորվող վարքագծային կտրուկ փոփոխություններ:

Այս առումով ուշագրավ են փողի և արժութային շուկաները, ընդ որում՝ փողի շուկայից բխող ռիսկերը կապված են պետական պարտատոմսերի առաջնային և երկրորդային շուկաների տոկոսադրույքների տատանումների հետ, իսկ արժութային շուկայում, ֆինանսական կայունության տեսանկյունից, առավել մեծ ռիսկային գործոն է ՀՀ դրամ / ԱՄՆ դոլար փոխարժեքի տատանողականությունը:

ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 92%-ը բաժին է ընկնում բանկային համակարգին, հետևաբար, ՀՀ ֆինանսական համակարգի կայունության առումով, ֆինանսական հաստատություններում առաջացող ռիսկերի բացահայտման և գնահատման համար առաջնայինը բանկային համակարգում առկա ռիսկերի վերլուծությունն է:

ՀՀ բնակչության եկամուտների աճի, հետևաբար նաև ֆինանսական կայունության առումով էական նշանակություն ունեն ինչպես արտերկրից ֆիզիկական անձանց փոխանցումները (2006 թ. ֆիզիկական անձանց զուտ դրամական փոխանցումները կազմել են 189 մլրդ ՀՀ դրամ), այնպես էլ անկանխիկ վճարումները (2006 թ. ծավալը՝ 5194 մլրդ ՀՀ դրամ, քանակը՝ 2627716): Այսինքն՝ տնտեսության զարգացման և ֆինանսական կայունության ապահովման համար կարևորվում է նաև վճարային համակարգերի անխափան գործունեությունը:

Դրամի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճի դեպքում իրացվելիության հնարավոր ռիսկերը մեղմելու և ֆինանսական կայունություն ապահովելու համար էական է դրամի շրջանառության և դրամական պահուստների բավարար մակարդակի ապահովումը: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ դրամական պահուստները բավարարել են տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ ձևավորված պահանջարկը:

Ֆինանսական համակարգի անկատար օրենսդրական դաշտը կարող է խոչընդոտել ֆինանսական համակարգի դրական զարգացումները և ֆինանսական համակարգում բազմապիսի ռիսկերի պատճառ դառնալ: Դրանք կանխելուն և ֆինանսական կայունությանը նպաստող իրավական դաշտի ապահովմանն են ուղղված օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերում իրականացվող փոփոխությունները:

2006 թվականին Կենտրոնական բանկը մշտապես հետևել է ՀՀ ֆինանսական ենթակառույցների գործունեությանը, մասնավորապես՝ վճարահաշվարկային հարաբերություններին, կանխիկ դրամաշրջանառությանը, օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններին, փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարին առնչվող զարգացումներին:

ՀՀ կենտրոնական բանկի կադրային քաղաքականությունը նպատակաուղղվել է կազմակերպության հիմնական գործունեության իրականացմանը և, միաժամանակ, աշխատակիցների սոցիալական և մասնագիտական անհրաժեշտ մակարդակի ապահովմանը:

1. ԳՆԱԾԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.1. ԳՆԱԾԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Գնաճն ըստ ապրանքների և ծառայությունների խմբերի, բնականոն գնաճ

2006 թ. դեկտեմբերին, 2005 թ. դեկտեմբերի համեմատ, գրանցվել է 5.2% գնաճ՝ նախորդ տարվա 0.2% գնանկման փոխարեն:

Գնաճը մեծապես պայմանավորվել է սպառողական զամբյուղի 53.9%-ը կազմող պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 6.6% աճով, ինչը գնաճի տարեկան ցուցանիշի ձևավորմանը նպաստել է 3.6 տոկոսային կետով: Սակագների համեմատաբար բարձր (5.3%) աճ է գրանցվել նաև ծառայությունների ոլորտում (նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը՝ 1.9%): Ծառայությունների սակագների 5.3% աճը գնաճի տարեկան ցուցանիշի ձևավորմանը նպաստել է 1.6 տոկոսային կետով: Ոչ պարենային ապրանքների շուկայում հակառակ պատկերն է՝ այս տարի, նախորդ տարվա համեմատ, գրանցվել է համեմատաբար ցածր՝ 0.5% գնաճ (2005 թ. դեկտեմբերին, 2004 թ. դեկտեմբերի համեմատ, ոչ պարենային ապրանքների գները բարձրացել էին 2.1%-ով)՝ նպաստելով գնաճի ընդհանուր մակարդակի ձևավորմանը ընդամենը 0.1 տոկոսային կետով:

Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) 6.6% գնաճը հիմնականում պայմանավորվել է «Բանջարեղեն» (37.9%), «Միրգ» (29.5%), «Շաքարավազ» (19.7%), «Ձկնամթերք» (50.1%), «Ձու» (13.3%) և «Հացամթերք» (1.3%) ենթաապրանքախմբերի գնաճով, որոնք պարենային ապրանքների գնաճին համապատասխանաբար նպաստել են 3.3, 1.4, 0.5, 0.5, 0.4 և 0.4 տոկոսային կետով:

«Ծառայություններ» ապրանքախմբի գների 5.3%-ով աճը հիմնականում պայմանավորվել է «Բուժսպասարկման ծառայությունների» սակագների 9.9%, «Բնակկոմունալ ծառայությունների»՝ 3.7%, «Կապի ծառայությունների»՝ 10.5% և «Կրթության համակարգի ծառայությունների»՝ 4.9% աճով, որոնք գնաճին նպաստել են համապատասխանաբար 0.9, 0.3, 0.2 և 0.2 տոկոսային կետով:

«Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի 0.5% գնաճը հիմնականում ձևավորվել է «Լվացող ապրանքներ», «Կոշկեղեն» և «Հագուստ ու գործվածք» ենթաապրանքախմբերի գների համապատասխանաբար 5.3%, 4.4% և 3.6% աճի և «Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին» ենթաապրանքախմբի գների 7.1% նվազման հաշվին (այն պարագայում, երբ 2005 թ. դեկտեմբերին, 2004 թ. դեկտեմբերի համեմատ, այս ենթաապրանքախմբի գները բարձ-

2006 թ. գնաճը պայմանավորող հիմնական ապրանքախմբերը

Անվանում	*Գնի ինդեքսը 2006թ. դեկտեմբերին 2005թ. դեկտեմբերի համեմատ*
ՍԳԻ	**105.2**
Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**106.6**
բանջարեղեն և կարտոֆիլ	137.9
միրգ	129.5
շաքարավազ	119.7
ձկնամթերք	150.1
հացամթերք	101.3
ձու	113.3
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**100.5**
անձնական օգտագործման մեքենաներ և բենզին	92.9
լվացող միջոցներ	105.3
կոշկեղեն	104.4
հագուստեղեն, գործվածք	103.6
Ծառայություններ, որից՝	**105.3**
բուժսպասարկման	109.9
կապ	110.5
բնակարանային, կոմունալ	103.7


Դեկտեմբերի գնաճը և բնականոն գնաճը (%)

Տարի	Ցուցանիշ	Նախորդ ամսվա համեմատ	Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ	Նախորդ տարվա համեմատ, կուտակային
2004	Գնաճ	2.3	2.0	7.0
	Բնականոն գնաճ	0.3	0.6	5.5
2005	Գնաճ	2.3	-0.2	0.6
	Բնականոն գնաճ	0.3	0.5	0.6
2006	Գնաճ	1.6	5.2	2.9
	Բնականոն գնաճ	0.1	2.2	2.3

րացել են 8.5%-ով): «Անձնական օգտագործման մեքենաներ և բենզին» ենթաապրանքախմբի գնանկումը բենզինի գների 10.6% նվազման արդյունք էր, ինչը մեղմել է «Ոչ պարենային ապրանքներ» ապրանքախմբի գնաճը մոտ 1.7, իսկ ընդհանուր գնաճի տարեվերջի մակարդակը՝ 0.3 տոկոսային կետով:

2006 թ. 4-րդ եռամսյակի գնաճը նախորդ եռամսյակի վերջի համեմատ կազմել է 2.8%, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գների 5.4% ու ծառայությունների սակագների 0.9% աճով և ոչ պարենային ապրանքների գների 1.9% նվազմամբ:


Իսկ 2006 թ. հունվար-դեկտեմբերի գնաճը, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կազմել է 2.9%:



Գրաֆիկ 1.1
ՍԳԻ փոփոխությունները՝ ըստ հիմնական ապրանքային խմբերի և ծառայությունների (2005 թ. դեկտեմբերի համեմատ)

Գնաճի ծրագրված տարեկան ցուցանիշի մակարդակի ապահովման առումով կարևորվում է գների բնականոն փոփոխությունների գնահատումը, քանի որ արտահայտում է գների փոփոխությունների երկարաժամկետ միտումները՝ բացառելով դրանց վրա տարվա ընթացքում դրսևորված ցնցումների ազդեցությունը: 2004 թվականի հունիսից ՀՀ ԿԲ-ն, որպես բնականոն գնաճի պաշտոնական ցուցանիշ, հրապարակում է 15 տոկոսով հատած միջինի մեթոդով հաշվարկված ցուցանիշը[1]:

2006 թ. դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ, բնականոն գնաճը կազմել է 2.2%՝ հիմնականում պայմանավորված «Տավարի միս» (3.3%) և «Թռչնի միս» (10.1%) ապրանքատեսակների գների և «Վճարովի ԲՈՒՀ-ի վարձի» (6.1%), «Ատամնաբուժական ծառայությունների» (9.9%), «Միջին բժշկական անձնակազմի և լաբորանտների բուժագործական ծառայությունների» (9.9%) սակագների աճով, որոնք բնականոն գնաճին համապատասխանաբար նպաստել են 0.2, 0.1, 0.2, 0.1 և 0.1 տոկոսային կետով:



Գրաֆիկ 1.2
Գնաճի և բնականոն գնաճի փոփոխությունները (2005 թ. դեկտեմբերի համեմատ)

[1] *Ցուցանիշի հաշվարկման մեթոդաբանությունը մանրամասն ներկայացված է «ՀՀ ԿԲ բանբեր, 2004 թ., 1-ին եռամսյակ» պարբերականում:*

Գնաճի տատանումների վիճակագրական վերլուծություն

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, որպես կանոն, տարվա ընթացքում ՀՀ-ում սպառողական գները դրսևորում են փոփոխական վարքագիծ, նպատակահարմար է սպառողական գների ինդեքսի, այդ թվում նաև առանձին ապրանքախմբերի ինդեքսների ցուցանիշների տատանումները ուսումնասիրել վիճակագրական վերլուծության մի քանի եղանակներով: Սպառողական գների ինդեքսի ու սպառողական զամբյուղի առանձին ապրանքախմբերի գների ինդեքսների փոփոխությունների ուսումնասիրման և դրանց տատանումները պայմանավորող գործոնների բացահայտման նպատակով 2004 թվականի հունվարից մինչև 2006 թվականի դեկտեմբերն ընկած ժամանակահատվածի համար տարանջատվել և գնահատվել է վիճակագրության տեսության մեջ ընդունված երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը[*]:

Գների ամսական ինդեքսների տատանումները պայմանավորող բաղադրատարրերի տեսակարար կշիռները (2004 թ. հունվար – 2006 թ. դեկտեմբեր) (%)

Ապրանքախմբեր	Տրենդ	Սեզոնայնություն	Պատահական տարր	Ընդամենը
ՍԳԻ	0.1	78.8	21.1	100.0
1. Հացամթերք	5.1	35.2	59.8	100.0
2. Մսամթերք	8.0	28.0	64.0	100.0
3. Ձկնամթերք	2.7	47.9	49.4	100.0
4. Կաթնամթերք և յուղեր	0.2	88.4	11.4	100.0
5. Միրգ և բանջարեղեն	7.2	62.3	30.5	100.0
6. Այլ մթերք	13.8	32.6	53.6	100.0
7. Ոչ ոգելից խմիչք	14.2	31.7	54.1	100.0
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	29.0	44.2	26.8	100.0
9. Հագուստ և կոշկեղեն	0.0	44.4	55.6	100.0
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	25.8	30.7	43.5	100.0
11. Տնային գույք	11.0	31.3	57.7	100.0
12. Բուժսպասարկում և դեղորայք	0.6	6.5	92.9	100.0
13. Տրանսպորտ և կապ	2.5	59.3	38.3	100.0
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	0.0	44.7	55.3	100.0
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	0.1	78.8	21.1	100.0

Հաշվարկները ցույց են տալիս, որ 2003 թ. հունվար – 2005 թ. դեկտեմբեր ժամանակահատվածի համեմատ, 2004 թ. հունվար – 2006 թ. դեկտեմբեր ժամանակահատվածում աճել է պատահական տարրի ազդեցությունը գնաճի ամփոփ ցուցանիշի վրա (6.0 տոկոսային կետ), փոխարենը կրճատվել է սեզոնայնություն (4.5 տոկոսային կետ) և տրենդ (1.3 տոկոսային կետ) բաղադրատարրերի ազդեցությունը:

Ըստ ապրանքախմբերի՝ երեք բաղադրատարրերի (տրենդի, սեզոնայնության և պատահական տարրի) ազդեցությունը 2004 թ. հունվար – 2006 թ. դեկտեմբերին, 2003 թ. հունվար – 2005 թ. դեկտեմբերի համեմատ, փոփոխվել է տարբեր կերպ: Տրենդի ազդեցությունը գրեթե բոլոր ապրանքախմբերում շարունակում է մնալ ամենափոքրը: Տրենդի ազդեցությունը նվազել է «Հացամթերք» (4.8 տոկոսային կետ), «Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք» (1.2 տոկոսային կետ), «Տրանսպորտ և կապ» (2.2 տոկոսային կետ) և «Այլ ապրանքներ և ծառայություններ» (13.1 տոկոսային կետ) ապրանքախմբերի գնաճի վրա: Այնուամենայնիվ, որոշ ապրանքախմբերում գրանցվել է տրենդի բաղադրատարրի զգալի աճ. «Ոգելից խմիչք և ծխախոտ» ապրանքախմբի տրենդի տեսակարար կշիռն աճել է մոտ 14, «Հագուստ և կոշիկ» ապրանքախմբինը՝ մոտ 30, «Տնային գույք» ապրանքախմբինը՝ մոտ 25 տոկոսային կետով:

Սեզոնայնության ազդեցությունը թեև մի փոքր նվազել է (մոտ 4.5 տոկոսային կետ), սակայն շարունակում է ամենամեծ ազդեցությունը ունենալ ՍԳԻ ձևավորման վրա (բացատրում է ՍԳԻ տատանումների 78.8%-ը): Նվազում է գրանցվել «Ոչ ոգելից խմիչք» (38.1 տոկոսային կետ), «Մսամթերք և ձկնամթերք» (36.4 տոկոսային կետ), «Այլ մթերքներ» (28.5 տոկոսային կետ) և «Տրանսպորտ և կապ» (10.3 տոկոսային կետ) ապրանքախմբերում: Միևնույն ժամանակ, սեզոնայնության բաղադրատարրի ազդեցությունը մեծացել է այնպիսի կարևոր ապրանքախմբերի վրա, ինչպիսիք են՝ «Միրգ և բանջարեղեն» (32.7 տոկոսային կետ), «Հագուստ և կոշիկ» (18.5 տոկոսային կետ) և «Հացամթերք» (6.4 տոկոսային կետ) ապրանքախմբերը:

Պատահական տարրի ազդեցությունը առավելագույնս մեծացել է «Մսամթերք և ձկնամթերք» (մոտ 32 տոկոսային կետ) և «Ոչ ոգելից խմիչք» (26 տոկոսային կետ) ապրանքախմբերում և նվազել «Հագուստ և կոշիկ» (47 տոկոսային կետ) ու «Միրգ և բանջարեղեն» (38 տոկոսային կետ) ապրանքախմբերում:

Սպառողական գների ինդեքսների տատանողականությունն ուսումնասիրվել է նաև յուրաքանչյուր ապրանքախմբի ամսական գների ինդեքսների վարիացիայի գործակիցների օգնությամբ:

[*] *Հաշվարկները կատարվել են Census X12 ARIMA սեզոնային հարթեցման եղանակով:*


Գների ամսական ինդեքսների տատանման գործակիցները 2004 – 2006 թթ. (%)			
	2004	2005	2006
ՍԳԻ	1.6	2.4	1.2
1. Հացամթերք	0.8	0.4	0.2
2. Մսամթերք	1.4	1.5	0.8
3. Ձկնամթերք	23.2	16.1	14.8
4. Կաթնամթերք և յուղեր	1.9	0.7	0.3
5. Միրգ և բանջարեղեն	11.1	17.6	14.7
6. Այլ մթերքներ	1.5	2.2	0.7
7. Ոչ ոգելից խմիչք	0.7	0.5	0.3
8. Ոգելից խմիչք և ծխախոտ	0.3	0.1	0.0
9. Հագուստ և կոշիկ	0.3	0.5	0.4
10. Բնակվարձ, էլեկտրաէներգիա, վառելիք	0.7	0.5	0.7
11. Տնային գույք	0.1	0.3	0.3
12. Բուժսպասարկում և դեղորայք	0.4	0.4	1.6
13. Տրանսպորտ և կապ	1.0	2.1	1.7
14. Հանգիստ, մշակույթի ապրանքներ և ծառայություններ	0.3	1.1	1.0
15. Այլ ապրանքներ և ծառայություններ	0.2	0.2	0.2

Ըստ աղյուսակի տվյալների՝ ՍԳԻ տատանողականությունը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների գների տատանումներով: Առավել տատանողական վարքագիծ են դրսևորել «Ձկնամթերք» և «Միրգ և բանջարեղեն» ապրանքախմբերը, ընդ որում՝ այդ երկու ապրանքախմբերում էլ 2006 թվականին, 2005-ի համեմատ, գրանցվել է տատանողականության մոտ 2 տոկոսային կետով նվազում: Մնացած գրեթե բոլոր ապրանքախմբերում տատանողականությունը 2006թ. նվազել է, ինչն էլ պայմանավորել է ՍԳԻ համանման վարքագիծը: Միայն «Բուժսպասարկում և դեղորայք» ապրանքախմբում է գրանցվել տատանողականության աճ (մոտ 5 անգամ):

1.2. ԳՆԱՑԻ ԳՈՐԾՈՆՆԵՐ


Արտաքին միջավայր

Համաշխարհային տնտեսությունում 2006 թվականին պահպանվել են տնտեսական աճի բարձր տեմպերը՝ գրեթե բոլոր հիմնական երկրներում և տարածաշրջաններում գերազանցելով սպասումները: 2006 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի փոխարժեքը շարունակել է արժեզրկվել հիմնական արժույթների նկատմամբ, բացի ճապոնական իենից, և, չնայած, տարվա կտրվածքով ԱՄՆ դոլարը արժեզրկվել է եվրոպական արժույթների նկատմամբ ընդամենը 1 տոկոսի շրջանակներում, սակայն դեկտեմբերին ԱՄՆ դոլարի փոխարժեքի արժեզրկումը եվրոպական արժույթների նկատմամբ կազմել է (միջինը) 7-12 տոկոս:



Գրաֆիկ 1.3
2006 թվականի չորրորդ եռամսյակում եվրոյի փոխարժեքը շարունակել է արժևորվել


Երրորդ եռամսյակում գրանցված նվազումից հետո պահպանվել է նավթի միջազգային գների ցածր մակարդակը: Նավթի գների աճի տեմպերը չորրորդ եռամսյակում նվազել են մինչև տ/տ[1] 4.9 տոկոս (նախորդ եռամսյակում՝ 13.9 տոկոս): 2006 թվականին նավթի գների աճը կազմել է ավելի քան 20 տոկոս՝ հասնելով անվանական իր ամենամեծ ցուցանիշին՝ գրեթե 80 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց:



Գրաֆիկ 1.4
Նավթամթերքների գների նվազումը շարունակվել է նաև չորրորդ եռամսյակում

Ամերիկայի Միացյալ Նահանգների տնտեսական աճի մակարդակը[2] 2006 թվականի չորրորդ եռամսյակում, ըստ նախնական գնահատումների, կազմել է տ/տ 2.5 տոկոս (որոշակիորեն աճելով երրորդ եռամսյակի համեմատաբար ցածր ցուցանիշից հետո՝ 2.0 տոկոս): Ընդ որում, տարեկան կտրվածքով ԱՄՆ տնտեսության աճը շարունակել է դրսևորել բավականին բարձր աճի տեմպեր՝ 3.3 տոկոս՝ նախորդ տարվա 3.2 տոկոսի փոխարեն: Մասնավոր սպառումը չորրորդ եռամսյակում աճելով տ/տ 4.2 տոկոսով, ունեցել է ամենամեծ ազդեցությունը (2.9 տոկոսային կետ), մինչդեռ ներդրումները, անշարժ գույքի շուկայի թուլացման պատճառով, նվազել են տ/տ 15.2 տոկոսով (-2.7 տոկոսային կետ):

ԱՄՆ առևտրային պակասուրդը չորրորդ եռամսյակում փոքր-ինչ բարելավվել է՝ կազմելով ՀՆԱ 5.2 տոկոսը: Որպես ներդրումների և խնայողությունների տարբերություն, ընթացիկ հաշվի բարելավումը պայմանավորվել է ներդրումների նվազմամբ, քանի որ խնայողությունները դեռևս մնում են բացասական մակարդակի վրա: Արտաքին առևտրի պակասուրդի ֆինանսավորումը շարունակում է իրականացվել հիմնականում արտաքին պարտավորությունների կուտակման հաշվին, որը դեռևս պահպանում է համաշխարհային շուկայում դոլարի դիրքերի թուլացման սպասումները:



Գրաֆիկ 1.5
Չորրորդ եռամսյակի տնտեսական աճը պահպանել է գնաճի հետագա արագացման ռիսկերը


2006 թվականին ԱՄՆ գնաճի ցուցանիշը կազմել է տ/տ 3.3 տոկոս՝ նախորդ տարվա 3.4 տոկոսի փոխարեն, իսկ չորրորդ եռամսյակում գրանցվել է տ/տ 2.1 տոկոս (3-րդ եռամսյակում՝ 3.3 տոկոս): Սակայն չորրորդ եռամսյակում մասնավոր սպառման բարձր աճի տեմպերի, ինչպես նաև աշխատուժի շուկայի լավ պայմանների պարագայում դեռևս պահպանվում են բարձր գնաճի

[1] *տ/տ – նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ:*

[2] *Աղբյուրը՝ Bureau of Economic Analysis, US Department of Commerce.*

ռիսկերը: Եվ, չնայած միջազգային շուկաներից եկող՝ հումքային գների նվազման ազդակներին, Ֆեդերալ պահուստային համակարգը շարունակել է հարթ տոկոսադրույքների իր քաղաքականությունը և չորրորդ եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները չի նվազեցրել:

Եվրոգոտու տնտեսական աճը չորրորդ եռամսյակում պահպանել է երրորդ եռամսյակում գրանցված բարձր տեմպերը՝ կազմելով եռ/եռ[3] 0.9 տոկոս կամ 3.3 տոկոս տարեկանացված, որը գերազանցել է տնտեսագետների սպասելիքները: Տնտեսական աճը ապահովվել է հիմնականում ներդրումների (4.7 տոկոս) և պետական սպառման (2.7 տոկոս) բարձր աճի տեմպերի հաշվին: Արդյունքում՝ 2006 թվականին Եվրոգոտու տնտեսական աճը կազմել է 2.7 տոկոս, որը բավականին բարձր է: Այնուամենայնիվ, տնտեսական աճի հեռանկարները կարճաժամկետ հատվածում դեռևս վտանգվում են եվրոյի բարձր փոխարժեքի և զսպող դրամավարկային ու հարկաբյուջետային քաղաքականությունների, իսկ երկարաժամկետ հատվածում՝ դեռևս պահպանվող կառուցվածքային խնդիրների պատճառով[4]:



Գրաֆիկ 1.6
Եվրոգոտու տնտեսական աճը բարձրացման, իսկ գնաճը՝ նվազման միտում ունի

Սպառողական գների ինդեքսի տասներկուամսյա աճը չորրորդ եռամսյակում փոքր-ինչ արագացել է սեպտեմբերի ցածր ցուցանիշի համեմատ՝ դեկտեմբերին կազմելով տ/տ 1.9 տոկոս: Սակայն եռամսյակի միջին գնաճը նվազել է՝ կազմելով տ/տ 1.8 տոկոս՝ նախորդ եռամսյակի 2.2 տոկոսի փոխարեն: Եվրոպական կենտրոնական բանկը ապագայում ակնկալվող գնաճի ճնշումների չեզոքացման նպատակով եռամսյակի ընթացքում շարունակել է տոկոսադրույքների բարձրացման քաղաքականությունը՝ դեկտեմբերին տոկոսադրույքները հասցնելով 3.5 տոկոսի: 2006 թվականի գնաճի ցուցանիշը կազմել է 2.2 տոկոս՝ պահպանելով նախորդ տարվա մակարդակը, թեև ապագայի բարձր գնաճի ռիսկերը դեռևս առկա են:

Ռուսաստանի տնտեսությունը 2006 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում, ինչպես նախորդ եռամսյակներում, շարունակել է ակնհայտ օգուտներ ստանալ նավթի համաշխարհային շուկայի իրավիճակից, որտեղ նավթի գները միջին հաշվով ավելի բարձր էին[5]:

ՀՆԱ և արդյունաբերություն. Ռուսաստանի տնտեսական աճի շարժիչ ուժը շարունակում է մնալ ներքին պահանջարկի աճը, որի արդյունքում ավելի ակնառու են դառնում տնտեսության կառուցվածքային փոփոխությունները և միջոցների տեղաշարժը դեպի ոչ արտահանելի ճյուղեր (հիմնականում կապիտալ շինարարություն):

Արդյունաբերության աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 3.0%՝ նախորդ տարվա 4.9%-ի փոխարեն, իսկ տարվա արդյունքներով արդյունաբերության աճը կազմել է 3.9%՝ նախորդ տարվա 4.0%-ի փոխարեն: Վերամշակող արդյունաբերությունում 2006 թ. գրանցվել է 4.4% աճ՝ նախորդ տարվա 5.7%-ի փոխարեն:

Ի տարբերություն արդյունաբերության ճյուղի, ոչ արտահանելի հատվածում շարունակվել են տարվա սկզբից արձանագրվող աճի բարձր տեմպերը, մասնավորապես՝ շինարարության ճյուղում նախորդ տարվա հունվար-նոյեմբերի համեմատ գրանցվել է բարձր՝ 14.2% աճ (նախորդ տարի՝ 9.8% աճ), իսկ մանրածախ առևտրի ոլորտում՝ 12.8% (նախորդ տարի՝ 12.6%): Վերջիններս էլ համարվում են ՀՆԱ իրական աճի շարժիչ ուժերը: Վերը նշված ցուցանիշների արդյունքում հունվար-նոյեմբերին ՀՆԱ իրական աճը կազմել է 6.5%:

Ընթացիկ հաշիվ. 2006 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում նավթի միջազգային գների նվազումն անդրադարձել է ընթացիկ հաշվի հավելուրդի նվազման վրա: Ընթացիկ հաշվի հավելուրդը 2006 թ. չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատությամբ, կրճատվել է 4.0 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 17.6 մլրդ ԱՄՆ դոլար: Վերջինս պայմանավորվել է առևտրային հաշվեկշռի հավելուրդի 3.0 մլրդ

[3] *եռ/եռ - եռամսյակը նախորդ եռամսյակի նկատմամբ:*
[4] *Եվրոմիության կառուցվածքային խնդիրների շարքը կարելի է դասել աշխատուժի շուկաների կոշտությունը, ոչ լրիվ ինտեգրումն ու ներդաշնակեցումը, անդամ երկրների տնտեսությունների՝ տարբեր բիզնես-պարբերաշրջաններում գտնվելու խնդիրը, հարկաբյուջետային քաղաքականությունների ներդաշնակության բացակայությունը և այլն:*
[5] *Նավթի համաշխարհային գները տարվա առաջին ութ ամիսներին, 2005 թ. դեկտեմբերի համեմատ, բարձրացել են 29.7%-ով և հասել մինչև 73.6 ԱՄՆ դոլարի (ամսական միջին), սակայն սեպտեմբերից սկսած՝ աստիճանաբար նվազել են մինչև տարեվերջ, թեև 2006 թ-ին, 2005 թ. համեմատ, նավթի գների միջին աճը կազմել է 20.2%:*

ԱՄՆ դոլար նվազմամբ: Այնուամենայնիվ, 2006 թ. տարեկան տվյալներով՝ ընթացիկ հաշվի հավելուրդն ավելացել է 12.3 մլրդ ԱՄՆ դոլարով և կազմել 95.6 մլրդ ԱՄՆ դոլար[6]:

Ընթացիկ հաշվի, ինչպես նաև կապիտալի և ֆինանսական հաշվի դրական մնացորդների արդյունքում արձանագրվել է Ռուսաստանի կենտրոնական բանկի համախառն պահուստների բարձր աճ: Տարեվերջի դրությամբ հասել է արդեն 303.7 մլրդ ԱՄՆ դոլարի: Նշված ցուցանիշով Ռուսաստանն առաջ է անցել Թայվանից (դեկտեմբերի վերջի դրությամբ՝ 266.15 մլրդ ԱՄՆ դոլար) և զիջում է միայն երկու առաջատարներին՝ Չինաստանին (դեկտեմբերի վերջի դրությամբ՝ 1066.0 մլրդ ԱՄՆ դոլար) և Ճապոնիային (դեկտեմբերի վերջի դրությամբ՝ 895.32 մլրդ ԱՄՆ դոլար):

Գնաճ և փոխարժեք. 2006 թ. ընթացքում արտարժույթի շուկան բնութագրվել է արտարժույթի պահանջարկի նկատմամբ առաջարկի առաջանցիկ աճով, ինչը ռուբլու փոխարժեքի արժևորման նախադրյալներ է ստեղծել:

Այսպիսի պայմաններում Ռուսաստանի կենտրոնական բանկը, գնաճի պահպանման խնդիրներից ելնելով, թույլ է տվել ռուբլու փոխարժեքի արժևորման համեմատաբար բարձր տեմպեր՝ ի տարբերություն նախորդ տարվա, երբ Կենտրոնական բանկը նախապատվություն է տվել փոխարժեքի կայուն մակարդակի պահպանմանը: 2006 թ. չորրորդ եռամսյակում ռուսական ռուբլու արժևորումը ԱՄՆ դոլարի նկատմամբ կազմել է տ/տ 7.4%, իսկ տարվա կտրվածքով՝ 3.9%՝ նախորդ տարվա 1.8%-ի փոխարեն:

Ռուբլու դիրքերի ամրապնդման հիմնական գործոնից՝ ընթացիկ հաշվի ավելցուկի աննախադեպ աճից բացի, վերջինիս արժևորումը պայմանավորվել է նաև միջազգային շուկայում ԱՄՆ դոլարի արժեզրկմամբ: Միևնույն ժամանակ, ներքին շուկայում առաջարկի և պահանջարկի հարաբերակցության վրա ազդել է նաև ոչ ռեզիդենտների հետաքրքրությունը ռուբլով արտահայտված ակտիվների նկատմամբ:

Տարվա ընթացքում փոխարժեքի սահուն արժևորման վարքագիծը, որպես գնաճային սպասումների ձևավորման հիմնական գործոն, իր արտացոլումն է գտել գնաճի ցուցանիշում, ինչը 2006 թ. չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 9.2% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 11.3%): Արդյունքում՝ տարին ավարտվել է սպառողական գների 9.8% աճով:

[6] *2006 թ. ցուցանիշը Ռուսաստանի կենտրոնական բանկի գնահատականն է:*

Մակրոտնտեսական իրավիճակը հարևան երկրներում

Ադրբեջանի *տնտեսության աճի տեմպերը ինչպես տարածաշրջանում, այնպես էլ ԱՊՀ երկրների թվում 2006 թ. եղել է ամենաբարձրը: 2006 թ. իրական ՀՆԱ աճը նախորդ տարվա համեմատ կազմել է 34.5%, ընդ որում՝ ոչ նավթային հատվածում ՀՆԱ աճը կազմել է 12.1%: Ինչպես 2004-2005 թթ., այնպես էլ 2006 թ. ընթացքում տնտեսական աճի այսպիսի բարձր տեմպերը հիմնականում պայմանավորվել են վառելիքի (նավթ, բնական գազ և այլ ածխաջրեր) արդյունահանմամբ և դրա հետ կապված՝ շինարարության և տրանսպորտի հատվածների աճով: Տնտեսության արտադրական ճյուղերում աճը կազմել է 72.9%, իսկ սպասարկման ոլորտում՝ 20.6%: Արտադրանքի և ներմուծման զուտ հարկերը կազմել են ՀՆԱ 6.5%-ը: Արդյունաբերությանը բաժին է ընկել ՀՆԱ 58.3%-ը, գյուղատնտեսությանը՝ 7.1%-ը, տրանսպորտին՝ 5.3%-ը, կապին՝ 1.8%-ը, առևտրին և ռեստորանային ու հյուրանոցային ծառայություններին՝ 5.6%-ը, սոցիալական և այլ ծառայություններին՝ 7.9%-ը:*

2006 թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, Ադրբեջանում գնաճը կազմել է 8.3%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 11.4%: Ընդ որում, գնաճին հիմնականում նպաստել է պարենային ապրանքների գների աճը: Այսպես, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների գնաճը կազմել է 11.9%, ոչ պարենային ապրանքներինը՝ 5.3%, ծառայություններինը՝ 2.6%:

Ըստ նախնական տվյալների՝ 2006 թ. հունվար-դեկտեմբերին իրականացված արտահանման-ներմուծման գործարքների արդյունքում Ադրբեջանում ձևավորվել է դրական մնացորդ՝ շուրջ 1 մլրդ դոլարի չափով[7]: Ըստ գնահատումների՝ օտարերկրյա ներդրումների ծավալները 2006 թ. կազմել են շուրջ 3 մլրդ դոլար: Կապիտալի ներհոսքի և առևտրային հաշվեկշռի հավելուրդի նման ծավալների պարագայում առաջացել է որոշակի ճնշում գների մակարդակի և մանաթի փոխարժեքի վրա: Գնաճի տեմպերը զսպելու նպատակով Ազգային բանկը վարել է մանաթի՝ դանդաղ տեմպերով արժևորման քաղաքականություն և ակտիվացրել է իր մասնակցությունը արժութային շուկայում: 2006 թվականին Ազգային բանկի գործառնությունների տեսակարար կշիռը արժութային շուկայի ընդհանուր շրջանառությունում կազմել է 10-11%՝ նախորդ տարվա 2-3%-ի փոխարեն[8]: 2006 թ. ընթացքում Ազգային բանկի ինտերվենցիաները արժութային շուկայում կազմել են շուրջ 1 մլրդ ԱՄՆ դոլար, թեև արդյունքում մա-

[7] *Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ ապրանքների արտահանման ծավալներն ավելացել են 22.0%-ով և կազմել 5.6 մլրդ դոլար, իսկ ներմուծման ծավալները՝ 36.0%-ով և կազմել 4.6 մլրդ դոլար: Աղբյուրը՝ Day.Az, 9 հունվարի 2007:*

[8] *Աղբյուրը՝ Day.Az, 7 փետրվարի 2007թ.:*

նաթի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 5.4%-ով, իսկ տարեկան միջին փոխարժեքը նախորդ տարվա միջինի համեմատ արժևորվել է 5.9%-ով:

Վրաստանում *տնտեսական աճի ցուցանիշը 2006 թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 8.6%[9]: Ընդ որում, ՀՆԱ-ում արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 27.6%, իսկ գյուղատնտեսական արտադրանքինը՝ 17.6%[10]: Համաձայն Վրաստանի իշխանությունների հայտարարության՝ չնայած արտաքին ցնցումներին, մասնավորապես, Ռուսաստանի կողմից գազի գների բարձրացմանն ու վրացական ապրանքների արտահանումը Ռուսաստան խոչընդոտելուն, 2006 թ. կապահովվի իրական ՀՆԱ-ի 8% աճ[11]:*

2006 թ. հունվար-դեկտեմբերին, ինչպես և Ադրբեջանում, այստեղ նույնպես շարունակվել է գրանցվել բարձր գնաճ: 2006 թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, գնաճը Վրաստանում կազմել է 9.2%, իսկ նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ՝ 8.8%: Ի տարբերություն Ադրբեջանի, որտեղ գնաճի վարքագծի վրա շարունակում են հիմնական ազդեցություն ունենալ պարենային ապրանքների գները, Վրաստանում գնաճի վարքագծի վրա մեծապես ազդել են նաև ոչ պարենային ապրանքների գները: Նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ պարենային ապրանքների գնաճը կազմել է 9.3%, ոչ պարենային ապրանքներինը՝ 9.2%, ծառայություններինը՝ 7.3%[12]: 2006 թ. ընթացքում գնաճը հատկապես բարձր է եղել ապրիլ-հունիսին՝ պայմանավորված կառուցվածքային գործոններով և ավելցուկային իրացվելիությամբ, որը հանգեցրել էր ներքին պահանջարկի չնախատեսված աճի: Կառուցվածքային գործոններն են՝ նավթի և հանքահումքային այլ ապրանքների համաշխարհային գների բարձրացումը, բնական գազի և էլեկտրականության ադմինիստրատիվ գների բարձրացումը[13]:

2006 թ. հունվար-դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, վրացական լարին ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 4.6%-ով, իսկ տարեկան միջին փոխարժեքը նախորդ տարվա միջինի համեմատ արժևորվել է 2.04%-ով: Վրացական լարիի արժևորումը կարող էր լինել ավելի բարձր, եթե Վրաստանի ազգային բանկը Թբիլիսիի միջբանկային արժութային բորսայում 2006թ. ընթացքում չիրականացներ 415.8 մլն ԱՄՆ դոլարի չստերիլիզացված զուտ առք, այդ թվում՝ 112 մլն դոլարի զուտ առքը կատարվել է մայիս-օգոստոսի, իսկ 238 մլն դոլարի զուտ առքը՝ նոյեմբեր-դեկտեմբերի ընթացքում:

Թուրքիայի[14] *տնտեսությունում 2006 թ. երրորդ եռամսյակում ՀՆԱ իրական աճի տեմպերը զգալի դանդաղել են և կազմել տ/տ 3.4% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 7.0% աճ): ՀՆԱ աճի տեմպերի նվազումը պայմանավորվել է գյուղատնտեսական արտադրանքի ծավալների նվազմամբ, առևտրի և տրանսպորտային ու հեռահաղորդակցման ոլորտների աճի ցածր ցուցանիշներով: Միևչդեռ արդյունաբերության աճը բարձր էր և ապահովվել է արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի հաշվին (երրորդ եռամսյակում արդյունաբերության աճը կազմել է 6.4%): Այնուամենայնիվ, նախորդ եռամսյակներում գրանցված տնտեսական բարձր աճի արդյունքում, երրորդ եռամսյակի անբարենպաստ զարգացումները էական ազդեցություն չեն ունեցել և երեք եռամսյակների կտրվածքով տնտեսական աճը կազմել է 5.6%՝ նախորդ տարվա 5.5%-ի փոխարեն:*

Պահանջարկի տեսանկյունից՝ տնտեսության ցածր աճը երրորդ եռամսյակում հիմնականում պայմանավորվել է մասնավոր հատվածի իրական ծախսումների ընդամենը 1.3% աճով՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 11.2% աճի փոխարեն: Դրան հակառակ, պետական հատվածում վերջնական սպառման իրական ծախսումներն աճել են 15.4%-ով՝ նախորդ տարվա 3.3%-ի փոխարեն:

Սպառողական գների աճը չորրորդ եռամսյակում ուղղորդվել է ինչպես անվանական փոխարժեքի, այնպես էլ նավթի միջազգային գների շարժերով: Նախորդ եռամսյակներում գրանցված գների բարձր աճի տեմպերը պահպանվել են նաև չորրորդ եռամսյակում: 2006 թ. չորրորդ եռամսյակում սպառողական գների աճը կազմել է տ/տ 9.8%, ինչը 2.2 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա նույն ցուցանիշից: Վերջինս մասնակիորեն պայմանավորվել է այն հանգամանքով, որ թեև հուլիսից սկսած՝ թուրքական լիրան ԱՄՆ դոլարի նկատմամբ

---

[9] Վրաստանում վիճակագրության նոր համակարգի անցնելու կապակցությամբ ՀՆԱ-ի և դրա տարրերի դինամիկային վերաբերող ցուցանիշները հրապարակվում են ուշացումներով:

[10] Աղբյուրը՝ Newsgeorgia.ru, 11 հունվարի 2007թ.:

[11] 2007 թվականին կանխատեսվում է շուրջ 7% տնտեսական աճ:

[12] 2006 թ. ընթացքում բանջարաբոստանային կուլտուրաների գները բարձրացել են 21.8%-ով, մրգերի և խաղողի գները՝ 35.6%-ով, շաքարի և հրուշակեղենի գները՝ 11.2%-ով: Կոմունալ ծառայությունների գները բարձրացել են 22.2%-ով, առողջապահության ոլորտում՝ 16%-ով: Բացի այդ, տրանսպորտային սպասարկումը թանկացել է 2.5%-ով, իսկ հյուրանոցների, սրճարանների և ռեստորանների սպասարկումը՝ 7.7%-ով: Ալկոհոլային և ծխախոտային արտադրանքի գները տարվա ընթացքում նվազել են 10.5%-ով՝ ակցիզային հարկերի կրճատման արդյունքում:

[13] 2006 թ. հունվարից էլեկտրականության արժեքը Վրաստանում թանկացել է միջին հաշվով 58.9%-ով, իսկ մայիսից բնական գազը թանկացել է 31.3%-ով:

[14] Տնտեսական աճի և դրա կառուցվածքի վերաբերյալ չորրորդ եռամսյակի, ինչպես նաև 2006 թ. տարեկան փաստացի ցուցանիշները կհրապարակվեն 2007 թ. ընթացքում (տես Թուրքիայի պաշտոնական վիճակագրության հրապարակման կայք՝ www.turkstat.gov.tr):

արժևորվել է, այնուամենայնիվ, չորրորդ եռամսյակի տվյալներով, դեռևս մնում է 7.6%-ով արժեզրկված, ինչը ներմուծման գների միջոցով ընդլայնել է գնաճը: Ըստ տարեկան արդյունքների՝ միջին գնաճը կազմել է 9.6% (ժամանակահատվածի վերջի դրությամբ՝ 9.7%)

Արտաքին հատվածի անբարենպաստ զարգացումները շարունակվել են նաև հոկտեմբեր-նոյեմբերին: Դա արտահայտվել է ընթացիկ հաշվի պակասուրդի խորացմամբ, ինչը հունվար-նոյեմբերին կազմել է 29.9 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելանալով 10.5 մլրդ ԱՄՆ դոլարով, իսկ ընթացիկ հաշվի պակասուրդը ՀՆԱ-ում, ըստ երեք եռամսյակների արդյունքների, կազմել է 8.8%: Ընթացիկ հաշվի պակասուրդի շարունակական խորացումը պայմանավորվել է առևտրային հաշվեկշռի պակասուրդի ավելացմամբ, իսկ վերջինս էլ՝ արտահանման աճի նկատմամբ ներմուծման առաջանցիկ աճով: Արտահանումը ավելացել է հիմնականում կապիտալատար ճյուղերի հաշվին, որտեղ նախկինում իրականացվել էին ներդրումներ: Իսկ ներմուծման մեջ չորրորդ եռամսյակում տեղի է ունեցել կառուցվածքային տեղաշարժ. աճել է կապիտալ և միջանկյալ սպառման ապրանքների ներմուծումը՝ սպառողական ապրանքների ներմուծման նվազման պայմաններում:

Նախորդ տարվա հունվար - նոյեմբերի համեմատ, ծառայությունների հաշվեկշռի դրական մնացորդը կրճատվել է մոտ 2.0 մլրդ ԱՄՆ դոլարով:

Ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում զգալի ավելացել են օտարերկրյա ուղղակի ներդրումները[15], 57.8%՝ նախորդ տարվա հունվար-նոյեմբերի 33.3%-ի փոխարեն: Դրան հակառակ, նվազել է պորտֆելային ներդրումների մասնակցությունը և կազմել 26.7%, իսկ այլ կապիտալինը՝ 46.3%: Նշված ժամանակահատվածում Կենտրոնական բանկը կուտակել է 3.4 մլրդ ԱՄՆ դոլարի պահուստներ:

Չնայած անվանական փոխարժեքի կայունացմանը, այնուամենայնիվ միջինժամկետում գնաճային սպասումները բարձր են նպատակային ցուցանիշից: Նշված սպասումները, ինչպես նաև ծառայությունների գների հետ կապված ռիսկերն ու համաշխարհային շուկայում անորոշությունների շարունակական ընթացքը Կենտրոնական բանկին հիմք են տալիս պահպանելու քաղաքականության տոկոսադրույքներն անփոփոխ՝ 17.5% մակարդակում: Նշված գործոնների ներքո անվանական տոկոսադրույքները դեռևս բարձր են՝ պայմանավորելով բարձր իրական տոկոսադրույքներ:

[15] Հունվար-նոյեմբերին օտարերկրյա ուղղակի ներդրումներն աճել են մոտ 2.4 անգամ և կազմել 18.13 մլրդ ԱՄՆ դոլար:

Վճարային հաշվեկշիռ[16]

Արտաքին միջավայրի վերը նկարագրված զարգացումները արտացոլվել են 2006 թ. ՀՀ վճարային հաշվեկշռի հոսքերի վարքագծում:

Տարվա սկզբից արտաքին աշխարհից փոխանցվող առաջարկի շոկերը 2006 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում աստիճանաբար թուլացել են, ինչի արդյունքում հումքային և միջանկյալ սպառման ապրանքների գների տ/տ աճի տեմպերը նախորդ եռամսյակի նույն ցուցանիշի համեմատ դանդաղել են: Ընդ որում՝ նավթի համաշխարհային գների՝ օգոստոսից սկսված աստիճանական նվազումը չորրորդ եռամսյակում հանգեցրել է նավթի գների մոտ 60 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց մակարդակի, թեև այն դեռևս բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի մակարդակից: Դրան հակառակ՝ արագացել են սպառողական ապրանքների ներմուծման դոլարային գների աճի տեմպերը՝ պայմանավորված գործընկեր երկրների բարձր գնաճով, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ արժույթների արժևորմամբ: Արդյունքում՝ ներմուծման դոլարային գների աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 14.1%, իսկ տարվա արդյունքներով՝ 15.2%, ինչը նպաստել է նաև ներմուծման դոլարային ծավալների բարձր աճին:

Մյուս կողմից՝ նավթի միջազգային գների բարձր մակարդակի պահպանման պարագայում Հայաստանի տնտեսության վրա անուղղակի ազդեցություն են ունեցել Ռուսաստանի տնտեսության զարգացումները: Վերջինս արտահայտվել է արտարժութային հսկայածավալ միջոցների ներհոսքի շարունակական բարձր աճով: Թեև դա ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման տեսանկյունից դիտվում է որպես դրական երևույթ, այնուամենայնիվ, երկընտրանքի առջև է կանգնեցնում Կենտրոնական բանկին՝ ֆինանսական և դրամավարկային կայունության ապահովման տեսանկյունից: 2006 թ. չորրորդ եռամսյակն ավարտվել է ոչ առևտրային բնույթի փոխանցումների տ/տ 41.3% աճով, իսկ 2006 թ. ընթացքում վերջինիս աճը կազմել է 33.7%:

Արտաքին միջավայրի, ինչպես նաև ներքին տնտեսության զարգացումները հանգեցրել են չորրորդ եռամսյակի վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդի անվանական և

[16] 2006թ. վճարային հաշվեկշռի առաջին երեք եռամսյակների ցուցանիշները մարտի 29-ի դրությամբ պաշտոնական ցուցանիշներն են, իսկ չորրորդ եռամսյակի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:

ՀՆԱ-ում որպես կշիռ տ/տ ցուցանիշի խորացմանը, ինչն առևտրային հաշվեկշռի պակասուրդի խորացման արդյունք էր: Չորրորդ եռամսյակի վերջին արտահանման աճը կազմել է տ/տ 13.4%՝ ներմուծման տ/տ 30.1% աճի պայմաններում: 2006 թ. արտահանման (կրեդիտ) և ներմուծման (դեբետ) ծավալների աճը կազմել է համապատասխանաբար 3.4% և 21.1%:

Վճարային հաշվեկշիռը հավելուրդով է եղել, որի արդյունքում արտարժութային շուկայում շարունակվել են արժևորման դրսևորումները, ինչը զուգակցվել է դրամայնացման շարունակական գործընթացով:

Առաջարկի տեսանկյունից՝ արտաքին աշխարհի ազդեցությունը գնաճի վրա 2006 թ. չորրորդ եռամսյակում եղել է ընդլայնող՝ հաշվի առնելով արտաքին գների լագային ազդեցությունը, ինչպես նաև այն, որ չնայած երրորդ եռամսյակի համեմատ դրանց մակարդակները նվազել են, սակայն նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ դեռևս բարձր են: Այնուամենայնիվ, ներմուծման դոլարային գների բարձր ցուցանիշի բացասական ազդեցությունը հիմնականում չեզոքացվել է անվանական փոխարժեքի շարունակվող արժևորմամբ[17]:

Պահանջարկի տեսանկյունից ևս արտաքին աշխարհը գնաճի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն, մասնավորապես՝ ֆինանսական և կապիտալի հսկայածավալ ներհոսքը նպաստել է տնտեսությունում ներքին պահանջարկի լրացուցիչ աճին: Ֆինանսական ներհոսքի և դրա հետևանքով պահանջարկի զգալի աճի ճնշումները գնաճի վրա թուլացել են հետևյալ գործոնների միջոցով:

1. Աճող պահանջարկի մի մասը բավարարվել է ներմուծման հաշվին, ինչը մի կողմից՝ ներքին տնտեսությունում ապահովել է ապրանքների և ծառայությունների լրացուցիչ առաջարկ, մյուս կողմից՝ ներմուծման առաջանցիկ աճի հետևանքով առևտրային հաշվեկշռի պակասուրդի աճը հանգեցրել է ֆինանսական միջոցների արտահոսքի ավելացման:
2. Փոխարժեքի շարունակվող արժևորման արդյունքում նվազել է երկիր ներհոսող արտարժութային միջոցների դրամային արժեքը, հետևաբար և՝ դրա հաշվին ստեղծվող պահանջարկը:

[17] *Իրական տնտեսությունում գների կոշտությունների և շուկայական կառուցվածքի հետևանքով փոխարժեքի արժևորումն անմիջապես չի հանգեցնում ներքին գների նույնչափ նվազմանը, այդ իսկ պատճառով ներմուծման դոլարային գների աճը, նույնիսկ նույնքան արժևորման պայմաններում, այնուամենայնիվ կարող է ընդլայնել գնաճը: Թվային վերլուծությունների մանրամասները տե՛ս «Ներմուծման գները» բաժնում:*

Ընթացիկ հաշիվ

2006 թ. չորրորդ եռամսյակում պահպանվել են տարեսկզբից նկատվող միտումները. այն է՝ մասնավոր տրանսֆերտների և «Եկամուտներ» հոդվածով արտարժութային միջոցների զուտ ներհոսքը շարունակել է դրական ազդեցություն ունենալ ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման վրա: Մինչդեռ առևտրային հաշվեկշռի պակասուրդը շարունակել է խորանալ, ինչն էլ ընթացիկ հաշվի պակասուրդի աճի պատճառ է դարձել: Ընդ որում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը չորրորդ եռամսյակում ավելացել է ինչպես բացարձակ արժեքով, այնպես էլ ՀՆԱ-ում տեսակարար կշռով: Ընթացիկ հաշվի պակասուրդը չորրորդ եռամսյակում ավելացել է 43.6 մլն ԱՄՆ դոլարով (մոտ 1.7 անգամ) և կազմել 105.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ վերջինիս կշիռը ՀՆԱ-ում կազմել է 4.1%՝ նախորդ տարվա նույն եռամսյակի 3.5%-ի փոխարեն: 2006 թ. տարեկան արդյունքներով՝ ընթացիկ հաշվի պակասուրդը խորացել է 159.2 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 352.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ընթացիկ հաշիվ /ՀՆԱ հարաբերակցությունը՝ 5.3%՝ նախորդ տարվա 3.9%-ի փոխարեն:

2006 թ. չորրորդ եռամսյակում առևտրային հաշվեկշռի պակասուրդը խորացել է 103.9 մլն ԱՄՆ դոլարով (54.0%-ով) և կազմել 296.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ տարեկան կտրվածքով վերջինս ավելացել է 301.5 մլն ԱՄՆ դոլարով (51.3%-ով) և կազմել 889.5 մլն ԱՄՆ դոլար: Առևտրային հաշվի պակասուրդի խորացումը մի կողմից կրել է սպառողական և հատկապես ներդրումային ապրանքների նկատմամբ ներքին պահանջարկի աճի, մյուս կողմից՝ մասամբ արժեքավորվող փոխարժեքի ազդեցությունները:

Արտահանման ծավալների (կրեդիտ) աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 13.4% (արտահանումը կազմել է 313.4 մլն ԱՄՆ դոլար), իսկ 2006 թ. գրանցվել է արտահանման ցածր՝ 3.4% աճ: Չորրորդ եռամսյակում «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների տ/տ 7.4%-ով նվազումը փոխհատուցվել է «Հանքահումքային արտադրանք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» և «Պատրաստի

սննդի արտադրանք» ապրանքախմբերի համապատասխանաբար տ/տ 53.0%, 14.1%, 11.8% աճով: «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման նվազումը հիմնականում պայմանավորվել է համաշխարհային շուկաներում մոլիբդենի գների անկմամբ[18]: Վերջինիս հակառակ՝ «Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի աննախադեպ բարձր աճին նպաստել է չորրորդ եռամսյակում պղնձի գների տ/տ մոտ 52.0% աճը (չնայած չորրորդ եռամսյակի ընթացքում պղնձի գները նվազման միտում են դրսևորել, այնուամենայնիվ նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ դրանց մակարդակը դեռևս բարձր է): «Պատրաստի սննդի արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալների տ/տ աճը պայմանավորվել է տարեսկզբից արձանագրվող տեխնիկական խնդիրների լուծմամբ, չնայած 2006 թ. արդյունքներով այս ապրանքախմբի արտահանման ծավալները նվազել են 1.6%-ով: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների տ/տ 14.1% աճ է գրանցվել չորրորդ եռամսյակում, ինչը պայմանավորվել է նշված ապրանքախմբում ներառված երկու խոշոր ենթաապրանքախմբերի՝ ադամանդի և ոսկու արտահանման աճով[19]: Այնուամենայնիվ, տարեկան արդյունքներով այն դեռևս ցածր է նախորդ տարվա մակարդակից:

«Հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի արտահանման ծավալները 2006 թ. ավելացել են 45.9%-ով, իսկ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», ինչպես նաև «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները 2006 թ. համապատասխանաբար նվազել են 4.7%-ով և 12.8%-ով:

Ներմուծման (դեբետ) աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 30.1% (ներմուծումը կազմել է 609.6 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում՝ բոլոր ապրանքախմբերի, բացառությամբ մեկ՝ փոքր կշիռ ունեցող ապրանքախմբի, ներմուծման ծավալները ավելացել են: Ներմուծման աճին, բացի մեծ կշիռ կազմող ապրանքախմբերի՝ «Մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» (չորրորդ եռամսյակում տ/տ 10.9% աճ), «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» (չորրորդ եռամսյակում տ/տ 51.8% աճ), «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» (չորրորդ եռամսյակում տ/տ 40.0% աճ) բարձր աճից, շարունակում են նպաստել նաև ոչ մեծ կշիռ ունեցող՝ «Քիմիա և դրա հետ կապված արդյունաբերության ճյուղերի արտադրանք», «Պլաստմասսա և դրանցից իրեր» ապրանքախմբերի համապատասխանաբար 31.7% և 2.0 անգամ տ/տ աճերը:

«Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ներմուծման աճը չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 6.6%, սակայն տարեկան արդյունքներով վերջինս նվազել է 10.1%-ով: Այս ապրանքախմբում ներառված ադամանդի ներմուծման ծավալների 8.4%-ով նվազումը փոխհատուցվել է ոսկու ներմուծման աճով, որով էլ պայմանավորվել է ապրանքախմբի ցուցանիշի աճը չորրորդ եռամսյակում:

Արտահանման ծավալների աճը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ցուցանիշը հաշվի առնելու, չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 13.1%, մինչդեռ ներմուծման ծավալները, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի ցուցանիշի, ավելացել են 34.6%-ով: Արդյունքում՝ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, առանց նշված հոդվածի, չորրորդ եռամսյակում ավելացել է 110.9 մլն ԱՄՆ դոլարով (55.0%-ով) և կազմել 312.6 մլն ԱՄՆ դոլար, իսկ 2006 թ. տարեկան արդյունքներով ավելացել է 320.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 897.3 մլն ԱՄՆ դոլար:

Արտաքին առևտրի աշխարհագրական տեսանկյունից՝ ապրանքային հաշվեկշռի պակասուրդի խորացումը հիմնականում պայմանավորվել է ԱՊՀ, Եվրոմիության, Իրանի և Թուրքիայի հետ ապրանքային հաշվեկշռի պակասուրդների համապատասխանաբար 38.6%, 58.8%, 32.2%, 36.6% խորացմամբ[20]: Մինչդեռ Չինաստանի հետ

[18] *Մոլիբդենի կշիռը նշված ապրանքախմբում 2006 թ. կազմել է շուրջ 66.0%:*


[19] *Ադամանդի համաշխարհային շուկայում արձանագրվում է որակյալ և խոշոր քարերի առաջարկի աստիճանական նվազում՝ պայմանավորված որակյալ քարերի հումքի արդյունահանման ծավալների նվազմամբ: Դրա հետևանքով խոշոր քարերի գների զգալի աճը հանգեցրել է պահանջարկի կառուցվածքային տեղաշարժի. խոշոր քարերի պահանջարկը նվազել է, մանր քարերինը՝ ավելացել, ինչը բնականոն երևույթ է ադամանդի շուկաներում: Պետք է նշել, որ Հայաստանը մասնագիտացած է միջին քարերի մշակման և արտահանման մեջ:*

[20] *Երկրների հետ ապրանքային հաշվեկշիռների հաշվարկման ժամանակ օգտագործվել են ներմուծման «ըստ ծագման վայրի» վիճակագրական տվյալները՝ «ըստ առևտուր անող երկրի» վիճակագրական տվյալների փոխարեն:*


Ընթացիկ հաշիվը 2004 – 2006 թթ. (մլն ԱՄՆ դոլար)

	IV եռ. 04	2004	IV եռ. 05	2005	IV եռ. 06	2006
Ընթացիկ հաշիվ	-11.2	-161.6	-61.6	-193.3	-105.2	-352.5
Առևտրային հաշվեկշիռ	-117.8	-458.0	-192.3	-587.9	-296.2	-889.5
Ծառայություններ (զուտ)	-18.8	-70.7	-20.5	-59.3	-21.4	-57.6
Եկամուտներ (զուտ)	21.0	36.7	8.4	44.7	29.4	75.4
Մասնավոր տրանսֆերտներ (զուտ)	81.5	269.4	113.6	341.9	158.0	451.7
Պաշտոնական տրանսֆերտներ (զուտ)	22.9	61.0	29.2	67.3	24.9	67.6

ապրանքային հաշվեկշռի պակասուրդը խորացել է 2.1 անգամ:



Գրաֆիկ 1.7
2006 թ. IV եռամսյակում արտահանման հիմնական 4 ապրանքախմբերից երեքի ծավալներն աճել են (մլն ԱՄՆ դոլար)



Գրաֆիկ 1.8
2006 թ. IV եռամսյակում ներմուծման գրեթե բոլոր հոդվածների ցուցանիշների աճ է արձանագրվել (մլն ԱՄՆ դոլար)

2006 թ. չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ծառայությունների հաշվեկշռի պակասուրդը փոքրինչ խորացել է՝ 4.4%-ով (պակասուրդը կազմել է 21.4 մլն ԱՄՆ դոլար՝ 20.5 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն): Ծառայությունների արտահանման աճը 2006 թ. չորրորդ եռամսյակում կազմել է տ/տ 8.4% կամ 7.5 մլն ԱՄՆ դոլար, իսկ ներմուծման աճը՝ 7.7% կամ 8.4 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս հիմնականում պայմանավորվել է ապրանքային ներմուծման հետ կապված՝ ոչ ռեզիդենտների կողմից մատուցված տրանսպորտային ծառայությունների աճով: Այնուամենայնիվ 2006 թ. ծառայությունների հաշվեկշռի պակասուրդը կրճատվել է 1.7 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 57.6 մլն ԱՄՆ դոլար:

Մասնավոր տրանսֆերտների և եկամուտների զուտ ներհոսքը շարունակել է դրական ազդեցություն ունենալ ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատման վրա: Մասնավոր տրանսֆերտների աննախադեպ աճը շարունակվել է նաև 2006 թ. չորրորդ եռամսյակում. գրանցվել է մասնավոր տրանսֆերտների[21] տ/տ 39.1% աճ: Եկամուտների զուտ ներհոսքն ավելացել է 3.5 անգամ և կազմել 29.4 մլն ԱՄՆ դոլար, իսկ պաշտոնական տրանսֆերտները նվազել են 14.7%-ով: «Եկամուտներ» հոդվածի ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորվել է սեզոնային աշխատողների աշխատուժից եկամուտների աճով:


Ընթացիկ հաշվի պակասուրդի խորացումն այնուամենայնիվ զսպել է ֆինանսական ներհոսքի արդյունքում պահանջարկի աճի ընդլայնող ազդեցությունը գնաճի վրա, քանի որ հանգեցրել է մի կողմից՝ եկամուտների արտահոսքի ավելացման, մյուս կողմից՝ ներմուծման միջոցով սպառողական ապրանքների իրական ծավալների լրացուցիչ առաջարկի:

[21] Ֆիզիկական անձանց՝ ոչ առևտրային նպատակով կատարված զուտ փոխանցումները չորրորդ եռամսյակում ավելացել են տ/տ 41.3%-ով և կազմել 248.2 մլն ԱՄՆ դոլար (2006 թ. աճը կազմել է 33.7%): Վերջինս ներառում է սեզոնային աշխատողների աշխատուժից ստացվող եկամուտները, մասնավոր տրանսֆերտները, ինչպես նաև կապիտալ տրանսֆերտները: Ըստ երկրների՝ գերակշռում են Ռուսաստանից և ԱՄՆ-ից փոխանցումները, համապատասխանաբար՝ 90.0% և 9.1% կշիռներով զուտ փոխանցումների մեջ:

Կապիտալի և ֆինանսական հաշիվ

2006 թ. չորրորդ եռամսյակում արտաքին աշխարհի խնայողությունների՝ կապիտալի և ֆինանսական հաշվի զուտ ներհոսքը զգալի գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը, որի պարագայում արձանագրվել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պահուստների մեծածավալ աճ: Վերջինս, բացի մասնավոր հատվածի կողմից կապիտալի զուտ ներհոսքի աննախադեպ աճից[22], պայմանավորվել է նաև Կառավարության սեփականաշնորհման միջոցների 85.6 մլն ԱՄՆ դոլար փոխարկմամբ: Կապիտալի և ֆինանսական հաշվի զուտ ներհոսքը չորրորդ եռամսյակում կազմել է 355.7 մլն ԱՄՆ դոլար՝ աճելով տ/տ 4.3 անգամ: Մասնավորապես՝ մասնավոր հատվածի կողմից այլ կապիտալի զուտ ներհոսքը չորրորդ եռամսյակում կազմել է 121.1 մլն ԱՄՆ դոլար:

Նվազել են կապիտալ տրանսֆերտները՝ տ/տ 27.2% (ծավալը կազմել է 13.0 մլն ԱՄՆ դոլար)՝ կազմելով ընթացիկ հաշվի պակասուրդի ֆինանսավորման 12.3%-ը[23]: Օտարերկրյա ուղղակի ներդրումները չորրորդ եռամսյակում աճել են տ/տ 20%-ով և կազմել 100.0 մլն ԱՄՆ դոլար՝ ֆինանսավորելով ընթացիկ հաշվի պակասուրդի 95.0%-ը, այլ կապիտալի ներհոսքը՝ 197.3%-ը (209.5 մլն ԱՄՆ դոլար), իսկ պետական հատվածի վարկերի զուտ տեղաբաշխման ֆինանսավորումը կազմել է 31.6%: Ընթացիկ հաշվի ու կապիտալի և ֆինանսական հաշվի վերը նշված հոսքերի պայմաններում վճարային հաշվեկշիռը ավելցուկով է եղել, որի արդյունքում ԿԲ ՁԱԱ-ը չորրորդ եռամսյակում աճել է 248.8 մլն ԱՄՆ դոլարով: 2006 թ. տարեկան արդյունքներով՝ կապիտալի և ֆինանսական հաշվի զուտ ներհոսքը կազմել է 737.7 մլն ԱՄՆ դոլար, ինչը զգալի գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը: Վերջինս նպաստել է ԿԲ ՁԱԱ 380.8 մլն ԱՄՆ դոլարով աճին:



Գրաֆիկ 1.9
2006թ. IV եռամսյակում կապիտալի ներհոսքը զգալի գերազանցել է ընթացիկ հաշվի պակասուրդը (մլն ԱՄՆ դոլար)

Ֆինանսական ներհոսքի զգալի աճը հերթական անգամ նպաստել է տնտեսությունում պահանջարկի աճին՝ ճնշումներ առաջացնելով գնաճի վրա: Սակայն, մյուս կողմից, Կենտրոնական բանկի կողմից վարվող արժութային լողացող քաղաքականության արդյունքում անվանական փոխարժեքը արժևորվել է, և զսպվել են գնաճի վրա ֆինանսական միջոցների մեծածավալ ներհոսքի ճնշումները[24]:

Տոկոսադրույքներ, փոխարժեք և դրամավարկային զարգացումներ

Տոկոսադրույքներ

2006 թվականը, որպես գնաճի նպատակադրման ռազմավարության ներդրման անցումային տարի, պետք է առանձնանար ոչ միայն այդ ռազմավարության հիմնական սկզբունքների

[22] Այլ կապիտալի մասնավոր հատվածում գրանցվում են հիմնականում մասնավոր հատվածի կողմից վերցված առևտրային վարկերը և կանխիկ արտարժույթը: Ըստ ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության կողմից կատարված հարցումների արդյունքների՝ 2006 թ. ընթացքում գնահատվել է ոչ բանկային հատվածի միջոցով կանխիկ արտարժույթի զուտ ներհոսքի 735.5 մլն ԱՄՆ դոլար ծավալ: Այս ներհոսքի մի մասը գնահատվել է որպես կանխիկ կապիտալ տրանսֆերտներ և ուղղակի ներդրումներ՝ մոտ 147.1 մլն ԱՄՆ դոլարի չափով, իսկ մյուս մասը՝ որպես ընթացիկ հաշվի գործարքներ (զբոսաշրջության արտահանում, սեզոնային աշխատողների աշխատավարձ և մասնավոր տրանսֆերտներ)՝ 588.4 մլն ԱՄՆ դոլար: Ավելացնելով այս գումարները ընթացիկ և կապիտալի ու ֆինանսական հաշիվներին և որպես գործարքի մյուս կողմ ստանալով այլ մասնավոր հատվածի կանխիկ արտարժույթի ավելացում նույն գումարի չափով՝ կարող ենք փաստել, որ ընթացիկ հաշվի հավելուրդը 2006 թ. կազմել է 346.3 մլն ԱՄՆ դոլար կամ ՀՆԱ 5.4%-ը:

[23] Մեր տնտեսություն ուղարկվող մասնավոր տրանսֆերտների մի մասը հատկացվում է անշարժ գույքի ձեռքբերմանը, մի մասը՝ սպառմանը, մյուս մասը (որը գալիս է կանխիկ ճանապարհով և չի գրանցվում որևիցե տեղ)՝ հասարակության կանխիկ արտարժույթի պաշարների ավելացմանը: Ուստի իրատեսական կլիներ, որ մասնավոր տրանսֆերտների և մասնավոր հատվածի այլ կապիտալի միջոցների մի մասը ցույց տրվեր որպես կապիտալ տրանսֆերտներ:

[24] Փոխարժեքի արժևորումը փոքրացնում է արտարժույթով արտահայտված ֆինանսական միջոցների դրամական համարժեքը, որն ավելի մեծ կլիներ, եթե փոխարժեքը հաստատագրվեր: Ուստի երկրորդ դեպքում դրամով արտահայտված պահանջարկի անվանական մեծությունը շատ ավելի մեծ կլիներ, ճնշումները գների վրա՝ նույնպես:

կիրառմամբ, այլ նաև դրանից բխող որոշակի բարեփոխումներով: Վերջինս հիմնականում հանգելու էր դրամավարկային գործիքների կիրառման մոտեցումները գնաճի նպատակադրման ռազմավարության պայմաններին համապատասխանեցնելու խնդրին: Միևնույն ժամանակ, ներդրվող նոր ռազմավարության ներքո իրականացված քաղաքականության թափանցիկությունն ապահովելու պահանջից ելնելով՝ նախատեսվում էր լայն հասարակությանը ԿԲ գործունեության մասին իրազեկել մամուլի ամենամսյա հաղորդագրությունների և եռամսյակային հաշվետվությունների պարբերական հրապարակումների միջոցով: Դա ոչ միայն նպատակ ուներ մանրամասն մեկնաբանությունների և գործոնային վերլուծության միջոցով ներկայացնելու ԿԲ հիմնական նպատակի ապահովմանն ուղղված դրամավարկային քաղաքականության իրականացման ընթացքն ու արդյունքները, այլ նաև ազդակներ հաղորդելու հետագա 12-ամսյա կտրվածքով սպասվող գնաճային զարգացումների և հնարավոր ռիսկերի վերաբերյալ:

Ըստ գնաճի նպատակադրման ռազմավարության՝ ՀՀ ԿԲ վերջնական նպատակը գնաճի նպատակային մակարդակն է: Որպես անվանական խարիսխ է ընդունվել գնաճի կանխատեսված մակարդակը, որպես գործառնական նպատակ՝ կարճաժամկետ տոկոսադրույքը, սակայն, ֆինանսական կայունության ապահովման նկատառումներից ելնելով, ԿԲ-ն կիրառելու է նաև ծավալային կարգավորման մոտեցումներ: ԿԲ-ն կանխատեսում է ապագա ժամանակահատվածի գնաճը, գնահատում նպատակային ցուցանիշից դրա շեղումը և քաղաքականությունը ուղղորդում նպատակային և կանխատեսված ցուցանիշների միջև շեղման վերացմանը: Գործում է *տոկոսադրույք - գնաճի կանխատեսված մակարդակ - գնաճ* շղթան:

Նշված շղթայի առաջին օղակում տոկոսադրույքի փոխանցման լծակի գործունեության ակտիվացման և կարճաժամկետ տոկոսադրույքի դերի բարձրացման նպատակով ՀՀ ԿԲ-ն ապրիլից փոփոխություն է կատարել դրամավարկային քաղաքականության գործիքակազմում: Հիմնական փոփոխությունն այն է, որ անուղղակի գործիքներն ուղղված են կարճաժամկետ տոկոսադրույքի նպատակային ցուցանիշի ապահովմանը:

Որպես հիմնական՝ կիրառվում է ռեպո գործիքը: ՀՀ կենտրոնական բանկը ամեն չորեքշաբթի շուկային առաջարկում է մեկշաբաթյա ռեպո գործառնություն՝ ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքով, շուկայում մշտապես պահպանում է իրացվելիության անհրաժեշտ մակարդակ՝ միաժամանակ ապահովելով կարճաժամկետ տոկոսադրույքի նպատակային ցուցանիշը:

Բանկային համակարգում առկա ավելցուկային իրացվելիության կրճատման խնդիրները լուծելու նպատակով ԿԲ-ն թողարկում է արժեթղթեր, որոնք դիտարկվում են որպես կառուցվածքային գործիք, և յուրաքանչյուր ամսվա սկզբին հրապարակվում է թողարկումների ամսական օրացույցը:

Համեմատաբար ավելի երկարատև ժամանակահատվածում շուկայի մասնակիցներին իրացվելիություն տրամադրելու կամ ավելցուկային իրացվելիությունը կրճատելու նպատակով ԿԲ-ն կիրառում է երկրորդային շուկայում պետական արժեթղթերի առք ու վաճառքի գործառնությունները:

Իրացվելիության և տոկոսադրույքների կարճաժամկետ տատանումների ճշգրտման համար կիրառվում են ճշգրտող գործիքներ:

Կենտրոնական բանկը ֆինանսական շուկայում հանդես է գալիս նաև որպես վերջին ատյանի վարկատու և հնարավորություն է տալիս առևտրային բանկերին մշտապես ներդնելու ավելցուկային միջոցները՝ շուկայականից համապատասխանաբար ավելի բարձր և ավելի ցածր տոկոսադրույքներով: Մշտական հնարավորության գործիքների ժամկետը սահմանվել է մեկ օր, ընդ որում՝ դրանց տոկոսադրույքները, որպես կանոն, հավասարաչափ են հեռացված վերաֆինանսավորման տոկոսադրույքից:

Ֆինանսական ներհոսքի ազդեցությունը մեղմելու, փոխարժեքի տատանումները հարթելու և դրամայնացման գործընթացը խթանելու նպատակով ԿԲ-ն իրականացնում է նաև արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ:

Տարվա ընթացքում ձևավորված դրամավարկային միջավայրի վրա ազդեցություն են ունեցել տնտեսության տարեկան զարգացումների արդյունքում դրսևորված որոշակի ռիսկեր:

Մասնավորապես.

- իրական հատվածում՝ անբարենպաստ եղանակի հետևանքով բուսաբուծության համախառն բերքի նվազումը զսպել է ամռան ամիսներին «Միրգ» և «Բանջարեղեն» ապրանքախմբերի գների սեզոնային անկումը,
- արտաքին հատվածում՝ էներգակիրների, մասնավորապես՝ նավթի միջազգային գների աճը,

- հարկաբյուջետային հատվածում՝ տարեկան կտրվածքով ծախսերի անհամաչափ բաշխվածությունը և դրանց հիմնական մասի կուտակումը չորրորդ եռամսյակում,
- դրամայնացման գործընթացի արագացումը:


Վերը նշված առաջին երկու ռիսկերի դրսևորման արդյունքում գնաճի վարքագիծը զգալիորեն շեղվել է նախանշված սցենարից, ինչի հետևանքով արդեն հուլիս-օգոստոսին գնաճը գերազանցել է տ/տ 6%-ը: Ակնհայտ էր, որ տարեվերջին կանխատեսված մինչև 3% մակարդակը գերազանցվելու էր՝ վերոնշյալ ոչ մոնետար գործոններով պայմանավորված: Այդ պարագայում զսպողական դրամավարկային քաղաքականության իրականացումը նպատակահարմար չէր նաև ֆինանսական շուկայում գնային կտրուկ տատանումներ չառաջացնելու տեսանկյունից, առավել ևս, որ գնաճի վրա ազդեցությունը դրսևորվելու էր հիմնականում 9 -12 ամիս լագով, այսինքն՝ 2007-ի երկրորդ կիսամյակում: Այդ իսկ պատճառով սեպտեմբերին ՀՀ ԿԲ-ն և ՀՀ կառավարությունը համատեղ քննարկել և գնաճի տարեվերջի ծրագրային մակարդակի վերանայման որոշում են կայացրել՝ դեկտեմբերի վերջի համար այն սահմանելով տ/տ 5% $\pm$ 1.5%:

Հաջորդ գործոնը, որն անդրադարձել է տարվա ընթացքում ԿԲ կողմից իրականացված դրամավարկային քաղաքականության ընթացքի վրա, դրամայնացման գործընթացն է: Այն տարվա առաջին կեսին, նախորդ տարվա համեմատ, որոշ չափով դանդաղել է, իսկ երկրորդ կիսամյակից սկսած՝ կրկին ակտիվացել, որից էլ մասամբ ածանցվել է տարվա ընթացքում կիրառված դրամավարկային գործիքների ընտրությունը:

Նկատի ունենալով արդեն իսկ առաջին եռամսյակում կանխատեսված բարձր գնաճի հավանականությունը, ՀՀ ԿԲ-ն հունվարի վերջին ԿԲ հիմնական գործիքի տոկոսադրույքը 3.5-ից բարձրացրել է 4%-ի և հաջորդող ամիսների ընթացքում նախապատվությունը տվել է ֆինանսական շուկայում ակտիվ գործառնությունների իրականացման միջոցով բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության ներքաշմանը: Սակայն, հիմնականում պայմանավորված միջազգային շուկաներում հանքահումքային ապրանքների բարձր գներով և գյուղատնտեսության ոլորտի իրական աճի նվազմամբ, երբ գնաճի ճնշումները ուժգնանում էին, ԿԲ-ն, օգոստոսից սկսած, ռեպո տոկոսադրույքը բարձրացրել է 0.25-ական տոկոսային կետով՝ հոկտեմբերին հասցնելով 4.75%-ի: Հավասարաչափ բարձրացվել են նաև լոմբարդային վարկի և ներգրավված միջոցների տոկոսադրույքները, որոնք հոկտեմբերին համապատասխանաբար կազմել են 7.75% և 1.75%:

Տոկոսադրույքի փոխանցման լծակի արդյունավետության բարձրացման նկատառումներից ելնելով, միաժամանակ փորձելով ուղղորդել միջբանկային ռեպո տոկոսադրույքը՝ ԿԲ-ն տարվա ընթացքում ֆինանսական շուկայում հանդես է եկել կարճաժամկետ գործառնությունների իրականացմամբ, իսկ ավելցուկային իրացվելիությունը ներքաշել է հիմնականում պարտատոմսերի տեղաբաշխումների միջոցով:

Պայմանավորված ապրիլից՝ ԿԲ գործիքակազմի փոփոխությամբ, ապրիլ - դեկտեմբեր ժամանակահատվածում ինչպես միջբանկային ռեպո շուկայում, այնպես էլ ԿԲ կողմից իրականացված ռեպո գործառնությունների ծավալները ավելացել են: Ռեպո երկրորդային շուկայում 2006-ին իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 167.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա համեմատ աճելով 70%-ով, իսկ ռեպո տոկոսադրույքը դեկտեմբերին կայունացել է 5.25%-ի շրջակայքում: Կենտրոնական բանկի կողմից իրականացված ռեպո գործառնությունների ընդհանուր ծավալը տարվա ընթացքում կազմել է 51.0 մլրդ դրամ:




Գրաֆիկ 1.10
ԿԲ ռեպո և շուկայական ռեպո տոկոսադրույքների շեղումը փոքր - ինչ նվազել է

Զգալիորեն ավելացել են նաև ԿԲ ներքաշող գործառնությունների ծավալները: Մասնավորապես՝ ԿԲ կողմից իրականացվել է պարտատոմսերի 75 թողարկում՝ 77.5 մլրդ դրամ ծավալով, որոնց նկատմամբ ձևավորված ընդհանուր պահանջարկը կազմել է 111.1 մլրդ դրամ: Տեղաբաշխված ԿԲ պարտատոմսերի ծավալը կազմել է 70.1 մլրդ դրամ՝ 5.46% միջին եկամտաբերությամբ՝ 2005 թ. համեմատությամբ աճելով 1.11 տոկոսային կետով: Իրականացվել է նաև 9.6 մլն ԱՄՆ դոլարի արտարժույթի ներգրավման սվոփ: Առևտրային բանկերից Կենտրոնական բանկի

ներգրաված միջոցների համախառն ծավալը կազմել է 226.8 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը՝ 154.5 մլրդ դրամը, ներգրավվել է 2006 թ. չորրորդ եռամսյակի ընթացքում: Այս գործիքի վրա ևս ազդեցություն է ունեցել ԿԲ գործիքակազմում կատարված փոփոխությունը, քանի որ ԿԲ կողմից ներգրավվող միջոցների ժամկետների կրճատումը (մինչև 1 օր) այն դարձրել է ավելի հասանելի և արդյունավետ:


Պետական (գանձապետական) պարտատոմսերի շուկայում ևս 2006 թ. ընթացքում տոկոսադրույքները բարձրացել են: ՊՊ առաջնային շուկայում 2006 թ. ընթացքում ձևավորված տարեկան միջին եկամտաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է՝ կարճաժամկետ հատվածում 0.98 տոկոսային կետով՝ կազմելով 5.12%, միջնաժամկետ հատվածում՝ 0.7 տոկոսային կետով՝ կազմելով 6.11%, իսկ երկարաժամկետ հատվածում՝ 1.47 տոկոսային կետով՝ կազմելով 9.3%:




Գրաֆիկ 1.11
Տոկոսադրույքների աճ եկամտաբերության կորի կարճաժամկետ հատվածում

Ինչպես ցույց է տալիս եկամտաբերության կորի ուսումնասիրությունը, եկամտաբերությունները ՊՊ երկրորդային շուկայում աճել են կորի ողջ երկայնքով: Եկամտաբերության կորի դիրքի փոփոխության գերակշիռ մասը՝ 90%-ը, պայմանավորվել է կորի մակարդակի համընթաց (զուգահեռ) տեղաշարժով, որը, ի հաշիվ եկամտաբերությունների աճի, կազմել է 1.32 տոկոսային կետ: 48.58%-ով փոփոխվել է կորի գոգվածությունը (0.061-ից 0.031), ինչը վկայում է երկարաժամկետ ու կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքների միջև տարբերության նվազման մասին: Մնացորդային գործոնները կորի փոփոխության մեջ կազմել են -38.58%:

2006 թվականի դեկտեմբերին ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.5 տոկոսային կետով՝ կազմել են 5.95%, իսկ դոլարային ավանդների տոկոսադրույքները մնացել են գրեթե նույնը՝ կազմելով 4.53%: Արդյունքում՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 1.42 տոկոսային կետ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 1.86-ի փոխարեն:



Գրաֆիկ 1.12
Բանկային համակարգում ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով ավանդների տոկոսադրույքները գրեթե չեն փոխվել




Գրաֆիկ 1.13
Բանկային համակարգի կողմից ՀՀ դրամով և ԱՄՆ դոլարով տրամադրված վարկերի տոկոսադրույքները մնացել են գրեթե անփոփոխ

Առևտրային բանկերի կողմից ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով տրամադրված վարկերի տոկոսադրույքները նախորդ տարվա համեմատ մնացել են գրեթե անփոփոխ՝ կազմելով համապատասխանաբար՝ 17.68% և 17.20%: ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով վարկերի ու ավանդների տոկոսադրույքների տարբերությունները համապատասխանաբար կազմել են 13.15 և 11.25 տոկոսային կետ:

Փոխարժեք

Անվանական փոխարժեքը՝ որպես փոխանցման կարևոր և արագ գործող ուղի, իր ազդեցությունն է ունենում ամբողջ տնտեսության վրա, ինչը արտացոլվում է ներմուծման գների, արտահանման և ներմուծման ծավալների, հետևաբար՝

ընթացիկ հաշվի հաշվեկշռի վրա: Անվանական փոխարժեքն ազդում է նաև տրանսֆերտների դրամային մեծության, հետևաբար նաև՝ պահանջարկի վրա:




Գրաֆիկ 1.14
ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքը 2006 թ.

ՀՀ դրամի փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2006 թվականին, նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համեմատ, դրսևորել է արժևորման միտում: Փոխարժեքի նման վարքագիծը պայմանավորվել է ֆինանսական ներհոսքի և դրամի նկատմամբ պահանջարկի աճի արդյունքում ձևավորված վճարային հաշվեկշռի ավելցուկով: 2006 թ. չորրորդ եռամսյակում դրամի արժևորումը կազմել է 9.52%[25], իսկ տարեկան արժևորումը՝ 23.85%[25], ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը նախորդ տարվա միջինի համեմատ արժևորվել է 10.01%-ով՝[25] 457.69 դրամից հասնելով 416.04 դրամի:

2006 թ. ընթացքում միջբանկային շուկայում իրականացված գործառնությունների համախառն ծավալը կազմել է 5024.93 մլն ԱՄՆ դոլար, ինչը 66.09%-ով ավելի է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշից: Արժութային շուկայի գործառնությունների ծավալները առավելապես աճել են չորրորդ եռամսյակում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 86.17%-ով) և կազմել 1746.14 մլն ԱՄՆ դոլար: Վերջինս վկայում է արտաքին առևտրաշրջանառության ծավալների, արտաքին ֆինանսական ներհոսքի և ներքին տնտեսության բարձր աճի միտումների մասին:

Տարվա ընթացքում եվրո/դրամ գործառնությունների շուկայում ծավալներն ավելացել են 43.62%-ով: Համախառն ծավալը կազմել է 336.36 մլն եվրո (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ 234.20 մլն եվրո): Արժութային շուկայի այս հատվածում նույնպես ծավալները առավելապես աճել են չորրորդ եռամսյակում (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 58.78%-ով) և կազմել 112.53 մլն եվրո: Ֆինանսական ներհոսքի ազդեցությունը մեղմելու, փոխարժեքի տատանումները հարթելու և դրամայնացման գործընթացը խթանելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 2006 թ-ին ՀՀ բանկերից զուտ գնել է 245.33 մլն ԱՄՆ դոլար, որից 131.36 մլն ԱՄՆ դոլարը՝ չորրորդ եռամսյակում (նախորդ տարի այդ ցուցանիշները կազմել էին համապատասխանաբար 102.38 և 7.28 մլն ԱՄՆ դոլար):



Գրաֆիկ 1.15
ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները (ԱՄՆ դոլար)

Չորրորդ եռամսյակում ՀՀ դրամի անվանական արդյունավետ փոխարժեքի միջին արժևորումը կազմել է տ/տ 15.4 տոկոս, որը էապես բարձր էր նախորդ եռամսյակի ցուցանիշից (9.9 տոկոս): Դա ամբողջովին պայմանավորվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման տեմպերի արագացմամբ, որը եռամսյակի միջին կտրվածքով կազմել է տ/տ 21.0 տոկոս և միայն մասամբ փոխհատուցվել գործընկեր երկրների միջին կշռված արժևորմամբ՝ 4.5 տոկոս:

Անվանական արդյունավետ փոխարժեքի նման արժևորումը պայմանավորել է նաև իրական փոխարժեքի վարքագիծը չորրորդ եռամսյակում, քանի որ Հայաստանի և գործընկեր երկրների միջին կշռված գնաճը գրեթե հավասար էին՝ եռամսյակի միջինը տ/տ 5.8 և 5.7 տոկոս համապատասխանաբար: Արդյունքում՝ իրական փոխարժեքը չորրորդ եռամսյակում արժևորվել է 15.2 տոկոսով: Գործընկեր երկրների գնաճի վրա հիմնական ազդեցություն են ունեցել Ռուսաստանը՝ 1.8 տոկոսային կետ, և Իրանը՝ 1.6 տոկոսային կետ, իսկ զարգացած երկրների ընդհանուր գնաճի մակարդակը նախորդ եռամսյակի ցուցանիշի համեմատ փոքր-ինչ նվազել է: ՀՀ


---

[25] ՀՀ դրամի՝ որպես ուղղակի գնանշվող արժույթի արժևորումը (արժեզրկումը) հաշվարկվում է

$$P_{\%} = \left(\frac{P^1 - P^2}{P^2} \right) * 100\%$$

բանաձևով, որտեղ՝ P^1 և P^2-ը փոխարժեքներն են, համապատասխանաբար՝ ժամանակահատվածի սկզբում և վերջում:

գնաճը նույնպես որոշակի նվազել է երրորդ եռամսյակի՝ գյուղատնտեսական արտադրանքի թողարկման կրճատմամբ պայմանավորված բարձր մակարդակներից:



Գրաֆիկ 1.16


Երրորդ եռամսյակում իրական արդյունավետ փոխարժեքի արժևորման տեմպերի ավելացումը պայմանավորված էր անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորմամբ (տոկոսային ած՝ տարեկան կտրվածքով)

2006 թվականի ընթացքում իրական փոխարժեքի արժևորումը կազմել է 6.6 տոկոս (նախորդ տարի՝ 9.0 տոկոս)՝ դրսևորելով ավելի ցածր արժևորման տեմպեր: Վերջինս նույնպես պայմանավորվել է ՀՀ դրամի փոխարժեքի 10.0 տոկոս արժևորմամբ, որի հետևանքով անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորման 2006 թվականի տարեկան ցուցանիշը կազմել է 9.6 տոկոս: Գործընկեր երկրների փոխարժեքը տարեկան կտրվածքով էական ազդեցություն չի ունեցել. արժեքավորվել է ընդամենը 0.7 տոկոսով: Հայաստանում 2006 թվականի միջին գնաճը կազմել է 2.9 տոկոս, մինչդեռ գործընկեր երկրներինը՝ 5.6 տոկոս:

Ոչ արտահանելի հատվածի գները չորրորդ եռամսյակում աճել են եռ/եռ մոտ 5 տոկոսով, որը, ցածր լինելով նախորդ տարվա չորրորդ եռամսյակի աճից, հանգեցրել է ներքին իրական փոխարժեքի արժևորման տեմպերի նվազման: Ներքին իրական փոխարժեքը չորրորդ եռամսյակում արժևորվել է տ/տ 2.6 տոկոսով, իսկ 2006 թվականին՝ արժեզրկվել 1.2 տոկոսով:

Ոչ արտահանելի ապրանքների գները չորրորդ եռամսյակում բարձրացել են տ/տ 4.9 տոկոսով, մինչդեռ արտահանելի ապրանքների գները՝ ընդամենը 0.1 տոկոսով: Պատճառը հիմնականում ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժևորման բարձր տեմպերն էին (չորրորդ եռամսյակում՝ տ/տ 21.0 տոկոս): Վերջինս ոչ միայն չեզոքացրել է արտահանելի հատվածի գների աճը, այլև, կրճատելով պահանջարկը, զսպել ոչ արտահանելի հատվածի գների աճը:

Նույն երևույթները կարելի է արձանագրել նաև 2006 թվականի համար: Համաշխարհային գնաճի ազդեցությունը և տնտեսական աճով ու ֆինանսական ներհոսքով պայմանավորված ներքին պահանջարկի աճը չեզոքացվել են ՀՀ դրամի փոխարժեքի արժևորման հետևանքով, որի արդյունքում արտահանելի ապրանքների գների աճը կազմել է 3.0 տոկոս, իսկ ոչ արտահանելի ապրանքներինը՝ 1.8 տոկոս:




Գրաֆիկ 1.17

Գյուղատնտեսական ցածր բերքի հետևանքով ոչ արտահանելի ապրանքների գները բարձրացել են և ներքին իրական փոխարժեքը կտրուկ արժևորվել (տոկոսային ած՝ տարեկան կտրվածքով)

Դրամավարկային զարգացումներ

2006 թվականին դրամայնացման բարձր տեմպերի պարագայում արձանագրվել է դրամային զանգվածի մեծածավալ աճ՝ տարեկան շուրջ 117.5 մլրդ դրամ կամ 52.3%, որը փոքր-ինչ զիջել է նախորդ տարվա ցուցանիշին (54.3%): Ընդ որում, դրամայնացման ակտիվ գործընթացի մասին է վկայում նաև դրամային զանգված/ՀՆԱ ցուցանիշը, որը 2004 թ. 7.6%-ից 2006-ին հասել է մոտ 13%-ի:


Բարձր աճի տեմպեր են գրանցվել դրամային զանգվածի կառուցվածքային երկու բաղադրատարրերի գծով էլ, այսպես՝ շրջանառությունում գտնվող կանխիկի տարեկան աճը կազմել է 46.5% (նախորդ տարի՝ 46.4%), իսկ դրամային ավանդները 2006-ին աճել են 62.6%-ով (նախորդ տարի՝ 70.7%):



Գրաֆիկ 1.18

Փողի զանգվածի կառուցվածքում դրամայնացման գործընթացն արտահայտվել է դրամային բաղադրատարրերի մեծածավալ աճով (մլն ՀՀ դրամ)

Արտարժութային ավանդները տարվա ընթացքում, դոլարային արտահայտությամբ, ավելացել են շուրջ 13%-ով (առանց տարեվերջին մեկ բանկի կողմից ստացված ժամանակավոր արտարժութային միջոցների): Այն փոքր-ինչ գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը (8.8%)՝ պայմանավորված նախորդ տարվա համեմատ դրամայնացման առավել բարձր տեմպերով: Իսկ եթե հաշվի առնենք նաև տարվա ընթացքում դրամի արժեքավորման միտումները, ապա արտարժութային ավանդների դրամային արտահայտությամբ ցուցանիշը նվազել է 9.5%-ով:




Գրաֆիկ 1.19
Դրամով և արտարժույթով ավանդները՝ ըստ ժամկետայնության (մլն ՀՀ դրամ)

Նշված շարժերի արդյունքում փողի զանգվածի տարեկան աճը կազմել է 32.9%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 27.8% աճի փոխարեն:

Ըստ առաջարկի տարրերի, փողի զանգվածի աճը պայմանավորվել է բացառապես բանկային համակարգի ՋԱԱ-ի մեծածավալ աճով՝ 70.7% կամ 164.9 մլրդ դրամ, իսկ ՋՆԱ-ն նվազել է 33.8%-ով կամ 44.7 մլրդ դրամով: Ընդ որում, շարունակվել են առևտրային բանկերի ՋԱԱ-ի նվազման միտումները (տարեկան 25.2 մլրդ դրամ), ինչը նշանակում է, որ այս տարի ևս, որպես տնտեսության վարկավորման աղբյուր, բանկերը օգտագործել են արտարժութային պահուստները: Սակայն տարեվերջին, մեկ բանկի կողմից իրականացված մեծածավալ արտարժութային գործարքից հետո, առևտրային բանկերի ՋԱԱ-ը կտրուկ ավելացել է, ինչի արդյունքում դրանց տարեկան նվազումը կազմել է շուրջ 9.0 մլրդ դրամ:

Բանկային համակարգի ՋՆԱ-ն նվազել է Կառավարության զուտ պարտավորությունների և համակարգի զուտ այլ ակտիվների նվազման հաշվին՝ համապատասխանաբար 36.8 մլրդ և 60.8 մլրդ դրամով, որոնց հիմնական մասը պայմանավորվել է ԿԲ նույն ցուցանիշների շարժերով (մանրամասն տե՛ս «Փողի բազա» հատվածում):




Գրաֆիկ 1.20
2006 թ. ևս դրամով վարկավորման աճը գերազանցել է արտարժույթով վարկավորման աճի տեմպերը, արդյունքում՝ տարեվերջին դրանց մակարդակները դրամային արտահայտությամբ գրեթե հավասարվել են (մլն դրամ)

ՋՆԱ մյուս բաղադրատարրի՝ տնտեսության վարկավորման ցուցանիշի՝ վերջին տարիներին արձանագրված աճի բարձր տեմպերը այս տարի ևս պահպանվել են՝ 28.1% կամ 52.9 մլրդ դրամ (2005-ին՝ 33.7%, 2004-ին՝ 37.9%): Ընդ որում, բերված թվերը վկայում են աճի տեմպերի դանդաղման մասին, մինչդեռ դրանք հիմնականում կրել են դրամի արժեքավորման ազդեցությունը, ինչը զտելու պարագայում կունենանք վարկավորման աճ՝ 2006 թ-ին՝ 43.7%, 2005-ին՝ 42.0%, 2004-ին՝ 49.7%: Տնտեսության դրամայնացման ևս մեկ դրսևորում է տնտեսության վարկավորման ցուցանիշի արժութային կառուցվածքի փոփոխությունը, ինչի արդյունքում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը վարկավորման ընդհանուր ծավալում 2004 թ. 68.5%-ից 2006-ին իջել է 50.2%-ի:


Նշենք, որ վերը բերված բոլոր ցուցանիշների տարեկան փոփոխություններում գերակշռել են հատկապես չորրորդ եռամսյակի շարժերը՝ հիմնականում պայմանավորված փողի պահանջարկի և հարկաբյուջետային քաղաքականության սեզոնայնությամբ:

Վերջին տարիներին, դրամայնացման գործընթացով պայմանավորված, տնտեսության դոլարայնացման աստիճանը (արտարժութային ավանդներ/փողի զանգված) ունեցել է նվազման միտում. 2004 թ.՝ 49%, 2005 թ.՝ 38.5%, իսկ 2006 թ.՝ 29.5%:



Գրաֆիկ 1.21
Տնտեսության փողայնացման մակարդակը

Ֆինանսական միջնորդությունը բնութագրող՝ տնտեսության փողայնացման և դրամայնացման գործակիցները տարվա ընթացքում դրսևորել են բնականոն աճի միտումներ՝ համապատասխանաբար տարեկան 5.9% և 21.9%, որը դրամայնացման գործակցի գծով շատ ավելին է եղել՝ պայմանավորված դրամի նկատմամբ մեծածավալ պահանջարկով:




Գրաֆիկ 1.22
Փողի և դրամային բազմարկիչներ

Այդուհանդերձ, 2006 թվականի վերջի տվյալներով՝ փողայնացման 14.7% մակարդակը բավականին ցածր է անցումային շրջանում գտնվող մյուս երկրների նույն ցուցանիշի համեմատությամբ: Սակայն, արդյունավետ փողի զանգվածի[26] միջոցով գնահատած փողայնացման մակարդակը կազմում է ավելի քան 42%[27]:

Փողի բազմարկիչը 2006 թ-ին նվազել է 12.7%-ով, իսկ դրամային բազմարկիչը տարվա կտրվածքով մնացել է գրեթե անփոփոխ՝ աճելով ընդամենը 0.5%-ով: Այս ցուցանիշներն ավելի ցածր են սպասվածից՝ պայմանավորված կանխիկ դրամի առավել բարձր աճի տեմպերով:

Փողի բազա. Ինչպես արդեն նշվել է, 2006 թ-ին, հատկապես երրորդ եռամսյակում, դրամայնացման գործընթացը ակտիվացել է, ինչի արդյունքում դրամի նկատմամբ տնտեսության ներկայացրած մեծածավալ պահանջարկը ԿԲ կողմից բավարարվել է փողի բազայի՝ նախատեսվածից ավելի արագ աճ ապահովելու միջոցով (փաստացի՝ տարեկան 41.1% կամ 82.4 մլրդ դրամ): Միևնույն ժամանակ, դա ուղեկցվել է ֆինանսական մեծածավալ ներհոսքով, որի մի որոշակի մասը, ելնելով նաև դրամի կտրուկ արժեքավորման ազդեցությունը մեղմելու նկատառումներից, ԿԲ-ն չեզոքացրել է արտարժույթի գնման գործառնություններ իրականացնելով: Սակայն, քանի որ դրամի մեծածավալ ներարկումը, գումարվելով տնտեսության մյուս հատվածներից եկող ռիսկերին, կուտակել էր գնաճային մեծ ներուժ ինչպես գնաճի տարեվերջի ցուցանիշի, այնպես էլ հետագա մեկ տարվա կտրվածքով եռամսյակային ցուցանիշների ապահովման առումով, ԿԲ-ն իր գլխավոր խնդրին հասնելու նպատակով կիրառել է նաև ներքաշող դրամային գործիքներ, մասնավորապես՝ սեփական արժեթղթերի տեղաբաշխումը: Դա էր պատճառը, որ 2006 թ. արդյունքներով փողի բազայի տարեկան աճը զիջել է նախորդ տարվա ցուցանիշին (51.9%), քանի որ նախորդ տարվա այդ ժամանակահատվածում առկա էին գնանկումային ռիսկեր, և փողի առաջարկը զսպելու անհրաժեշտություն չկար:




Գրաֆիկ 1.23
2006 թ. ևս պահպանվել են փողի բազայի աճի բարձր տեմպերը (մլն ՀՀ դրամ)

Փողի բազայի և դրա կառուցվածքային տարրերի տարեկան վարքագծի և սեզոնային դրսևորումների առումով՝ 2006 թվականը հստակ տարանջատվել է ըստ կիսամյակների: Այսինքն՝ փողի բազայում մեծ տեսակարար կշիռ կազմող (80%) կանխիկ դրամի տարեկան վարքագծից ակնհայտ երևում է, որ տարվա առաջին կեսին այն հիմնականում կրկնել է 2004 թ. սեզոնայնությունը, իսկ երկրորդ կիսամյակում՝ դրսևորել 2005-ի առանձնահատկությունը՝ պայմանավորված դրամայնացման տեմպերի արագացման պարագայում դրամի նկատմամբ մեծ պահանջարկով:

Արդյունքում, 2006 թ-ի առաջին կիսամյակում փողի բազան և ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկը նվազել են՝ համապատասխանաբար 0.7% և 0.6%-ով (2005 թ. աճել են 14% և 7.5%-ով և 2004 թ.՝ նվազել 10.4% և 10.1%-ով), իսկ երկրորդ կիսամյակում այդ ցուցանիշներն աճել են համապատասխանաբար 42.1% և 46.9%-ով (2005 թ. աճը՝ 33% և 36.9%, 2004 թ.՝ 24.3% և 21.3%):


[26] Արդյունավետ փողի զանգվածը բանկային համակարգից դուրս շրջանառվող կանխիկ դրամից, դրամով և արտարժույթով ցպահանջ և ժամկետային ավանդներից բացի, որոնք փողի զանգվածի բաղադրատարրերն են, ներառում է նաև շրջանառությունում կանխիկ արտարժույթը: Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ծեռնարկ, 2004 թ.:

[27] 2006 թվականի վերջին կանխիկ արտարժույթի ծավալը համարժեք է եղել 649 մլրդ դրամի (ըստ ԿԲ գնահատումների):



Գրաֆիկ 1.24
2005-2006 թթ. ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի աճի անհամեմատ բարձր տեմպերը վկայում են դրամայնացման ակտիվ գործընթացի մասին (%)

2006-ին փողի բազայի աճը պայմանավորվել է բացառապես ԿԲ ՁԱԱ-ի աճի հաշվին՝ 172.8 մլրդ դրամ կամ 80.5%, ինչն ուղեկցվել է ԿԲ ՁՆԱ-ի 90.4 մլրդ դրամ կամ 7.4 անգամ նվազմամբ:



Գրաֆիկ 1.25
Փողի բազայի վարքագիծը ըստ ՁԱԱ-ի և ՁՆԱ-ի (մլն ՀՀ դրամ)

Տարվա ընթացքում ԿԲ ՁԱԱ-ի նման մեծածավալ աճը մեծ մասամբ պայմանավորվել է ֆինանսական ներհոսքի ազդեցությամբ առաջացած արտարժութային ավելցուկի ներքաշման նպատակով ԿԲ կողմից իրականացված արտարժույթի առքի գործառնություններով (զուտ 93.3 մլրդ դրամ): Միաժամանակ, ՁԱԱ-ը համալրվել է Կառավարության սեփականաշնորհման հատուկ հաշվից գնված արտարժութային միջոցների (34.6 մլրդ դրամ) և ստացված դրամաշնորհների, արտաքին պահուստների կառավարումից եկամուտների և արտարժութային այլ մուտքերի (46.7 մլրդ դրամ) հաշվին:

ԿԲ ՁՆԱ-ն նվազել է ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների 40.4 մլրդ դրամ նվազման (մանրամասն տե՛ս «Համախառն պահանջարկ և առաջարկ» բաժնի «Պետական սպառում և ներդրումներ» ենթաբաժնում), ԿԲ զուտ այլ ակտիվների 36.0 մլրդ դրամ նվազման (արտարժութային պահուստների՝ տարեվերջի փոխարժեքով վերագնահատման արդյունքում) և ԿԲ արժեթղթերի մնացորդի 17.5 մլրդ դրամ աճի ազդեցությամբ:

Տարվա ընթացքում ԿԲ փոխհարաբերությունները բանկերի հետ ընթացել են դրամավարկային քաղաքականության խնդիրների կարգավորման ուղղությամբ: Այսինքն՝ ԿԲ-ն ֆինանսական ներհոսքի և դրամայնացման հետևանքով ձևավորված արտարժութային ավելցուկը կլանելու համար արտարժույթի շուկայում իրականացրել է մեծածավալ գնման գործառնություններ, իսկ դրամային ներքաշող գործիքներով մասամբ չեզոքացրել է դրա արդյունքում առաջացած դրամով ավելցուկային իրացվելիությունը: Այդ նպատակին հիմնականում ծառայել է ԿԲ արժեթղթերի տեղաբաշխման գործիքը, որի օգնությամբ հաջողվել է ներքաշել զուտ 17.5 մլրդ դրամի իրացվելիություն: Այնուամենայնիվ, տարվա ընթացքում բանկային համակարգը բնութագրվել է ավելցուկային իրացվելիության բարձր մակարդակով՝ նախորդ տարվա միջին ամսական 13.0 մլրդ դրամի փոխարեն՝ շուրջ 15.5 մլրդ դրամ, ինչի պարագայում բանկերը ակտիվորեն օգտվել են նաև մշտական հնարավորության ավանդային ներքաշող գործիքից:

Միաժամանակ, իրացվելիության կարճաժամկետ խնդիրների լուծման նպատակով բանկերը տարվա ընթացքում օգտվել են ռեպո գործիքից, որի համախառն ծավալը կազմել է ավելի քան 51.0 մլրդ դրամ: Ընդ որում, դրանց հիմնական մասը բաժին է ընկել երկրորդ և երրորդ եռամսյակներին՝ համապատասխանաբար 20.0 մլրդ և 22.4 մլրդ դրամ:

Համախառն պահանջարկ և առաջարկ

Համախառն պահանջարկ[28]

Ներքին պահանջարկ

Մասնավոր սպառում և ներդրումներ. 2006 թվականի ընթացքում համախառն պահանջարկի աճը արձանագրվել է հիմնականում ներքին պահանջարկի, մասնավորապես՝ մասնավոր հատվածի ծախսումների՝ սպառման և ներդրումների աճի հաշվին:


[28] *Համախառն պահանջարկի բաղադրատարրերի աճերը իրական արտահայտությամբ են:*

Տարվա ընթացքում ներքին պահանջարկի աճը կազմել է 13.7%, իսկ մասնավոր հատվածի ծախսումների աճը՝ 13.2%: Ընդ որում, աննախադեպ բարձր է եղել մասնավոր ներդրումների աճը՝ չորրորդ եռամսյակի ընթացքում և տարեկան կտրվածքով համապատասխանաբար՝ 35.1% և 27.9%: Կապիտալ ներդրումների աճը հիմնականում արտահայտվել է շինարարության, հատկապես՝ բնակարանային, աճի տեմպերի արագացմամբ:

Տնտեսական աճի, տրանսֆերտների և աշխատավարձերի՝ վերջին տարիներին դրսևորված շարունակական աճի պայմաններում 2006 թվականի չորրորդ եռամսյակում և տարվա ընթացքում արձանագրվել է մասնավոր սպառման աճ, որը կազմել է համապատասխանաբար 8.1% և 9.2%: Մասնավոր սպառման աճը, զուգակցվելով տարվա ընթացքում բուսաբուծության բերքի ծավալների նվազմամբ, որոշակիորեն խորացրել է գնաճային ճնշումները սպառողական շուկայում:

Պետական սպառում և ներդրումներ[29]. 2006 թվականին հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է չեզոք ազդեցություն: Ընդ որում, տարվա արդյունքում չեզոք ազդեցությունը դրսևորվել է և՛ ծախսերի, և՛ եկամուտների մասով:


Բյուջեի եռամսյակային համամասնությունների ճշգրտված սցենարների հրապարակայնության բացակայությունը որոշակի դժվարություններ է առաջացրել հարկաբյուջետային հատվածի հոսքերի գնահատման տեսանկյունից: Այս պարագայում, դրամավարկային քաղաքականության իրականացման աշխատանքներում ԿԲ-ն հիմնվել է հարկաբյուջետային հատվածի նախորդ տարիների միտումների և ամսական ծրագրերի վրա: Բյուջեի կատարման գործընթացում նախորդ տարիներին դրսևորված միտումները, հատկապես ծախսերի մասով, պահպանվել են, այն է՝ խնայողությունների ձևավորում տարվա առաջին եռամսյակում և համեմատաբար մեծածավալ ծախսումներ տարվա վերջին: Միևնույն ժամանակ, ըստ եռամսյակային համամասնությունների՝ պակասուրդի տարեկան ցուցանիշի մոտ 80 տոկոսը և ծախսերի կատարման մոտ 47 տոկոսը նախատեսված էր ապահովել տարվա առաջին կեսին:



Գրաֆիկ 1.26
Հարկաբյուջետային ազդակի զսպողական ազդեցությունը 2006 թ.

Բյուջեի ծախսերը, սպասվող ընդլայնողի փոխարեն, ունեցել են զսպող ազդեցություն՝ պայմանավորված ինչպես Լինսի դրամաշնորհների չստացմամբ, այնպես էլ որոշ ծախսերի մասով խնայողությունների առաջացմամբ: Եկամուտների գծով թեև արձանագրվել են գերակատարումներ, սակայն ՀՆԱ-ի առաջանցիկ աճի պարագայում եկամուտներն ունեցել են փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն:

2006 թվականին, նախորդ տարվա համեմատ, արձանագրվել է ծախսերի 13.3 տոկոս աճ, իսկ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 1.0 տոկոսային կետով և կազմել 21.1 տոկոս: Ծախսերի կառուցվածքում ընթացիկ ծախսերն ավելացել են 12.6 տոկոսով, ընդ որում՝ պետական սպառումն ավելացել է 10.3 տոկոսով, տրանսֆերտները՝ 17.9 տոկոսով, իսկ սուբսիդիաները՝ 16.3 տոկոսով: Նվազում արձանագրվել է միայն տոկոսավճարների մասով՝ կազմելով 12.5 տոկոս: Պետական սպառումը կազմել է ընթացիկ ծախսերի 56.9 տոկոսը՝ տ/տ նվազելով 1.1 տոկոսային կետով: Պետական սպառում/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.7 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 9.2 տոկոսը:



Գրաֆիկ 1.27
Համախմբված բյուջեի ծախսերի կառուցվածքը (մլն ՀՀ դրամ)

2006 թվականին, նախորդ տարվա համեմատ, կապիտալ ծախսերն ավելացել են 15.1 տոկոսով: Ընդ որում, կապիտալ ծախսերի 80 տոկոսն

[29] *Հարկաբյուջետային հատվածի վերլուծությունը կատարվել է 2006 թ. համախմբված բյուջեի նախնական փաստացի ցուցանիշների հիման վրա, իսկ ցուցանիշների համեմատականը, ճշգրտված ծրագրերի բացակայության պատճառով, կատարվել է նախնական ծրագրերի նկատմամբ: Ազդակների հաշվարկներում նույնպես օգտագործվել են 2006 թ. համախմբված բյուջեի նախնական ցուցանիշները, իսկ հաշվարկները կատարվել են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:*

իրականացվել է ներքին աղբյուրների հաշվին, իսկ 20 տոկոսը՝ արտաքին աղբյուրների (նախորդ տարի՝ համապատասխանաբար 79 և 21 տոկոս): Հատկանշական է, որ շարունակվել է նախորդ տարվանից արձանագրված՝ ներքին ֆինանսավորման հաշվին իրականացվող ծախսերի աճի միտումը: Չնայած ՀՆԱ-ում պետական ներդրումները նվազել են 0.1 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 4.3 տոկոսը, այնուամենայնիվ վերջին տարիներին դրսևորվել է կապիտալ ծախսեր/ՀՆԱ ցուցանիշի աճի միտում: Վերջինս դրական նախադրյալ է երկարաժամկետ հատվածում տնտեսական աճի ապահովման տեսանկյունից: Կապիտալ ծախսերի նվազումը հիմնականում պայմանավորվել է արտաքին ֆինանսավորման հաշվին իրականացվող կապիտալ ծախսերի թերի ֆինանսավորմամբ: Ծախսերն ունեցել են զսպող ազդեցություն՝ կապված ինչպես ընթացիկ ծախսերի՝ մոտ 10.0 մլրդ դրամ տնտեսումներով, այնպես էլ կապիտալ ծախսերի արտաքին ֆինանսավորման մոտ 6.0 մլրդ դրամ թերստացումներով:


Չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ծախսերի աճը կազմել է 3.3 տոկոս, որը հիմնականում ընթացիկ ծախսերի աճի հետևանք է:

Տարվա գրեթե բոլոր եռամսյակներում արձանագրվել են բյուջեի եկամուտների գերակատարումներ: Տարվա առաջին կեսին եկամուտներն ունեցել են զսպող ազդեցություն, իսկ երկրորդ կեսին, անվանական ՀՆԱ-ի առաջանցիկ աճով պայմանավորված, փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն: Եկամուտների ճշտված ծրագրի նկատմամբ տարվա արդյունքում գերակատարում արձանագրվել է միայն ոչ հարկային և կապիտալ եկամուտների մասով, սակայն եռամսյակային ճշտված ծրագրերի բացակայության պատճառով ԿԲ-ն հիմնվել է եկամուտների եռամսյակային իր կանխատեսումների վրա: «ՀՀ 2006 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի ցուցանիշների նկատմամբ տարվա կտրվածքով եկամուտների գերակատարումը կազմել է մոտ 40 մլրդ դրամ. հարկային եկամուտների գերակատարումը կազմել է 14 մլրդ դրամ, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտներինը՝ 26 մլրդ դրամ:

2006 թվականին եկամուտները աճել են տ/տ 15.9 տոկոսով. հարկային եկամուտների աճը կազմել է 16 տոկոս, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտներինը՝ 14 տոկոս: ՀՆԱ-ում բյուջեի եկամուտները նվազել են տ/տ 0.5 տոկոսային կետով և կազմել ՀՆԱ 19.1 տոկոսը: Ընդ որում, արձանագրված բարձր տնտեսական աճի պայմաններում հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.4 տոկոսային կետով: Պետական բյուջեի հարկեր/ՀՆԱ ցուցանիշը նվազել է 0.2 տոկոսային կետով և կազմել 14.2 տոկոս:

Հարկային եկամուտների կառուցվածքում անուղղակի հարկերի կշիռը նվազել է 2.2 տոկոսային կետով և կազմել հարկային եկամուտների 48.5 տոկոսը, իսկ ուղղակի հարկերի կշիռն ավելացել է 3.2 տոկոսային կետով՝ կազմելով հարկերի 23.5 տոկոսը: Ուղղակի հարկերի ավելացումը ապահովվել է շահութահարկի և եկամտահարկի հաշվին, որոնց աճը կազմել է համապատասխանաբար 40.3 տոկոս և 33.2 տոկոս: Անուղղակի և ուղղակի հարկերի աճը կազմել է համապատասխանաբար տ/տ 11 տոկոս և 34.2 տոկոս: ՀՆԱ-ում անուղղակի հարկերի տեսակարար կշիռը նվազել է 0.6 տոկոսային կետով և կազմել 8.4 տոկոս, իսկ ուղղակի հարկերի կշիռն ավելացել է 0.5 տոկոսային կետով և կազմել 4.1 տոկոս:

Եկամուտների աճը չորրորդ եռամսյակում կազմել է 13.5 տոկոս. հարկային եկամուտներն աճել են 12.2 տոկոսով, իսկ ոչ հարկային և կապիտալ եկամուտները՝ 29.7 տոկոսով: Վերջինս պայմանավորվել է Երևան քաղաքի հողերի օտարման հաշվին ստացված մուտքերի աճով:




Գրաֆիկ 1.28
Պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում արտաքին աղբյուրներից ֆինանսավորման աճը և ներքին աղբյուրներից ֆինանսավորման նվազումը (մլն ՀՀ դրամ)

Տարվա արդյունքում բյուջեի պակասուրդը կազմել է 42.2 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 1.6 տոկոսը: Ընդ որում, արտաքին աղբյուրներից զուտ ֆինանսավորումը կազմել է 27.8 մլրդ դրամ կամ պակասուրդի 66 տոկոսը, իսկ ներքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է 14.4 մլրդ դրամ կամ պակասուրդի 34 տոկոսը: Պետական արժեթղթերից ֆինանսավորումը կազմել է 7.1 մլրդ դրամ, իսկ սեփականաշնորհման միջոցներից ֆինանսավորումը՝ 29.3 մլրդ դրամ, ինչպես և ծրագրված էր: Տարվա արդյունքում, Կենտրոնական բանկում Կառավարության մի-

ջոցներն ավելացել են մոտ 40.4 մլրդ դրամով՝ պայմանավորված սեփականաշնորհման հաշվի միջոցների փոխարկմամբ, եկամուտների գերակատարմամբ, ինչպես նաև համայնքների և սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեների գծով առաջացած խնայողություններով:

Հատկանշական է, որ տարվա առաջին կեսին փողի բազայի փոփոխություններն առավելապես պայմանավորվել են Կառավարության միջոցների փոփոխություններով, իսկ տարվա երկրորդ կեսին՝ հիմնականում ԿԲ կողմից արտարժութային շուկայում իրականացված զուտ ինտերվենցիաներով:



Գրաֆիկ 1.29
Փողի բազայի, ՀՀ կենտրոնական բանկում Կառավարության միջոցների փոփոխությունները և զուտ ինտերվենցիաները 2006 (մլն ՀՀ դրամ)

Զուտ արտաքին պահանջարկ[30]. Ապրանքների և ծառայությունների արտահանման ծավալների՝ տարվա սկզբից արձանագրված իրական նվազումը և ներմուծման ծավալների աճը շարունակվել են նաև երրորդ եռամսյակում:

Մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների իրական աճը		
	2006 IV/ 2005 IV	2006/ 2005
Իրական ՀՆԱ	14.9	13.4
Ներքին պահանջարկ	14.8	13.7
Սպառում	10.3	10.5
Պետական	28.4	19.8
Մասնավոր	8.1	9.2
Կապիտալ ներդրումներ	29.1	25.0
Պետական	-6.5	7.5
Մասնավոր	35.1	27.9
Արտահանում[31]	6.1	-2.2
Ներմուծում	7.2	1.7

Արտահանումը երրորդ եռամսյակում նվազել է 13.9%-ով, իսկ ներմուծումը՝ 1.6%-ով: Դա հիմնականում պայմանավորվել է ադամանդի միջազգային գների նվազմամբ և պահանջարկի կառուցվածքի փոփոխության հետևանքով Հայաստանի արտաքին առևտրի գերակշիռ մասը կազմող թանկարժեք քարերի ներմուծման և արտահանման կրճատմամբ:

Համախառն առաջարկ[32]

2006 թվականի չորրորդ եռամսյակում արձանագրվել է տնտեսական աճի տեմպի որոշակի արագացում՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերում երրորդ եռամսյակում գրանցված ավելացված արժեքի իրական նվազման շրջադարձով:

Մետաղագործության և սննդի արդյունաբերության ենթաճյուղերում արտադրության ծավալների ավելացման արդյունքում տարվա չորրորդ եռամսյակն ամփոփվել է ճյուղի ավելացված արժեքի տ/տ 0.4% ավելացմամբ: Գյուղատնտեսությունում չորրորդ եռամսյակում արձանագրվել է տ/տ 1.2% իրական աճ՝ պայմանավորված եռամսյակին բնորոշ գյուղմթերքների բերքի ստացմամբ, ինչպես նաև անասնապահությունում սպանդի ծավալների ավելացմամբ:

Նշվածը, զուգակցվելով շինարարության աճի՝ դեռ երկրորդ եռամսյակից դրսևորված արագացված տեմպերով և ծառայությունների ոլորտի կայուն բարձր աճով, հանգեցրել է 2006 թվականի չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ՀՆԱ 14.9% իրական աճի:

2006 թվականին շարունակվել են նախորդ տարիներին արձանագրված տնտեսական բարձր աճի միտումները՝ որոշակի արագանալով մասնավորապես տարվա երկրորդ կեսից և տարվա արդյունքում կազմելով տ/տ 13.4%:

Տարվա ընթացքում էական փոփոխություններ են նկատվել տնտեսության ճյուղերի զարգացման միտումներում՝ պայմանավորված արտաքին և ներքին գործոնների ազդեցությամբ: Մասնավորապես, ի տարբերություն նախորդ տարիների, 2006 թվականի ընթացքում արդյունաբերության և գյուղատնտեսության ճյուղերում աճի տեմ-

[30] *Իրական արտահանման և ներմուծման վերաբերյալ թվային տվյալները հիմնված են 2006 թ. ինն ամիսների փաստացի և IV եռ. կանխատեսված ցուցանիշների վրա:*
[31] *Վերաբերում է ապրանքների և ծառայությունների արտահանմանն ու ներմուծմանը:*
[32] *Համախառն առաջարկի բաղադրատարրերի իրական աճի բոլոր ցուցանիշները նախորդ տարվա նկատմամբ են, եթե այլ բան նշված չէ:*

պերը դանդաղել են: Ընդ որում, եթե արդյունաբերության ավելացված արժեքի նվազումը պայմանավորվել է միջազգային շուկայական պայմանների փոփոխությամբ (գունավոր մետաղների գների որոշակի նվազում և ադամանդի նկատմամբ պահանջարկի կառուցվածքային փոփոխություն), ապա գյուղատնտեսության վրա բացասական ազդեցություն են ունեցել անբարենպաստ բնակլիմայական պայմանները:

Գնաճի վրա առավել մեծ ազդեցություն են ունեցել տարվա երկրորդ եռամսյակից արձանագրված անբարենպաստ կլիմայական պայմանները՝ կապված դեռ մայիսից սկսված սովորականից շոգ եղանակի հետ: Բուսաբուծության թողարկման ծավալները տարվա վերջի դրությամբ նվազել են 4.4%-ով՝ պայմանավորված հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի (46%-ով), կերակրային մշակաբույսերի (20.8%-ով), պտղի և հատապտղի (9.3%-ով) և կարտոֆիլի (4.4%-ով) համախառն բերքի նվազմամբ: Նշված ապրանքատեսակների առաջարկի կրճատումը հանգեցրել է դրանց գների աճի, որի արդյունքում բուսաբուծության ճյուղի նպաստումը տարվա գնաճի ցուցանիշի ձևավորմանը կազմել է 1.87 տոկոսային կետ:

Անասնաբուծության ոլորտում արձանագրվել է թողարկման ծավալների 10.4% իրական աճ՝ պայմանավորված ինչպես անասնագլխաքանակի ավելացմամբ, այնպես էլ բուսաբուծության ոլորտում կերակրային մշակաբույսերի սակավ բերքի հետևանքով սպանդի ծավալների աճով: Արդյունքում՝ նախորդ տարվա համեմատ, գյուղատնտեսության ավելացված արժեքի աճը 2006 թվականին կազմել է ընդամենը 0.4% (2005 թ.՝ 11.2%), իսկ նպաստումը տնտեսական աճին տարվա արդյունքում կազմել է 0.1 տոկոսային կետ՝ նախորդ տարվա 2.5 տոկոսային կետի փոխարեն:

Ինչպես նախորդ տարիներին, 2006 թվականին ևս տնտեսական աճին մեծ չափով նպաստել է շինարարության ճյուղը, որտեղ աճի տեմպերը տարվա երկրորդ եռամսյակից արագացել են: Վերջինս պայմանավորվել է բնակչության եկամուտների շարունակական ավելացմամբ, տարվա երկրորդ եռամսյակից մասնավոր տրանսֆերտների ներհոսքի ավելացմամբ, ինչպես նաև խոշոր ներդրումային ծրագրերի իրականացմամբ (մասնավորապես՝ մետաղագործության և կապի ճյուղերում): Արդյունքում՝ շինարարության ավելացված արժեքի տարեկան աճը կազմել է 37.2%, որը 8.1 տոկոսային կետով նպաստել է տնտեսական աճի ապահովմանը:

Ծառայությունների ոլորտում շարունակվել են դեռ 2001 թվականից դրսևորվող բարձր աճի միտումները: Զգալի աճ է արձանագրվել առևտրի, կապի և տրանսպորտի ծառայություններում՝ պայմանավորված ինչպես բնակչության եկամուտների շարունակական աճով, այնպես էլ երկրում զբոսաշրջության ոլորտի զարգացմամբ: Արդյունքում՝ ծառայությունների ավելացված արժեքի աճը 2006 թվականին կազմել է 14%, իսկ նպաստումը տնտեսական աճին՝ 4.5 տոկոսային կետ:

Հատկանշականն այն է, որ շինարարության և ծառայությունների ճյուղերի աճի բարձր մակարդակները իրենց ազդեցությունն են ունենում գնաճի վրա՝ եկամուտների ավելացման հետևանքով պահանջարկի ընդլայնման միջոցով:

Արդյունաբերության ճյուղում, ի տարբերություն նախորդ տարիների, դեռ տարվա սկզբից արձանագրվել է իրական նվազում, որը տարվա արդյունքներով կազմել է 0.9%: Այդ միտումը ամբողջությամբ պայմանավորվել է միջազգային շուկաներում դեռ հունվարից դրսևորված զարգացումներով, մասնավորապես՝ ոսկերչական իրերի արտադրության տարեկան 24.3% անկմամբ: Դրա հետ մեկտեղ, 2006 թվականին մոտ 2.2% նվազում է արձանագրվել էներգետիկայի բնագավառում, թեև գազի բաշխման իրական աճը կազմել է մոտ 17%:

Վերջին տարիներին մետաղագործության ճյուղում արձանագրված աճի բարձր տեմպերը 2006 թվականի ընթացքում նվազել են սև պղնձի արտադրության ծավալների կրճատման պատճառով:

Պահպանվել է սննդի արդյունաբերության նախորդ տարվա իրական աճի մակարդակը՝ 4.2%: Եթե 2005 թվականին դա պայմանավորվել էր հիմնականում ալկոհոլային խմիչքների 12.3% ավելացմամբ, ապա 2006 թվականին դրանց թողարկման ծավալների 2.6% իրական նվազման պարագայում արձանագրվել է պարենային ապրանքների արտադրության 6.7% իրական աճ: Ալկոհոլային խմիչքների արտադրության նվազումը ազդեցություն չի ունեցել սպառողական շուկայում ձևավորված իրավիճակի վրա, քանի որ դա հիմնականում արտահանման ծավալների կրճատման հետևանք էր՝ պայմանավորված Ռուսաստանի Դաշնությունում ակցիզային հարկի գծով իրականացված փոփոխություններով:

2006 թվականի ընթացքում դանդաղել են մետաղագործական արդյունաբերության ճյուղում նախորդ տարիներին արձանագրված բարձր իրական աճի տեմպերը՝ պայմանավորված սև պղնձի արտադրության ծավալների մոտ 11% նվազմամբ: Վերջինիս պատճառը տարվա ընթացքում մեկ գործարանում ծագած զուտ տեխնիկական խնդիրներն էին: Մոլիբդենի արտադրությունում անցում է կատարվել ֆերոմոլիբդենի արտադրությունից մոլիբդենի խտանյութի արտադրության, որի արդյունքում ֆերոմոլիբդենի արտադրության ծավալները նվազել են մոտ 13%-ով, մինչդեռ մոլիբդենի արտադրությունն ավելացել է շուրջ 35%-ով:

Աշխատանքի շուկա

Աշխատանքի շուկայում վերջին 5 տարիներին դրսևորված միտումները՝ գործազրկության կրճատում և աշխատավարձի աճ, շարունակվել են նաև 2006 թվականին:

Տնտեսության միջին անվանական աշխատավարձի աճը կազմել է տ/տ 23.5%, իսկ աշխատավարձի իրական աճը՝ 20.8%: Ընդ որում, տնտեսության միջին անվանական աշխատավարձի չորրորդ եռամսյակի աճը կազմել է տ/տ 35.4%:

Տարվա ընթացքում աշխատավարձի աճ արձանագրվել է տնտեսության բոլոր ճյուղերում, իսկ տնտեսության միջին աշխատավարձի աճից բարձր է եղել առևտրի և հանրային սննդի (103.8%), կապի (50.7%), անտառտնտեսության (38.4%), մշակույթի (68.8%), առողջապահության (42.0%), շինարարության (33.8%) և կենցաղսպասարկման (30.3%) ոլորտների աշխատավարձերի աճը:

Չնայած առաջանցիկ աճի տեմպերին՝ վերը նշված ճյուղերի մեծ մասում, մասնավորապես՝ առևտրի, անտառտնտեսության, մշակույթի, առողջապահության, ինչպես նաև կրթության և արվեստի ոլորտներում, աշխատավարձի մակարդակը դեռևս ցածր է տնտեսության միջին աշխատավարձի մակարդակից՝ 64000 դրամից:

2006 թվականի ընթացքում գործազրկության մակարդակը կազմել է 7.4%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 0.8 տոկոսային կետով: Ընդ որում՝ գործազուրկների մեծ մասը ընդհանուր միջնակարգ կրթություն ունեն և 31-50 տարիքային խմբում են, մինչդեռ թերի միջնակարգ կրթություն ունեցող գործազուրկների թիվը չնչին է: Նշենք նաև, որ աշխատանք փնտրելու միջին տևողությունը բավականին երկար է՝ 14.8 ամիս:

Հանրապետությունում արագ տեմպերով աճող շինարարական աշխատանքներին զուգընթաց, տարվա ընթացքում, ինչպես և վերջին երկու տարիներին, աշխատուժի նկատմամբ ներկայացրած պահանջարկի մեծ մասը՝ 80.5%-ը, բանվորական մասնագիտությամբ աշխատատեղերի համար է, որից մոտ 30%-ը՝ մասնագիտություն չպահանջող աշխատատեղերի:

Ներկայիս ՀՆԱ ճյուղային կառուցվածքի առանձնահատկություններից ելնելով, մասնավորապես այն հանգամանքից, որ ՀՆԱ աճը մեծ մասամբ ցածր արտադրողական ճյուղերի՝ ծառայությունների և շինարարության աճի հաշվին է, տնտեսությունում արտադրողականության աճը շարունակում է զիջել աշխատավարձերի աճի ցուցանիշին: Վերջինս սպառողական շուկայում շարունակաբար գնաճային ճնշումներ է առաջացնում:

Ըստ ՀՀ ԿԲ գնահատումների՝ իրական աշխատավարձը 12-ամսյա գնաճի 5.2% ցուցանիշը խթանել է 2.6 տոկոսային կետով, մինչդեռ արտադրողականության աճը մեղմել է գնաճը 1.2 տոկոսային կետով, արդյունքում՝ աշխատանքի շուկան գնաճի վրա 1.4 տոկոսային կետով խթանող ազդեցություն է ունեցել:

Ներմուծման գներ և արտադրողների գներ


Երրորդ եռամսյակում պահպանվել են ներմուծման գների աճի բարձր տեմպերը՝ հիմնականում կապված բնական գազի և այլ հումքային ապրանքատեսակների միջազգային գների բարձր մակարդակի պահպանման հետ: Սակայն դրամի փոխարժեքի արժևորումը և Կառավարության կողմից գազի սակագների ավելացման սուբսիդավորումը մասամբ չեզոքացրել են ներմուծման գների աճի բացասական հետևանքները ներքին տնտեսության վրա: Արդյունքում՝ արձանագրվել են արդյունաբերողների գների աճի բավականին ցածր տեմպեր:

Ներմուծման գներ

Ըստ Կենտրոնական բանկի գնահատումների՝ 2006 թվականի չորրորդ եռամսյակում ներմուծման դոլարային գները աճել են տ/տ 14.7 տոկոսով (որոշակիորեն նվազել են աճի բարձր տեմպերը): 2006 թվականին ներմուծման գներն աճել են 15.4 տոկոսով, ինչը էապես բարձր է նախորդ տարվա 6.7 տոկոսի համեմատ:


2006 թվականի չորրորդ եռամսյակում ամենամեծ ազդեցությունը ունեցել է հումքային ապրանքների թանկացումը, որը կազմել է 6.5 տոկոսային կետ, ընդ որում՝ դրան ավելացել է նաև Ռուսաստանի Դաշնության կողմից 2 անգամ բնական գազի արտահանման գների թանկացումը, որը ազդել է 4.2 տոկոսային կետով: Նավթամթերքների գների աճը նկատելի դանդաղել է՝ ավելացնելով ներմուծման գները ընդամենը 0.4 տոկոսային կետով: Նավթամթերքների գները շարունակել են նվազել 2006 թվականի չորրորդ եռամսյակի ընթացքում և կազմել են մոտ 60 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց (նախորդ տարվա նույն ժամանակահատվածում՝ մոտ 57 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց): Իսկ 2006 թվականին նավթամթերքների գները կազմել են 65.4 ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց, որն ավելի քան 20 տոկոսով բարձր է 2005 թվականի մակարդակից:

Շաքարավազի գները չորրորդ եռամսյակի ընթացքում շարունակել են նվազել և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ավելի ցածր մակարդակ ունեն: Հացահատիկի գների տ/տ աճի տեմպերի նվազումը շարունակվել է նաև չորրորդ եռամսյակում՝ չնայած դեռևս մնում են բավականին բարձր: Երկու ապրանքների տարեկան աճի տեմպերը շատ բարձր են՝ համապատասխանաբար 46.8 և 26.1 տոկոս:



Գրաֆիկ 1.30
Ներմուծված ապրանքների գների աճի տեմպի նվազումը շարունակվել է

Չորրորդ եռամսյակի վերջում հումքային ապրանքատեսակների գների որոշակի ճշգրտումը հիմնականում պայմանավորված էր ԱՄՆ դոլարի կայունացմամբ և աշխարհաքաղաքական ճնշումների բացակայությամբ: Նման պայմաններում վերացավ այսպես կոչված՝ «անորոշության ռիսկի հավելավճարը», որը պահում էր գներն իրականից փոքր-ինչ բարձր մակարդակի վրա:



Գրաֆիկ 1.31
Նավթամթերքների դրամային գների աճը զսպվել է փոխարժեքի արժևորման արդյունքում (%)

Ներմուծվող ապրանքների գների փոփոխությունը

Ցուցանիշներ	2005	2006				
	IV եռ.	I եռ.	II եռ.	III եռ.	IV եռ.	Տարեկան
Ներմուծում (ընդհանուր)	5.3	9.1	19.9	17.7	14.7	15.4
Ներմուծում (ծառայություններ)	-1.1	-1.9	2.6	5.6	8.0	3.5
Ներմուծում (ապրանքներ)	6.9	12.0	24.4	20.8	16.4	18.4
Կապիտալ ապրանքներ[1]	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Սպառողական ապրանքներ	-1.1	-1.9	2.6	5.6	8.0	3.5
Հումքային ապրանքներ	13.2	29.7	46.1	37.0	13.5	33.6
Ադամանդ*	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0
Նավթամթերք	28.9	30.0	35.3	13.9	4.9	20.1
Բնական գազ	0.0	0.0	100.0	100.0	100.0	75.0

** Կապիտալ ապրանքների և ադամանդի գների գնահատումների բացակայությունը պայմանավորված է դրանց փաստացի խիստ մեծ տատանողականությամբ, այդ իսկ պատճառով նշված ապրանքների գների փոփոխությունը գնահատվում է զրոյական:*

Ներմուծված սպառողական ապրանքների գների աճը, որը եռամսյակի դրությամբ կազմել է տ/տ 8.0 տոկոս, պայմանավորվել է գործընկեր երկրների բարձր գնաճով և փոխարժեքների արժևորումով: Եվրոպական արժույթների արժևորման արդյունքում Եվրոգոտու ազդեցությունը կազմել է 0.5 տոկոսային կետ, Միացյալ Թագավորությանը՝ 0.4 տոկոսային կետ և Շվեյցարիայինը՝ 0.3 տոկոսային կետ: Ներմուծված սպառողական ապրանքների գների աճը 2006 թվականին կազմել է 3.5 տոկոս՝ նույնպես հիմնականում պայմանավորված վերոնշյալ գործոնով:

Կառավարության կողմից բնական գազի սակագների ավելացման սուբսիդավորումը և ՀՀ դրամի փոխարժեքի արժևորումը, որը չորրորդ եռամսյակում կազմել է 20.9 տոկոս, մեծամասամբ չեզոքացրել են ներմուծման դոլարային գների աճը, և ներմուծման դրամային գները բարձրացել են ընդամենը 3.3 տոկոսով:

2006 թվականին ՀՀ դրամի անվանական փոխարժեքի արժևորումը կազմել է 10.0 տոկոս՝ գրեթե ամբողջովին չեզոքացնելով ներմուծման գների 15.4 տոկոս տարեկան աճը, որի արդյունքում ներմուծված ապրանքների դրամային գները բարձրացել են ընդամենը 3.6 տոկոսով:

Տեղական արտադրանքի գներ [33]

2006 թվականի չորրորդ եռամսյակում, ի տարբերություն տարվա նախորդ եռամսյակների, տնտեսության բոլոր ճյուղերում արձանագրվել է գների աճի տեմպի դանդաղում՝ հիմնականում պայմանավորված սեզոնային գործոնով: Բանջարեղենի ոչ սակավ բերքի և անասնապահական մթերքների արտադրության ծավալների ավելացման շնորհիվ 2006 թվականի չորրորդ եռամսյակում գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսը ավելացել է տ/տ 3.8%-ով, մինչդեռ երրորդ եռամսյակում աճը կազմել էր տ/տ 16.1%:

Սեզոնային գործոնի ազդեցությունը անդրադարձել է նաև կապիտալ շինարարության գների վրա՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազեցնելով ճյուղի գների ինդեքսի աճը երրորդ եռամսյակի 5.5%-ից մինչև 1.4%՝ չորրորդ եռամսյակում: Արդյունքում՝ 2006 թվականի չորրորդ եռամսյակում ՀՆԱ դեֆլյատորը ավելացել է տ/տ 4%-ով՝ երրորդ եռամսյակի մոտ 8.2%-ի փոխարեն:

Տնտեսության բոլոր ճյուղերում էլ արձանագրվել է արտադրողների գների աճ՝ պայմանավորված ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոնների ազդեցությամբ: Վերջիններս առավել վառ են դրսևորվել գյուղատնտեսության և կապիտալ շինարարության ճյուղերում: Արդյունքում՝ տարեկան ՀՆԱ դեֆլյատորը կազմել է 4.8%՝ նախորդ տարվա 3.2% փոխարեն:


Սպառողական ապրանքների գների վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գյուղատնտեսության ճյուղում գների աճի տեմպերը նախորդ տարվա համեմատ արագացել են: Վերջինս, դրսևորվելով հատկապես տարվա երկրորդ կիսամյակում, պայմանավորվել է անբարենպաստ եղանակի պատճառով բուսաբուծության բերքի մոտ 4.5% նվազմամբ: Հաշվի առնելով գյուղատնտեսական մթերքների նկատմամբ շարունակաբար աճող պահանջարկը, հասկանալի է դառնում 2006 թվականի դեկտեմբերին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, բուսաբուծության արտադրանքի իրացման մեծածախ գների ավելի քան 35%-ով աճը: Ընդ որում, առավել բարձր աճ է արձանագրվել ամռան սովորականից շոգ եղանակի պատճառով մեծ վնաս կրած Արարատի և Գեղարքունիքի մարզերում, որտեղ բուսաբուծական մթերքների իրացման գները բարձրացել են համապատասխանաբար՝ շուրջ 60% և 40%-ով: Արդյունքում՝ գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքսն ավելացել է 8.9%-ով՝ նախորդ տարվա 6.9% փոխարեն:

Կապիտալ շինարարության գների ինդեքսի աճի տեմպը 2006 թվականին դանդաղել է, որի արդյունքում 2006 թվականին ճյուղի գներն ավելացել են շուրջ 6.9%-ով (2005 թվականին՝ 18.5% աճ): Ճյուղում գների շարունակական աճը պայմանավորված է կապիտալ շինարարության ծավալների պահպանվող բարձր աճով, որն ավելացնում է պահանջարկը շինմոնտաժային աշխատանքների և շինանյութերի շուկաներում՝ հանգեցնելով դրանցում գների մշտական ավելացման: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ շինարարության գների ինդեքսի կազմի մեջ մտնող շինմոնտաժային աշխատանքների և շինարարական ապրանքների գները սպառողական գների ինդեքսում չնչին կշիռ են կազմում (մոտ 0.3%), շինարարության գների ինդեքսն ուղղակի ազդեցություն չի թողնում գնաճի վրա:

[33] *Սույն հատվածում ներկայացված գների ինդեքսները և դրանց փոփոխությունը 2006 թվականի հունվար-դեկտեմբերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ են՝ եթե այլ բան նշված չէ:*

Արտադրողների գների աճը զգալի դանդաղել է արդյունաբերության ճյուղում, որտեղ 2006 թվականին արտադրողների գների ինդեքսն ավելացել է ընդամենը 0.9%-ով՝ նախորդ տարվա 7.7%-ի փոխարեն: Գների աճի նման դանդաղումը հիմնականում պայմանավորվել է միջազգային շուկաներում գունավոր մետաղների (մասնավորապես՝ մոլիբդենի և պղնձի) գների որոշակի նվազման հետևանքով մետաղագործության ճյուղում արձանագրված արտադրողների գների մոտ 5% նվազմամբ: Գների աճի տեմպը արագացել է շինանյութերի արտադրության ենթաճյուղում, որը հանգեցրել է գների տարեկան 22.2%-ով ավելացման: Վերջինս պայմանավորվել է կապիտալ շինարարության աճի տեմպերի արագացման պարագայում շինանյութերի առաջարկի նկատմամբ պահանջարկի առաջանցիկ աճով:

Արտաքին գործոնները ազդեցություն են ունեցել նաև ծառայությունների ոլորտում. ապրիլից գազի գների բարձրացման հետևանքով մոտ 15%-ով ավելացել են բեռնափոխադրումների սակագները: Միևնույն ժամանակ, կապի ոլորտում տարվա ընթացքում նվազել են բջջային հեռախոսակապի սակագները՝ խթանելով մատուցված կապի ծառայությունների ծավալների ավելացումը: Արդյունքում՝ ծառայությունների ոլորտում արձանագրվել է գների 3.2% աճ՝ նախորդ տարվա փոքր-ինչ նվազման փոխարեն:



Գրաֆիկ 1.32

2006 թվականին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, բոլոր ճյուղային գների ինդեքսները աճել են, որն առավել բարձր է եղել գյուղատնտեսության և բեռնափոխադրումների ճյուղերում

1.4. ՀՀ ԿԲ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (31.10.06)

2006 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2006 թվականի հոկտեմբերի 31-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Ա. Նորեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչ հոկտեմբերն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների ցուցանիշների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերի ներկայացումը:

Գնաճ. 2006 թվականի հոկտեմբերին, 2005 թվականի հոկտեմբերի համեմատությամբ, արձանագրվել է 6.0% գնաճ. այդ թվում՝ պարենային ապրանքների գներն աճել են 6.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 2.3%-ով, ծառայությունների սակագները՝ 4.6%-ով: Ընդ որում, ձևավորված գնաճին շարունակում է նպաստել «Միրգ», «Բանջարեղեն և կարտոֆիլ» ապրանքախմբերի, շաքարավազի գների և ծառայությունների սակագների աճը՝ համապատասխանաբար 0.6, 1.2, 0.4, 1.4 տոկոսային կետով:

2006 թվականի հոկտեմբերին, 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների աճը կազմել է համապատասխանաբար 1.%, 2.0% և 4.5%, իսկ ընդհանուր գնաճը՝ 2.5%:

Արտաքին միջավայր. Արտաքին միջավայրի զարգացումները 2006 թվականի հոկտեմբերին կանխատեսվածի շրջանակում են: ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժևորումը պահպանել է նախորդ ամսվա տեմպերը և հոկտեմբերին կազմել 4.7%: Նավթամթերքի միջազգային գների աճը դանդաղել է նաև հոկտեմբերին՝ նախորդ տարվա հոկտեմբերի համեմատությամբ կազմելով ընդամենը 4%: Պահպանվում են հացահատիկի և այլ հումքային ապրանքների գների բարձրացման ռիսկերը: Առաջիկա 12 ամիսներին կանխատեսվում է նավթամթերքի գների դանդաղ և կայուն աճ:

Իրական հատված. Տարվա երրորդ եռամսյակում արձանագրվել է սպասվածից ավելի բարձր աճ՝ 13.1%: Ընդ որում, եթե արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում իրական զարգացումը զգալիորեն հետ է մնացել կանխատեսվածից, ապա շինարարության և ծառայությունների ոլորտներում արձանագրված իրական աճը գերազանցել է կանխատեսված ցուցանիշները:

Գյուղատնտեսության ոլորտում երրորդ եռամսյակում բուսաբուծության արտադրության ծավալների նվազման հետևանքով արձանագրվել է 3.5% իրական նվազում՝ պայմանավորված անբարենպաստ եղանակի պատճառով կերային մշակաբույսերի, բանջարեղենի և մրգի որոշ տեսակների սակավ բերքով:

Արդյունաբերության ճյուղում տարվա երրորդ եռամսյակում արձանագրվել է շուրջ 2% իրական նվազում՝ պայմանավորված մետաղագործության ենթաճյուղում նոր արտադրական հզորությունների գործարկման նախատեսված ժամկետի հետաձգմամբ, ինչպես նաև սննդի արդյունաբերության ոլորտում պահածոների արտադրության ծավալների որոշակի նվազմամբ (որը սակավ բերքի հետևանքով գործարանների մթերումների նվազման արդյունք է):

Շինարարության ոլորտում արձանագրվել է սպասվածից ավելի՝ 37.9% իրական աճ՝ հիմնականում բնակչության միջոցներով ֆինանսավորվող շինարարության ծավալների բարձր աճի հաշվին:

Ծառայությունների ոլորտի աճը նույնպես գերազանցել է սպասումները և կազմել 19.2%: Ընդ որում, դա պայմանավորվել է ինչպես բնակչության եկամուտների շարունակական աճով, այնպես էլ Հայաստանի անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումների շնորհիվ զբոսաշրջության զգալի աշխուժացմամբ:

Ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալները երրորդ եռամսյա-

կում, նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատությամբ, նվազել են 13.9%-ով[1]՝ պայմանավորված հիմնականում արդյունաբերության ճյուղում դեռևս տարեսկզբից նկատվող անբարենպաստ զարգացումներով, ինչպես նաև արտահանման հետ կապված որոշ տեխնիկական խնդիրներով (Ռուսաստանում հարկային վարչարարության փոփոխություններ): Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալները նվազել են 1.6%-ով[2]՝ պայմանավորված հիմնականում հումքային ապրանքների իրական ծավալների 11.8%-ով նվազմամբ: Այդուհանդերձ, սպառողական ապրանքների ներմուծման իրական ծավալներն ավելացել են 11.0%-ով, ինչն արտացոլում է տնտեսությունում անընդհատ աճող պահանջարկը:

Աշխատուժի շուկա. 2006 թվականի երրորդ եռամսյակում շարունակվել է բնակչության եկամուտների մեծ մասը կազմող աշխատավարձի միջին մակարդակի իրական աճը՝ կազմելով 20.5%: Բնակչության եկամուտների ավելացմանը նպաստել է նաև մասնավոր տրանսֆերտների շարունակվող մեծածավալ ներհոսքը. 2006 թ. սեպտեմբերին գրանցվել է տրանսֆերտների 12.8% աճ՝ նախորդ տարվա սեպտեմբերի համեմատությամբ: Իսկ հունվար-սեպտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, տրանսֆերտներն ավելացել են 30.2%-ով: Եկամուտների աճը շարունակում է գնաճային ճնշումներ ստեղծել սպառողական շուկայում:

Հարկաբյուջետային հատված. 2006 թվականի երրորդ եռամսյակում հարկաբյուջետային հատվածը գնաճի վրա ունեցել է զսպող ազդեցություն: Տարվա արդյունքում, պետական բյուջեի նախատեսված ծախսերի ամբողջությամբ կատարման պարագայում, ակնկալվում է փոքրինչ ընդլայնող ազդեցություն:

Փող և վարկ. 2006 թվականի հոկտեմբերին շարունակվել են տնտեսության դրամավարկային հատվածի նախորդ ամիսների զարգացումները, արձանագրվել է տնտեսության դրամայնացման ակտիվացում:

Դրամայնացման գործընթացի պարագայում դրամավարկային ցուցանիշներն ունեցել են հետևյալ շարժը. դրամային զանգվածի 46.2% աճը 2006 թվականի սեպտեմբերին, 2005 թվականի սեպտեմբերի համեմատությամբ, զգալիորեն գերազանցել է փողի զանգվածի 22.3% աճը, որի արդյունքում տնտեսության դրամայնացումն ավելացել է 23.6%-ով, իսկ փողայնացումը՝ ընդամենը 3.3%-ով: Փողի բազան այդ ժամանակահատվածում ավելացել է 32.9%-ով: Տնտեսության դրամայնացման գործընթացը վարկավորման և ավանդների ցուցանիշներում արտացոլվել է հետևյալ զարգացումներով: Տնտեսության վարկավորումը 2006 թվականի սեպտեմբերին, 2005 թվականի սեպտեմբերի համեմատությամբ, աճել է 34.2%-ով: Ընդ որում, դրամով վարկավորումն ավելացել է 59%-ով կամ 37 մլրդ դրամով, իսկ արտարժույթով վարկավորումը՝ 38.6%-ով (առանց դրամի արժևորման ազդեցության): Ներկայումս դրամով վարկավորման տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ կազմում է 45.3%: 2006 թվականի սեպտեմբերին, 2005 թվականի սեպտեմբերի համեմատությամբ, ավանդների աճը կազմել է 11.1%, ընդ որում, դրամային ավանդներն ավելացել են 56.8%-ով, իսկ արտարժութային ավանդները՝ շուրջ 5%-ով (առանց դրամի արժևորման ազդեցության):

Դրամայնացման գործընթացի արագացման պարագայում դրամի նկատմամբ պահանջարկի բավարարումը ԿԲ-ն կշարունակի իրականացնել արտարժույթի առքի միջոցով, որն էլ զուգակցվելով տարեվերջին բյուջեի մեծածավալ ծախսումների հետ, տնտեսությունում կառաջացնի իրացվելիության ավելցուկ՝ ճնշումներ ստեղծելով գնաճի ավելացման ուղղությամբ:

Դրամային շուկայում միջբանկային ռեպո տոկոսադրույքը կայունացել է 5.25%-ի շուրջ, իսկ ԿԲ կողմից թողարկվող պետական պարտատոմսերի տոկոսադրույքը՝ 6%-ի շուրջ:

Արծանագրեցին. Թեև 2006 թվականի օգոստոսից արձանագրվում է նավթի միջազգային գների որոշակի նվազման և կայունացման միտում, սակայն դեռևս պահպանվում են արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները՝ պայմանավորված հացահատիկի, նավթամթերքի և այլ հումքային ապրանքների հնարավոր թանկացմամբ:

Շարունակվում է տնտեսական բարձր աճի արձանագրումը հիմնականում շինարարության և

---

[1] Անվանական արտահայտությամբ՝ արտահանումը 2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, նվազել է 1.8%-ով, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 3%-ով:

[2] Անվանական արտահայտությամբ՝ ներմուծումը 2006 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 18%-ով, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբի՝ 22.2%-ով:

ծառայությունների ոլորտների հաշվին, ինչի արդյունքում բնակչության եկամուտների ավելացումը, զուգորդվելով մասնավոր տրանսֆերտների աճի հետ, ստեղծում է գնաճային ճնշումներ: Պահպանվում են նաև գյուղատնտեսության ոլորտից եկող գնաճային ճնշումները:

Չնայած առկա գնաճային ճնշումներին, նշված ռիսկերի չափավոր դրսևորման դեպքում, առաջիկա 12 ամիսներին գնաճը կգտնվի նպատակային՝ 4+1.5% ցուցանիշի սահմանում:

Միաժամանակ, տնտեսությունում դրամայնացման երևույթի շարունակման պարագայում արտարժույթի առքի միջոցով ԿԲ կողմից դրամի նկատմամբ պահանջարկի բավարարումը, զուգակցվելով մինչև տարեվերջ բյուջեի հնարավոր մեծածավալ ծախսումների հետ, տնտեսությունում կառաջացնի իրացվելիության ավելցուկ, ինչի չեզոքացումը հնարավոր է տոկոսադրույքների ներկայիս մակարդակի պայմաններում:

Վերոնշյալ ճնշումների ուժեղացման պարագայում առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածում ԿԲ-ն աստիճանաբար կչեզոքացնի դրանց ազդեցությունը:

Որոշեցին. Անփոփոխ թողնել 2006 թվականի նոյեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 4.75%: Մեկօրյա լոմբարդային վարկի տոկոսադրույքը 7.75% է, իսկ մեկօրյա ավանդի տոկոսադրույքը՝ 1.75%

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (5.12.06)

2006 թվականի դեկտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2006 թվականի դեկտեմբերի 5-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից դեկտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց մինչև դեկտեմբերն ընկած ժամանակահատվածում մակրոտնտեսական իրավիճակի, գնաճի, տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի ռիսկերի ներկայացումը:

Գնաճ. 2006 թվականի նոյեմբերին հոկտեմբերի համեմատությամբ արձանագրվել է 1% գնաճ, ընդ որում, պարենային ապրանքների գներն ավելացել են 1.9%-ով, ոչ պարենային ապրանքների գները նվազել են 0.9%-ով, իսկ ծառայությունների սակագներն ավելացել 0.6%-ով: Նոյեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 6.0%, 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ՝ 3.5%:

Արտաքին միջավայր. Արտաքին միջավայրի զարգացումները, մասնավորապես՝ նավթամթերքի և բազային մետաղների գները, հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին ընդհանուր առմամբ սպասվածի շրջանակում էին: Թեև նույն ժամանակահատվածում ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի փոխարժեքի արժևորումը նույնպես կանխատեսվածի շրջանակում էր, այնուամենայնիվ նոյեմբերի վերջին տասնօրյակում փոխարժեքն ավելի արագ արժևորվեց, որի պարագայում հնարավոր է հետագայում ճշգրտել եվրոյի փոխարժեքի սպասումները:

Իրական հատված. Հոկտեմբերին տնտեսության իրական հատվածում առանձնահատուկ տեղաշարժեր չեն արձանագրվել, ինչի արդյունքում հունվար-հոկտեմբերին տնտեսական աճը

կազմել է 13%: Ինչպես և նախորդ ամիս, դա հիմնականում պայմանավորվել է շինարարության ծավալների աճի տեմպերի արագացմամբ, ինչպես նաև ծառայությունների ոլորտում դեռևս տարեսկզբից արձանագրված աճի բարձր մակարդակով:

Գյուղատնտեսության ոլորտում համախառն թողարկման ծավալները 2006 թվականի հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, գրեթե չեն փոխվել. ընդ որում, շարունակվել է անասնապահության ենթաճյուղի թողարկման ծավալների աճի (հունվար-հոկտեմբերին՝ 8%) զուգակցումը բուսաբուծության բերքի նվազման հետ (հունվար-հոկտեմբերին՝ մոտ 4%): Վերջինս պայմանավորվել է հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի (43.9%), պտղի ու հատապտղի (7.0%), կարտոֆիլի (5.9%) և կերային մշակաբույսերի (28.4%) համախառն բերքի ծավալների նվազմամբ: Բուսաբուծության համախառն բերքի նվազումը, զուգակցվելով մշակող արդյունաբերության կողմից արտահանմանն ուղղված (մասնավորապես՝ Վրաստան) գյուղատնտեսական մթերքների նկատմամբ պահանջարկի ավելացման հետ[3], շարունակել է գնաճային ճնշումներ ձևավորել և՛ արտադրանքի բացթողման գների, և՛ սպառողական շուկայում մանրածախ գների վրա:

Արդյունաբերության ճյուղի զարգացումները նույնպես սպասվածի շրջանակում էին. հունվար-հոկտեմբերին արձանագրվել է 0.9% իրական նվազում՝ պայմանավորված ադամանդագործության, էլեկտրաէներգիայի արտադրության և քիմիական արդյունաբերության ենթաճյուղերում դեռևս տարեսկզբից արձանագրված արտադրության ծավալների անկմամբ:

Արդյունաբերության ճյուղում դեռևս տարեսկզբից նկատվող անբարենպաստ զարգացումների աստիճանական նվազման հետ միաժամանակ հունվար-հոկտեմբերին գրանցվել է արտահանման անվանական ծավալների 2.3% աճ, իսկ առանց ադամանդի՝ 5.4% աճ: Այնուամենայնիվ, արտահանման իրական ծավալները դեռևս բավականին ցածր են նախորդ տարվա մակարդակից: Ներմուծման ծավալների բարձր աճը, ինչպես և ակնկալվում էր, պահպանվել է նաև հոկտեմբերին, ինչի արդյունքում 2006 թ. հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, գրանցվել է 20.9% աճ: Վերջինս իր վրա կրում է պահանջարկի շարունակական աճի ազդեցությունը:

Աշխատանքի շուկա. Աշխատանքի շուկայի վարքագիծը, այդ թվում՝ աշխատավարձի աճը, դրսևորվել է կանխատեսվածի շրջանակում: Մասնավորապես շարունակվել է արտադրողականության աճի համեմատությամբ իրական աշխատավարձի առաջանցիկ աճի տեմպերի արձանագրումը, ինչպես նաև գործազրկության կրճատումը: 2006 թվականի հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, միջին աշխատավարձի մակարդակն իրական արտահայտությամբ ավելացել է 19.6%-ով, մինչդեռ արտադրողականության աճը կազմել է մոտ 12%: Արտադրողականության աճի համեմատությամբ իրական աշխատավարձի առաջանցիկ աճը, մասամբ պայմանավորված տրանսֆերտների շարունակական մեծածավալ ներհոսքով, անխուսափելիորեն շարունակում է առաջացնել գնաճային ճնշումներ: Տրանսֆերտների զուտ ներհոսքի աճը 2006 թ. հոկտեմբերին կազմել է 24.9% (2006 թ. հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, տրանսֆերտերն ավելացել են 29.5 %-ով):

Հարկաբյուջետային հատված. Թեև 2006 թվականի չորրորդ եռամսյակի սկզբին գնահատվել էր համախառն պահանջարկի ձևավորման վրա հարկաբյուջետային հատվածի ընդլայնող ազդեցություն, հոկտեմբերի և նոյեմբերի զարգացումները փաստում են հակառակը: Գնահատվել է, որ չորրորդ եռամսյակում այդ ազդեցությունը կլինի զսպող, որի պարագայում ամբողջ տարվա կտրվածքով հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի ձևավորման վրա կունենա զսպող ազդեցություն:

Փող և վարկ. Հոկտեմբեր-նոյեմբերին շարունակվել են տնտեսության դրամավարկային հատվածի նախորդ ամիսների զարգացումները: Ինչպես սպասվում էր, արձանագրվել է տնտեսության դրամայնացման ակտիվացում: Այս պարագայում դրամավարկային ցուցանիշներն ունեցել են հետևյալ շարժը. դրամային զանգվածի 45.8% աճը 2006 թվականի նոյեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, զգալիորեն գերազանցել է փողի զանգվածի 25.5% աճը: Փողի բազան նույն ժամանակահատվածում ավելացել է 30.1%-ով:

[3] *Համաձայն ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 2006 թվականի հունվար-հոկտեմբերին բնական հյութերի արտադրությունը իրական արտահայտությամբ ավելացել է 52.9%-ով, իսկ պահածոների արտադրությունը՝ 11%-ով:*

Շրջանառությունում գտնվող կանխիկն ավելացել է 39.2%-ով, իսկ դրամային ավանդները՝ 57.1%-ով:

Դրամային արտահայտությամբ արտարժութային ավանդները նվազել են 4.7%-ով, ինչի արդյունքում տնտեսության դոլարայնացման աստիճանը նվազել է 24%-ով: Տարեկան աճի ակնկալիքները գերազանցել են նաև տնտեսության վարկավորման ցուցանիշը, որը նոյեմբերին, նախորդ տարվա նույն ամսվա համեմատությամբ, ավելացել է 27.6%-ով: Ընդ որում, վարկավորման իրական աճի տեմպերն ավելի բարձր են, եթե հաշվի առնենք նաև դրամի արժևորման տեմպերը:

Արծանագրեցին. Թեև դեռևս պահպանվում են արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները՝ հիմնականում պայմանավորված էներգակիրների, ինչպես նաև մի շարք այլ ապրանքների (մասնավորապես՝ շաքարավազի) տարվա ընթացքում ձևավորված միջազգային գների բարձր մակարդակով, այնուամենայնիվ, առաջիկա տասներկու ամիսների համար այդ հատվածից սպասվող գնաճային ճնշումներն ավելի մեղմ են:

Շարունակվում է տնտեսական բարձր աճը հիմնականում շինարարության և ծառայությունների ոլորտներում: Նմանօրինակ զարգացումներով պայմանավորված բնակչության եկամուտների ավելացումը, զուգորդվելով մասնավոր տրանսֆերտների աճի հետ, պահպանում է չափավոր գնաճային ճնշումները:

Միաժամանակ, տարեվերջին դրամի պահանջարկի սեզոնային մեծածավալ աճի և տնտեսությունում դրամայնացման երևույթի շարունակման պարագայում արտարժույթի առքի միջոցով ԿԲ կողմից դրա բավարարումը տնտեսությունում կառաջացնի իրացվելիության ավելցուկ: ՀՀ ԿԲ խորհուրդը գնահատում է, որ այս ավելցուկի չեզոքացումը հնարավոր է տոկոսադրույքների ներկայիս մակարդակի պայմաններում:

Որոշեցին.2006 թվականի դեկտեմբեր ամսվա համար ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ 4.75%, լոմբարդային վարկի և ավանդի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 7.75% և 1.75%:

Տնտեսության զարգացման հեռանկարների պահպանման պարագայում ԿԲ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքների ճշգրտման իրականացումը:

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ (30.12.2006)[4]

2007 թվականի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ

2006 թվականի դեկտեմբերի 30-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը, նախագահի տեղակալ Ա. Ջավադյանը, խորհրդի անդամներ Ա. Սարիբեկյանը, Վ. Մովսեսյանը, Ա. Նորեկյանը, Կ. Մինասյանը, Վ. Գաբրիելյանը:

ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2007 թվականի դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ որոշման կայացմանը նախորդեց 2006 թվականի տնտեսական իրավիճակի, փաստացի գնաճի վերլուծության և 2007 թվականի կանխատեսումների ներկայացումը: Փաստացի տվյալները և կանխատեսումները ներառում են տնտեսության արտաքին, իրական, հարկաբյուջետային և դրամավարկային հատվածների զարգացումները, ինչպես նաև ապագա ժամանակահատվածի հավանական ռիսկերը:

Ըստ ԿԲ կանխատեսումների՝ շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման վարկածի պայմաններում 2007 թվականի դեկտեմբերին, 2006 թվականի դեկտեմբերի համեմատությամբ, գնաճը կկազմի շուրջ 4.1%: Կանխատեսումների ենթատեքստում գնահատվել է տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը գնաճի կանխատեսված ցուցանիշի վրա:

2006 թվականի փաստացի ցուցանիշները

Գնաճ. 2006 թվականի դեկտեմբերին նոյեմբերի համեմատությամբ արձանագրվել է 1.6%, իսկ 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ՝ 5.2% գնաճ՝ նպատակային 5%-ի (+/-1.5%) պարագայում: Ընդ որում, պարենային ապրանքների գները 2005 թվականի դեկտեմբերի համեմատությամբ ավելացել են 6.6%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.5%-ով, ծառայությունների սակագները՝ 5.5%-ով: Պարենային ապրանքներից «Մրգեր» և «Բանջարեղեն և կարտոֆիլ»

[4] *Նախնական տվյալները հրապարակումից առաջ փոխարինվել են տվյալ պահին առկա փաստացի տվյալներով:*

ապրանքախմբերի ինդեքսների աճը կազմել է համապատասխանաբար 29.5% և 37.9%, որոնք գնաճի տարեկան ցուցանիշն ավելացրել են ավելի քան 2.5 տոկոսային կետով: Միջին տարեկան գնաճը 2006 թվականին կազմել է 2.9%:

Տնտեսության առանձին հատվածների ազդեցությունը գնաճի տարեկան ցուցանիշի վրա հետևյալն է. արտաքին հատվածը գնաճի վրա ունեցել է չափավոր ընդլայնող, իրական հատվածը և աշխատանքի շուկան՝ ընդլայնող, հարկաբյուջետային հատվածը՝ զսպող ազդեցություն: Նշված զարգացումները և այդ միջավայրում իրականացված դրամավարկային քաղաքականության արդյունքները ավելի մանրամասն ներկայացվում են ստորև:

Արտաքին միջավայր. 2006 թվականի չորրորդ եռամսյակում արտաքին միջավայրը գնաճի վրա ունեցել է չափավոր ընդլայնող ազդեցություն: Մի կողմից դա արտահայտվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ եվրոյի արժևորմամբ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ՝ 7.7%), որը թանկացնում է Եվրոգոտուց ներմուծվող ապրանքների դոլարային գները: Մյուս կողմից՝ թեև արձանագրվել է նավթամթերքի միջազգային գների կանխատեսվածից ցածր մակարդակ, այնուամենայնիվ, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել է 5.0%-ով, որը նույնպես ընդլայնող ազդեցություն է ունեցել գնաճի վրա:

Ընդհանուր առմամբ ներմուծվող ապրանքների դոլարային գները 2006 թվականի չորրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, աճել են 13.4%-ով, որը չեզոքացվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 17.3% արժևորմամբ՝ ներմուծվող ապրանքների գները պահպանելով գրեթե նույն մակարդակի վրա:

Կարելի է փաստել, որ, պայմանավորված հումքային ապրանքների գների աճի տեմպերի դանդաղմամբ, արտաքին հատվածից եկող գնաճային ճնշումները մեղմվել են:

Իրական հատված. 2006 թվականի չորրորդ եռամսյակում իրական հատվածը գնաճի վրա ունեցել է ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված, մի կողմից՝ շինարարության և ծառայությունների ոլորտներում բավականին բարձր տնտեսական աճի արձանագրման արդյունքում եկամուտների էապես ավելացմամբ, արտադրողականության նկատմամբ իրական աշխատավարձի գերազանցմամբ, մասնավոր տրանսֆերտների էական ներհոսքով, մյուս կողմից՝ արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտի ցածր ավելացված արժեքի ստեղծմամբ:

2006 թվականի չորրորդ եռամսյակում տնտեսության ճյուղային զարգացումները հանգեցրել են 15% տնտեսական աճի: Ընդ որում, եթե արդյունաբերության և գյուղատնտեսության իրական աճը ցածր էր սպասվածից, ապա տնտեսության մյուս ճյուղերում արձանագրվել է կանխատեսված ցուցանիշների գերազանցում: Չորրորդ եռամսյակում կապիտալ շինարարության ավելացված արժեքի աճը կազմել է 37.5%, ինչը տնտեսական աճին նպաստել է 9.6 տոկոսային կետով: Ծառայությունների ոլորտում չորրորդ եռամսյակում արձանագրված իրական աճը, պայմանավորված բնակչության եկամուտների շարունակվող ավելացման շնորհիվ առևտրի և տրանսպորտի ու կապի ծառայությունների ծավալների աշխուժացմամբ, կազմել է 13.2% (նպաստումը տնտեսական աճին՝ 4.7 տոկոսային կետ): Տնտեսության ճյուղային նման զարգացումների արդյունքում 2006 թվականին տնտեսական աճը կազմել է 13.4%՝ նախորդ տարվա 14%-ի փոխարեն: Ընդ որում, տնտեսական աճի ցուցանիշին առավել նպաստել են կապիտալ շինարարությունը և ծառայությունները, մինչդեռ գյուղատնտեսության նպաստումը չեզոք էր: Այսպես, կապիտալ շինարարության ավելացված արժեքի աճը 2006 թվականին կազմել է 37.2% (նպաստումը տնտեսական աճին՝ 8.1 տոկոսային կետ), ծառայությունների աճը՝ 14% (նպաստումը տնտեսական աճին՝ 4.5 տոկոսային կետ), այնինչ արդյունաբերության ավելացված արժեքի ինդեքսը չի փոխվի, իսկ գյուղատնտեսության ավելացված արժեքի իրական աճը չի գերազանցել 1%-ը[5]:

Համախառն պահանջարկի կառուցվածքում ներքին պահանջարկն ավելացել է 13.6%-ով: Ընդ որում, եթե պետական ծախսերն իրական արտահայտությամբ նվազել են 5.3%-ով, ապա մասնավոր ծախսերը ավելացել են 15.8%-ով: Մասնավոր ծախսերի կառուցվածքում բարձր աճ է արձանագրվել և՛ սպառման, և՛ ներդրումների մասով, որը պայմանավորվել է ինչպես բնակչության եկամուտների շարունակվող ավելացմամբ, այնպես էլ իրականացվող ներդրումային ծրագրերի (մասնավորապես՝ բնակարանային շինարարության, լեռնահանքային արդյունաբերության, էներգետիկայի և տրանսպորտի ոլորտներում) երկարաժամկետ բնույթով: Այսպես, մաս-

[5] Արդյունաբերության ավելացված արժեքը նվազել է 1.1%-ով՝ 0.2 տոկոսային կետով զսպելով տնտեսական աճի ցուցանիշը:

նավոր սպառումն ավելացել է 11.6%-ով, նախորդ տարվա 13.3%-ի փոխարեն, իսկ մասնավոր ներդրումների աճը կազմել է մոտ 30%՝ նախորդ տարվա 34.8%-ի փոխարեն: Արդյունաբերության ճյուղում տարեսկզբից շարունակվող անբարենպաստ զարգացումները հանգեցրել են ապրանքների և ծառայությունների արտահանման իրական ծավալների նվազման: Վերջինս որոշ չափով նպաստել է իրական եկամուտների աճի տեմպերի դանդաղմանը՝ գների վրա ունենալով զսպողական ազդեցություն: Ապրանքների և ծառայությունների ներմուծման իրական ծավալների աճը գների վրա նույնպես ունեցել է զսպողական ազդեցություն, քանի որ մի կողմից սպառողական շուկայում ապահովել է ապրանքների և ծառայությունների լրացուցիչ առաջարկը, մյուս կողմից՝ նպաստել է բնակչության եկամուտների մի մասի արտահոսքին:

Աշխատանքի շուկա. 2006 թվականին աշխատանքի շուկայում շարունակվել է աշխատուժի նկատմամբ տնտեսական աճով պայմանավորված պահանջարկի աճը, որի արդյունքում ավելացել են միջին անվանական և իրական աշխատավարձերը: Միևնույն ժամանակ կրճատվել է գործազրկության մակարդակը: Չնայած բարձր տնտեսական աճին՝ արտադրողականության աճի ցուցանիշը զիջել է իրական աշխատավարձի աճին՝ շարունակաբար գնաճային ճնշումներ առաջացնելով սպառողական շուկայում:

Տարեսկզբից արձանագրվող ոչ առևտրային բնույթի տրանսֆերտների մեծ ծավալները (2006 թվականի հունվար-նոյեմբերին աճը կազմել է 32.2%) արտացոլվում են սպառողական շուկայում գնաճային ճնշումներով, ինչը, սակայն, մասնակիորեն մեղմվում է անվանական փոխարժեքի շարունակվող արժևորմամբ:

Համախմբված բյուջե. 2006 թվականին հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը համախառն պահանջարկի վրա եղել է չնչին զսպող՝ պայմանավորված ծախսերի զսպող ազդեցությամբ:

Փող և վարկ. 2006 թվականի տարեվերջին շարունակվել են տնտեսության դրամավարկային հատվածի նախորդ ամիսների զարգացումները, և, ինչպես սպասվում էր, արագացել է տնտեսության դրամայնացման գործընթացը: Կենտրոնական բանկը դրամի նկատմամբ պահանջարկը բավարարել է արտարժույթի առքի գործառնությունների իրականացման միջոցով, իսկ ավելացված իրացվելիությունը՝ չեզոքացրել գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու նպատակից ելնելով: Ընդհանուր առմամբ, 2006 թվականի չորրորդ եռամսյակում ԿԲ-ն գնել է զուտ արտահայտությամբ 46.7 մլրդ դրամին համարժեք արտարժույթ և թողարկել զուտ արտահայտությամբ 4.1 մլրդ դրամ պետական պարտատոմս: Նշված ժամանակահատվածում ԿԲ խորհուրդը վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացրել է միայն մեկ անգամ՝ հոկտեմբերի սկզբին սահմանելով 4.75%: Նոյեմբեր և դեկտեմբեր ամսիներին վերաֆինանսավորման տոկոսադրույքն անփոփոխ է մնացել, քանի որ նախ որոշ չափով մեղմվել էր գնաճային ներուժը, իսկ տարեկան գնաճի նպատակային ցուցանիշին հասնելու համար ավելցուկային իրացվելիության ներքաշումը լիովին իրատեսական էր տոկոսադրույքի այդ մակարդակի պայմաններում:

Դրամայնացման գործընթացը և իրականացված դրամավարկային քաղաքականությունը դրամավարկային ցուցանիշներում արտացոլվել են հետևյալ շարժերով. դրամային զանգվածի 52.5% աճը 2006 թվականի տարեվերջին, 2005 թվականի տարեվերջի համեմատությամբ զգալիորեն գերազանցել է փողի զանգվածի 32.9%-ը: Փողի բազան այդ ընթացքում ավելացել է 41%-ով: Փողի, դրամային զանգվածների և փողի բազայի միջին տարեկան աճը կազմել է համապատասխանաբար 26%, 45% և 44%: Շրջանառությունում գտնվող կանխիկն ավելացել է 46.5%-ով, իսկ դրամային ավանդները՝ 67%-ով, մինչդեռ դրամային արտահայտությամբ արտարժութային ավանդներն ավելացել են ընդամենը 1.9%-ով: Փողի զանգվածի բաղադրատարրերի նման շարժի արդյունքում տնտեսության դոլարայնացման աստիճանը նվազել է ավելի քան 23%-ով և դեկտեմբերի վերջին կազմել 30%: Դրամայնացման արագացմամբ պայմանավորված՝ փողի բազմարկիչը նվազել է 7%-ով և կազմել 1.78: Նույն գործոնով պայմանավորված՝ 6.4%-ով ավելացել է դրամային բազմարկիչը և կազմել 1.22: Այդ պայմաններում տնտեսության դրամայնացման գործակիցն ավելացել է 28.4%-ով և կազմել 12.1%, այն դեպքում, երբ փողայնացումն ավելացել է 12.1%-ով և կազմել 18.2%: Տնտեսության վարկավորման ծավալները նշված ժամանակամիջոցում ավելացել են 28.1%-ով:

Տնտեսության առանձին հատվածների զարգացումները և դրանց ազդեցությունը գնաճի վրա ավելի ծավալուն կներկայացվեն ԿԲ 2006 թվականի տարեկան հաշվետվությունում:

2007 թվականի կանխատեսումները

Արտաքին միջավայր. 2007 թվականին արտաքին միջավայրում ակնկալվում են հետևյալ զարգացումները. կշարունակվի եվրոյի սահուն արժևորումը, և տարեվերջին կձևավորվի 1.35 ԱՄՆ դոլար/1 եվրո փոխարժեքը: Այս սպասումների հիմքում ընկած են ԱՄՆ տնտեսության պետական բյուջեի և ընթացիկ հաշվի պակասուրդները, որոնք բավականին բարձր մակարդակի վրա են: Բացի այդ, ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգի և Եվրոպական կենտրոնական բանկի տոկոսադրույքների միջև տարբերության կրճատումը հօգուտ եվրոյի կշարունակվի:

Ինչ վերաբերում է նավթի գների սցենարին, գնահատվել է, որ դա կհասնի 1 բարելի դիմաց մինչև 80 ԱՄՆ դոլար՝ 61 ԱՄՆ դոլարի փոխարեն: Այս կանխատեսումը ելնում է այն փաստից, որ դեռևս միջինժամկետ և երկարաժամկետ հատվածներում էներգակիրների թանկացման միտումը պետք է պահպանվի առաջարկի և պահանջարկի միջև գոյություն ունեցող ճեղքվածքի պատճառով:

Միջազգային ֆինանսական պայմաններն ավելի խիստ կլինեն 2007 թվականին՝ պայմանավորված գրեթե բոլոր զարգացած երկրների կենտրոնական բանկերի կողմից տոկոսադրույքների բարձրացմամբ: Բացառություն է կազմում ԱՄՆ տնտեսությունը, որտեղ 2007 թվականի առաջին կիսամյակում ակնկալվում է տոկոսադրույքների նվազեցում՝ ցածր տնտեսական աճի և դեռևս բարձր, թեև նվազող գնաճի պայմաններում: Այս խստացումը կբերի դեպի զարգացած երկրներ, ինչպես նաև ՀՀ կապիտալի ներհոսքի որոշակի թուլացման:

Անդրադառնալով հացահատիկի գներին, կարելի է ասել, որ որոշակիորեն թուլացել են գների աճի ռիսկերը՝ կապված Ռուսաստանի բերքի բավարար լինելու և Ռուսաստանից արտահանվող հացահատիկի ծավալների ոչ մեծ չափով կրճատման հանգամանքի հետ:

Իրական հատված. 2007 թվականի ընթացքում սպասվում է նախորդ տարիների համեմատությամբ տնտեսական աճի տեմպերի դանդաղում. կնվազեն կապիտալ շինարարության աճի տեմպերը, գյուղատնտեսության և ծառայությունների աճի տեմպերը կպահպանվեն, իսկ արդյունաբերության ճյուղում որոշ չափով կավելանան: Միաժամանակ, համախառն պահանջարկի կառուցվածքում ակնկալվում են ներքին պահանջարկի աճի տեմպերի որոշակի նվազում և արտահանման աճի տեմպերի ավելացում: Ընդ որում, ներքին պահանջարկի բաղադրատարրերից պետական ծախսերի իրական աճի արագացմանը զուգընթաց որոշ չափով նվազելու են մասնավոր ծախսերի իրական աճի տեմպերը: Ինչպես նախորդ տարիներին՝ դա պայմանավորվելու է բնակչության եկամուտների շարունակական ավելացմամբ, նաև մասնավոր տրանսֆերտների ակնկալվող զգալի ներհոսքով: Մասնավոր ներդրումների աճի տեմպերը կմնան բարձր և կարծանագրվի հիմնականում բնակարանային շինարարության, տրանսպորտի և կապի, էներգետիկայի, լեռնահանքային, մետաղագործական, քիմիական արդյունաբերության ոլորտներում:

2007 թվականին արտահանման ակնկալվող աճը[6] կապահովվի արդյունաբերության ճյուղի վերականգնմամբ, ադամանդագործության ենթաճյուղում կառուցվածքային խնդիրների լուծմամբ: Ներմուծման դոլարային գների աճի տեմպերի դանդաղման և տրված պահանջարկի պայմաններում իրական ներմուծման աճի տեմպերը նախորդ տարվա համեմատությամբ կպահպանվեն:

Աշխատանքի շուկա. 2007 թվականին աշխատանքի շուկան բնութագրող ցուցանիշները կշարունակեն վերջին հինգ տարում դրսևորած վարքագիծը: Մասնավորապես, աշխատանքի նկատմամբ պահանջարկի աճով պայմանավորված՝ կշարունակվի կրճատվել գործազրկության մակարդակը հատկապես շինարարության և ծառայությունների ոլորտներում: Քանի որ դրանք ՀՆԱ աճը ապահովող հիմնական ոլորտներն են և արտադրողականության ավելացում չեն պահանջում, տնտեսությունում աշխատավարձի աճը կշարունակի գերազանցել արտադրողականության աճի ցուցանիշը: Արդյունքում որոշակի գնաճային ճնշումներ կառաջանան սպառողական շուկայում:

Գնաճի վրա ընդլայնող ազդեցություն կունենան նաև ՀՀ ուղարկվող մասնավոր տրանսֆերտները, որոնց աճի տեմպերը փոքր-ինչ կնվազեն:

Համախմբված բյուջե. 2007 թվականին սպասվում է համախառն պահանջարկի վրա հարկաբյուջետային քաղաքականության փոքր-ինչ ընդլայնող ազդեցություն, որը հիմնականում

---

[6] Ապրանքների և ծառայությունների արտահանման և ներմուծման իրական ծավալների հաշվարկման մեթոդաբանությունը փոխվել է: Այժմ գների հաշվարկման մեջ ներառվում են նաև ծառայությունների արտահանման և ներմուծման գները, ինչի հետևանքով 2007 թ. վերջին կանխատեսումների համեմատ նոր ցուցանիշները անհամադրելի են:


պայմանավորված կլինի ծախսերի ընդլայնող ազդեցությամբ:

Փող և վարկ. Նախորդ երկու տարում արձանագրված դրամայնացման գործընթացը, ենթադրվում է, կպահպանվի նաև 2007-ին՝ պայմանավորված տնտեսության դրամայնացմանն ուղղված մի շարք միջոցառումների ձեռնարկմամբ:

2007-ին կշարունակվեն ֆինանսական միջնորդության աճի միտումները, որոնք կարտահայտվեն դրամային բազմարկչի, փողայնացման և դրամայնացման գործակիցների աճով: Միաժամանակ, կարձանագրվի տնտեսության դոլարայնացման նվազում:

2007 թվականին կպահպանվեն նաև տնտեսության վարկավորման աճի բարձր տեմպերը՝ պայմանավորված նախորդ տարի բանկերի կողմից ստացված մեծ ծավալի շահույթի և կանոնադրական կապիտալի համալրման միջոցների հաշվին վարկային մեծածավալ վարկային ծրագրերի իրականացմամբ, մասնավորապես՝ հիփոթեքային վարկավորման ակնկալվող մեծ ծավալներով:

Տնտեսության առանձին հատվածներում կանխատեսվել է նաև առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի գնաճը: 2007 թվականի մարտին 12-ամսյա գնաճը կկազմի 5.1%, իսկ առաջիկա 12 ամիսների ընթացքում՝ 4.1%:



Գրաֆիկ 1.33
2006 թվականի չորրորդ եռամսյակում եվրոյի փոխարժեքը շարունակել է արժևորվել

2007 թվականի IV եռամսյակի կանխատեսված գնաճը՝ 4.1%						
Միջակայք	2%-ից պակաս	2%-3%	3%-4%	4%-5%	5%-6%	6%-ից ավելի
Հավանականություն	<1	9.9	39.4	39.4	9.9	<1

Գնաճի կանխատեսված մակարդակը գրեթե չի շեղվում նպատակային 4% (+/-1.5%) ցուցանիշից, իսկ գնաճի կանխատեսված արժեքների հավանականությունների բաշխման գրաֆիկը վկայում է, որ կանխատեսված կենտրոնական արժեքից շեղումների հավանականությունը հավասարաչափ է բաշխված, այսինքն՝ գնաճի բարձր կամ ցածր լինելու ռիսկերն առայժմ որևէ ուղղությամբ գերակա չեն:

Արծանագրեցին. 2006 թվականի դեկտեմբերին 12-ամսյա գնաճը կազմել է 5.2%, ինչը մոտ 1 տոկոսային կետով ցածր է երրորդ եռամսյակի նույն ցուցանիշից: Միաժամանակ, առաջիկա 12-ամսյա ժամանակահատվածի գնաճի կանխատեսումները գտնվում են 4%-ի շրջանակում, ինչը ներառում է հաջորդ տարում և՛ էներգակիրների գների սպասվող ավելի մեղմ աճի, և՛ տնտեսության ներքին կայուն զարգացումների միտումները:

ԿԲ խորհուրդն իրատեսական է համարում գնաճի նպատակային 4%-ի ձեռքբերումը ներկայումս շուկայի սպասումների պարագայում ձևավորվող տոկոսադրույքների անփոփոխ մակարդակի պահպանման վարկածի պայմաններում:

ԿԲ խորհուրդը հավանական է համարում հետևյալ զարգացումները, որոնք պարունակում են գնաճի ցուցանիշի՝ նվազման ուղղությամբ ռիսկեր.

- Նավթի միջազգային գները կարող են էապես ցածր լինել կանխատեսված մակարդակից, քանի որ, չնայած երկարաժամկետ աճի միտմանը, կարճաժամկետ հատվածում 2006 թվականի վերջին գրանցված գների ճշգրտումը կարող է պահպանվել նաև 2007 թվականին,
- գնաճի վրա զսպող ազդեցություն կարող են ունենալ նաև գյուղատնտեսության ոլորտում առկա ռիսկերը՝ պայմանավորված բարենպաստ եղանակի արդյունքում հարուստ բերքի ստացմամբ, ինչը միանգամայն գնանկումային ճնշումներ կարող է ձևավորել՝ սկսած տարվա երրորդ եռամսյակից:

Խորհուրդը հավանական է համարում նաև գնաճի ցուցանիշի՝ աճի ուղղությամբ հետևյալ ռիսկը. արդյունաբերության և կապիտալ շինարարության ճյուղերում հնարավոր է նախատեսվածից բարձր իրական աճի արձանագրում, որը բնակչության եկամուտների ավելացման միջոցով կստեղծի լրացուցիչ գնաճային ճնշումներ:

Որոշեցին. Անփոփոխ թողնել Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 4.75%, լոմբարդային վարկի և ավանդի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար 7.75% և 1.75%:

Գնաճի և տնտեսական աճի զարգացումների վերաբերյալ նոր տեղեկատվության ի հայտ գալու դեպքում ԿԲ խորհուրդը չի բացառում առաջիկա ամիսներին տոկոսադրույքի ճշգրտման հնարավորությունը:

2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Ֆինանսական կայունությունը բնութագրվում է ֆինանսական համակարգի բնականոն գործունեությամբ, որը ենթադրում է խնայողությունների արդյունավետ տեղաբաշխում, իրացվելիության անհրաժեշտ մակարդակի ապահովում և անկանխիկ գործարքների անխափան իրականացում: Ընդհանուր առմամբ, ֆինանսական կայունությունը ճգնաժամերի բացակայությունն է, որի պայմաններում ֆինանսական համակարգի երեք հիմնական բաղադրիչները՝ ֆինանսական շուկան, ֆինանսական ինստիտուտները և ֆինանսական ենթակառուցվածքները արդյունավետ ու անխափան կատարում են իրենց գործառույթները՝ միջոցների ներգրավում և տեղաբաշխում, վճարահաշվարկային գործառնությունների իրականացում, ռիսկերի գնահատում և կառավարում, ցնցումային իրավիճակներում առաջացած ռիսկերի կլանման հնարավորության ապահովում:

Ֆինանսական կայունությունը վտանգող ռիսկերը տարաբնույթ են և ծագում են տարբեր աղբյուրներից: Այդ պատճառով անհրաժեշտ է գնահատել ինչպես ֆինանսական համակարգի ներքին, այնպես էլ տնտեսության բոլոր հատվածներում առաջացող ռիսկերը: Այդ առումով, ֆինանսական կայունության ապահովման համար ուսումնասիրվում են և՛ մակրոմիջավայրը, և՛ ֆինանսական համակարգի երեք հիմնական բաղադրիչները:

2.1. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

Բաց տնտեսություններում, ինչպիսին է Հայաստանը, ֆինանսական համակարգի կայունության խաթարման պատճառ կարող են հանդիսանալ ինչպես ներքին տնտեսությունում, այնպես էլ արտաքին միջավայրում (առավելապես գործընկեր երկրներում) անբարենպաստ զարգացումների հետևանքով առաջացող ռիսկերը: Այդ պատճառով կարևորվում է մակրոտնտեսական բոլոր հատվածների (իրական, հարկաբյուջետային, արտաքին) մանրամասն ուսումնասիրությունը ֆինանսական կայունության խոցելի ռիսկերի տեսանկյունից, այդ ռիսկերի բացահայտումը և դրանց՝ հնարավորության շրջանակներում կառավարումը:

Իրական հատված

Իրական հատվածից բխող ռիսկերը հիմնականում կապված են տնտեսության առանձին ճյուղերում տեղի ունեցող շարժերի, ազգաբնակչության եկամտային և պարտքային ցուցանիշների, գների ընդհանուր մակարդակի, մասնավորապես՝ անշարժ գույքի գների տատանումների հետ:

Եկամտային և պարտքային ցուցանիշներ. Վերջին տարիներին համաշխարհային տնտեսությունում նկատվում է վարկավորման աճի տեմպի գերազանցման միտում տնօրինվող եկամտի աճի տեմպի նկատմամբ: Այս միտման շարունակական պահպանումը կարող է վտանգել ֆինանսական համակարգի կայուն գործունեությունը և առաջացնել ռիսկ: Վերոնշյալ զարգացումների հետևանքով պարտավորությունների մարումների ծավալը կարող է գերազանցել բնակչության եկամուտները:

Համախառն ազգային տնօրինվող եկամտի և տնտեսության վարկավորման աճը

	2004	2005	2006
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի աճ	39%	39%	25%
Համախառն ազգային տնօրինվող եկամտի աճ	16%	17%	19%
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկեր / Համախառն ազգային տնօրինվող եկամուտ	6%	8%	8%

ՀՀ-ն դեռևս չի առնչվել այդ խնդրի հետ, քանի որ տնտեսության վարկավորման մակարդակը բավական ցածր է համախառն ազգային տնօրինվող եկամտի համեմատությամբ: Թեև ՀՀ-ում վերջին տարիներին վարկավորման աճի տեմպը զգալի գերազանցել է համախառն ազգային տնօրինվող եկամտի աճի տեմպը, միևնույն է, ֆինանսական համակարգը պարտավորություններ ստանձնելու դեռևս մեծ ներուժ ունի:

ՀՆԱ-ի ծյուղային փոփոխություններ. 2006 թվականին ՀՀ տնտեսության ծյուղերում դրսևորված համեմատաբար կայուն զարգացումները ֆինանսական համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի որակի վրա ունեցել են չեզոք ազդեցություն և ֆինանսական կայունության տեսանկյունից խիստ վտանգավոր ռիսկեր չեն առաջացրել:

Գյուղատնտեսության ոլորտում բնակլիմայական անբարենպաստ պայմանների հետևանքով գրանցվել է արտադրանքի ծավալների նվազում, ինչը հանգեցրել է գնաճի՝ սպասվածից բարձր մակարդակի: Նման փոփոխությունների պայմաններում բանկային համակարգի կողմից տրամադրված գյուղատնտեսական ընդհանուր վարկերի մեջ չաշխատող վարկերի տեսակարար կշիռը գրեթե չի փոխվել:

Արդյունաբերության ծյուղում ևս որոշակի խնդիրներ են առաջացել՝ կապված ադամանդագործության և գունավոր մետաղագործության ենթաճյուղերում արձանագրված անկման հետ, ինչը միջազգային շուկայում տեղի ունեցող կառուցվածքային փոփոխությունների արդյունք է: Թեև արդյունաբերությանը տրամադրված վարկերի որակում փոքր-ինչ վատթարացում է նկատվել, սակայն դա ուղղակիորեն կապված չէ ադամանդագործության և գունավոր մետաղագործության ենթաճյուղի հետ և, ըստ գնահատումների, ժամանակավոր բնույթ է կրում: Ընդհանուր առմամբ, արդյունաբերության ծյուղի զարգացումներն ուղղակիորեն չեն կարող հանգեցնել համակարգային ռիսկերի, և կարելի է ասել, որ ՀՀ ֆինանսական համակարգը զերծ է արդյունաբերության ենթաճյուղերից բխող անսպասելի ռիսկերից:

Գյուղատնտեսության և արդյունաբերության ծյուղերում գրանցված անկումները ՀՆԱ աճի տեսանկյունից չեզոքացել են շինարարության և ծառայությունների ծյուղերում գրանցված բարձր աճի հաշվին, որոնց նպաստել է մասնավոր տրանսֆերտների և բնակչության եկամուտների շարունակական աճը: Շինարարության և ծառայությունների աճին զուգընթաց ավելացել է նաև դրանց վարկավորումը: Վարկավորման որակը ոչ զգալի վատթարացել է շինարարության ծյուղում, ինչը, ըստ գնահատումների, համակարգային ռիսկերի չի հանգեցրել, քանի որ տվյալ ծյուղի վարկավորումը կազմել է բանկերի վարկային պորտֆելի ընդամենը 4.7 %-ը և ըստ բանկերի մեծ կենտրոնացում չունի: Ինչ վերաբերում է ծառայությունների վարկավորմանը, ապա դա կազմել է բանկերի վարկային պորտֆելի մեկ երրորդը և նույնպես փոքր կենտրոնացում ունի: Տվյալ ոլորտի վարկավորման որակական մեծ փոփոխություններ տարվա ընթացքում չեն արձանագրվել, և եթե հաշվի առնենք այն փաստը, որ բանկերի վարկային պորտֆելի տարեկան աճի ավելի քան 30%-ը բաժին է ընկել ծառայության տարբեր ենթաճյուղերին, ապա կարելի է եզրակացնել, որ ծառայությունների ոլորտում տեղ գտած զարգացումները ֆինանսական կայունության տեսանկյունից ակնհայտ ռիսկեր չեն առաջացրել:

Այդպիսով, ընդհանուր առմամբ, ծյուղային նման փոփոխությունները չեն զսպել ՀՆԱ-ի երկնիշ աճը և ֆինանսական կայունության տեսանկյունից նշանակալից ռիսկեր չեն առաջացրել:

Անշարժ գույքի գներ. Այնպիսի զարգացող երկրների համար, ինչպիսին ՀՀ-ն է, անշարժ գույքի գների կայուն մակարդակը ֆինանսական կայունության ապահովման որոշիչ գործոն է, քանի որ ֆինանսական միջնորդության ցածր մակարդակի պայմաններում խնայողությունները հոսում են անշարժ գույքի շուկա, որը ներդրումների իրականացման ցանկալի միջավայր է: Բացի այդ, վերջին տարիներին արձանագրված անշարժ գույքի գների շարունակական աճը, վարձավճարների բարձր մակարդակը և այդ ոլորտում իրականացվող ներդրումների համեմատաբար ոչ բարձր ռիսկայնությունը հանգեցնում են միջոցների մշտական հոսքի անշարժ գույքի շուկա: Շուկայում տեղի ունեցող բոլոր էական շարժերը ֆինանսական համակարգի վրա ունենում են ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ազդեցություն, քանի որ ներդրումների տեսանկյունից անշարժ գույքի շուկան դառնում է ֆինանսական համակարգի այլընտրանք:

Անշարժ գույքի գների տատանումները պահանջարկի և առաջարկի գործոնների ազդեցության, մասնավորապես՝ անշարժ գույքի շուկայում նորարարությունների, բնակչության եկամուտների, շինարարության ծախքերի փոփոխության, բնակարանային ֆոնդի վիճակի, հողերի մատչելիության աստիճանի հետևանք են: Անշարժ գույքի գների փոփոխությունն ուղղակիորեն ազդում է ներդրումների ծավալի, դրանց եկամտաբերության վրա, իսկ անուղղակիորեն՝ եկամուտների, մասնավոր սպառման և խնայողությունների վրա:


2006 թվականին Երևանում գրանցվել է անշարժ գույքի գների 29% աճ, ինչը, ըստ փորձա-

գիտական գնահատումների, ֆինանսական կայունության տեսանկյունից բարձր ռիսկային երևույթ չէ: ՀՀ նման բարձր տնտեսական աճ ունեցող անցումային տնտեսությունների համար անշարժ գույքի գների բարձրացման միտումները համարվում են բնականոն:

Պահանջարկի տեսանկյունից՝ անշարժ գույքի գների վրա ազդող կարևորագույն գործոնը բնակչության եկամուտներն են, որոնք վերջին տարիներին ավելացել են ՀՆԱ աճի բարձր տեմպի և ՀՀ ներհոսող մեծածավալ տրանսֆերտների ու գործոնային եկամուտների հաշվին:

Առաջարկի տեսանկյունից՝ անշարժ գույքի գների վրա էապես ազդել են հողային տարածքների սակավությունը, դրա արդյունքում հողի գնի բարձրացումը, անշարժ գույքի պաշարները և շինարարության ծախքերի աճը:

Հիմք ընդունելով պահանջարկի և առաջարկի գործոնների այդ համախումբը՝ կարելի է արձանագրել, որ առաջիկա տարիներին ՀՀ-ում անշարժ գույքի գների անբարենպաստ տատանումներ չեն սպասվում: Նման պայմաններում ֆինանսական համակարգի՝ անշարժ գույքով ապահովված վարկերի ռիսկայնությունն առանձնապես չի բարձրանա, իսկ հիմնական միջոցների վերագնահատումը չի հանգեցնի էական վնասների: Այնուամենայնիվ, իրականացվել են հաշվարկներ, որոնց դեպքում նույնիսկ անշարժ գույքի գների կտրուկ նվազումը չի վտանգի ՀՀ ֆինանսական կայունությունը[1]:




Գրաֆիկ 2.1
Երևանի բնակարանների (1 մ^2) միջին գների ինդեքս[2] (2002 թ. = 100)

[1] *Առավել մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական հաստատություններ» ենթաբաժնում անշարժ գույքի ստրես-թեստերի արդյունքները:*

[2] *Աղբյուրը՝ ՀՀ կառավարի պետական կոմիտեի ինտերնետային կայք (www.cadastre.am կայքում ՀՀ անշարժ գույքի միասնական միջին գների ինդեքսի բացակայության պատճառով որպես ՀՀ անշարժ գույքի գների փոփոխությունների ցուցանիշ է ընտրվել Երևանի բնակարանների միջին գների ինդեքսը): Քանի որ մինչև 2005 թվականի հունիսը անշարժ գույքի գնանշումն իրականացվել է ԱՄՆ դոլարով, այնուհետև՝ ՀՀ դրամով, այդ պատճառով մինչև 2005 թվականի հունիսը միջին գների միասնական ինդեքսը հաշվարկվել է դոլարային գների, այնուհետև՝ դրամային գների աճի տեմպերի հիման վրա:*

Հարկաբյուջետային հատված

Ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից, զարգացող երկրների համար կարևորվում են նաև հարկաբյուջետային հատվածի ցուցանիշները, մասնավորապես՝ պետական պարտքի մեծությունը, պետական բյուջեի պակասուրդը, դրա ֆինանսավորման աղբյուրները և հնարավոր հետագա զարգացումները:



Գրաֆիկ 2.2
Պետական բյուջեի ցուցանիշների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում

Ակնհայտ է, որ ՀՆԱ աճի բարձր տեմպին զուգընթաց, պետական ծախքերը և եկամուտները ավելացել են, իսկ բյուջեի պակասուրդի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում չի մեծացել: Այս պայմաններում պակասուրդի արտաքին և ներքին մեծածավալ ֆինանսավորման անհրաժեշտություն չի առաջացել: Նման միտումները ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից ռիսկային չեն:

Զարգացող երկրների համար պետական հատվածից բխող ռիսկերն առնչվում են բյուջեի հարկերի թերհավաքագրման, ծախսերի գերակատարման, արդյունքում՝ պակասուրդի խորացման, ինչպես նաև դրա ֆինանսավորման հետ: ՀՀ-ում այս խնդիրներն առկա են, քանի որ բյուջեն պակասուրդային է և ֆինանսավորվում է հիմնականում արտաքին աղբյուրների հաշվին: Ներքին աղբյուրների հաշվին բյուջեի պակասուրդի ֆինանսավորում գրեթե չի կատարվում, ինչը նշանակում է, որ շուկայական տոկոսադրույքների վրա, պետական պարտատոմսերի տոկոսադրույքների տատանման տեսանկյունից, էական ճնշումներ չեն սպառնում: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջին տարիներին արձանագրվել է բյուջեի եկամուտների հավաքագրման աճի ավելի բարձր տեմպ, ծախսերի իրականացում ծրագրի շրջանակներում, պետական պարտքի կրճատում (առաջիկա տարիներին ՀՀ-ն կհամարվի պետական միջին և ցածր պարտք ունեցող երկիր), կարելի է ենթադրել, որ հարկա-


բյուջետային հատվածից բխող ռիսկերն աստիճանաբար կարող են մեղմանալ:

Արտաքին հատված

Զուտ գործոնային եկամուտներ և տրանսֆերտներ. ՀՀ ֆինանսական կայունության ապահովման համար արտաքին հատվածի ռիսկերի բացահայտումը կարևորագույն խնդիրներից է, քանի որ համախառն տնօրինվող եկամտի մեջ բավական մեծ տեսակարար կշիռ ունեն ինչպես արտերկրից ՀՀ ուղղված՝ ֆիզիկական անձանց փոխանցումները, այնպես էլ գործոնային եկամուտները:

2006 թվականին ֆիզիկական անձանց զուտ դրամական փոխանցումները կազմել են 216 մլրդ ՀՀ դրամ, իսկ զուտ գործոնային եկամուտների ծավալը՝ 31 մլրդ ՀՀ դրամ, որոնց գրեթե 85 տոկոսը ստացվել է Ռուսաստանից:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՌԴ-ն Հայաստանի հիմնական տնտեսական գործընկեր երկիրն է, նրա եկամուտների և տնտեսության կայունության հիմնահարցերը կարևորվում են նաև ՀՀ ֆինանսական կայունության ապահովման համար: ԿԲ ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ ՌԴ ֆինանսական կայունության ապահովման առաջնային գործոններից է նավթի միջազգային գների մակարդակը, քանի որ լինելով նավթ արտահանող երկիր, կրում է նավթի գների ուղղակի ազդեցությունը: Նավթի գների տատանումներն ազդում են ՌԴ արտահանման ծավալների վրա, որն էլ իր հերթին ազդում է ընդհանուր եկամուտների և դրանից ածանցված այլ մակրոտնտեսական ցուցանիշների վրա:




Գրաֆիկ 2.3

Նավթի միջազգային գներ, Ռուսաստանի արտահանման ինդեքս և ՀՀ տրանսֆերտներ ու գործոնային եկամուտներ (2000 թ.=100)

Ռուսաստանում մեր հայրենակիցների գերակշիռ մասը զբաղված է ոչ արտահանելի՝ առևտրի և շինարարության ոլորտներում[3], ուստի Ռուսաստանից ստացվող տրանսֆերտների և գործոնային եկամուտների ծավալը պայմանավորված է ոչ արտահանելի ոլորտի եկամուտների մեծությամբ:

ԿԲ կողմից իրականացված ռեգրեսիոն վերլուծությունները ցույց են տվել, որ նավթի գների տատանումները ազդում են ՌԴ ոչ արտահանելի ոլորտի եկամուտների վրա, իսկ վերջինիս և ՀՀ տրանսֆերտների միջև կոռելյացիան շատ բարձր է:[4]



Գրաֆիկ 2.4

Ռուսաստանի ոչ արտահանելի ոլորտի եկամուտների ինդեքս և ՌԴ-ից ՀՀ տրանսֆերտներ ու գործոնային եկամուտներ (2000 թ.=100)

Ֆինանսական կայունության տեսանկյունից, նավթի գների անբարենպաստ փոփոխությունը կարող է լինել ռիսկային, մասնավորապես՝ նավթի գների նվազումը կհանգեցնի Ռուսաստանի արտահանման ծավալների և եկամուտների նվազման, ինչն էլ իր հերթին կազդի ՀՀ ներհոսող միջոցների ծավալների վրա, Հայաստանի համախառն տնօրինվող եկամտի մեծության և համախառն պահանջարկի վրա: Նավթի գների մակարդակի գնահատումը դժվար գործընթաց է, քանի որ պայմանավորված է աշխարհաքաղաքական դրությամբ, միջազգային ֆինանսական շուկաների պայմաններով և այլ անկանխատեսելի գործոնների ազդեցությամբ: Ըստ գնահատումների՝ 2007 թվականին նավթի միջազգային գինը կաճի 10.6 տոկոսով և կկազմի 73.1 ԱՄՆ դոլար/ բարել, ինչը նշանակում է, որ առաջիկայում տրանսֆերտների և գործոնային եկամուտների նվազման վտանգ չկա[5]:

[3] *Աղբյուրը՝ արտերկրից ՀՀ ֆիզիկական անձանց անունով ստացվող՝ ոչ առևտրային նպատակով փոխանցումների կառուցվածքի բացահայտման նպատակով ՀՀ ԿԲ կողմից իրականացված հարցման արդյունքներ:*

[4] *Առավել մանրամասն տե՛ս «ՀՀ 2007 թ. դրամավարկային քաղաքականության ծրագիրը»:*

[5] *Առավել մանրամասն տե՛ս նույն տեղը:*


Արտահանում և ներմուծում. ՀՀ համար առանցքային խնդիր է նաև արտահանման և ներմուծման ոլորտներում որոշ ապրանքատեսակների կենտրոնացումը, ինչը ենթադրում է, որ այդ ապրանքատեսակների՝ միջազգային շուկայում ցանկացած տատանում կազդի ներքին տնտեսության և ֆինանսական կայունության վրա:

Վերջին տարիներին տրանսֆերտների և գործոնային եկամուտների մեծածավալ ներհոսքը հանգեցրել է դրամի փոխարժեքի արժևորման, ինչն էլ չեզոքացել է ներմուծման աճի հաշվին: Բացի այդ, ներմուծումն էապես ավելացել է նաև հումքի մեծածավալ ներկրման արդյունքում: Հայաստանում ձեռնարկությունների կողմից օգտագործվող հումքի գրեթե 55 տոկոսը ներկրվում է արտերկրից (մեծ մասամբ՝ ոչ ԱՊՀ երկրներից)[6], ինչը նշանակում է, որ արտադրության տեսանկյունից ևս կարևորվում է արտաքին հատվածի կայունությունը: Հարցումների արդյունքում պարզվել է, որ ներմուծված հումք հիմնականում օգտագործվում է մեխանիկական սարքավորումների արտադրության, ոսկերչության մեջ, սննդի և թեթև արդյունաբերության ճյուղերում, տպագրական ձեռնարկություններում: Դրա պատճառն առաջին հերթին ՀՀ-ում նման հումքատեսակների բացակայությունն է, այնուհետև՝ ներմուծվող հումքի բարձր որակը և ցածր գները: Կարելի է ենթադրել, որ տնտեսության նման արագընթաց աճի պայմաններում, ներմուծվող հումքի նկատմամբ պահանջարկն ապագայում կավելանա:

2006 թվականի առաջին երեք եռամսյակներում հումքային ապրանքների գները բարձրացել են 36.9 %-ով՝ պայմանավորված ոսկու, նավթի և բնական գազի գների մակարդակի էական աճով, բայց վերջին եռամսյակում դրանք սկսել են աստիճանաբար նվազել՝ կանխելով հնարավոր վտանգավոր ռիսկերի առաջացումը: Հումքային ապրանքների գների աճին նպաստել է նաև հացահատիկի ներմուծման գների բարձրացումը (25.5%-ով): Համաձայն կանխատեսումների՝ 2007-ին հացահատիկի գները կունենան նվազման միտում: Հումքի միջազգային շուկաներում գների էական տատանումներ չեն սպասվում, ինչի շնորհիվ ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից այս խնդրի ռիսկայնությունը մեղմանում է:


2006 թվականին ՀՀ արտահանման և ներմուծման ծավալների մեջ մեծ տեսակարար կշիռ ունեցող բանկարժեք քարերի շրջանառությունը նվազել է՝ պայմանավորված միջազգային շուկայում նախասիրությունների և պահանջարկի կառուցվածքային փոփոխություններով, ինչը հանգեցրել է հատկապես արտահանման էական նվազման: Ըստ կանխատեսումների՝ 2007-ին միջազգային շուկայում իրավիճակը կկայունանա և խնդիրը կհարթվի:

2006-ին ներմուծման մեջ էապես աճել է տեքստիլի և կաշեգործության տեսակարար կշիռը: Ըստ գնահատումների՝ տեքստիլի և մանածագործական հյուսվածքների արտադրության ձեռնարկությունները հիմնականում օգտագործում են ներմուծված հումք, ինչն էլ, ամենայն հավանականությամբ, նպաստել է այդ աճին:




Գրաֆիկ 2.5
ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի (հազար ԱՄՆ դոլար)

Արտահանման տեսանկյունից ռիսկերը հիմնականում կապված են հանքահումքային արտադրանքի գների հետ, քանի որ ՀՀ-ից հիմնականում արտահանվում են մետաղներ, մասնավորապես՝ ոսկի, պղինձ և մոլիբդեն: 2006-ին արտահանման էական աճ է արձանագրվել՝ պայմանավորված ոսկու և պղնձի գների բարձրացման հետ, իսկ մոլիբդենի գները նվազել են: Այս փոփոխությունը ֆինանսական կայունության առումով ոչ մի խնդիր չի առաջացրել, քանի որ ինչ-որ չափով նպաստել է առևտրի պայմանների բարելավմանը: 2007-ին առանձնակի ռիսկեր չեն ակնկալվում, քանի որ մետաղների գները, ըստ կանխատեսումների, կմնան նույնը կամ աննշան կփոխվեն:




Գրաֆիկ 2.6
ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի (հազար ԱՄՆ դոլար)

[6] *Առավել մանրամասն տե՛ս ԿԲ-ի և Սլավոնական համալսարանի կողմից կատարված՝ ձեռնարկությունների մրցունակության և ֆինանսական ռեսուրսների կառավարման ուսումնասիրության մեջ:*



Գրաֆիկ 2.7
Պղնձի, ոսկու և մոլիբդենի միջին գները (2000 թ.=100)

Կանխատեսումների համաձայն՝ 2007-ին ՀՀ արտահանման և ներմուծման ծավալներում էական տեղաշարժեր չեն գրանցվի, քանի որ արտաքին առևտրի շրջանառությունն ապահովող ապրանքատեսակների գնային մեծ տատանումներ չեն ակնկալվում: Մասնավորապես՝ նավթի գները կայուն տեմպով աճելու են՝ նպաստելով ներմուծման աճին, իսկ հանքահումքային ապրանքատեսակների գները փոփոխվելու են աննշան՝ հանգեցնելով արտահանման և ներմուծման ծավալների չնչին փոփոխության: Այս տեղաշարժերը ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից վտանգավոր չեն և կառավարելի են:



Գրաֆիկ 2.8
Նավթի և հացահատիկի միջին գները (2000 թ.=100)

2.2. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Փողի և կապիտալի շուկաներ

2006 թ. ՀՀ ֆինանսական շուկայի գրեթե բոլոր հատվածներում նկատվել է տոկոսադրույքների աճի միտում: Տոկոսադրույքի ռիսկի գնահատման նպատակով հաշվարկված մոդիֆիկացված դյուրացիայի (D_M) միջին ցուցանիշը, որը ցույց է տալիս եկամտաբերության փոփոխության համեմատությամբ գնի փոփոխման մակարդակը, տարեվերջի դրությամբ շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի համար (առանց ՀՀ ԿԲ պարտատոմսերի) կազմել է 2.49 (2005 թ.՝ 2.16): Պետական գանձապետական պարտատոմսերի D_M ցուցանիշի աճը հիմնականում պայմանավորվել է պարտատոմսերի ժամկետայնության՝ դյուրացիայի երկարացմամբ, որը 2006 թ. վերջին կազմել է 974 օր (2005 թ.՝ 839 օր): Միաժամանակ, հաշվի առնելով շրջանառությունում առկա կարճաժամկետ պարտատոմսերի աճն ի հաշիվ ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի, մոդիֆիկացված դյուրացիայի միջին ցուցանիշը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է ընդամենը 0.02 տոկոսային կետով՝ կազմելով 1.66, ինչը նշանակում է, որ եկամտաբերության 1% փոփոխության դեպքում պարտատոմսի գինը միջին հաշվով աճում կամ նվազում է մոտավորապես 1.66%-ով:


Շրջանառությունում առկա ՊՊ մոդիֆիկացված դյուրացիան՝ ըստ ժամկետայնության

ժամկետայնություն	D_M
մինչև 3 ամիս	0.14
3 - 6 ամիս	0.44
6 - 9 ամիս	0.73
9 ամսից 1 տարի	1.12
1 - 2 տարի	2.67
2 - 5 տարի	4.91
5 - 10 տարի	6.82

Թեև 2006 թ. ֆինանսական շուկայում տոկոսադրույքներն աճել են, այնուամենայնիվ, նախորդ տարիների համեմատությամբ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների եկամտաբերությունների միջին քառակուսային շեղման զգալի փոփոխություն չի նկատվել (1.8): Նույնը կարելի է ասել նաև շուկայական ռեպո տոկոսադրույքների վերաբերյալ: Տոկոսադրույքների աճին զուգընթաց՝ փոքր-ինչ ավելացել է նաև միջին քառակուսային շեղումը՝ 2006 թ. կազմելով 0.74:

Առևտրային բանկերի ծեռք բերած պետական պարտատոմսերի (ներառյալ ԿԲ պարտատոմսերի) պորտֆելը և եկամտաբերության 1% փոփոխության դեպքում գնահատված շահույթի կամ վնասի չափը (2006 թ. դեկտեմբեր)

ժամկետայնություն	Պորտֆելի չափը (մլն դրամ)	D_M	Գնի փոփոխության ուժգնությունը (±) (մլն դրամ)
մինչև 3 ամիս	29933.1	0.15	43.07
3 - 6 ամիս	9104.3	0.43	38.83
6 - 9 ամիս	6674.0	0.73	48.39
9 ամսից 1 տարի	10460.3	1.11	122.09
1 - 2 տարի	12085.2	2.76	346.02
2 - 5 տարի	3531.9	4.76	183.20
5 - 10 տարի	6933.2	6.82	521.65
Ընդամենը	78722.0	1.55	1303.25




Գրաֆիկ 2.9
Ռեպո տոկոսադրույքների միջին քառակուսային շեղում


2006 թ. ՀՀ արժեթղթերի շուկայի կառուցվածքում պետական պարտատոմսերի շուկան շարունակել է գերակշռող լինել կորպորատիվ արժեթղթերի նկատմամբ: ՀՀ պետական պարտատոմսերով իրականացվող գործառնությունները հիմնական խումբ են կազմել ինչպես առևտրային բանկերի, այնպես էլ արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից արժեթղթերով իրականացվող գործառնություններում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2006թ. ՀՀ պետական պարտատոմսերի առաջնային շուկայում պահանջարկ/տեղաբաշխման ծավալ հարաբերակցության գործակիցը 2.2 է, իսկ բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության մակարդակը շարունակում է զգալի լինել,

կարելի է եզրակացնել, որ ՀՀ ֆինանսական շուկայում առկա է եկամտաբեր և ապահով ֆինանսական գործիքների մեծ պահանջարկ:



Գրաֆիկ 2.10
Արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց կողմից պետական և կորպորատիվ արժեթղթերով իրականացված գործառնությունների ծավալ (մլն ՀՀ դրամ)



Գրաֆիկ 2.11
ՀՀ պետական պարտատոմսերի տեղաբաշխման ծավալների և բանկային համակարգի ավելցուկային իրացվելիության մակարդակի հարաբերակցություն (մլրդ ՀՀ դրամ)

2006 թ. վերջին կապիտալի շուկայի մեծությունը բնութագրող արժեթղթերի շուկայի կապիտալացման ցուցանիշը, որը հաշվարկվում է որպես բորսայում ցուցակված բաժնետոմսերի շուկայական գնի հարաբերություն ՀՆԱ-ին, կազմել է 0.82%՝ նախորդ տարվա համեմատությամբ նվազելով 0.02 տոկոսային կետով: Նվազման պատճառ է արժեթղթերի շուկայում հաշվետու թողարկող համարվելու համար ակտիվների մեծության ավելացումը մինչև 500 մլն ՀՀ դրամ՝ նախկինում գործող 5 մլն ՀՀ դրամի փոխարեն, որի արդյունքում այն հաշվետու թողարկողները, որոնց ակտիվները սահմանված չափից պակաս էին, և որոնք կարող էին դուրս գալ հաշվետու թողարկողների կարգավորման դաշտից, հեռացան շուկայից:

Կապիտալի շուկայի իրացվելիությունը բնութագրող՝ կապիտալի շուկայի շրջանառելիության ցուցանիշը, որը հաշվարկվում է որպես տարվա ընթացքում ցուցակված բաժնետոմսերով իրականացված գործառնությունների և ՀՆԱ-ի հարաբերակցություն, 2006 թ. կազմել է 0.08%՝ նախորդ տարվա համեմատ աճելով 0.07 տոկոսային կետով:

Ելնելով կորպորատիվ արժեթղթերի շուկայի փոքր ծավալներից, ինչպես նաև այն հանգամանքից, որ ՀՀ առևտրային բանկերն ու վարկային կազմակերպությունները դեռևս արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձ չեն, կարելի է ասել, որ նշված հատվածը ֆինանսական կայունության տեսանկյունից առայժմ ռիսկեր չի առաջացնում:


Արժութային շուկա

Ֆինանսական շուկայի կայունության կարևոր չափորոշիչներից է փոխարժեքի տատանողականությունը, որով պայմանավորված է ներմուծողների, արտահանողների, արժութային շուկայի բոլոր սուբյեկտների վարքագիծը:

ԱՊՀ, Կենտրոնական Եվրոպայի և Մերձբալթյան երկրների կապիտալի շուկայի ցուցանիշներ

Երկրներ	Կապիտալացում/ՀՆԱ (%)		Շրջանառելիություն/ՀՆԱ (%)	
	2004	2005	2004	2005
Բուլղարիա	10.6	20.1	2.4	7.1
Էստոնիա	48.5	25.3	8.5	12.9
Լատվիա	11.5	16.8	0.9	0.8
Լիտվա	26.2	31.8	2.1	3.2
Չեխիա	25.4	31.9	20.1	37.8
Հունգարիա	25.4	31.9	14.6	24.9
Սլովենիա	27.2	23.5	4.0	2.1
Լեհաստան	23.1	31.3	7.6	11.4
Ռուսաստան	44.6	71.9	23.6	28.0
Ղազախստան	8.7	18.9	2.6	2.8

ՀՀ ներքին արժութային շուկան վերջին տարիներին (2004 – 2006 թթ.) բնութագրվել է տատանողականության բարձր աճով:



Գրաֆիկ 2.12
ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի փոփոխություն (ՀՀ դրամ)

Տատանողականության աճի պայմաններում գործոնների ազդեցությունը փոխարժեքի վրա հանգեցնում է ավելի մեծ շեղումների, քան կայուն շուկայի պարագայում: 2003 թ. երկրորդ կեսից արժութային շուկայում դրսևորվել է փոխարժեքի կայուն արժևորման միտում, որը ձևավորել է համապատասխան սպասումներ, և բանկերը, իրենց արժութային ռիսկը նվազեցնելու համար, ձգտում են դիրքերը փակ պահել:

2006 թվականին տատանման գործակիցը ոչ բարենպաստ էր՝ 1003.15 (2005 թ.՝ 197.83): Այդ տեսանկյունից 2006 թ. արժութային շուկան կարելի է բնութագրել որպես բարձր արժութային ռիսկայնություն ունեցող:

Այնուամենայնիվ, չնայած արժութային շուկայի բավականին բարձր ռիսկայնությանը, շուկայի մասնակիցների կրած վնասները 2006 թ., նախորդ տարվա համեմատությամբ, նվազել են՝ կազմելով բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.3%-ը՝ նախորդ տարվա 0.5%-ի փոխարեն:


2.3. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինանսական համակարգի կայունության ապահովման համար ֆինանսական հաստատություններում առաջացող ռիսկերի բացահայտման և գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում է բանկային համակարգում առկա ռիսկերի վերլուծությունը[1]: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ ֆինանսական համակարգի ակտիվների մոտ 92%-ը բաժին է ընկնում բանկային համակարգին:

Բանկային համակարգը 2006 թվականին

Ընդհանուր դրույթներ

2006 թվականի տարեվերջին ՀՀ տարածքում գործել են տարեսկզբից գործող 21 առևտրային բանկեր: Բանկերի մասնաճյուղերը տարվա ընթացքում ավելացել են 32-ով և տարեվերջին կազմել 299:



Գրաֆիկ 2.13
ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերի քանակը՝ ըստ ՀՀ մարզերի և ԼՂՀ-ի*

** Երևանի ցուցանիշները չեն ներառվել (2004 թ.՝ 87, 2005 թ.՝ 100 և 2006 թ.՝ 112 մասնաճյուղեր):*

2006 թվականին ՀՀ բանկային համակարգն աշխատել է շահույթով և ապահովել ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճ:

Բանկային համակարգի ակտիվներ, պարտավորություններ, կապիտալ և շահույթ
(հազար ՀՀ դրամ)

	31.12.2005	31.12.2006	2006թ. տոկոսային աճ
Ակտիվներ	440674145	524517487	19.0%
Պարտավորություններ	345913389	404345948	16.9%
Կապիտալ	94760756	120171539	26.8%
Զուտ շահույթ	11977985	16870499	40.8%

Բանկային համակարգի հատկանշական դրսևորումներից են ակտիվների և պարտավորությունների արժութային կառուցվածքի էական փոփոխությունները.

- դրամային ակտիվների տեսակարար կշիռն աճել է 9.5 տոկոսային կետով և կազմել ընդհանուր ակտիվների 56.9%-ը (դրամային ակտիվներն ավելացել են 42.9%-ով, արտարժութային ակտիվները՝ նվազել 2.5%-ով),
- դրամային պարտավորությունների տեսակարար կշիռն աճել է 10.8 տոկոսային կետով և կազմել ընդհանուր պարտավորությունների 44.0%-ը (դրամային պարտավորություններն ավելացել են 54.8%-ով, արտարժութային պարտավորությունները՝ նվազել 2.0%-ով):

Բանկային համակարգի կապիտալը. Բանկային համակարգի զուտ շահույթի և կապիտալի աճի տեմպերը գերազանցել են ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչն ուղղակիորեն արտացոլվել է ֆինանսական կայունության վրա՝ բանկային համակարգին ընձեռելով ռիսկերով պայմանավորված հնարավոր կորուստների կլանման ավելի լայն հնարավորություն:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի աճը գերազանցել է տարեսկզբին կանխատեսվող 16.0 մլրդ դրամ աճը[2]՝ կազմելով 25.4 մլրդ դրամ:

Կանոնադրական հիմնադրամի կանխատեսված աճի ցուցանիշը զգալի զիջել է փաստացի աճի ցուցանիշը: Կանոնադրական հիմնադրամի աճի կանխատեսումների համար հիմք են ընդունվել բանկերի կողմից ներկայացված ռազմավարական ծրագրերում կանխատեսված ցուցանիշները, ըստ որոնց՝ տարեսկզբին նման աճ չէր ակնկալվում (հիմնականում պայմանավորված մեկ բանկում ոչ ռեզիդենտ բանկի կողմից խոշոր փայամասնակցության ձեռքբերման փաստով):

[1] *Այս բաժնում դիտարկվում են ՀՀ ֆինանսական շուկայում 2006 թվականին դրսևորված զարգացումները, գնահատվում հնարավոր ռիսկերը: Սակայն հիմնական շեշտադրումը կատարվում է բանկային համակարգում առաջացող ռիսկերի բացահայտման վրա, գնահատվում ցնցումային իրավիճակների դրսևորման դեպքում առաջացող բանկային ռիսկերի ազդեցությունը ՀՀ ֆինանսական համակարգի կայունության վրա:*

[2] *Ֆինանսական կայունության գնահատման համատեքստում ՀՀ ԿԲ կողմից իրականացվում են բանկային համակարգի զարգացումների պարբերական կանխատեսումներ, որոնց հիմքում ընկած են ինչպես առևտրային բանկերի ռազմավարական ծրագրերը, այնպես և ՀՀ ԿԲ մասնագետների փորձագիտական գնահատումները: Կանխատեսումների արդյունքները տարեկան կտրվածքով ամփոփվում են ՀՀ դրամավարկային քաղաքականության տարեկան ծրագրերում:*

Կանոնադրական հիմնադրամի աճ է արձանագրվել 9 բանկում՝ 19.8 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով:

2006 թվականին բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 16.9 մլրդ ՀՀ դրամ, որը 1.1 մլրդ ՀՀ դրամով շեղվել է տարեսկզբին կանխատեսված 18.0 մլրդ ՀՀ դրամ ցուցանիշից՝ հիմնականում պայմանավորված զուտ ոչ տոկոսային եկամուտների կանխատեսված և փաստացի ցուցանիշների շեղմամբ:

Բանկային համակարգի պարտավորությունները. 2006 թվականին ՀՀ բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների աճը զիջել է տարեսկզբին կանխատեսվող 65.0 մլրդ դրամ ցուցանիշին՝ կազմելով 58.4 մլրդ դրամ: Փաստացի և կանխատեսվող աճերի բացասական տարբերությունը պայմանավորվել է ոչ ռեզիդենտների ավանդների աճի կանխատեսված ցուցանիշներից շեղումով: Կանխատեսվել էր ոչ ռեզիդենտների ավանդների 4.0 մլրդ դրամ աճ, սակայն փաստացի արձանագրվել է 9.6 մլրդ դրամ նվազում:

Պարտավորությունների փաստացի աճը հիմնականում ապահովվել է ավանդների (38.3 մլրդ դրամ), բանկերի նկատմամբ պարտավորությունների (8.8 մլրդ դրամ) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (6.2 մլրդ դրամ) աճի հաշվին:

Բանկային համակարգի ակտիվները. Բանկային համակարգի ընդհանուր ակտիվների փաստացի աճը փոքր-ինչ գերազանցել է տարեսկզբին կանխատեսված 81.0 մլրդ դրամ աճը՝ կազմելով 83.8 մլրդ դրամ:

31.12.2006 թվականի դրությամբ համակարգի ընդհանուր ակտիվների ծավալը կազմել է ՀՆԱ 19.8%-ը (2005 թ.՝ նույնպես 19.8%), իսկ տնտեսության վարկավորման ծավալը՝ ՀՆԱ 8.6%-ը (2005 թ.՝ 8.3%):

Համակարգի ընդհանուր ակտիվների աճի 54.4%-ը բաժին է ընկել վարկային ներդրումներին: Վարկային ներդրումների փաստացի աճը կազմել է 45.6 մլրդ դրամ, որը գրեթե չի շեղվել կանխատեսված 45.0 մլրդ դրամից:


Բանկային համակարգի վարկային ներդրումների աճի տեմպը 24.8%-ով գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը: Բարձր իրացվելի ակտիվներն ավելացել են 13.7%-ով: Բանկային համակարգի վարկերի արագատեմպ աճը փոքր-ինչ վատթարացրել է բանկային համակարգի ակտիվների որակը՝ ընդհանուր ակտիվներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը ավելացնելով 0.8 տոկոսային կետով, և տարեվերջին կազմել 2.4%: Սակայն չաշխատող ակտիվների վերոնշյալ տեսակարար կշիռը համարվում է բավականին ցածր՝ չվտանգելով ֆինանսական կայունությունը:

ՀՀ ֆինանսական կայունության տեսանկյունից էապես կարևորվում են բանկային համակարգի վերջին տարիներին ձևավորված դրական զարգացումները, մասնավորապես՝ ակտիվների, պարտավորությունների, կապիտալի, եկամուտների աճի, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործման պարագայում դրանց մակարդակների նվազման կայուն միտումները:

Վարկային ռիսկ

Ֆինանսական կայունության տեսանկյունից, ֆինանսական հաստատություններում առաջացող ռիսկերից էապես կարևորվում է վարկային ռիսկը, թեև ՀՀ բանկային համակարգում վարկային ռիսկով պայմանավորված վնասների մեծությունը վերջին տարիներին դրսևորում է նվազման միտում:


Վարկային ռիսկը բնութագրող կարևորագույն ցուցանիշ է զուտ մասհանումների և ակտիվների մեծության հարաբերակցությունը, որը բնութագրում է վարկային ռիսկով պայմանավորված միավոր ակտիվի գծով միջին կորուստը: Նշված ցուցանիշը վերջին տարիներին ցուցաբերել է նվազման միտում (2006 թվականին՝ 0.4%)՝ վկայելով բանկային համակարգում վարկային ռիսկի կառավարման մակարդակի բարելավման մասին:



Գրաֆիկ 2.14
Բանկային համակարգի զուտ մասհանումների հարաբերությունը ընդհանուր ակտիվներին

Հատկանշական է, որ վարկային ռիսկի նվազման միտումը տեղի է ունեցել վարկերի արագատեմպ աճի պայմաններում. վարկերի կայուն աճի


տեմպը վերջին տարիներին գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, որի արդյունքում ընդհանուր ակտիվներում վարկերի տեսակարար կշիռն ավելացել է և 31.12.2006 թ. կազմել 43.8%:



Գրաֆիկ 2.15
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը դեռևս գտնվում է ցածր մակարդակի վրա, թեև վերջին տարիներին ցուցաբերել է աճի միտում (2002 թ. բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի և ՀՆԱ հարաբերակցությունը 6.2% էր, իսկ 2006 թ.՝ 8.6%):

Բանկային համակարգի ֆինանսական միջնորդության կարևորագույն ցուցանիշ է նաև տնտեսության վարկերի մեծության հարաբերությունը ընդհանուր ավանդների մեծությանը, ինչը, լայն իմաստով, խնայողություններից ներդրումների փոխանցման բնութագրիչ է: Վերջին տարիներին այս ցուցանիշը աճել է և 31.12.2006 թ. կազմել 76.7%:




Գրաֆիկ 2.16
Բանկային համակարգի վարկեր/ավանդներ հարաբերակցությունը և արտարժութային վարկերի տեսակարար կշիռը

Տնտեսությանը տրամադրված ընդհանուր վարկերում դրամային վարկերի տեսակարար կշիռը վերջին տարիներին ցուցաբերում է աճի միտում, ընդ որում՝ առավել զգալի աճ է արձանագրվել 2006 թ. (ավելացել է 9.8 տոկոսային կետով)՝ կազմելով 46.2%:


Ընդհանուր վարկային ներդրումները (վարկեր և դեբիտորական պարտքեր) 2006 թ. ավելացել են 25%-ով կամ 51.1 մլրդ դրամով, այդ թվում՝ ոչ ռեզիդենտների վարկային ներդրումները նվազել են 19%-ով կամ 3.8 մլրդ դրամով, իսկ ռեզիդենտների վարկային ներդրումները՝ 29%-ով կամ 54.9 մլրդ դրամով:

Ռեզիդենտների վարկային ներդրումներում աննախադեպ աճ է արձանագրվել հիփոթեքային վարկերում՝ 114% կամ 12.7 մլրդ դրամ: Խոշոր աճ է արձանագրվել սպառողական (35%՝ 17.5 մլրդ դրամով) և առևտրի ոլորտի (18%՝ 7.4 մլրդ դրամով) վարկերում:



Գրաֆիկ 2.17
Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդը՝ ըստ տնտեսության ճյուղերի (հազար ՀՀ դրամ)


Հիփոթեքային վարկավորման շուկայի զարգացումը նպաստել է վերջին տարիներին վարկային ներդրումներում երկարաժամկետ (1 տարի և ավելի ժամկետայնությամբ) վարկերի տեսակարար կշռի էական աճին:



Գրաֆիկ 2.18
Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդը՝ ըստ ժամկետայնության (հազար ՀՀ դրամ)

Բանկային համակարգի ակտիվների որակի առումով վերջին տարիներին արձանագրվել է ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշռի աճ: Թեև միայն 2006 թ. ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը 0.8 տոկոսային կետով նվազել է և կազմել 97.6%, սակայն սա հա-

մարվում է բավականին բարձր որակ և ֆինանսական կայունության տեսանկյունից վտանգ չի ներկայացնում:



Գրաֆիկ 2.19
Բանկային համակարգի վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները՝ ըստ դասերի


31.12.2006 թվականի դրությամբ չաշխատող ակտիվների մեծությունը կազմել է 7.2 մլրդ դրամ, որի 1%-ը բաժին է ընկել ոչ ռեզիդենտներին, իսկ 99%-ը ռեզիդենտներին տրամադրված միջոցներին: Ըստ տնտեսության ճյուղերի՝ ռեզիդենտների վարկային ներդրումներում չաշխատող ակտիվների տեսակարար կշիռը համեմատաբար բարձր է շինարարության ճյուղում՝ 9.5%, քիմիական արդյունաբերության ճյուղում՝ 8.4%, և հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտների վարկերում՝ 4.9%:

Վերջին տարիներին վարկային ռիսկի նվազմանն էապես նպաստել է նաև վարկային ռեգիստրը (2003 թ. հունվարի 1-ից գործում է ԿԲ-ում), որի միջոցով բանկերը նախապես տեղեկացվում են վարկառուի վարկային պատմության: Բարձրացել է վարկառուների գործարար կարգապահությունը, նվազել վարկերի մասնակի մարումների ուշացումները, ինչը հաճախորդների կողմից իրենց վարկային պատմության կարևորության գիտակցման արդյունք է:

Վարկային ռեգիստրում հաշվառվում են 1.5 մլն դրամը գերազանցող և մինչև 1.5 մլն դրամ, սակայն սահմանված ժամկետում չմարված և դասակարգված վարկերը: 2006 թ. վերջին ԿԲ վարկային ռեգիստրում հաշվառվող վարկային պատմությունների թիվը հասել է 282710-ի՝ ավելանալով 105098-ով: Վարկային ռեգիստրում առկա է տեղեկատվություն 52743 գործող և 229967 մարված վարկերի վերաբերյալ: Նախորդ տարվա համեմատությամբ՝ հաշվառվող վարկերի ընդհանուր թիվն աճել է 1.6 անգամ, ինչը վկայում է վարկային ակտիվության բարձրացման մասին: Հաշվառվող վարկերի քանակի մեծացմանը զուգընթաց փոխվել են նաև մուտքագրվող տեղեկատվության ծավալները. օրական միջինը 4350 գրառում՝ 2005 թ. համեմատ աճելով 25 %-ով:

Առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների գերակշիռ մասը ավտոմատացրել է Վարկային ռեգիստրին տվյալների տրամադրման գործընթացը՝ նպաստելով համակարգի արագագործությանը: ԿԲ «Վարկային ռեգիստր» ծրագրային համակարգի կատարելագործման արդյունքում վարկային պատմությունները բանկերին և վարկային կազմակերպություններին տրամադրվում են հարցումը ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում:

2006 թ. Վարկային ռեգիստրը շարունակել է յուրաքանչյուր եռամսյակ անպարտաճանաչ վարկառուների անվանացանկի հրապարակումը մամուլում և ինտերնետային էջում: ԿԲ կողմից սահմանված՝ բանկի նվազագույն կապիտալի մեծության 5%-ը գերազանցող և 180 օր ժամկետանց պարտավորություն ունեցող անպարտաճանաչ վարկառուների քանակը նվազել է 5-ով (2005 թվականի վերջին եռամսյակում 23 էր, իսկ 2006 թվականի վերջին եռամսյակում՝ 18):



Ստացված հայտերի քանակն ըստ ամիսների

2006 թ., 2005 թ. վերջի համեմատությամբ, մոտ 1.9 անգամ ավելացել է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից պահանջվող վարկային պատմությունների քանակը: Սպառողական վարկավորման աճի պայմաններում բանկային համակարգի կողմից հետզհետե աճում է հաճախորդի վարկային պատմության ընկատմամբ պահանջարկը: Հաճախորդի վարկարժանության գնահատումը վարկային պատմության ստուգման միջոցով կրճատում է վարկավորման վրա ծախսվող ժամանակը և հնարավորություն է տալիս նվազեցնել վարկային ռիսկը՝ խուսափելով անպարտաճանաչ վարկառուներից: 2006 թ. Վարկային ռեգիստրում բացասական վարկային պատմություն ունեցող 1900 վարկառուի վարկային դիմումներ մերժվել են բանկերի կողմից՝ խուսափելով բացասական վարկային պատմություն ունեցող վարկառուներին վարկեր տրամադրելուց:

Ֆինանսական կայունության ապահովման համատեքստում, հնարավոր ռիսկերի կանխատեսման, բացահայտման և գնահատման գործընթացում միջազգային փորձն էապես կարևորում է ստրես-թեստերի կիրառության անհրաժեշտությունը, ըստ որի՝ կառուցվում են նույնիսկ քիչ հավանական ամենատարբեր ցնցումային իրավիճակներ և գնահատվում այդ իրավիճակների ի հայտ գալու դեպքում դրանց ազդեցության մակարդակը ֆինանսական կայունության վրա:


Վարկային ռիսկի ստրես-թեստեր. Վարկային ռիսկի ստրես-թեստերը գնահատում են վարկերի դասերի փոփոխման ազդեցությունը կապիտալի համարժեքության նորմատիվի վրա: Ըստ ակտիվների՝ վարկային ներդրումները դասակարգվում են ստանդարտ, հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի և անհուսալի դասերի: Դիտարկվող ստրես-սցենարներում արվում են ենթադրություններ, ըստ որոնց՝ 1) բանկերի վարկերի ծավալները փոփոխության չեն ենթարկվում, 2) գրավադրված գույքը անտեսվում է:

Գնահատվել է, որ աղյուսակում դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-սցենարների ի հայտ գալու դեպքում որևէ բանկ չի խախտի կապիտալի համարժեքության $Ն1^1$ և $Ն1^2$ նորմատիվները: Միաժամանակ դիտարկվող վատագույն իրավիճակներով պայմանավորված՝ բանկային համակարգի կորուստները բացասական ազդեցություն չեն թողնի ՀՀ ֆինանսական կայունության վրա:

Ստրես - սցենարներ			
31.12.06	Հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերից 25%-ի դասակարգում անհուսալի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	1.2 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 1.1%-ը	0.5 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.5%-ը	6.3 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 6.1%-ը
Բանկային համակարգի $Ն1^1$-ի մեծությունը	34.6 %	34.8 %	33.5 %
Բանկային համակարգի $Ն1^2$-ի մեծությունը	32.4 %	32.6 %	31.2 %


Իրացվելիության ռիսկ

Տարվա ընթացքում բարձր իրացվելի ակտիվներն ավելացել են 14%-ով՝ կազմելով 209.5 մլրդ դրամ: Բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը փոքր-ինչ զիջել է ընդհանուր ակտիվների աճի տեմպին: Արդյունքում, ընդհանուր ակտիվներում դրանց տեսակարար կշիռը նվազել է 1.9 տոկոսային կետով՝ կազմելով 39.9%:



Գրաֆիկ 2.20
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվների տեսակարար կշիռը ընդհանուր ակտիվներում


2006 թ. բարձր իրացվելի ակտիվների աճի տեմպը զիջել է ցպահանջ պարտավորությունների և ընդհանուր ակտիվների աճի տեմպին, ինչի արդյունքում համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նվազել են: Ընդհանուր առմամբ, վերջին տարիներին բանկային համակարգի ընդհանուր և ընթացիկ իրացվելիության ցուցանիշների տատանումները շատ փոքր են եղել և գտնվել են պահանջվող նորմատիվային սահմանաչափերից բավականին բարձր մակարդակի վրա (պահանջվող նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 20% և 80%):



Գրաֆիկ 2.21
Բանկային համակարգի ընդհանուր իրացվելիության և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները


Ըստ մարմանը մնացած ժամկետայնության խմբերի՝ բանկային համակարգի ակտիվների մեծությունները գերազանցել են պարտավորությունների մեծությունները (ինչին նպաստել է նաև վերջին տարիներին բանկային համակարգի կապիտալի մեծության արագատեմպ աճը), ինչից ելնելով էլ կանխատեսվում է, որ, այլ հավասար պայմաններում, 2007 թվականին բանկային համակարգը զերծ կմնա իրացվելիության

ռիսկով պայմանավորված այլընտրանքային վնասներից:



Գրաֆիկ 2.22
Բանկային համակարգի ակտիվների հարաբերությունը պարտավորություններին (ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների) [3]

Բանկային համակարգի պարտավորությունների կառուցվածքում 2006 թվականին «խոշոր» պարտավորությունների[4] տեսակարար կշիռն ընդհանուր պարտավորություններում փոքր-ինչ ավելացել է և կազմել 27.5%: Վերջինս վկայում է, որ բանկային համակարգի պարտավորությունների մեծության տատանումները կախված չեն մի քանի խոշոր ավանդատուներից՝ բացառելով նաև դրա հետևանքով իրացվելիության հնարավոր խնդիրների առաջացումը:



Գրաֆիկ 2.23
Բանկային համակարգի «խոշոր» պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին

Գնահատվել է, որ ստորև դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-սցենարների դրսևորման դեպքում որոշ բանկեր կարող են փոքր-ինչ խախտել ընդհանուր իրացվելիության Ն2[1] և ընթացիկ իրացվելիության Ն2[2] նորմատիվները, սակայն համակարգը իրացվելիության հիմնախնդիրների առջև չի կանգնի, և իրավիճակների երևան գալը ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդեցություն չի թողնի:

Ստրես - սցենարներ

31.12.2005	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի նվազում [5]	Ցպահանջ միջոցների 25%-ի նվազում	Ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի նվազում
Բանկային համակարգի Ն2[1]-ի մեծությունը	38.7 % (կխախտի 1 բանկ)	34.9 % (կխախտ ի 1 բանկ)	31.7 % (կխախտ ի 3 բանկ)
Բանկային համակարգի Ն2[2]-ի մեծությունը	95.2 % (կխախտի 4 բանկ)	107.8 % (կխախտ ի 1 բանկ)	93.5 % (կխախտ ի 6 բանկ)

Շուկայական ռիսկեր


2006 թվականին արձանագրվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10.0%-ով միջին տարեկան արժևորում, իսկ ժամանակաշրջանի վերջի դրությամբ՝ 23.8%-ով:

Արտարժութային ռիսկի տեսանկյունից՝ հաշվետու տարվա ընթացքում այլ արժույթների նկատմամբ ՀՀ դրամի փոխարժեքի տատանումների հետևանքով բանկային համակարգն արտարժույթի վերագնահատման արդյունքում ունեցել է 272 մլն դրամի չափով ընդհանուր վնաս, որը կազմել է բանկային համակարգի նորմատիվային կապիտալի 0.3%-ը (նախորդ տարի՝ 0.5%): Արտարժույթի վերագնահատման արդյունքում վնաս է ունեցել 9 բանկ, իսկ եկամուտ՝ 12 բանկ: 2006 թվականին արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների արդյունքում բանկային համակարգն ապահովել է 6.4 մլրդ դրամ եկամուտ, որը 6.3%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը:


[3] *31.12.2002 թ. դրությամբ ցուցանիշների հաշվարկում 1 տարի և ավելի մարման ժամկետայնությամբ ակտիվները և պարտավորությունները ներառված են 181-365 օր մարման ժամկետայնության դասում:*

[4] *Այն բոլոր միջոցների հանրագումարը, որոնք առանձին վերցրած գերազանցում են բանկի ընդհանուր պարտավորությունների 5% սահմանաչափը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:*

[5] *Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հոդված 905-ի կետ 2-ի՝ «Յանկացած տեսակի բանկային ավանդի պայմանագրով բանկը պարտավոր է ավանդի գումարը կամ դրա մի մասը վերադարձնել ավանդատուի առաջին իսկ պահանջով, բացառությամբ պայմանագրով նախատեսված՝ վերադարձման այլ պայմաններով իրավաբանական անձանց ներդրված ավանդների»:*



Գրաֆիկ 2.24
Բանկային համակարգի՝ արտարժույթի առք ու վաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները (հազար ՀՀ դրամ)



Գրաֆիկ 2.25
Բանկային համակարգի ավանդների և վարկերի միջին տոկոսադրույքները

31.12.2006 թվականի դրությամբ բանկային համակարգի առաջին խմբի համախառն արտարժութային դիրքը կազմել է նորմատիվային կապիտալի 4.4%-ը, իսկ երկրորդ խմբի զուտ դիրքը՝ 1.1%-ը (պահանջվող առավելագույն նորմատիվային մակարդակները՝ համապատասխանաբար 15% և 5%):

Գնահատվել է, որ ներկայացված աղյուսակում դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-սցենարների դրսևորման դեպքում բանկերի կորուստները նշանակալի չեն և ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդեցություն չեն թողնի:

Ստրես - սցենարներ			
31.12.2006	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի 10%-ով արժեզրկում (արժեզրկում)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի 10%-ով արժեզրկում (արժեզրկում)	2007 թ. հնարավոր առավելագույն վնասը՝ գնահատված VaR մոդելով
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	171 մլն դրամ (-171 մլն դրամ)	15 մլն դրամ (-15 մլն դրամ)	-200 մլն դրամ

Բանկային համակարգում տոկոսադրույքի ռիսկը ներկայումս բավականին ցածր է: Վերջին տարիներին վարկերի և ավանդների շուկայական տոկոսադրույքները հիմնականում ցուցաբերել են նվազման կայուն վարքագիծ:

Բանկային համակարգի կողմից տեղաբաշխված ակտիվների միջին կշռված ժամկետայնությունը գերազանցել է ներգրավված պարտավորությունների միջին կշռված ժամկետայնությունը, որի արդյունքում ընդհանուր (միաժամանակ և՛ վարկերի, և՛ ավանդների) տոկոսադրույքների նվազումը համակարգին չի կարող վնասել: Քանի որ ակտիվների և պարտավորությունների միջին կշռված ժամկետայնության ճեղքվածքը նշանակալի չէ և կազմում է մոտ կես տարի, ապա շուկայական տոկոսադրույքների տատանումները բանկային համակարգին մեծ վնասներ չեն պատճառի:

Ստրես - սցենարներ		
31.12.2006	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի (նվազման) հետևանքով համակարգի առևտրային պորտֆելում առաջացող զուտ տոկոսադրույքի եկամտից (ծախսից) գնահատված տոկոսադրույքային ռիսկի ենթարկված ակտիվների և պասիվությունների ճեղքվածքի մեթոդով (GAP մեթոդ)[7]	Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի (նվազման) հետևանքով համակարգի տնտեսական արժեքի փոփոխության մեթոդով
Բանկային համակարգի օգուտը / վնասը	30 մլն դրամ (-30 մլն դրամ)	2.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 2%-ը (-2.4 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 2%-ը)

Գնահատվել է, որ ներկայացված աղյուսակում դիտարկվող հնարավոր վատագույն ստրես-սցենարների դրսևորման դեպքում բանկերի կորուստները համակարգի կապիտալի նկատ-

[6] Դիտարկվող ստրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում ստրես - սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկում կատարվում է ենթադրություն, որ տարվա ընթացքում բանկային համակարգի արտարժութային դիրքը փոփոխության չի ենթարկվի:

[7] Սույն մեթոդիկայի հաշվարկում կատարվում է ենթադրություն, ըստ որի՝ դիտարկվող ժամանակահատվածում (եռամսյա) ակտիվների և պարտավորությունների կառուցվածքը և ծավալները մնում են անփոփոխ, այսինքն՝ մարված ակտիվները և պարտավորությունները կրկին տեղաբաշխվում և ներգրավվում են, բայց արդեն նոր գործող տոկոսադրույքով:

մամբ նշանակալի չեն և ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդեցություն չեն թողնի:

Բանկային համակարգում գնային ռիսկը ներկայումս բավականին ցածր է, և գնային ռիսկով պայմանավորված վնասները գրեթե բացակայում են:

Այնուամենայնիվ, ստորև ներկայացված աղյուսակում դիտարկվում են հնարավոր վատագույն ստրես-սցենարի դրսևորման դեպքում բանկերի կորուստները, որոնք թեպետ զգալի են, սակայն ՀՀ ֆինանսական կայունության վրա էական ազդեցություն չեն թողնի:


Ստրես - սցենար	
31.12.2005	Անշարժ գույքի 50%-ով արժեզրկում
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված բանկի սեփականության տակ գտնվող անշարժ գույքի վերագնահատման արդյունքով *(գնային ռիսկ)*	15.3 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 13%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված ստրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[8] 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի իրացումը) *(վարկային ռիսկ)*	4.4 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 3.7%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված ստրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի 100%-ով չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի իրացումը) *(վարկային ռիսկ)*	14.8 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 12.3%-ը)

Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն

Բանկային համակարգի կայունության կարևորագույն գրավականներից է շահութաբերության և կապիտալ/ակտիվներ հարաբերակցության բարձր մակարդակի ապահովումը՝ բանկային համակարգին՝ ընձեռնելով ռիսկերով պայմանավորված հնարավոր կորուստների սեփական միջոցներով կլանման ավելի լայն հնարավորություն:


Համակարգի շահութաբերության ցուցանիշները 2006 թվականին գերազանցել են նախորդ տարվա ցուցանիշները. շահութաբերությունն ըստ ակտիվների (զուտ շահույթի հարաբերությունը ակտիվների միջին տարեկան մեծությանը) կազմել է 3.6%, իսկ ըստ կապիտալի (զուտ շահույթի հարաբերությունը կապիտալի միջին տարեկան մեծությանը)՝ 15.9% (2005 թվականին՝ համապատասխանաբար 3.0% և 15.3%):

[8] *Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որոնց մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 50%-ով արժեզրկված արժեքները:*



Գրաֆիկ 2.26
Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները


Բանկային համակարգում վերջին տարիներին արձանագրվել է զուտ շահույթի մեծության կայուն աճի միտում: 2006 թվականին բանկային համակարգի զուտ շահույթն ավելացել է 40.8%-ով: Բոլոր բանկերն աշխատել են շահույթով:



Գրաֆիկ 2.27
Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը (հազար ՀՀ դրամ)


Բանկային համակարգի համախառն եկամուտներում ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել տոկոսային եկամուտներին և կազմել 49.6% (2002 թվականին՝ 46.1%): Համախառն ծախսերում գերակշռողը ոչ տոկոսային ծախսերն են՝ կազմելով 44.6% (2002 թվականին՝ 40.9%): Տոկոսային եկամուտների 80.4%-ը բաժին է ընկել տնտեսության վարկերից ստացված տոկոսային եկամուտներին, իսկ ոչ տոկոսային ծախսերի 44.5%-ը՝ աշխատավարձին և դրան հավասարեցված այլ վճարումներին:

Վերջին տարիներին բանկային համակարգի ակտիվների աճի նկատմամբ կապիտալի առաջանցիկ աճի տեմպերը հանգեցրել են կապիտալ/ակտիվներ հարաբերակցության մեծացմանը՝ նպաստելով ֆինանսական կայունության ամրապնդմանը:



Գրաֆիկ 2.28
Բանկային համակարգի կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշները

2006 թվականին բանկերի ընդհանուր և հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշները (ընդհանուր կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին և հիմնական կապիտալի հարաբերությունը ռիսկով կշռված ակտիվներին), նախորդ տարվա համեմատ, փոքրինչ ավելացել են՝ 31.12.2006 թ. կազմելով համապատասխանաբար 34.9% և 32.7% (պահանջվող նորմատիվային նվազագույն սահմանաչափը՝ համապատասխանաբար 12% և 8%):



Գրաֆիկ 2.29
Ընդհանուր կապիտալի համարժեքությունն ըստ բանկերի (31.12.2006 թ. դրությամբ)

31.12.2006 թ. դրությամբ կապիտալի համարժեքության նորմատիվների խախտում որևէ բանկում չի արձանագրվել:

Վարկային կազմակերպություններ

2006 թ. ընթացքում վարկային կազմակերպության գործունեության լիցենզիաներ են ստացել յոթ ընկերություններ՝ «Ֆինքա», «Արեգակ», «Նորվիկ», «Գառնի Ինվեստ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ները և «Նոր Հորիզոն», «Մալաթիա», «Էկումենիկ Եկեղեցական Փոխատվական Ֆոնդ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՍՊԸ-ները: Տարեվերջին ՀՀ-ում գործել են տասնյոթ վարկային կազմակերպություններ (տասներկու մասնաճյուղով), որոնցից երկուսը լիզինգային կազմակերպություններ են, մեկը՝ վարկային միություն և տասչորսը՝ ունիվերսալ վարկային կազմակերպություններ:

2006 թվականին վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի, պարտավորությունների և ակտիվների աճի միտումները մի քանի անգամ գերազանցել են բանկային համակարգի համապատասխան աճի միտումները, ըստ որի՝ վարկային կազմակերպությունների ակտիվների մեծությունը տարեվերջին կազմել է բանկային համակարգի ակտիվների 3.9%-ը (տարեսկզբին՝ 1.8%):

Կապիտալի աճը հիմնականում ապահովվել է տարվա ընթացքում լիցենզավորված յոթ, ինչպես նաև արդեն գործող չորս վարկային կազմակերպությունների կողմից կանոնադրական հիմնադրամի համալրման հաշվին: Վարկային կազմակերպությունների չբաշխված շահույթը կազմել է 106 մլն դրամ, շահութաբերությունն ըստ ակտիվների՝ 0.9%, իսկ ըստ կապիտալի՝ 1.8%:

Վարկային կազմակերպությունների ակտիվները, պարտավորությունները, կապիտալը և շահույթը
(հազար ՀՀ դրամ)

	31.12.2005	31.12.2006	2006 թ. տոկոսային աճ
Ակտիվներ	7872259	20590720	161.6%
Պարտավորություններ	3481501	12134040	248.5%
Կապիտալ	4390758	8456680	92.6%
Զուտ շահույթ	79877	105949	32.6%

Պարտավորությունների աճը հիմնականում տեղի է ունեցել իրավաբանական անձանց փոխառությունների (3.5 մլրդ դրամով), բանկերի նկատմամբ պարտավորությունների (3.2 մլրդ դրամով) և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունների (1.5 մլրդ դրամով) աճի հաշվին: Իրավաբանական անձանցից և ֆիզիկական անձ մասնակիցներից փոխառությունները տարեվերջին կազմել են 5.4 մլրդ դրամ, որի 86%-ը բաժին է ընկել իրավաբանական անձանց:

Վարկային կազմակերպությունների ակտիվների 12.7 մլրդ դրամով աճի 82%-ը ներդրվել է տնտեսությունում՝ վարկերի և լիզինգի տեսքով: Վարկային ներդրումների (ներառյալ լիզինգը) աճը կազմել է 168% կամ 10.4 մլրդ դրամ: Տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում արձանագրվել է տրամադրված վարկերի ծավալների աճ:

Ֆինանսական կայունության տեսանկյունից, վարկային կազմակերպություններում ծագող ռիսկերից կարևորվել է վարկային ռիսկը: Վարկերի արագատեմպ աճին զուգընթաց, արձանագրվել է վարկային ռիսկի մակարդակի նվազում. ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակար կշիռն ընդհանուրում ավելացել է 7.5 տոկոսային կետով և կազմել 97.5%: Չաշխատող ակտիվների 48%-ը բաժին է ընկել սպառողական ոլորտին, իսկ 41%-ը՝ արդյունաբերության ճյուղին տրամադրված վարկերին: Վարկային ռիսկի նվազման մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ վարկային կազմակերպությունների կողմից ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների մեծությունը կազմել է ընդհանուր ակտիվների մեծության 0.5%-ը (31.12.2005 թ.՝ 2.2%):

Ապահովագրական ընկերություններ

2006 թվականին դադարեցվել է ութ ապահովագրական ընկերությունների՝ «Ավուար», «Էրմեդ» ապահովագրական ՓԲԸ-ների, «Երաշխիք», «Ինօրիենք», «Գոբա», «Սամգաս», «Ռենեսանս Ինշուրանս», «Հ և Ֆ» ապահովագրական ՍՊԸ-ների ապահովագրական գործունեության իրականացման լիցենզիաների և «Սահա» ՍՊԸ ապահովագրական բրոքերային (միջնորդային) գործունեության իրականացման լիցենզիայի գործողությունը:

2006 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում լիցենզավորվել են 15 ապահովագրական և 6 ապահովագրական բրոքերային ընկերություններ: Արձանագրվել է ապահովագրական ընկերությունների սեփական կապիտալի աճ, պարտավորությունների և ակտիվների նվազում[9]:

Կապիտալի աճը հիմնականում պայմանավորվել է կանոնադրական հիմնադրամի 1.5 մլրդ դրամ աճով: 2006 թվականին ապահովագրական ընկերությունների շահույթը կազմել է 348.5 մլն դրամ:

Ակտիվների և պարտավորությունների նվազումը հիմնականում պայմանավորվել է ապահովագրական ընկերությունների քանակի նվազմամբ: Ապահովագրական ընկերությունների ընդհանուր ակտիվների մեջ մեծ տեսակարար կշիռ են կազմել ընթացիկ ակտիվները՝ 76.7%, իսկ պարտավորություններն ամբողջությամբ ընթացիկ են եղել:

Ապահովագրական ընկերությունների ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
(հազար ՀՀ դրամ)

	31.12.2005	31.12.2006	2006 թ. տոկոսային աճ
Ակտիվներ	9891075	8637138	-12.7%
Պարտավորություններ	5462748	2645950	-51.6%
Սեփական կապիտալ	4428328	5991188	35.3%

Ապահովագրական ընկերությունների 29.5 հազար գործող պայմանագրերով ապահովագրական գումարը տարեվերջին կազմել է 3.93 տրլն դրամ, որից 3.76 տրլն դրամը կամ 95.7%-ը վերաապահովագրողների ստանձնած պատասխանատվության մեծությունն է (2005 թ. ապահովագրական գումարների մեծությունը կազմել է 1.73 տրլն դրամ, որից 1.69 տրլն դրամը կամ 97%-ը վերաապահովագրողների ստանձնած պատասխանատվության մեծությունն է):

Հաշվետու տարվա ընթացքում հաշվեգրված ապահովագրավճարները կազմել են 5.91 մլրդ դրամ, ինչը 36%-ով գերազանցել է նախորդ տարվա ցուցանիշը (2005 թ.՝ 4.35 մլրդ դրամ):

Ֆինանսական կայունության տեսանկյունից, ապահովագրական ընկերությունների գործունեության ռիսկի բնութագրման կարևորագույն ցուցանիշներից է վնասաբերության ցուցանիշը, որն ապահովագրական հատուցումների հարաբերությունն է ապահովագրավճարներին. 31.12.2006 թ. դրությամբ նշված ցուցանիշը կազմել է 28.3%[10]:

Ապահովագրական բրոքերային ընկերությունների ակտիվների մեծությունը 31.12.2006 թ. դրությամբ կազմել է 189.3 մլն դրամ, իսկ սեփական կապիտալի մեծությունը՝ 50.9 մլն դրամ:

[9] Ապահովագրական ընկերությունների վերլուծությունը կատարվում է՝ համեմատելով 31.12.2005 թ. գործող 23 ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշները 31.12.2006 թ. գործող 15 ապահովագրական ընկերությունների ամփոփ ցուցանիշների հետ: Ընկերություններից մեկի ցուցանիշներն ապահովագրական ընկերությունների տարեկան ամփոփ ցուցանիշներում ներառված են 3-րդ եռամսյակի վերջի դրությամբ, քանի որ նա չի ներկայացրել տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

[10] Համակարգի պատկերն ամբողջական չէ, քանի որ այս ցուցանիշի հաշվարկում ներառված չէ ապահովագրական ընկերություններից մեկը, որն իրականացրել է 26.1 մլրդ դրամի ապահովագրական հատուցում:

Արժեթղթերի շուկայի մասնակիցներ

2006 թվականի վերջի դրությամբ ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են երկու ինքնակարգավորվող կազմակերպություններ՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիան և արտարժույթի և արժեթղթերի առք/վաճառքի սակարկություններ կազմակերպող Հայաստանի ֆոնդային բորսան:

Հայաստանի ֆոնդային բորսայում կնքվել է 2.6 մլրդ դրամ ընդհանուր ծավալով 1181 գործարք: Բորսայական առևտրին մասնակցել են 9 մասնագիտացված ընկերություններ:

Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում անվանական արժեթղթերի սեփականատերերի ռեեստր վարող թողարկողների թիվը կազմել է 710 ընկերություն, իսկ ռեեստր վարող թողարկողների արժեթղթերի սեփականատերերի թիվը՝ 130.9 հազար մարդ:

ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող երկու ընկերություն է ավելացել: Բրոքերային գործունեության լիցենզիա է ստացել «Թամրազյան և ընկերներ» բրոքերային ՍՊԸ-ն, բրոքերային և հավատարմագրային գործունեության լիցենզիաներ է ստացել «Իկապիտալ Ասեթ Մենեջմենթ» ՓԲԸ-ն: ՀՀ արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն է իրականացնում 20 ընկերություն: Նշված ընկերություններից 7-ը, բացի բրոքերային/դիլերային գործունեության լիցենզիայից, ունի նաև հավատարմագրային կառավարման գործունեության լիցենզիա, իսկ 1-ը՝ նաև պահառուի լիցենզիա:

Մասնագիտացված ընկերությունների կողմից 2006 թ. կնքվել է 191.4 մլրդ դրամի գործարք, որից 7.2 մլրդ դրամի գործարք (3.8%) կնքվել է բրոքերային, իսկ 184.2 մլն դրամի գործարք (96.2%)՝ դիլերային գործունեության շրջանակներում:

Բաժնետոմսերով կնքված գործարքների 98%-ը, կորպորատիվ պարտատոմսերով կնքված գործարքների 55%-ը և պետական պարտատոմսերով կնքված գործարքների 1%-ը իրականացվել են բրոքերային գործունեության շրջանակներում: Դիլերային գործունեության շրջանակներում կնքվել են պետական պարտատոմսերով գործարքների 99%-ը:

Մասնագիտացված ընկերությունների կողմից իրականացված բրոքերային և դիլերային շրջանառության 97%-ը կատարվել է բորսայից դուրս: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով կնքված գործարքների համապատասխանաբար 84%-ը և 95%-ը կնքվել են Հայաստանի ֆոնդային բորսայում:

Հավատարմագրային կառավարման շրջանակներում կնքվել են 7.8 մլրդ դրամի գործարքներ, որից 124 մլն դրամ ծավալով գործարքները (2%) կնքվել են ոչ ռեզիդենտ թողարկողների արժեթղթերով՝ հանձնակատարների միջոցով:

Ֆոնդային բորսայում ցուցակված են 36 հաշվետու թողարկողների արժեթղթեր: Հավետու թողարկող ընկերություններից 2-ը բանկ են, իսկ 1-ը՝ վարկային կազմակերպություն: Ընկերություններից 4-ը վարկանշվում են ՀՀ ԿԲ կողմից:

Ընկերությունները ազդագրի կիրառմամբ իրականացրել են արժեթղթերի 3 տեղաբաշխում. 1՝ բաժնետոմսերի փակ տեղաբաշխում և 2՝ կորպորատիվ պարտատոմսերի հրապարակային տեղաբաշխում: Կորպորատիվ պարտատոմսերը տեղաբաշխվել են 1 վարկային և 1 շինարարական կազմակերպություններում՝ համապատասխանաբար 7.25 և 9.0 տոկոս տարեկան եկամտաբերությամբ, ընդ որում, կազմակերպության պարտատոմսերը երաշխավորված են USAID-ի կողմից:

Արտարժույթի առք ու վաճառքի փոխանակման կետերը և արժութային դիլերներ

Տարեսկզբին ՀՀ տարածքում արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա են ունեցել 376 փոխանակման կետեր (ներառյալ մասնաճյուղերը), իսկ տարեվերջին՝ 288: Տարվա ընթացքում 148 փոխանակման կետերի լիցենզիաներն ուժը կորցրած են ճանաչվել և արտարժույթի առք ու վաճառքի լիցենզիա է տրամադրվել 60 փոխանակման կետերի:

2005 թվականի համեմատ՝ 2006 թ. փոխանակման կետերում արձանագրվել է արտարժույթի առք ու վաճառքի ընդհանուր ծավալի աճ:

Արտարժույթի փոխանակման կետերի առք ու վաճառքի ծավալները *(հազար ՀՀ դրամ)*

	31.12.2005	31.12.2006	2006 թ. տոկոսային աճ
ԱՄՆ դոլարի առք (մլն ԱՄՆ դոլար)	255.6	324.8	27%
ԱՄՆ դոլարի վաճառք (մլն ԱՄՆ դոլար)	260.9	322.1	23%
Եվրոյի առք (մլն եվրո)	19.4	21.5	11%
Եվրոյի վաճառք (մլն եվրո)	19.0	21.2	12%

Արժութային դիլերի գործունեության լիցենզիա է տրամադրվել «Արմանե Գազպա» ՍՊԸ-ին: 31.12.2006 թվականի դրությամբ ՀՀ տարածքում արժութային դիլերի գործունեության լիցեզիա են ունեցել 7 իրավաբանական անձինք: Արժութային դիլերների՝ ԱՄՆ դոլարի ընդհանուր առքի ծավալը կազմել է 7.0 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 14.4 մլն ԱՄՆ դոլար (2005 թ. առքի ծավալը՝ 15.9 մլն ԱՄՆ դոլար և վաճառքինը՝ 14.9 մլն ԱՄՆ դոլար):

Ֆինանսական շուկայի այլ մասնակիցներ

ՀՀ տարածքում 31.12.2006 թ. դրությամբ գործել է 64 գրավատուն: Տարվա ընթացքում գրավատան գործունեության լիցենզիա են ստացել 13 ընկերություն ու անհատ ձեռնարկատեր, իսկ 10 գրավատան լիցեզիաները ուժը կորցրած են ճանաչվել: Արձանագրվել է գրավատների ընդհանուր ակտիվների՝ 26% և գրավատների կողմից տրամադրված վարկերի 55% աճ: Գրավատների ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 2.5 մլրդ դրամ, գրավատների կողմից տրամադրված վարկերի ընդհանուր մեծությունը՝ 1.7 մլրդ դրամ: Գրավատները տրամադրել են 31.1 հազար վարկային պայմանագրեր:

ՀՀ ֆինանսական շուկայում գործունեություն են ծավալել դրամական փոխանցումներ իրականացնող երեք կազմակերպություն՝ «Հայփոստ», «Արմենիան էքսպրես» ՓԲԸ-ները և «Դեպի տուն» ՍՊԸ-ն, ընդ որում՝ վերջին երկուսը լիցենզավորվել են 2006 թ.: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունները կարող են իրականացնել վճարումների ընդունում և կատարում՝ առանց բանկային հաշիվների բացման: Այս կազմակերպությունների գործունեությունը հիմնականում ուղղված է միջազգային վճարային համակարգերին անդամակցելու միջոցով արտերկրից Հայաստանի Հանրապետություն ուղղված վճարումների իրականացմանը: Նշված կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության հաճախորդներին կատարել են 5271 մլն դրամի, իսկ արտերկիր՝ 1055 մլն դրամի փոխանցում: Դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների մասնաբաժինը, առանց բանկային հաշվի բացման կատարված միջազգային փոխանցումների ծավալում, կազմել է 1%: Հայաստանի Հանրապետություն փոխանցումները 4.9 անգամ գերազանցել են արտասահման կատարված փոխանցումները, իսկ հաճախորդներին կատարված մեկ վճարման միջին ծավալը կազմել է 117 հազար դրամ:

ՀՀ ֆինանսական շուկայում գործունեություն է ծավալել նաև վճարային գործիքներ և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն: Նա իրականացնում է «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի մասնակից 18 առևտրային բանկերի կողմից թողարկված «ԱրՔա», ինչպես նաև VISA և MasterCard միջազգային քարտային համակարգերի վճարային քարտերով կատարված գործառնությունների պրոցեսինգը:

«ԱրՔա» պրոցեսինգային կենտրոնն ապահովում է քարտերի սպասարկումը ԱԳՄ-ների, ՊՕՍ տերմինալների, իմպրինտերների միջոցով, ինչպես նաև ինտերնետ միջավայրում: Համակարգի զարգացման շրջանակներում պրոցեսինգային կենտրոնի կողմից աշխատանքներ են տարվում մագնիսական ժապավենով քարտերի և չիպային տեխնոլոգիայի հիման վրա պատրաստված վճարային քարտերի թողարկման ու սպասարկման ուղղությամբ: Նախատեսվում է նաև հնարավորություն ստեղծել ԱԳՄ-ների միջոցով քարտային հաշիվներին կանխիկ միջոցների մուտքագրման համար:

Պրոցեսինգային կենտրոնը քարտային գործառնությունների արդյունքում իրականացնում է նաև զուտ դիրքերի դուրսբերում և ներկայացում Կենտրոնական բանկ՝ վերջնահաշվարկի կատարման նպատակով:

Հանդիսանալով «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգի օպերատոր՝ պրոցեսինգային կենտրոնն իրականացրել է 86 մլրդ ՀՀ դրամ ծավալով քարտային գործառնություններ, այդ թվում՝ օտարերկրյա բանկերի կողմից թողարկված քարտերով՝ 10 մլրդ ՀՀ դրամ ծավալով:

2.4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ

ՀՀ ֆինանսական կայունության տեսանկյունից էապես կարևորվում է նաև համակարգի ենթակառույցներից բխող ռիսկերի բացահայտման և զսպման գործընթացը: Մասնավորապես՝ վճարահաշվարկային համակարգից և ֆինանսական համակարգի օրենսդրական դաշտից բխող թույլատրելի սահմանաչափերից դուրս գործառնական, իրավական և այլ ռիսկերը կարող են վտանգել ֆինանսական կայունությունը:

Վճարահաշվարկային համակարգ և իրավական դաշտ

2006 թ. ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման նպատակով ՀՀ կենտրոնական բանկը կատարել է վճարահաշվարկային բնագավառի կարգավորման և կանոնակարգման աշխատանքներ, մասնավորապես՝ վճարահաշվարկային ծառայություններ մատուցող ոչ բանկ կազմակերպությունների իրավական կարգավորման, ՀՀ տարածքում կանխիկ դրամաշրջանառության կրճատման և անկանխիկ վճարումների զարգացման նպատակով: Հաշվի առնելով վճարային համակարգերի անխափան գործունեության կարևորությունը տնտեսության զարգացման և ֆինանսական կայունության ապահովման համար՝ մշակվել և ներդրվել են այդ համակարգերի հսկողության իրականացման ընթացակարգեր:

ՀՀ տարածքում անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 5494 մլրդ ՀՀ դրամ (քանակը՝ 2627716): Մեկ օրվա միջին անկանխիկ վճարումները ՀՆԱ-ում կազմել են 2665 մլրդ ՀՀ դրամ (0.8%)՝ գրեթե պահպանելով նախորդ տարվա մակարդակը: ՀՆԱ-ում անկանխիկ վճարումների մասնաբաժնի ավելացման նպատակով աշխատանքներ են տարվում մանրածախ առևտրի, ինչպես նաև ծառայությունների մատուցման ոլորտներում անկանխիկ վճարումների զարգացման ուղղությամբ:

ՀՀ բնակչության եկամուտների աճի, հետևաբար նաև ֆինանսական կայունության տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև դեպի Հայաստան ֆիզիկական անձանց ուղղված փոխանցումները: Առևտրային բանկերի և դրամական փոխանցում իրականացնող կազմակերպությունների միջոցով ֆիզիկական անձանց ուղղված դրամական փոխանցումները կազմել են 510 մլրդ ՀՀ դրամ, իսկ դեպի արտերկիր կատարված փոխանցումները՝ 321 մլրդ ՀՀ դրամ: Ֆիզիկական անձանց զուտ դրամական փոխանցումները կազմել են 189 մլրդ ՀՀ դրամ՝ 2005 թ. համեմատ ավելանալով 14%-ով: 2006 թ. ՀՀ վճարահաշվարկային գործուն համակարգը ֆինանսական կայունության տեսանկյունից ռիսկեր չի առաջացրել և ապահովել է անխափան գործունեություն (տե՛ս «Գնաճի գործոններ» բաժնի «Արտաքին միջավայր» ենթաբաժնում և «ՀՀ ֆինանսական ենթակառույցների զարգացումը» բաժնի «Վճարահաշվարկային հարաբերությունների զարգացումը» ենթաբաժնում):

Դրամի նկատմամբ պահանջարկի կտրուկ աճի դեպքում իրացվելիության հնարավոր ռիսկերի մեղմացման և ֆինանսական կայունության ապահովման համար կարևորվել է դրամի շրջանառության և դրամական պահուստների բավարար մակարդակը: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ դրամական պահուստները բավարարել են տնտեսության մեջ կանխիկ դրամի նկատմամբ պահանջարկը:

Դրամավարկային քաղաքականության ծրագրային ցուցանիշներից զգալի շեղումների, արտակարգ իրավիճակների (որոնք կարող են խաթարել նաև ֆինանսական կայունությունը) և այլ անկանխատեսելի հանգամանքների հետևանքով կանխիկ դրամի նկատմամբ տնտեսության լրացուցիչ պահանջը բավարարելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը կազմավորել է անհրաժեշտ դրամական պահուստներ: Այսինքն՝ Կենտրոնական բանկը հնարավորություն ունի տարբեր իրավիճակներում մեղմել իրացվելիության պահանջարկի կտրուկ ավելացման հնարավոր ռիսկերը (մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական ենթակառույցների զարգացումը» բաժնի «Կանխիկ դրամաշրջանառություն» ենթաբաժնում):

Ֆինանսական համակարգի օրենսդրական դաշտի անկատարությունը կարող է խոչընդոտել ֆինանսական համակարգի դրական զարգացումները և ֆինանսական համակարգում առաջացնել բազմապիսի ռիսկեր: Որպես կանոն, օրենսդրական դաշտը մշտապես վերանայվում է՝ պայմանավորված ֆինանսական համակարգի զարգացումներով, համակարգում նորանոր ռիսկերի և խնդիրների առաջացմամբ:

2006 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախաձեռնված օրենքների նախագծերի հետևյալ փաթեթները. ««Արժութային կարգավորման և արժութային վերահսկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին», ««Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», ««Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և մի շարք այլ ՀՀ օրենքներ:

Փոփոխություններ են կատարվել նաև ֆինանսական համակարգի ենթաօրենսդրական դաշտում.

- ապահովագրության ոլորտի կարգավորման դաշտում ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել են «Վերաապահովագրության պահանջները սահմանող կարգը», «Ապահովագրական պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման կարգը», «Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեություն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը», «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջներն ու որակավորման ստուգման կարգը», «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 30-ը, «Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը, «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, դրանց լրացման, ներկայացման կարգն ու ժամկետները» կանոնակարգ 32-ը և այլն,
- արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտում՝ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում»՝ ուղղված արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության ոլորտների կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը: Իրավական հիմքեր են ստեղծվել Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած ձեռնարկությունների պարտատոմսերով բանկերի միջև ռեպո գործարքների կնքման համար, վերահայվել են մասնագիտացված անձանց կողմից ներկայացվող հաշվետվությունների ներկայացման կարգը և ներկայացվող ձևերը, հաշվետու թողարկողների նկատմամբ սահմանված պահանջները, թողարկողների կողմից արժեթղթի գրանցման հայտարարագրի և հաշվետվությունների ներկայացման կարգը և այլն,
- բանկային ոլորտի կարգավորման դաշտում՝ փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում, «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում, «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում, «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցում», «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կարգում: ՀՀ տարածքում գործող բանկերում կորպորատիվ կառավարման ստանդարտների արդյունավետ ներդրման և բանկերի թափանցիկության ապահովման նպատակով հաստատվել է «Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը»: Ամբողջությամբ վերանայվել է «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկը»՝ հաշվի առնելով դրա օգտագործման գործընթացում առաջացած խնդիրները: Ձեռնարկը համալրվել է նոր՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում», «Կորպորատիվ կառավարման որակի գնահատում» և «Ռիսկերի կառավարման համակարգի գնահատում» բաժիններով,

- փոփոխություններ են կատարվել «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում: Մշակվել է «ՀՀ տարածքում գործող գրավատների ստուգումների իրականացման ձեռնարկը»:

Օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխությունները բխում են կարգավորման դաշտի արդի պահանջներից՝ հետամտելով նաև կանխել ֆինանսական համակարգի ռիսկերի անթույլատրելի մակարդակները և ստեղծել ֆինանսական կայունության ապահովմանը նպաստող իրավական դաշտ (մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական ենթակառույցների զարգացումը» բաժնի «ՀՀ ֆինանսական համակարգի օրենսդրական և ենթաօրենսդրական փոփոխություններ» ենթաբաժնում):


ՀՀ ֆինանսական կայունությանը նպաստելու, երկրի ֆինանսական ռիսկերը զսպելու խնդրում կարևորվում է «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի շրջանակում ԿԲ գործունեությունը: 2005 թվականին ԿԲ-ում ստեղծված Ֆինանսական դիտարկումների կենտրոնը մշակել է իր գործունեության եռամյա ռազմավարությունը:

ՀՀ տարածքում գործող բոլոր ֆինանսական հաստատությունները, ինչպես նաև օրենքով սահմանված ոչ ֆինանսական հաստատություններն ու անձինք սկսել են կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին: Հաշվետվությունները կանոնակարգելու և վերլուծություններ իրականացնելու նպատակով մշակվել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի տվյալների բազան: Տարողունակության, անվտանգության և դրա հիման վրա ներդրված ծրագրային ապահովման միջոցով բազան Ֆինանսական դիտարկումների կենտրոնին հնարավորություն է տալիս կատարելու համակողմանի գործառնական, մարտավարական և ռազմավարական ֆինանսական վերլուծություններ:

Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գործընթացը կրելու է շարունակական բնույթ՝ նպաստելով ինչպես երկրի հեղինակությանը, միջազգային ֆինանսական շուկաներում ՀՀ ֆինանսական շուկայի հետ համագործակցության ընդլայնմանը, ինչպես նաև, լայն առումով, ՀՀ ֆինանսական կայունության ապահովմանը (մանրամասն տե՛ս «ՀՀ ֆինանսական ենթակառույցների զարգացումը» բաժնի «Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար» ենթաբաժնում):

3.2. ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Դեռևս նախորդ տարում դրսևորված և 2006 թվականին շարունակված տնտեսության դրամայնացման ակտիվ գործընթացով պայմանավորված՝ դրամի նկատմամբ տնտեսության մեծ պահանջարկը բավարարվել է ՀՀ ԿԲ կողմից, որի արդյունքում ապահովվել է շրջանառվող կանխիկի զգալի աճ: Կտրուկ ավելացել է նաև ՀՀ կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի ծավալը. 2006 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 226.8 մլրդ դրամ՝ նախորդ տարեվերջի համեմատությամբ ավելանալով 71.6 մլրդ դրամով կամ 46.1%-ով: 2005 թ. ՀՀ կենտրոնական բանկից դուրս գտնվող կանխիկ դրամի ծավալն աճել էր 47.1 %-ով, 2004 թ.՝ 9.0%-ով, իսկ 2003 թ.՝ 5.2%-ով:



Գրաֆիկ 3.5
ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի շարժը 2003 - 2006 թթ. (մլն ՀՀ դրամ)

Ինչպես նախորդ տարիներին, 2006 թ. հունվարին ևս տեղի է ունեցել կանխիկի ծավալի սեզոնային նվազում. ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 8.4%-ով, նախորդ տարվա 13.5%-ի փոխարեն, որից հետո պահպանվել է կանխիկ զանգվածի համեմատաբար կայուն մակարդակ: Աճի տեմպերը մեծացել են երրորդ եռամսյակում: Դեկտեմբերին դրսևորվել է կանխիկ դրամի նկատմամբ պահանջարկի սեզոնային աճ, որի արդյունքում կանխիկը, նախորդ ամսվա համեմատ, ավելացել է 16.6%-ով:

Փողի զանգվածի համեմատ շրջանառությունում կանխիկ դրամի ծավալի աճի առաջանցիկ տեմպերը հանգեցրել են փողի զանգվածում կանխիկի տեսակարար կշռի ավելացմանը: Տարեվերջի դրությամբ բանկային համակարգից դուրս կանխիկ դրամը կազմել է փողի զանգվածի 43.5%-ը՝ նախորդ տարվա 39.5%-ի փոխարեն:

Ի տարբերության փողի զանգվածի՝ դրամային զանգվածում կանխիկի տեսակարար կշիռը նվազել է 2.4 տոկոսային կետով՝ տարեվերջին կազմելով 61.9%: Դրամի արժևորման կայուն վարքագիծը, տնտեսության դրամայնացման գործընթացը հանգեցրել են փողի զանգվածի դրամային տարրի աճի ավելի բարձր տեմպերի: Արդյունքում, այս ցուցանիշը, անցումային տնտեսությամբ մի շարք երկրների համանման ցուցանիշների համեմատությամբ, բավականին բարձր է:

Կանխիկի տեսակարար կշիռը փողի զանգվածում [1] (%)


Երկիր	2004	2005	2006
Ղրղզստան	57.2	61.2	60.0
Հայաստան	34.5	39.5	43.5
Ադրբեջան	32.7	30.4	39.0
Վրաստան	40.5	38.2	30.8
Ուկրաինա	33.7	31.2	28.9
Ռուսաստան	29.0	27.8	27.4
Մոլդովա	31.4	28.9	26.3
Տաջիկստան	40.5	28.5	19.1
Բուլղարիա	22.3	20.9	18.9
Լատվիա	22.0	19.4	17.2
Բելառուս	15.4	16.2	16.2
Ղազախստան	23.2	19.9	16.2
Էստոնիա	13.2	10.6	9.5

2006 թ. 7.8%-ով ավելացել է ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառության ծավալը և կազմել 579.1 մլրդ դրամ: Ընդ որում, ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղի մուտքերն աճել են 4.1%-ով և կազմել 253.8 մլրդ դրամ, իսկ ելքերը՝ 10.9%-ով և կազմել 325.3 մլրդ դրամ:

ՀՀ կենտրոնական բանկը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում գործող բանկերի ու դրանց մասնաճյուղերի դրամարկղային սպասարկումն իրականացրել է ՀՀ ԿԲ գլխավոր գրասենյակի դրամարկղի և Գորիսի, Վանաձորի ու Հրազդանի (Ծաղկաձորի) տարածքային դրամարկղային կենտրոնների միջոցով:

Աշխատանքներ են տարվել նաև նոր դրամարկղային հանգույցի ստեղծման համար, որը կապահովի ՀՀ կենտրոնական բանկի հաճախորդների առավել արդյունավետ սպասարկումը:

[1] *Աղյուսակի տվյալները վերցված են IFS (International Financial Statistics) վիճակագրական ծառայությունից:*




Գրաֆիկ 3.6
ՀՀ կենտրոնական բանկի դրամարկղային շրջանառությունը

Տարածքային դրամարկղային կենտրոնների գործունեության մեջ էական փոփոխություններ չեն նկատվել: Ինչպես և նախորդ տարի, 2006 թ. ՏԴԿ-ներն ապահովել են ՀՀ կենտրոնական բանկի ընդհանուր դրամարկղային շրջանառության 18.9%-ը: Իսկ տարածքային դրամարկղային կենտրոնների մեջ առավել մեծ տեսակարար կշիռն ունեցել է Գորիսի ՏԴԿ-ն, որին բաժին է ընկել ՏԴԿ-ների շրջանառության ընդհանուր ծավալի 50.1%-ը:

Տարածքային դրամարկղային կենտրոնների միջոցով առավելապես իրականացվել են կանխիկի ելքագրման գործառնություններ՝ տրամադրելով դրանք ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում գործող բանկերին ու դրանց մասնաճյուղերին: ՏԴԿ-ների դրամարկղային ելքերի ծավալը կազմել է դրանց ընդհանուր դրամարկղային շրջանառության ծավալի շուրջ 90%-ը:

Նմանատիպ առանձնահատկություն է ունեցել նաև առևտրային բանկերի դրամարկղային շրջանառությունը: ՀՀ մարզերում և ԼՂՀ-ում գործող առևտրային բանկերի և դրանց մասնաճյուղերի դրամարկղային ելքերը գերազանցել են մուտքերը:




1. Երևան, 2. Արմավիր, 3. Կոտայք, 4. Արարատ, 5. Վայոց ձոր, 6. Լոռի, 7. Շիրակ, 8. Արագածոտն, 9. Գեղարքունիք, 10. ԼՂՀ, 11. Տավուշ, 12. Սյունիք

Գրաֆիկ 3.7
Առևտրային բանկերի դրամարկղային ելքերի և մուտքերի հարաբերակցությունը հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում (%)

Միայն Երևանում գործող առևտրային բանկերի դրամարկղային մուտքերն են գերազանցել ելքերը (6%-ով):

Շրջանառության մեջ կանխիկի ծավալի աճի բարձր տեմպը էական ազդեցություն է թողել կանխիկի տեսակային կառուցվածքի վրա, քանի որ աճը հիմնականում ապահովվել է բարձր անվանական արժեքներով դրամանիշերի հաշվին: ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկի աճի 92%-ը բաժին է ընկել 10000, 20000 և 50000 դրամ անվանական արժեքներով թղթադրամներին: Վերջիններիս տեսակարար կշիռը շրջանառությունում գտնվող կանխիկի ընդհանուր ծավալում ավելացել է 21.6 տոկոսային կետով և տարեվերջին կազմել 66.4%:

Շրջանառության մեջ առավել մեծ չափով աճել է 50000 դրամանոց թղթադրամի ծավալը՝ տարվա ընթացքում ավելանալով 9.8 անգամ և տարեվերջին կազմելով 15.7 մլրդ ՀՀ դրամ:



Գրաֆիկ 3.8
ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի տեսակային կառուցվածքը


Նշված անվանական արժեքներով թղթադրամների՝ շրջանառության մեջ գտնվող ծավալի աճի պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը

բավարարել է դրանց նկատմամբ ձևավորված տնտեսության պահանջը: Այսինքն, ՀՀ ԿԲ կողմից բավարարվել են առևտրային բանկերի ներկայացրած կանխիկ դրամի ստացման հայտերում նշված գումարները՝ ըստ յուրաքանչյուր անվանական արժեքի:

Տարվա ընթացքում շուրջ 4.5 անգամ ավելացել է նաև 500 դրամանոց մետաղադրամի ծավալը:

Մնացած բոլոր անվանական արժեքներով թղթադրամների և մետաղադրամների տեսակարար կշիռը շրջանառության մեջ գտնվող կանխիկի ծավալում նվազել է:

Շրջանառության մեջ գրեթե դադարել է 10, 25, 50, 100 և 200 դրամ անվանական արժեքներով հետկանչված թղթադրամների փոխարինման գործընթացը: Դրանց ընդհանուր զանգվածը շրջանառության մեջ 2006 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 536.5 մլն դրամ կամ ՀՀ ԿԲ-ից դուրս կանխիկ դրամի ընդհանուր ծավալի 0.24%-ը:



Գրաֆիկ 3.9
Շրջանառության մեջ մետաղադրամների տեսակային կառուցվածքը[2]

Շրջանառության մեջ գտնվող կանխիկ դրամի տեսակային կառուցվածքի նշված փոփոխությունների արդյունքում «պայմանական միջին դրամանիշն»[3] աճել է՝ տարեվերջին կազմելով 1852 դրամ:

Հնամաշ դրամանիշերի փոխարինում

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շրջանառությունից հանել և փոխարինել է նորով շուրջ 25.6 մլրդ դրամի կամ 10.5 մլն հատ հնամաշ դրամանիշեր, որոնք կազմում են տարվա ընթացքում ՀՀ ԿԲ վերադարձրած դրամանիշերի 10%-ը: Նախորդ տարվա համեմատությամբ՝ ՀՀ ԿԲ կողմից շրջանառությունից դուրս բերված հնամաշ դրամանիշերի ծավալը նվազել է 33.6%-ով, ինչը պայմանավորված է շրջանառության մեջ գտնվող թղթադրամների զանգվածի՝ նախորդ տարվա ընթացքում զգալիորեն թարմացմամբ: Գրեթե ավարտվել է նաև շրջանառությունից հետկանչված թղթադրամների փոխարինման գործընթացը: Տարվա ընթացքում ՀՀ ԿԲ կողմից շրջանառությունից դուրս են բերվել նաև 10-200 դրամանոց հնամաշ մետաղադրամները, որոնց ծավալը, սակայն, դեռևս չնչին է:

Հուշադրամների թողարկում

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը թողարկել է թանկարժեք մետաղներից պատրաստված մի շարք հուշադրամներ, որոնք նվիրված են տարբեր հիշարժան իրադարձություններին:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից թողարկվել են հետևյալ հուշադրամները.

- Կոմիտասին (Սողոմոն Սողոմոնյան, 1869-1935 թթ.) նվիրված՝ 10000 դրամ անվանական արժեքով «Կոմիտաս» ոսկե հուշադրամ,
- Հայաստանի Հանրապետության անկախության հռչակման 15-ամյակին (1991 թ. սեպտեմբերի 21) նվիրված «Հայոց պետականություն» շարքի՝ 5000 դրամ անվանական արժեքով «ՀՀ անկախություն 15-ամյակ» արծաթե հուշադրամ,
- «Միջազգային բևեռային տարի 2007-2008» միջազգային ծրագրով՝ 100 դրամ անվանական արժեքով «Միջազգային բևեռային տարի» արծաթե հուշադրամ,
- Համազասպ Բաբաջանյանի (1906-1977 թթ.) ծննդյան 100-ամյակին նվիրված՝ 1000 դրամ անվանական արժեքով «Մարշալ Համազասպ Բաբաջանյան» արծաթե հուշադրամ,
- Շախմատի 37-րդ համաշխարհային օլիմպիադայում Հայաստանի տղամարդկանց հավաքականի հաղթանակի առթիվ՝ 10000 դրամ անվանական արժեքով «Շախմատի 37-րդ օլիմպիադա» ոսկե հուշադրամ,
- Հակոբ Գյուրջյանի (1881-1948 թթ.) ծննդյան 125-ամյակին նվիրված՝ 10000 դրամ անվա-

[2] Այլ մետադրամներն ընդգրկում են 10, 20, 50 լումա, 1, 3, 5 և 100 դրամ անվանական արժեքներով (Չարենց-100, Շախմատի 32-րդ օլիմպիադա) մետաղադրամները, ինչպես նաև 25000 դրամ անվանական արժեքով «Անահիտ» ոսկե մետաղադրամը:

[3] Պայմանական միջին դրամանիշի հաշվարկի մեջ ներառվել են 10 - 50000 դրամ անվանական արժեքներով ՀՀ դրամանիշերը:

նական արժեքով «Հակոբ Գյուրջյան» ոսկե հուշադրամ,

- Հովհաննես Այվազովսկուն (1817-1900 թթ.) նվիրված «Աշխարհի նկարիչները» միջազգային ծրագրով՝ 100 դրամ անվանական արժեքով «Հովհաննես Այվազովսկի» արծաթե հուշադրամ,
- «Կովկասի կենդանական աշխարհ» միջազգային ծրագրով՝ կովկասյան անտառակատու, լայնականջ ոզնի, անդրկովկասյան գորշ արջ և միջերկրածովային կրիա պատկերող՝ 100 դրամ անվանական արժեքով արծաթե հուշադրամներ:

Շարունակվել են նախորդ տարում սկսված միջոցառումները, որոնց նպատակն է՝ լայն հանրությանը ծանոթացնել Հայաստանի դրամաշրջանառության պատմությանը և հայկական դրամներին: Կազմակերպվել է շրջիկ ցուցահանդես Իջևան քաղաքում: Հայաստանի Հանրապետության անկախության 15-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում ՀՀ ԿԲ կողմից կազմակերպվել է հուշադրամների ցուցահանդես-վաճառք:


Դրամանենգության դեմ պայքար

Տարվա ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը հայտնաբերված կեղծ թղթադրամների յուրաքանչյուր դեպքի մասին տեղեկացրել է ՀՀ տարածքում գործող բանկերին և ՀՀ ոստիկանության համապատասխան մարմիններին:

Բանկային համակարգում հայտնաբերված կեղծ դրամանիշերի թիվը, նախորդ տարվա համեմատությամբ, նվազել է 2%-ով: Ընդ որում, հատկանշական է, որ բացի կեղծ թղթադրամներից բանկային համակարգում հայտնաբերվել են նաև 100, 200 և 500 դրամ անվանական արժեքներով կեղծ մետաղադրամներ:

Հայտնաբերված կեղծ դրամանիշերի մեջ քանակային առումով ամենամեծ տեսակարար կշիռն ունեցել են 200 դրամանոց մետաղադրամը և 1000 դրամ անվանական արժեքով թղթադրամը:

ՀՀ կենտրոնական բանկը միջոցառումներ է ձեռնարկել նաև կեղծ դրամանիշերի ուսումնասիրման տեխնիկական միջոցների կատարելագործման ուղղությամբ:



Գրաֆիկ 3.10
ՀՀ բանկային համակարգում հայտնաբերված կեղծ դրամանիշերի տեսակային կառուցվածքը

3.3. ՀՀ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԵՎ ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական համակարգի օրենսդրական դաշտի փոփոխություններ

2006 թվականին ՀՀ Ազգային ժողովն ընդունել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից նախաձեռնված օրենքների նախագծերի հետևյալ փաթեթները.

1. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» թիվ ՀՕ-76, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-77, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» թիվ ՀՕ-78 և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-79 ՀՀ օրենքներ.

2. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-69, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-70 ՀՀ օրենքներ.

3. «Ճանապարհային վճարի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-73, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-74, «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» թիվ ՀՕ-75 ՀՀ օրենքներ.

4. «Ինկասացիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-101 ՀՀ օրենք.

5. «Արժութային կարգավորման և արժութային վերահսկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-39 ՀՀ օրենքը և դրա ընդունմամբ պայմանավորված այլ օրենքներ.

6. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքներ:

Առաջին կետում նշված օրենքները նպատակ ունեն ոչ փաստաթղթային ձևով թողարկվող պետական արժեթղթերի պահառության և շրջանառության բնագավառում առաջացած խնդիրների հետ կապված՝ ՀՀ օրենքներում կատարել համապատասխան փոփոխություններ և լրացումներ: Մասնավորապես՝

1. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդիրների լուծմանը.

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 235-րդ հոդվածի համաձայն՝ «Գրավի իրավունքը ծագում է գրավի պայմանագիրը կնքելու պահից, իսկ այն դեպքերում, երբ գրավի իրավունքը ենթակա է պետական գրանցման, ապա այն գրանցելու պահից:»: Ըստ կատարված փոփոխությունների՝ ոչ փաստաթղթային ձևով թողարկվող արժեթղթերով կնքվող գործարքների արդյունքում իրավունքները գործնականում կարող են ծագել միայն պահառուի (ենթապահառուի) մոտ համապատասխան գրառում կատարելու պահից: Ընդ որում, այդպիսի գրառումը երբեք չի կարելի համարել պետական գրանցում:

Հետևաբար, ոչ փաստաթղթային արժեթղթերի գրավի իրավունքի ծագման պահի հետ կապված առկա էր անհամապատասխանություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի հետ:

- Ներկայումս պետական արժեթղթերը թողարկվում են ոչ փաստաթղթային ձևով, և դրանց գրավի հետ կապված գործառնություններն իրականացվում են երկմակարդակ պահառուական համակարգի միջոցով: Արդյունքում, պետական արժեթղթերի պարագայում զուտ տեխնիկապես հնարավոր չէր դրանց հաջորդող գրավը, ինչը հակասության մեջ էր մտնում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 236-րդ հոդվածի հետ:
- Անհրաժեշտ էր հստակեցնել նաև այն հարցը, որ գրավադրված արժեթղթերի մարման դեպքում գրավադրված են համարվում դրանց մարման արդյունքում առաջացած դրամական միջոցները:

2. «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ պարբերության համաձայն՝ «Ամրագրելու միջոցով հավաստված իրավունքների և իրավատերերի պաշտոնական ամրագրման, գրառումների փաստաթղթային հաստատման ու *ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը որոշվում է օրենքով կամ օրենքով սահմանված կարգով:»*: Սակայն գոյություն չուներ այնպիսի օրենք, որը համահունչ լիներ վերը նշված դրույթին և նախատեսեր, թե ինչպես է որոշվելու ոչ փաստաթղթային արժեթղթերով կատարվող գործառնությունների կարգը:

Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ գործառնությունների կարգն ընդամենը սահմանելու էր, թե արժեթղթերի դեպո հաշիվներից միջոցների շարժը նախաձեռնելու համար կողմերն ինչպես պետք է պահառուական համակարգին ներկայացնեն համապատասխան դեպո հանձնարարականները, ինչպես նաև դրանց ձևը և ներկայացման կարգը:

3. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգի 11-րդ գլուխը սահմանում է, որ պարտատոմսերի բռնագանձման գործառնությունները կատարվում են օրենքով սահմանված կարգով: Սակայն գոյություն չուներ նման օրենք:

Քանի որ պարտատոմսերի բռնագանձման կարգով սահմանվելու էին այնպիսի պահանջներ, որոնցով պետք է առաջնորդվեն ոչ միայն Կենտրոնական բանկը, առևտրային բանկերը, այլ նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, ապա դրա սահմանումը միայն Կենտրոնական բանկի խորհրդի կողմից վիճելի է, քանի որ ԿԲ-ն չի կարող սահմանել այլ պետական մարմինների կողմից կատարման ենթակա նորմեր:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասը՝ օրենքը սահմանում է, որ Պարտապանին պատկանող ոչ փաստաթղթային ձևով թողարկված Հայաստանի Հանրապետության պետական արժեթղթերի վրա արգելանք դնելու, դրանք առգրավելու և հարկադիր իրացնելու համար հարկադիր կատարողի կողմից պահառուին (ենթապահառուին) ներկայացվող դեպո-հանձնարարականների ձևին ներկայացվող պահանջները, դրանց ներկայացման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը՝ համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության հետ:

4. «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքն ուղղված է հետևյալ խնդրի լուծմանը.

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի մարտի 30-ի թիվ 75-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական պարտատոմսերի գրավի հետ կապված գործառնությունների իրականացման մասին» կարգը, գրավադրված պարտատոմսերի մարման արդյունքում գոյացած դրամական միջոցների հետ կապված, սահմանում է, որ՝ հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուն պարտավոր է բանկ ներկայացնել գրավի առարկա հանդիսացող պարտատոմսերի մարումից առաջացած դրամական միջոցները երրորդ անձ հանդիսացող առևտրային բանկում հաշվառելու վերաբերյալ համաձայնագիր: Ընդ որում, եթե հինգ բանկային օրվա ընթացքում գրավատուի ենթապահառուի կողմից չի ներկայացվում նշված համաձայնագիրը, ապա Կենտրոնական բանկն իրավասու է գրավադրված գումարները փոխանցել *նոտարի դեպոզիտ*:

Այս պահանջը և դրա իրականացման կարգը առավել նպատակահարմար էր սահմանել «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքով:

Երկրորդ կետում նշված օրենքներից «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված էր, նախ՝ տվյալ օրենքի և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի հակասությունները վերացնելու անհրաժեշտությամբ:

Օրենքի անհրաժեշտությունը պայմանավորված էր նաև նրանով, որ.

1. Մինչ այդ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը սահմանվել է ԿԲ նախագահի անհատական ակտով, սակայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետք է սահմանվի նորմատիվ իրավական ակտով: Իսկ դրա՝ օրենքով սահմանված ժամկետից շուտ ուժի մեջ մտնելու հնարավորության սահմանումը կապված է այն հանգամանքի հետ, որ սահմանված դրույքները կիրառվում են տարբեր անձանց և մարմինների կողմից հաշվարկներ կատարելու նպատակով հենց դրանց սահմանման պահից: Հետևաբար, անտրամաբանական կլինի այս պարագայում խոսել նորմատիվ ակտերի գրանցման, հրապարակման և ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետների և ընթացակարգերի պահպանման անհրաժեշտության մասին:

2. Պարտադիր պահուստավորման նորմատիվը ոչ միայն զուտ բանկերի համար սահմանվող տնտեսական նորմատիվ է, այլև ԿԲ կողմից իրականացվող դրամավարկային քաղաքականության գործիք: Հետևաբար, հաճախ առաջանում են այնպիսի իրավիճակներ, երբ անհրաժեշտ է, որ ԿԲ-ն անմիջապես միջամտություն իրականացնի շուկայի նկատմամբ՝ սահմանելով պարտադիր պահուստավորման նոր չափ, որը պետք է ուժի մեջ մտնի սեղմ ժամկետներում:

3. Ինչ վերաբերում է հատուկ տնտեսական նորմատիվներին, ապա դրանց՝ սեղմ ժամկետներում ուժի մեջ մտնելու հնարավորության սահմանումը պայմանավորված է բանկային համակարգում հնարավոր ճգնաժամային իրավիճակներից դուրս գալուն ուղղված միջոցների կիրառման հրատապությամբ:

4. Բացի այդ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ օրենքով նախատեսված թե՛ բանկային տոկոսի հաշվարկային դրույքը, թե՛ պարտադիր պահուստավորման նորմատիվը և թե՛ հատուկ տնտեսական նորմատիվները սահմանող Կենտրոնական բանկի իրավական ակտերն այնպիսի բնույթ չունեն, որ որևէ հակասություն առաջանա դրանց և ՀՀ սահմանադրության, ՀՀ օրենքների կամ այլ իրավական ակտերի միջև, քանի որ դրանք սահմանում են ընդամենը թվային մեծություններ, որոնց համար որևէ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանափակումներ սահմանված չեն: Այս կապակցությամբ անհրաժեշտ է նշել, որ Կենտրոնական բանկի՝ վերը նշված ակտերի գրանցման պրակտիկան ցույց է տվել, որ մինչև այժմ դրանց՝ ՀՀ արդարադատության նախարարությունում իրավական փորձաքննության արդյունքներով ՀՀ գործող օրենսդրության հետ որևէ հակասություն չի բացահայտվել (ինչը տրամաբանական է՝ հաշվի առնելով մասնավորապես վերը նշված նկատառումները): Իսկ տեսականորեն կարելի է ենթադրել միայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հետ ոչ հայեցակարգային, այլ օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման առնչությամբ հնարավոր հակասություններ, ինչը, կարծում ենք, այնքան էլ արդիական չէ՝ հատկապես հաշվի առնելով խնդրո առարկա ակտերի հնարավոր ծավալը:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը, պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների և պարտադիր պահուստավորման ենթակա միջոցների չափը գերազանցող մասի դիմաց սահմանելով տոկոսադրույք և վճարելով տոկոսներ, հանդես է գալիս որպես բանկ, և այս դեպքում, համաձայն «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ մասի, տվյալ որոշումները անհրաժեշտ է ընդունել ներքին իրավական ակտերի տեսքով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի կողմից:

Երրորդ կետում նշված օրենքների ընդունումը պայմանավորված էր «Ճանապարհային վճարի մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» և «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» ՀՀ օրենքները «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքին, մասնավորապես՝ դրա 6-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ, որի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում ապրանքների (գույքի) իրացման, ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման, գույքի օգտագործման փողային գնանշումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության դրամով:

Չորրորդ կետում նշված օրենքի ընդունումն առաջին հերթին պայմանավորված էր մի շարք սուբյեկտների կողմից կանխիկ դրամի փոխադրումից ծագող հարաբերությունների կարգավորմամբ: «Ինկասացիայի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը սահմանում էր, որ այդ օրենքը տարածվում է միայն բանկերի և վարկա-

յին կազմակերպությունների մասնակցությամբ հարաբերությունների վրա: Օրենքում նշված ձևակերպումը չէր կարգավորում այլ կազմակերպությունների (օրինակ՝ փոխանակման կետ – ինկասացիոն կազմակերպություն) մասնակցությամբ հարաբերությունները, եթե բանկը կամ վարկային կազմակերպությունը չէր մասնակցում այդ հարաբերություններին, ինչը գործնականում լուրջ խնդիրներ էր առաջացնում: Միաժամանակ, անհրաժեշտություն էր առաջացել լրացուցիչ պահանջներ սահմանել ինկասացիոն կազմակերպությունների համար, ինչն ավելի ապահով կդարձնի դրանց գործունեությունը:

2006 թվականին ընդունվել է «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքը:

Այդ օրենքով ուժը կորցրած է ճանաչվել «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասը, ըստ որի՝ իրենց կանոնադրական կապիտալում օտարերկրյա ներդրողների 49 տոկոսից ավելի մասնաբաժին ունեցող ապահովագրական կազմակերպությունները չէին կարող Հայաստանի Հանրապետությունում իրականացնել կյանքի ապահովագրություն, պարտադիր ապահովագրություն, պարտադիր պետական ապահովագրություն, ինչպես նաև պետական և տեղական կազմակերպությունների գույքային շահերի ապահովագրություն:

Փաստորեն այս դրույթը սահմանափակում էր օտարերկրյա կապիտալի մուտքն ապահովագրության նշված բնագավառներ, ինչը չի բխում հանրապետության որդեգրած՝ ազատ շուկայական տնտեսություն ունենալու ռազմավարությունից:

Միևնույն ժամանակ, այս դրույթը համահունչ չէր տնտեսական համագործակցության վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կողմից կնքված մի շարք միջազգային պայմանագրերին, մասնավորապես՝ Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու համաձայնագրի պայմաններին:

Հինգերորդ կետում նշված օրենքը ՀՀ Ազգային ժողովն ընդունել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը սահմանում է գնանշում, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձ, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձ, արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձ հասկացությունները, ինչպես նաև նպատակ ունի վերացնելու օրենքի գործողության ընթացքում ի հայտ եկած թերությունները:

Օրենքի համաձայն՝ գնանշում է համարվում ցանկացած ապրանքի (գույքի), ծառայության, գույքի օգտագործման, աշխատանքի կատարման կամ աշխատավարձի և (կամ) դրան հավասարեցված վճարումների գնի, արժեքի կամ վարձատրության չափի հայտարարումը, ամրագրումը, սահմանումը կամ որևէ ձևով այլ անձանց հայտնելը:

Օրենքը սահմանում է, որ ՀՀ տարածքում սպառողական վարկերն ու փոխառությունները կարող են տրամադրվել միայն ՀՀ դրամով, ինչը նպատակ ունի նվազեցնելու հասարակության մեջ դոլարայնացման մակարդակը:

Օրենքը լրացվել է արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող, արտարժույթի առուվաճառք իրականացնող, արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձանց գործունեությունը կարգավորող նոր հոդվածով: Համաձայն այդ հոդվածի՝ արտարժույթի դիլերային-բրոքերային գործունեություն իրականացնող անձինք և արտարժույթի առուվաճառք իրականացնող անձինք պետք է լինեն իրավաբանական անձ:

Օրենքը նախատեսում է, որ խանութում արտարժույթի առուվաճառքի լիցենզիա կարող է ստանալ միայն տվյալ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձը, առևտրի կենտրոնում՝ միայն առևտրի իրականացման կազմակերպիչը, իսկ հյուրանոցում՝ հյուրանոցային ծառայություններ մատուցող իրավաբանական անձը: Նշված նորմի նախատեսումը նպատակ ունի բարձրացնելու փոխանակման կետերի կողմից արժութային օրենսդրության նորմերի պահպանման պատասխանատվությունը և զերծ մնալու իրավախախտումներից: Օրինակ, եթե արտարժույթի առուվաճառք է իրականացնում խանութում առուվաճառք չիրականացնող իրավաբանական անձը, ապա նրա համար կարևոր չէ տվյալ խանութում փոխանակման կետի առկայությունը: Նա շահագրգռված է միայն իր բիզնեսով: Իսկ խանութում առուվաճառք իրականացնող իրավաբանական անձի համար կարևոր է նաև տվյալ խանութում փոխանակման կետի առկայությունը, քանի որ դա օժանդակում է խանութում առևտրային գործունեությանը և նպաստում դրան:

Օրենքով սահմանվում է, որ արժութային գործակալներ են նաև վարկային կազմակերպությունները ու դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունները, որոնք հսկողություն են իրականացնում արժութային օրենսդրության նորմերի պահպանման նկատմամբ:

«Արժութային կարգավորման և արժութային վերահսկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի հետ միաժամանակ ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը: Օրենսգրքում փոփոխությունների կատարումը պայմանավորված էր Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների նկատմամբ պաշտոնատար անձանց կողմից վերահսկողություն իրականացնելիս (հսկիչ գնումների ձևով) պատասխանատվություն չնախատեսելու հետ կապված հարաբերությունների կարգավորմամբ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արժութային հարաբերությունները կարգավորող օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները խախտելու համար ավելի խիստ պատասխանատվության միջոցներ սահմանելու անհրաժեշտությամբ:

«Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում» լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսվել է առանց համապատասխան լիցենզիայի փոխանակման կետի գործունեությամբ զբաղվելու հանցակազմ, որը պայմանավորված էր նման իրավախախտումների դեմ արդյունավետ պայքար մղելու անհրաժեշտությամբ:

Վեցերորդ կետում նշված «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին: Օրենքի փոփոխությունները կարելի է բաժանել 2 մասի՝

1. Օրենքի համապատասխանեցումը ՀՀ Սահմանադրությանը (փոփոխություններով).

2. ՀՀ կենտրոնական բանկի կողմից որդեգրված՝ գնաճի կառավարման նոր մոտեցման՝ գնաճի նպատակադրման ռազմավարության սահմանում:

2-րդ կետում նշված փոփոխությունը հանգում է հետևյալին՝

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունությունն ապահովելն է, և Կենտրոնական բանկի կողմից իրականացվող միջոցառումներն ուղղվում են այդ խնդրի իրագործմանը: Եթե այլ դրույթներ հակասում են հիմնական խնդրի իրականացմանը, ապա նախապատվությունը պետք է տրվի գների կայունության ապահովմանը: Դրա հետևանքով «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում ամրագրված որոշակի դրույթների (օրինակ՝ Օրենքի 6-րդ հոդվածը կամ Կենտրոնական բանկի կողմից դրամավարկային քաղաքականության իրականացմանը վերաբերող այլ դրույթներ) կիրառումը ներկա տնտեսական պայմաններում հակասության մեջ էր մտնում 4-րդ հոդվածով ամրագրված խնդրի հետ: Այդ պատճառով անհրաժեշտություն էր առաջացել հստակություն մտցնել նման դրույթներում և օրենսդրորեն ապահովել ԿԲ կողմից իր հիմնական խնդրի իրականացման լիարժեք հիմքերը:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից որդեգրված՝ գնաճի նպատակադրման ռազմավարությունը նույնպես Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված իր հիմնական խնդրի իրականացման նպատակ է հետապնդում:

Օրենքի 4-րդ հոդվածի հստակեցումից բխող՝ գնաճի նպատակադրման ռազմավարության տեսակետից իրականացվող դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը ճկունության և կանխատեսելիության առավել բարձր մակարդակ է ակնկալում, որի ապահովման առանցքային ուղենիշը գնաճի կանխատեսումներն են երկարաժամկետ հատվածի համար: Նշված խնդրից ելնելով՝ ՀՀ Ազգային ժողովը փոփոխություն է կատարել նաև «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքում:

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը Եվրոմիության օրենսդրության հիման վրա ***մշակել է «Ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի նախագիծը,*** որը էապես տարբերվում է գործող «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքից: Նախագծի հիմնական նորամուծություններն են.

1. Ապահովագրության դասակարգում (ապահովագրության տեսակներ, դասեր և ենթադասեր): Նախագծում տրվել է ապահովագրության դասակարգումը ըստ տեսակների և դասերի (ենթադասերի), ինչը համահունչ է Եվրոպական օրենսդրության (դիրեկտիվներ և առանձին երկրների օրենսդրություններ) մոտեցումներին և կիրառվում է Եվրոմիության անդամ բոլոր երկրներում: Օրենքը թույլ է տալիս առավել հստակեցնել լիցենզավորման և վերահսկողության գործընթացները՝ առանձնացված մոտեցում ցուցաբերելով առանձին դասերով ապահովագրական գործունեություն իրականացնող ընկերություններին:

2. Կյանքի և ոչ կյանքի ապահովագրական գործունեությունների տարանջատում: Նախագծում առաջարկվել է մոտեցում, ըստ որի՝ ապահովագրական ընկերություններին արգելվում է իրականացնել միաժամանակ կյանքի և ոչ կյանքի ապահովագրություն:

3. Ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարում: Նախագծում ներմուծվել են ապահովագրական ընկերությունների կորպորատիվ կառավարման սկզբունքները, որոնք համահունչ են միջազգային լավագույն փորձին, մասնավորապես՝ համապատասխանում են Եվրոպական օրենսդրությանը և ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի հիմնական սկզբունքներին:

4. Աուդիտորսկան խնդիր: Նախագծում սահմանվել է աուդիտորսկնգի գաղափարը, ինչը թույլ է տալիս ապահովագրական ընկերություններին իրենց որոշ գործառույթներ (մասնավորապես՝ հաշվապահական հաշվառում, ակտուարի գործառույթներ, ակտիվների կառավարում և այլն) փոխանցել մեկ այլ ընկերության, և սահմանվել են այդ ընկերության նկատմամբ պահանջները և վերահսկողության մեխանիզմները:

5. Ապահովագրական միջնորդներ: Նախագծում առաջարկվել են ապահովագրական միջնորդության կարգավորման հստակ մեխանիզմներ, որոնք լիովին համահունչ են միջազգային լավագույն փորձին, համապատասխանում են Եվրոպական դիրեկտիվների պահանջներին: Մասնավորապես, ապահովագրական միջնորդներ կարող են լինել թե՛ իրավաբանական և թե՛ ֆիզիկական անձինք: Հստակեցվել են նաև ապահովագրական միջնորդության սահմանները, որոնց որոշ մասի (ռիսկային) իրականացման համար ապահովագրական միջնորդներին ներկայացվում են որոշակի նորմատիվային պահանջներ:

6. Ապահովագրական գաղտնիք: Նախագծում ներմուծվել է ապահովագրական գաղտնիքի գաղափարը, սահմանվել են երրորդ անձինք, որոնց վրա չեն տարածվում ապահովագրական գաղտնիքի սահմանափակումները:

7. Ապահովագրական ընկերությունների լուծարում: Նախագծում տրվել են ապահովագրական ընկերությունների լուծարումը կանոնակարգող դրույթները:

8. Պատժամիջոցներ: Նախագծում վերանայվել են պատժամիջոցները: Սահմանվել են ոչ թե կոնկրետ պատժամիջոցներ, այլ պատժամիջոցի առավելագույն սահմաններ, իսկ կոնկրետ պատժամիջոցի կիրառումը և չափը սահմանում է վերահսկողը՝ ըստ էականության:

9. Վերակազմակերպում: Նախագծում կանոնակարգվել է նաև ապահովագրական ընկերությունների վերակազմակերպման գործընթացը:

ՀՀ կենտրոնական բանկը մշակել և ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարված հետևյալ փոփոխությունները.

1. «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ մամուլով և (կամ) զանգվածային լրատվության այլ միջոցներով հրապարակում է բանկերի և (կամ) առանձին բանկի հանդեպ խոշոր պարտավորություն(ներ) ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումներն ու անունները: Ընդ որում, խոշոր պարտավորություն է համարվում Կենտրոնական բանկի սահմանած՝ բանկի ընդհանուր կապիտալի նվազագույն չափի 5 տոկոս և ավելի չափով պարտավորությունը: Նախագծով առաջարկվել է՝ փոխել բանկի հանդեպ հաճախորդների խոշոր պարտավորության չափը՝ սահմանելով 20 միլիոն ՀՀ դրամ: Փոփոխության նպատակն է՝ օրենքում պարտավորության չափը չկապել բանկի ընդհանուր կապիտալի չափի հետ, քանի որ դա հաճախ փոխվում է:

2. Բանկի և (կամ) բանկի ղեկավարի կողմից թույլ տրված օրենքների կամ այլ իրավական ակտերի պահանջների խախտումների և դրանց համար Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկի և (կամ) բանկի ղեկավարի նկատմամբ կիրառված պատժամիջոցների մասին որոշումների՝ Հայաստանի Հան-

րապետության կենտրոնական բանկի կամ խախտում թույլ տված բանկի կողմից հրապարակումը բանկային գաղտնիք չդիտարկելը: Նշված փոփոխությունն ավելի թափանցիկ կդարձնի բանկի գործունեությունը և կկանխարգելի իրավախախտումները:

3. Նախագիծը հնարավորություն է տալիս քրեական հետապնդում իրականացնող մարմիններին՝ դատական կարգով բանկային գաղտնիք կազմող տեղեկություն ստանալ քրեական գործով կասկածյալի վերաբերյալ, ինչը նպատակ ունի բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները դատական կարգով հասանելի դարձնել քրեական հետապնդում իրականացնող մարմիններին քրեական դատավարության ավելի վաղ փուլում (օրինակ՝ հետաքննության փուլում):

4. Հաջորդ փոփոխության համաձայն՝ բանկին արգելվում է իր հաճախորդներին տեղեկացնել բանկային գաղտնիք կազմող տեղեկությունները քրեական հետապնդում իրականացնող մարմիններին տրամադրելու փաստի վերաբերյալ: Նշված փոփոխությունը պայմանավորված է միջազգային իրավական փաստաթղթերով (ՖԱՏՖ):

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ կառավարություն է ներկայացրել «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը:

Նախագծերի ներկայացումը պայմանավորված է պարտատոմսերի շուկայի զարգացումը խթանելու համար նախադրյալների ստեղծմամբ, մասնավորապես՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքից առաջարկվում է հանել այն դրույթը, համաձայն որի՝ ընկերության գրավով ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների ընդհանուր գումարը չպետք է գերազանցի ընկերության կանոնադրական կապիտալը: Բացի այդ, նշված օրենքի նախագծով վերանում է այն անտրամաբանական կարգավորումը, որի համաձայն բաժնետիրական ընկերության կողմից թողարկված ապահովված պարտատոմսերի անվանական արժեքների ընդհանուր գումարը սահմանափակվում է, իսկ չապահովված պարտատոմսերինը՝ ոչ:

Միաժամանակ, նախագիծը նպատակ ունի վերացնելու «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի տարբեր հոդվածների միջև հակասությունը: Մասնավորապես՝ մի դրույթի համաձայն ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել փաստաթղթային և ոչ փաստաթղթային ձևի պարտատոմսեր, մինչդեռ մյուս դրույթը միանշանակ սահմանում է, որ պարտատոմսը պատրաստվում է տպագրական եղանակով:

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացրել նաև «Կենսաթոշակային բարեփոխումների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որը սահմանում է ներդրվելիք կենսաթոշակային համակարգի ընդհանուր նկարագիրը, յուրաքանչյուր աստիճանում կատարվող սոցիալական վճարների և յուրաքանչյուր աստիճանից ակնկալվող կենսաթոշակների ընդհանուր բնութագիրը:

Բանկային համակարգի կարգավորման դաշտի փոփոխություններ

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկի կողմից մշակվել և փոփոխվել են հետևյալ իրավական ակտերը.

- «Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենքի փոփոխություններին համահունչ փոփոխություններ են իրականացվել մի շարք ենթաօրենսդրական ակտերում: Մասնավորապես՝ «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում, «Բանկում նշանակալից մասնակցություն ձեռք բերելու կամ ղեկավար պաշտոն զբաղեցնելու ուղեցույցում», ինչպես նաև «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններ» կարգում: ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից հաստատվել են «Իրավաբանական անձի կամ իրավաբանական անձի կանոնադրական հիմնադրամում ուղղակի նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց գործունեության ուղղությունները, ոլորտները կամ կառավարման մարմինների որոշումները կանխորոշելու, կամ որոշումների կայացման վրա էապես ազդելու հնարավորություն ունեցող անձանց անուղղակի նշանակալից մաս-

նակից հանդիսանալու չափանիշներ» և «Իրավաբանական անձի հիմնական գործունեության հետ կապված կամ գործադիր տնօրենի անմիջական ղեկավարության ներքո աշխատող, կամ իրավաբանական անձի կառավարման մարմինների կողմից որոշումների կայացման հարցում էական ազդեցություն ունեցող աշխատակիցներին իրավաբանական անձի հետ փոխկապակցված համարելու չափանիշներ» ուղեցույցները: Նշված փոփոխություններն ուղղված են բանկում նշանակալից մասնակցության ձեռքբերման, բանկի խորհրդի անդամների գրանցման գործընթացների լրացուցիչ կարգավորմանը, բանկում արդյունավետ և անկախ ներքին հսկողության ապահովմանն ու կատարելագործմանը:

- ՀՀ տարածքում գործող բանկերում կորպորատիվ կառավարման չափորոշիչների արդյունավետ ներդրման և բանկերի թափանցիկության ապահովման նպատակով հաստատվել է «Բանկերի կողմից իրենց վերաբերյալ տեղեկությունների հրապարակման (տրամադրման) կարգը»: Վերջինս սահմանում է բանկերի կողմից իրենց տնային էջում (ինտերնետային կայքում), ինչպես նաև լրատվական այլ միջոցներով իրենց վերաբերյալ պարտադիր հրապարակման (տրամադրման) ենթակա տեղեկությունները, այդ թվում՝ բանկի կառավարման կառուցվածքի, մասնակիցների, ղեկավարների, մատուցվող ծառայությունների և այլնի վերաբերյալ:
- ՀՀ բանկերի ներդրումային գործիքների բազմազանեցման և նոր գործիքների մեջ ներդրումների խրախուսման նպատակով փոփոխություններ են կատարվել «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում:
- Փոփոխություններ են կատարվել «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» կանոնակարգ 3-ում: Հանվել են ձև թիվ 12 «Բանկի դրամական միջոցների հոսքերի վերաբերյալ» և ձև թիվ 23 «Բանկի սեփականությունը հանդիսացող և վերջինիս գործունեության համար չօգտագործվող նյութական ակտիվների, ոչ նյութական ակտիվների, ինչպես նաև այլ անձանց կանոնադրական կապիտալներում իրականացված ներդրումների գումարների վերաբերյալ» հաշվետվությունները:
- Փոփոխություններ են կատարվել նաև «ՀՀ տարածքում գործող բանկերում կանխիկ դրամով կատարվող գործառնությունները» կանոնակարգ 9-ում:
- Վերանայվել է «Բանկերում վերստուգումների իրականացման ձեռնարկը»՝ հաշվի առնելով գործնականում առաջացած խնդիրները: Ձեռնարկը ներառել է նաև նոր՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրականացում», «Կորպորատիվ կառավարման որակի գնահատում» և «Ռիսկերի կառավարման համակարգի գնահատում» բաժինները:

Ապահովագրական շուկայի կարգավորման դաշտի փոփոխություններ

2006 թ. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ հաստատվել են՝

- «Վերաապահովագրության պահանջները սահմանող կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թ. մայիսի 10-ի թիվ 190-Ն որոշմամբ: Կարգով սահմանվում են չափանիշներ՝ համաձայն որոնց վերաապահովագրողները համարվում են հուսալի:
- «Ապահովագրական պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման կարգը», որը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի հուլիսի 18-ի թիվ 454-Ն որոշմամբ: Վերոնշյալ կարգի հիմնական նպատակն է՝ ապահովագրական պայմանագրերով ստանձնած ապահովագրական ռիսկերի փոխանցման գործընթացի կանոնակարգումը:
- «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանը» և «Ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանի կիրառման հրահանգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 544-Ն որոշմամբ, որի նպատակն է՝ ՀՀ ապահովագրական ընկերությունների հաշվապահական հաշվառման համապատասխանեցումը հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին:
- «Ապահովագրական գործունեություն իրականացնողի լիցենզավորման, մասնաճյուղերի գրանցման և ապահովագրական գործունեու-

թյուն իրականացնողի կանոնադրական կապիտալում բաժնեմաս (բաժնետոմս) կամ փայամասնակցություն ձեռք բերելու համար նախնական համաձայնություն ստանալու կարգը», «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ակտուարի և գործակալի մասնագիտական որակավորման պահանջներն ու որակավորման ստուգման կարգը», «Ապահովագրողի գործունեության երեք տարվա գործարար ծրագրի ներկայացման կարգը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի թիվ 476-Ն որոշմամբ: Վերոնշյալ իրավական ակտով կարգավորվում են ապահովագրական գործունեություն իրականացնողների լիցենզավորման, ինչպես նաև նրանց մասնագիտական որակավորման ստուգման գործընթացները:

- «Ապահովագրական գործունեություն իրականացնողների ղեկավարների, ինչպես նաև գործակալի թեկնածուների մասնագիտական որակավորման ստուգման թեմաների ցանկը»՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի օգոստոսի 1-ի թիվ 477-Ն որոշմամբ:
- «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը» կանոնակարգ 30-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 663-Ն որոշմամբ, որի նպատակն է՝ ֆինանսապես կայուն ապահովագրական ընկերություններ ունենալու համար նորմատիվային դաշտը միջազգային լավագույն փորձին համահունչ դարձնելը:
- «Ապահովագրական պահուստների տեսակները, դրանց ձևավորման կարգը» կանոնակարգ 31-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 664-Ն որոշմամբ, որի նպատակն է՝ ապահովագրական ընկերությունների կողմից ձևավորվող պահուստները համապատասխանեցնել IAIS ստանդարտներին և դրանց հստակ հաշվարկման մեխանիզմների հիման վրա բարձրացնել ապահովագրական ընկերությունների հուսալիությունը:
- «Ապահովագրական ընկերությունների հաշվետվությունները, դրանց լրացման, ներկայացման կարգն ու ժամկետները» կանոնակարգ 32-ը՝ հաստատված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2006 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 716-Ն որոշմամբ, որի նպատակն է՝ ապահովագրական ընկերությունների կողմից որոշակի պարբերականությամբ ՀՀ կենտրոնական բանկ ներկայացվող տեղեկատվության հիման վրա ապահովագրական գործունեության հետ առնչվող ռիսկերի բացահայտումը, ապահովագրական շուկայի վերլուծության իրականացումը, ինչպես նաև ապահովագրական գործունեություն իրականացնողների գործունեության վերաբերյալ վերահսկողական և վերլուծական նպատակներով տեղեկատվության հավաքագրումը:

Արժեթղթերի շուկայի կարգավորման դաշտի փոփոխություններ

2006 թվականին փոփոխություններ և լրացումներ են կատարվել Արժեթղթերի շուկայի կարգավորման կանոնագրքում՝ ուղղված արժեթղթերի շուկայի կարգավորման և վերահսկողության ոլորտների կատարելագործմանը և արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես.

- իրավական հիմքեր են ստեղծվել Կենտրոնական բանկի կողմից բարձր վարկանիշ ստացած ձեռնարկությունների պարտատոմսերով բանկերի միջև ռեպո գործարքների կնքման համար՝ ապահովելով այդ գործընթացի փաստաթղթաշրջանառության էլեկտրոնայնացումը.
- սկսվել են կորպորատիվ արժեթղթերով (այդ թվում՝ օտարերկրյա) պահառության գործունեությունը կարգավորող կանոնների մշակման աշխատանքները, որով հիմքեր են ստեղծվել երկմակարդակ պահառության համակարգի ձևավորման համար.
- սկսվել են բանկերին և վարկային կազմակերպություններին արժեթղթերի շուկա ուղղակիորեն մուտքի հնարավորության ընձեռման աշխատանքները.
- վերանայվել են մասնագիտացված անձանց կողմից հաշվետվությունների ներկայացման կարգը և ներկայացվող ձևերը: Մասնավորապես, բացառվել են մի շարք տեղեկությունների կրկնակի ներկայացման պահանջները, ինչպես նաև ներդրվել է արժեթղթերի և հաճախորդների ռեզիդենտության հիման վրա տեղեկությունների ներկայացման սկզբունքը.

- վերանայվել են հաշվետու թողարկողների նկատմամբ սահմանված պահանջները, թողարկողների կողմից արժեթղթի գրանցման հայտարարագրի և հաշվետվությունների ներկայացման կարգը: Մասնավորարապես, հաշվետու թողարկող որակելու նպատակով զուտ ակտիվների մեծությունը սահմանվել է 500 մլն դրամ, ներդրվել է հայտարարագրերի և հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման մեխանիզմը և նվազեցվել ներկայացվող թղթային օրինակների քանակը:

Միևնույն ժամանակ, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի կողմից հաստատվել են «Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեություն իրականացնող անձանց, ինքնակարգավորվող կազմակերպությունների և թողարկողների ստուգումների և հեռակա վերահսկողության ընթացակարգերի ուղեցույցները»:

Ֆինանսական շուկայի այլ մասնակիցների կարգավորման դաշտի փոփոխություններ

- Փոփոխություններ են կատարվել «Վարկային կազմակերպությունների գործունեության կարգավորումը, վարկային կազմակերպությունների գործունեության տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 14-ում: Մասնավորապես, թույլատրվել է ՀՀ տարածքում գործող վարկային կազմակերպություններին իրենց անունից թողարկել և իրավաբանական անձանց միջև տեղաբաշխել պարտատոմսեր:
- 2006 թվականի հունվարի 1-ից Կենտրոնական բանկին է անցել գրավատների լիցենզավորման և վերահսկողության իրավասությունը: Կենտրոնական բանկի կողմից մշակվել է «ՀՀ տարածքում գործող գրավատների ստուգումների իրականացման ձեռնարկը»:
- Փոփոխություններ են կատարվել նաև «Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը և կարգավորումը» կանոնակարգ 10-ում, «Արտարժութային դիլերային առք ու վաճառքի գործառնությունների լիցենզավորումը» կանոնակարգ 12-ում և «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող կազմակերպությունների լիցենզավորումը, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հաշվառումը, գործունեության կարգավորումը, ղեկավարների որակավորումը» կանոնակարգ 16-ում:

3.4. ՓՈՂԵՐԻ «ԼՎԱՑՄԱՆ» ԵՎ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

2006 թվականին Կենտրոնական բանկը շարունակել է գործունեությունը «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի շրջանակում: Դա իրականացվել է 2005 թվականին Կենտրոնական բանկում ստեղծված կառուցվածքային ստորաբաժանման՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի միջոցով, որը գործում է եռամյա ռազմավարության ծրագրով: Ֆինանսական դիտարկումների կենտրոնը տարվա ընթացքում աշխատանքներ է իրականացրել հետևյալ ուղղություններով՝

Տեղեկությունների ստացում, վերլուծություն և տրամադրում

2006 թվականի մարտ-ապրիլին Կենտրոնական բանկի խորհուրդը հաստատել է հաշվետու անձանց կողմից Ֆինանսական դիտարկումների կենտրոնին (ՖԴԿ) տեղեկությունների տրամադրման կարգը, ձևերն ու ժամկետները: Դրա հիման վրա ՀՀ տարածքում գործող բոլոր ֆինանսական հաստատությունները, ինչպես նաև օրենքով սահմանված ոչ ֆինանսական հաստատություններն ու անձինք, սկսել են պարտադիր տեղեկացման և կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ տրամադրել Ֆինանսական դիտարկումների կենտրոնին: 2006 թ. տրամադրվել են շուրջ 55 հազար պարտադիր տեղեկացման և 26 կասկածելի գործարքների վերաբերյալ հաշվետվություններ:

Այդ հաշվետվությունները համակարգելու նպատակով մշակվել է ՖԴԿ տվյալների բազա, որը հնարավորություն է տալիս կատարելու համակողմանի գործառնական, մարտավարական և ռազմավարական բնույթի ֆինանսական վերլուծություններ:

Հաշվետու անձանցից և այլ աղբյուրներից ստացված տեղեկությունների վերլուծության արդյունքներով Ֆինանսական դիտարկումների կենտրոնը, Կենտրոնական բանկի խորհրդի որոշումների հիման վրա, ՀՀ դատախազությանն է ներկայացրել 4 կասկածելի գործարքների վերաբերյալ հաղորդում:

Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրության և այլ իրավական ակտերի բարեփոխումներ

2006 թվականին Կենտրոնական բանկն աշխատել է նաև փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում ՀՀ օրենսդրության բարեփոխման ուղղությամբ:

Եվրոխորհրդի փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հատուկ կոմիտեի՝ ՄԱՆԻՎԱԼ-ի խորհրդատվություններով Կենտրոնական բանկը, Արդարադատության նախարարության և ՀՀ Գլխավոր դատախազության հետ համատեղ, մշակել է փողերի «լվացման» ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքում, ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների փաթեթ: Փոփոխություններով և լրացումներով փողերի «լվացում» հասկացությունը համապատասխանեցվել է միջազգային ստանդարտներին, սահմանվել են փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեպքերում գույքի վրա անհապաղ կալանք դնելու և պարտադիր բռնագրավման ընթացակարգերը, ամրագրվել է փողերի «լվացման» նախորդող հանցակազմերի ցանկը և այլն:

Այդ փաթեթը բազմիցս քննարկվել է և համաձայնեցվել պետական իրավասու մարմինների ու ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետների հետ. ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի նոյեմբերին:

Կենտրոնական բանկի նախաձեռնությամբ 2006 թվականին Հայաստանի Հանրապետությունը հյուրընկալել է Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետներին, որոնց առջև խնդիր է դրվել՝ վերանայել փողերի «լվացման» ու ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին ՀՀ օրենքը և կատարել դրանք միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու առաջարկներ: Փորձագետներից և ՀՀ տարբեր գերատեսչությունների աշխատակիցներից կազմված աշխատանքային խմբի կողմից մշակվել է նշված օրենքի համալիր կառուցվածքային լրամշակումների փաթեթ, որը նախատեսվում է Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել 2007 թվականին:

Արժույթի միջազգային հիմնադրամի փորձագետների հետ մեկտեղ մշակվել է նաև փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման

դեմ պայքարի ոլորտում հաշվետու անձանց նկատմամբ վերահսկողական ընթացակարգերը նկարագրող ձեռնարկի նախագիծ, որը Կենտրոնական բանկի կողմից նախատեսվում է ընդունել 2007 թվականին:

Միջազգային համագործակցություն

Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում 2006 թվականին Կենտրոնական բանկը միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա մարմինների հետ համագործակցել է հետևյալ ուղղություններով.

- Կենտրոնական բանկը մասնակցել է Եվրոխորհրդի ՄԱՆԻՎԱԼ հանձնախմբի աշխատանքներին: Կենտրոնական բանկի մասնակցությամբ կազմվել են ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից Հայաստանի Հանրապետությունում իրավիճակի գնահատումից հետո ներկայացված՝ առաջընթացի և համապատասխանության ապահովման վերաբերյալ հաշվետվությունները և ներկայացվել ՄԱՆԻՎԱԼ-ի լիագումար նիստերում: Այդ նիստերին, որպես ՀՀ պատվիրակության ղեկավար, մասնակցել է Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ղեկավարը:
- Կենտրոնական բանկը, ծրագրի համաձայն, ակտիվ գործողություններ է իրականացրել Ֆինանսական դիտարկումների կենտրոնի՝ էգմոնտ խմբին անդամակցելու ուղղությամբ: Հարցը քննարկվել է աշխատանքային հանդիպումներում, և նախատեսվում է, որ վերջնականապես կհաստատվի 2007 թվականին: Էգմոնտ խմբի ընթացակարգերի հիման վրա այս հարցում ՖԴԿ հովանավորներն են ՌԴ ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայությունը և Ուկրաինայի ֆինանսական մոնիտորինգի կոմիտեն:
- Կենտրոնական բանկն աշխատել է նաև ՄԱԿ-ի թմրամիջոցների ու հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ և համատեղ իրականացրել ուսուցման կարիքների բացահայտման ծրագիր:
- Կենտրոնական բանկի խնդրանքով Ֆինանսական դիտարկումների կենտրոնի ինստիտուցիոնալ ու գործառնական կարողությունների բարելավմանն ուղղված տեխնիկական օժանդակության ծրագրեր են իրականացրել Արժույթի միջազգային հիմնադրամը և ԱՄՆ գանձապետարանի դեպարտամենտը:
- Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնը սկսել է տեղեկատվություն փոխանակել օտարերկրյա ֆինանսական հետախուզության մարմինների հետ: Հաշվետու տարում տեղեկատվության փոխանակման կարգով ստացվել է 4 և ուղարկվել 9 հարցում:

Ներպետական համագործակցություն

Կենտրոնական բանկի և իրավասու մարմինների միջև սերտ համագործակցություն է իրականացվել:

Միջգերատեսչական համագործակցությունն իրականացվել է դեռևս 2002 թվականին ՀՀ Նախագահի կարգադրությամբ ստեղծված «Հայաստանի Հանրապետությունում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի «լվացման», ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ տարվող պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի շրջանակներում: Հանձնաժողովը, Կենտրոնական բանկի նախագահի նախագահությամբ, հաշվետու տարում գումարել է 8 նիստ, որոնց ընթացքում քննարկվել են փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի քաղաքականության, գերատեսչությունների համագործակցության, ինչպես նաև առավել խնդրահարույց հարցեր: Միջգերատեսչական հանձնաժողովն իր տարեկան աշխատանքների մասին հաշվետվություն է ներկայացրել ՀՀ Նախագահին:

Երկկողմ համագործակցության համաձայնագրեր են կնքվել Գլխավոր դատախազության, Ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության, Հարկային պետական ծառայության, Մաքսային պետական կոմիտեի հետ: Այդ համաձայնագրերով սահմանվում են տեղեկատվության փոխանակման, վիճակագրության, ուսուցման և այլ ոլորտներում համագործակցության ընթացակարգերը:

Ուսուցում և վերապատրաստում

2006 թվականին Կենտրոնական բանկի ներկայացմամբ միջգերատեսչական հանձնաժողովը հաստատել է փողերի «լվացման» և ահաբեկչու-

թյան ֆինանսավորման դեմ պայքարի ուսուցման ազգային ծրագիրը և դրա իրականացմանն ուղղված գործողությունների ժամանակացույցը: Ժամանակացույցի համաձայն՝ նախատեսվել է ուսուցման ծրագրերը կազմակերպել բոլոր շահագրգիռ գերատեսչություններում, ուսուցման կարիքների բացահայտման ընթացակարգերն ավարտելուց հետո: Այդ նպատակով, ՄԱԿ-ի թմրամիջոցների ու հանցավորության դեմ պայքարի գրասենյակի հետ համատեղ, ՀՀ-ում սկսվել է ուսուցման կարիքների բացահայտման փորձնական ծրագիր, որը նախատեսվել է ներդնել Կենտրոնական բանկում, Դատախազությունում և Ոստիկանությունում: Միջազգային փորձագետները Հայաստանում կազմակերպել են մի քանի սեմինարներ՝ ներկայացնելով այդ ծրագրի միջազգային լավագույն փորձը: Ծրագիրը նախատեսվում է ավարտել 2007 թվականին:


Կենտրոնական բանկը ֆինանսական հաստատությունների համար մի շարք հանդիպումներ ու սեմինարներ է կազմակերպել, որոնցում քննարկել է փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի օրենսդրությունը, կանոնակարգերը, տիպաբանությունը և այլ հարցեր:

Բացի այդ, Կենտրոնական բանկի տարբեր ստորաբաժանումների, այդ թվում՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնի աշխատակիցները մասնակցել են Հայաստանում և արտերկրում կազմակերպված՝ փողերի «լվացման» ու ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված սեմինարների, համաժողովների, ուսուցման այլ ծրագրերի:

4. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ


4.1. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

2006 թվականի ընթացքում միջազգային պահուստները նախորդ տարվա համեմատությամբ աճել են 40%-ով և կազմել շուրջ 310 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ տարեվերջին միջազգային պահուստների մնացորդը կազմել է 1071 մլն ԱՄՆ դոլար:



Գրաֆիկ 4.1
ՀՀ միջազգային պահուստների մակարդակը (մլն ԱՄՆ դոլար)


Այդ ժամանակաշրջանում միջազգային պահուստներից ստացված եկամուտը կազմել է 37.6 մլն ԱՄՆ դոլար (նախորդ տարի՝ 23 մլն ԱՄՆ դոլար): Եկամտի շուրջ 60% աճը պայմանավորվել է միջազգային պահուստների ծավալի աճով, ինչպես նաև ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում և Եվրոգոտում հիմնական տոկոսադրույքների մակարդակների աճով:[1]



Գրաֆիկ 4.2
ՀՀ միջազգային պահուստների կառավարումից ստացված եկամուտներ

Տոկոսադրույքների աճը միջազգային պահուստների կառավարման կատարողականի վրա ունեցել է դրական ազդեցություն, քանի որ տարեկան կտրվածքով ակտիվների գերակշիռ մասը ներդրված է եղել ավանդներում և չեզոքացրել է արժեթղթերի պորտֆելի գնային տատանողականությունը: Արդյունքում՝ 2006 թվականի միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 4.57%՝ նախորդ տարվա 3.34% համեմատ:

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է առաջնորդվել ՀՀ միջազգային պահուստների կառավարման ոլորտում որդեգրած սկզբունքներով, այն է՝ ապահովել առավելագույն եկամտաբերություն՝ պահպանելով ներդրումների ցածր ռիսկայնությունը և բարձր իրացվելիությունը: ՀՀ կենտրոնական բանկը ներդրումներ է կատարել հիմնականում օտարերկրյա պետական և պետական երաշխիքով թողարկված բարձր վարկային որակով պարտատոմսերում, ինչպես նաև արտարժույթով ավանդներում:



Գրաֆիկ 4.3
2006 թվականի ընթացքում ՀՀ միջազգային պահուստների կառավարման կատարողականը

Եկամտաբերության բարձրացման նպատակով տարվա սկզբին ձևավորվել է ռուսական ռուբլով պորտֆել՝ ԱՄՆ դոլարի փոխարկման հաշվին: Վերջինս ամբողջությամբ ներդրվել է ավանդների տեսքով:

2006 թվականի ընթացքում առավել բարձր եկամտաբերության մակարդակ ապահովվել է ԱՄՆ դոլարով, բրիտանական ֆունտ ստեռլինգով, ինչպես նաև ռուսական ռուբլով ներդրումների հաշվին:

2006 թվականի ընթացքում ԱՄՆ դոլարը արժեզրկվել է հիմնական արժույթների նկատմամբ: Մասնավորապես՝ բրիտանական ֆունտ ստեռլինգի նկատմամբ ԱՄՆ դոլարը արժեզրկվել է 12.04%-ով, եվրոյի նկատմամբ՝ 10.23%-ով, ռուսական ռուբլու նկատմամբ՝ 8.41%-ով՝ գրեթե նույնքանով ավելացնելով համապատասխան արժույթներով արտահայտված ակտիվների եկամտաբերությունը՝ դոլարային արտահայտությամբ:

[1] Տարվա ընթացքում ԱՄՆ ֆեդերալ պահուստային համակարգը ռեպո տոկոսադրույքը բարձրացրել է 3 անգամ՝ յուրաքանչյուրը 25 բազիսային կետով՝ հասցնելով 5.25% մակարդակի: Անգլիայի բանկը երկու անգամ բարձրացրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ յուրաքանչյուրը 25 բազիսայի կետով՝ հասցնելով 5% մակարդակի: Եվրոպական կենտրոնական բանկը տարվա ընթացքում հինգ անգամ, 25 բազիսային կետով բարձրացրել է հիմնական տոկոսադրույքը՝ տարեվերջին հասցնելով 3.50% մակարդակի:

4.2. ԿԱԴՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կադրային քաղաքականություն

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկի իրականացրած կադրային քաղաքականությունը նպատակաուղղված է եղել կառավարման մեխանիզմների միջոցով կազմակերպության հիմնական գործունեության խթանմանը և, միաժամանակ, աշխատակիցների սոցիալական ու մասնագիտական անհրաժեշտ մակարդակի ապահովմանը:

ՀՀ կենտրոնական բանկում գործում է աշխատակիցների առաջխաղացման և կատարած աշխատանքին ու փորձառությանը համապատասխան վարձատրության աստիճանական աճի ճկուն համակարգ, որը հիմնված է աշխատակիցների մասնագիտական գիտելիքների ստուգման և աշխատանքի կատարողականի գնահատման մեխանիզմի վրա:

Աշխատակիցների ծառայողական էթիկայի կանոնների պահպանումը վերահսկելու նպատակով ստեղծվել է համապատասխան հանձնաժողով:

Նոր աշխատանքային օրենսգրքի պահանջներին են համապատասխանեցվել ՀՀ կենտրոնական բանկում անձնակազմի կառավարման ոլորտի կարգավորման իրավական ակտերը:

Թափուր հաստիքները, ինչպես նախորդ տարիներին, հիմնականում համալրվել են մրցութային կարգով: Թեկնածուների գնահատման գործընթացը կատարելագործելու նպատակով մշակվել են մրցույթների նախնական փուլի սկզբունքներ: Երիտասարդ մասնագետների ընտրության ժամանակ նախապատվությունը տրվել է «Ֆինանսաբանկային քոլեջ» հիմնադրամի կողմից կազմակերպվող «ՀՀ կենտրոնական բանկ. ներածական դասընթաց» ուսումնական ծրագրի մասնակիցներին:

ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է իրականացնել երիտասարդ մասնագետներ ներգրավելու, նրանց ներուժը օգտագործելու և որակավորումը բարձրացնելու քաղաքականություն: 2006 թվականին ՀՀ ԿԲ ստորաբաժանումներում ժամկետային պայմանագրերով աշխատել են 20 երիտասարդ մասնագետներ, որոնցից 11-ը համալրել են ՀՀ կենտրոնական բանկի հաստիքացուցակը:

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի և Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի բարձր առաջադիմությամբ ուսանողներին խրախուսելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկը 7 լավագույն ուսանողների հատկացրել է Իսահակ Աբասի Իսահակյանի անվան կրթաթոշակ:

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկում ուսումնական և նախադիպլոմային պրակտիկա են անցել Հայաստանի Հանրապետության բուհերի 36 ուսանողներ:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցների միջին թվաքանակը 2006 թվականին կազմել է 587՝ 316 կին և 271 տղամարդ, միջին տարիքը՝ 38,9:

Կադրերի ուսուցում և վերապատրաստում

2006 թվականին ՀՀ կենտրոնական բանկը մշակել և իրականացրել է կադրերի որակավորման բարձրացման և մասնագիտական հմտությունների զարգացման խնդիրները կարգավորող ծրագրեր:

ՀՀ կենտրոնական բանկի 210 մասնագետներ մասնակցել են օտարերկրյա կենտրոնական բանկերի և այլ բանկերի ուսումնական կենտրոններում կազմակերպված վերապատրաստման ծրագրերին: Այս առումով, ՀՀ կենտրոնական բանկի հետ սերտորեն համագործակցել են Արժույթի միջազգային հիմնադրամը, Անգլիայի բանկի՝ կենտրոնական բանկերի ուսուցողական կենտրոնը, Ֆրանսիայի բանկը, Գերմանիայի Բունդեսբանկը, Նիդեռլանդների, Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերը, Միջազգային հաշվարկների բանկը, Շվեյցարիայի ազգային բանկը, Չեխիայի ազգային բանկը, Ֆինանսական կայունության ինստիտուտը և այլն:

Կենտրոնական բանկը առանձնակի ուշադրություն է դարձրել օտարերկրյա բանկերի հետ երկկողմանի հարաբերությունների ընդլայնմանը, որի արդյունքում նախագծվել և իրականացվել են վերապատրաստման տեսանկյունից առավել արդյունավետ ծրագրեր: Երկկողմանի հարաբերություններ են հաստատվել Լեհաստանի ազգային բանկի հետ, որի արդյունքում կազմակերպվել են վերապատրաստման հատուկ ծրագրեր: Հատուկ ծրագրեր են կազմակերպվել նաև Նիդեռլանդների, Ֆրանսիայի բանկերի, Գերմանիայի Բունդեսբանկի, Չեխիայի ազգային բանկի և Ռուսաստանի Դաշնության կենտրոնական բանկերի հետ համատեղ:

2006 թ. ընթացքում կազմակերպվել է 23 հատուկ ծրագիր, որից 16-ը՝ օտարերկրյա բանկերում, իսկ 7-ը՝ օտարերկրյա փորձագետների միջոցով՝ ՀՀ տարածքում: 2006 թվականին հատուկ ծրագրերով վերապատրաստվել են ՀՀ կենտրոնական բանկի 145 աշխատակիցներ:

Հատուկ ծրագրերով դասընթացների կազմակերպման առաջատարը, ինչպես և նախորդ տարի, Նիդեռլանդների բանկն է:

Բանկային համակարգի տարածաշրջանային զարգացման գործում մեծ դեր ունեն Երևանում կազմակերպվող միջազգային սեմինարները, մասնավորապես՝ ԱՄՆ դաշնային պահուստային համակարգի նախաձեռնությամբ՝ «Տոկոսադրույքի ռիսկերի կառավարման հիմունքները» թեմայով սեմինարը, որին մասնակցել են տասից ավելի օտարերկրյա բանկերի ներկայացուցիչներ:

2006 թ. հունվարին և սեպտեմբերին Կենտրոնական բանկը մասնակցել է Եվրասիայի տնտեսական համագործակցության շրջանակներում կայացած՝ համակարգողների խորհրդի հերթական հանդիպումներին, որտեղ քննարկվել են համագործակցության հետ կապված հարցերը, ընթացիկ և կազմակերպվելիք վերապատրաստման ծրագրերը: Արդյունքում՝ 2006 թվականին Կենտրոնական բանկի 31 աշխատակիցներ հնարավորություն են ունեցել մասնակցելու ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի համար բանկային տարբեր թեմաներով կազմակերպված ծրագրերին: ՀՀ կենտրոնական բանկում նույնպես կազմակերպվել են սեմինարներ և հանդիպումներ, որոնց ժամանակ ՀՀ ԿԲ մասնագետները ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի աշխատակիցներին են ներկայացրել իրենց փորձն ու գիտելիքները:

ՀՀ բանկային գործունեությունը խթանելու և առավել արդյունավետ դարձնելու նպատակով Կենտրոնական բանկը նախաձեռնել և կազմակերպել է արդիական և հրատապ թեմաներով ներքին սեմինար-դասընթացներ: Դասընթացներին մասնակցել է ՀՀ կենտրոնական բանկի 88 աշխատակից:

Կազմակերպվել են նաև փորձի փոխանակման 20 սեմինարներ և ՀՀ կենտրոնական բանկում գործող կանոնակարգերի վերաբերյալ թվով 28 սեմինարներ, որոնց ընդհանուր առմամբ մասնակցել են ՀՀ կենտրոնական բանկի 575 աշխատակիցներ:

Տարեկան երկու անգամ կազմակերպվել է «Ներմուծական դասընթաց»՝ ՀՀ կենտրոնական բանկ նոր ընդունված աշխատակիցների համար:

ՀՀ կենտրոնական բանկի 22 ղեկավար պաշտոնյաներ մասնակցել են «Կառավարչական հմտություններ» թեմայով հատուկ դասընթացին:

ՀՀ կենտրոնական բանկի միջազգային համագործակցությունը

2006 թվականին շարունակվել է ՀՀ կենտրոնական բանկի բազմակողմանի և երկկողմանի համագործակցությունը միջազգային և օտարերկրյա ֆինանսական կազմակերպությունների հետ: Մասնավորապես՝ ԱՄՀ/ՀԲ տեխնիկական օժանդակության շրջանակներում կենտրոնական բանկն ընդունել է ԱՄՀ դրամավարկային քաղաքականության, բանկային վերահսկողության և ֆինանսական գործառնությունների բնագավառների խորհրդականների և առաքելությունների:

ՀՀ կենտրոնական բանկի աշխատակիցները մասնակցել են բանկային և ֆինանսական միջազգային համաժողովների, ֆորումների, կլոր սեղանի նիստերի, խորհրդակցությունների, ցուցահանդեսների, աշխատանքային սեմինարների, որտեղ հանդես են եկել զեկույցներով և ելույթներով: Հիշատակման են արժանի՝ ԵՎՐԱԶԵՍ անդամ երկրների կենտրոնական բանկերի Կոորդինացիոն խորհրդի նիստը (Տուլա, ՌԴ), ԱՊՀ երկրների միջպետական արժութային կոմիտեի նիստը (Մոսկվա, ՌԴ), Եվրասիական և Հարավարևելյան Եվրոպայի կորպորատիվ կառավարման կլոր սեղանը (Ստամբուլ, Թուրքիա), Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում Հայաստանի գործողությունների ծրագրի մշակման բանակցությունների 2-րդ փուլը (Բրյուսել, Բելգիա), Միավորված վերահսկողության բնագավառում էստոնիայի բանկի փորձի ուսումնասիրումը (Տալլին, Էստոնիա), Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի խմբի երկրների բանկային վերահսկողների տարեկան համաժողովը (Պոդգորիցե, Սերբիա և Չեռնոգորիա), «Միկրոֆինանսավորման օրենսդրություն և կարգավորում» թեմայով միջազգային ֆորումը (Վարշավա, Լեհաստան), Արժեթղթերի շուկայի զարգացմանը նվիրված սեմինար-խորհրդակցությունը (Վաշինգտոն, ԱՄՆ), Կալիֆորնիայի Համալսարանի կողմից կազմակերպված «Հայաստան. կայուն զարգացման մարտահրավերները» թեմայով միջազգային կոնֆերանսը (Լոս Անջելես, ԱՄՆ), Միջին Ասիայի, Սևծովյան տարածաշրջանի և Բալկանյան երկրների կենտրոնական բանկերի կառավարիչների

ակումբի նիստը (Կազան, ՌԴ), Վերականգնման և զարգացման եվրոպական բանկի կառավարիչների խորհրդի տարեկան համաժողովը և Բիզնես ֆորումը (Լոնդոն, Մեծ Բրիտանիա), Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կառավարիչների խորհուրդների տարեկան հանդիպումը (Սինգապուր, Սինգապուր), ԱՊՀ և Բալթյան երկրների կենտրոնական բանկերի ներքին աուդիտի ստորաբաժանումների ղեկավարների տարեկան հանդիպումը (Սանկտ Պետերբուրգ, ՌԴ), «Արժույթի միջազգային հիմնադրամը և Հարավային Կովկասի երկրները 21-րդ դարում» թեմայով միջազգային կոնֆերանսը (Թբիլիսի, Վրաստան), Սևծովյան առևտրի և զարգացման բանկի տնօրենների խորհրդի հանդիպումները (Սալոնիկ, Հունաստան), «Ապահովագրության վերահսկման զարգացումը ոչ Եվրոպական Միության երկրներում» թեմայով սեմինար-խորհրդակցությունը (Լոնդոն, Անգլիա), Գերմանական KfW բանկի վերահսկողների խորհրդի հանդիպումը (Ֆրանկֆուրտ, Գերմանիա), Բանկային վերահսկողների 14-րդ միջազգային կոնֆերանսը (Մերիդա, Մեքսիկա), SWIFT օգտագործողների և անդամների ազգային ասոցիացիաների նախագահների տարեկան համաժողովը (Սիդնեյ, Ավստրալիա), Միջազգային հաշվարկների բանկի կողմից կազմակերպված՝ G-10 երկրների և ԱՊՀ երկրների կենտրոնական բանկերի տեխնիկական համագործակցության գծով համակարգողների ամենամյա հանդիպումը (Բազել, Շվեյցարիա):

2006 թ. ՀՀ կենտրոնական բանկն ակտիվորեն համագործակցել է Եվրոպական Միության կառույցների հետ և մասնակցել Եվրոպայի խորհրդի կողմից կազմակերպված՝ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի խնդիրներին (MONEYVAL) նվիրված համաժողովների աշխատանքներին (Ստրասբուրգ, Ֆրանսիա), օտարերկրյա առևտրային բանկերի կողմից կազմակերպված սեմինար-խորհրդակցություններին և համաժողովներին:

Գործնական կապերը ընդլայնելու և բանակցություններ վարելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկ են այցելել “MOODY’S INVESTOR SERVICES” և “FITCH RATINGS” վարկանշային գործակալությունների, ՌԴ ֆինանսական մոնիտորինգի դաշնային ծառայության, OMX GROUP ընկերության, BLOOMBERG UK ընկերության, հոլանդական ABN-AMRO BANK-ի և ING BANK-ի, Բուլղարիայի ազգային բանկի, Լեհաստանի ազգային բանկի փորձագետների պատվիրակությունները, ինչպես նաև Սևծովյան առևտրի և զարգացման բանկի պատվիրակությունը՝ նախագահ Հայրետտին Կապլանի գլխավորությամբ:

2006 թ. հունիսի 17 - 18-ը Երևանում տեղի է ունեցել Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի հոլանդական խմբում ընդգրկված երկրների տարեկան հանդիպումը, որին մասնակցել է ԱՄՀ կառավարիչ-տնօրեն Ռոդրիգո դե Ռատոն:

2006 թ. հունիսի 26 - 27-ը Երևանում ՀՀ կենտրոնական բանկի հովանու ներքո անցկացվել է «ՀՀ պետական մարմիններում փողերի «լվացման» դեմ պայքարի հարցերի շուրջ իրազեկում» թեմայով աշխատանքային սեմինար:

Միջկառավարական հանձնաժողովների շրջանակներում ստորագրվել են կենտրոնական բանկերի միջև նախատեսված համապատասխան համաձայնագրեր և փոխըմբռնման հուշագրեր:

2006 թ. ապրիլի 13-ին Կիպրոսի մայրաքաղաք Նիկոզիայում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Կիպրոսի կենտրոնական բանկի միջև ստորագրվել է բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության մասին Փոխըմբռնման հուշագիր:

2006 թ. ընթացքում շարունակվել են «ՀՀ կենտրոնական բանկի և Չինաստանի ժողովրդական բանկի միջև բանկային ոլորտում համագործակցության մասին» և ՀՀ կենտրոնական բանկի և Իրանի Իսլամական Հանրապետության կենտրոնական բանկի միջև բանկային վերահսկողության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրերի ստորագրման նախապատրաստական աշխատանքները::

2006 թ. նոյեմբերի 1 - 4-ը Երևանում տեղի է ունեցել Միջպետական բանկի խորհրդի հերթական 33-րդ նիստը՝ բոլոր անդամ պետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ (2006 թ. ապրիլից Միջպետական բանկի խորհուրդը նախագահում է ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանը):

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2006 թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2006	2005
Տոկոսային եկամուտներ	4	13,640,989	9,939,553
Տոկոսային ծախսեր	5	(2,501,883)	(2,829,109)
Զուտ տոկոսային եկամուտ		**11,139,106**	**7,110,444**
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ		22,127	5,936
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախս		(143,660)	(117,750)
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ ծախս		**(121,533)**	**(111,814)**
Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից	6	(37,927,006)	(16,470,978)
Զուտ իրացված վնաս վաճառքի համար մատչելի ակտիվների գծով		(377,797)	-
Զուտ շահույթ՝ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	7	2,699,004	725,219
Այլ եկամուտ	8	700,846	406,420
Գործառնական վնաս		**(23,887,380)**	**(8,340,709)**
Թղթադրամների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր		(506,228)	(1,588,825)
Արժեզրկումից կորուստների հակադարձում		-	180,622
Ընդհանուր վարչական ծախսեր	9	(4,577,173)	(3,825,838)
Գործառնական վնաս		**(5,083,401)**	**(5,234,041)**
Տարվա վնաս		**(28,970,781)**	**(13,574,750)**

119-ից 155-րդ էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Խորհրդի կողմից 2007թ. մարտի 23-ին և վերջինիս անունից ստորագրվել.

Տ. ՍԱՐԳՍՅԱՆ
Նախագահ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Գլխավոր հաշվապահ

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Հաշվապահական հաշվեկշիռ 2006 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2006	2005
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ակտիվներ արտարժույթով			
Դրամական միջոցներ		491,363	269,956
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	10	283,201,115	155,699,229
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	11	79,440,951	47,602,452
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	21,435,036	1,301
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ		-	135,171,386
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	13	5,117,455	4,612,308
Այլ ակտիվներ		166,248	422,267
		389,852,168	**343,778,899**
Ակտիվներ տեղական արժույթով			
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	14	15,290,302	11,949,866
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	12	19,171,500	8,077,077
Հիմնական միջոցներ	15	7,061,116	6,088,280
Ոչ նյութական ակտիվներ	16	70,484	77,914
Այլ ակտիվներ	17	566,507	326,865
		42,159,909	**26,520,002**
Ընդամենը ակտիվներ		**432,012,077**	**370,298,901**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՊԱԿԱՍՈՒՐԴ			
Պարտավորություններ արտարժույթով			
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	18	25,810,253	24,267,780
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	19	59,694,152	118,905,185
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	11	-	267,539
Այլ փոխառություններ	20	8,043,093	8,928,231
Այլ պարտավորություններ		29,897	104,115
		93,577,395	**152,472,850**

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Պարտավորություններ տեղական արժույթով			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		226,841,135	155,274,723
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	18	39,301,849	31,003,713
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ		61,532,562	21,993,849
Թողարկված պարտքային արժեթղթեր		38,987,836	21,482,856
Այլ պարտավորություններ	21	946,661	705,147
		367,610,043	**230,460,288**
Ընդամենը պարտավորություններ		**461,187,438**	**382,933,138**
Կուտակված վնաս			
Թողարկված կապիտալ	22	100,000	100,000
Գլխավոր պահուստ	22	9,870,486	9,870,486
Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	12	12,734,237	-
Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ		(249,275)	55,305
Կուտակված վնաս		(51,630,809)	(22,660,028)
Ընդամենը կուտակված պակասուրդ		**(29,175,361)**	**(12,634,237)**
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ՊԱԿԱՍՈՒՐԴ		**432,012,077**	**370,298,901**

Հաշվապահական հաշվեկշիռը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 2006թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Ծնթգ.	2006	2005
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ժամանակաշրջանի վնաս		(28,970,781)	(13,574,750)
Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.			
Արժեզրկումից կորուստների հակադարձում		-	(180,622)
Մաշվածություն և ամորտիզացիա		739,984	760,402
		(28,230,797)	**(12,994,970)**
Գործառնական ակտիվների (աճ)/նվազում			
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ		(130,743,760)	18,094,072
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում		(32,106,038)	(22,660,876)
Վաճառքի համար մատչելի ակտիվներ		115,072,884	241,433
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր		(3,340,437)	1,070,135
Այլ ակտիվներ		16,377	1,130,841
Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)			
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ		71,566,411	49,741,054
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և մնացորդներ		9,711,129	26,056,113
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ		(19,672,319)	(20,987,851)
Թողարկված պարտքային արժեթղթեր		17,504,980	21,482,856
Այլ փոխառություններ		(885,138)	(2,159,584)
Այլ պարտավորություններ		296,779	(21,531)
Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**(809,929)**	**58,991,987**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների ձեռքբերում		-	(61,080,104)
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(1,715,914)	(1,308,888)
Հիմնական միջոցների վաճառք		10,524	3,637
Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		**(1,705,390)**	**(62,385,355)**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ/(նվազում)		**(2,515,319)**	**(3,393,368)**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		33,551,919	36,945,287
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	27	**31,036,600**	**33,551,919**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ

Կուտակված պակասուրդում փոփոխությունների մասին հաշվետվություն

2006թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազար ՀՀ դրամ

	Լոտիմոի թղթակցային հաշիվ	Գների տարբերություն	Լրացուցիչ կանոնադրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը առ 1 հունվարի 2005թ.	**100,000**	**9,870,486**	**-**	**179,203**	**(9,085,278)**	**1,064,411**
Ժամանակաշրջանի զուտ վնաս	-	-	-	-	(13,574,750)	(13,574,750)
Զուտ չիրացված վնաս վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	-	-	-	(123,898)	-	(123,898)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005թ.	**100,000**	**9,870,486**	**-**	**55,305**	**(22,660,028)**	**(12,634,237)**
Ժամանակաշրջանի զուտ վնաս	-	-	-	-	(28,970,781)	(28,970,781)
Զուտ չիրացված վնաս վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով	-	-	-	(304,580)	-	(304,580)
ՀՀ կառավարության ներդրում սեփական կապիտալում (ծնթգ. 22)	-	-	12,734,237	-	-	12,734,237
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	**100,000**	**9,870,486**	**12,734,237**	**(249,275)**	**(51,630,809)**	**(29,175,361)**

Կուտակված պակասուրդում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Ֆինանսական հաշվետվությունների ծանոթագրություններ

1. Նախապատմություն

Հիմնական գործունեությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը («Բանկ») Հայաստանի Հանրապետության օրենքով հիմնադրված իրավաբանական անձ է:

Deleted: Գ

Բանկի իրավաբանական հասցեն է. Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6: Տարվա ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թիվը կազմել է 587 (2005թ-ին՝ 532):

Deleted: Գ

Բանկի հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովումն է, որն իրականացվում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն իր հիմնախնդրի, Բանկը նաև պատասխանատու է՝

- Հայաստանի Հանրապետության բանկային համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Formatted: Bullets and Numbering

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց, և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

Formatted: Bullets and Numbering

2. Պատրաստման հիմունքներ

Համապատասխանության մասին հայտարարություն

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և վաճառքի համար մատչելի ակտիվների, որոնք ներկայացված են իրական արժեքով:

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը նաև Բանկի ֆունկցիոնալ արժույթն է և այն արժույթը, որով ներկայացված են սույն ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջների համաձայն պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական ակտիվների և պարտավորությունների բացահայտմանը վերաբերող մի շարք գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Formatted: Bullets and Numbering

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառումը կատարվել է հետևողականորեն, բացառությամբ ծանոթագրություն 3-ում ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների:

Արտարժույթով գործարքներ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք ներկայացված են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Փոխարկման հետևանքով առաջացած արտարժութային տարբերությունները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Բանկը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում դրամական միջոցները և առևտրային բանկերում տեղաբաշխված նոստրո հաշիվները, Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) հատուկ փոխառության իրավունքով արտահայտված ակտիվները:

Ֆինանսական գործիքներ

Դասակարգում

Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ են, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- ածանցյալ գործիք են (բացառությամբ այն ածանցյալ գործիքների, որոնք նախատեսված են և հանդիսանում են արդյունավետ հեջավորման գործիքներ) կամ
- սկզբնական ճանաչման պահին կազմակերպության կողմից նախատեսվում են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Պոտենցիալ բարենպաստ պայմաններ ենթադրող (դրական իրական արժեք)՝ առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև ձեռք բերված օպցիոնները, ներկայացվում են որպես ակտիվ: Պոտենցիալ ոչ բարենպաստ պայմաններ ենթադրող (բացասական իրական արժեք)՝ առևտրական նպատակներով պահվող բոլոր ածանցյալ գործիքները, ինչպես նաև տրամադրված օպցիոնները, ներկայացվում են որպես պարտավորություն:

Տրամադրված վարկերը և դեբիտորական պարտքերը հաստատագրված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չունեն գնանշված շուկայական գին գործող շուկայում, բացառությամբ այն ակտիվների, որոնք տրամադրվում են անմիջապես կամ կարճ ժամկետում վաճառելու մտադրությամբ, որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կամ որոնց տիրապետողը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները հաստատագրված կամ որոշելի վճարումներով և հաստատագրված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք Բանկը մտադիր է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնց սկզբնական ճանաչման պահին Բանկը նախատեսում է որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- որոնք Բանկը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի կամ
- որոնք համապատասխանում են տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ակտիվները ֆինանսական ակտիվներ են, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես տրամադրված վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ճանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են հաշվապահական հաշվեկշռում, երբ Բանկը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների «կարգավորվող ձևի» գնումները հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ:

Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը տեղի է ունենում իրական արժեքով, իսկ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ ստանձնմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով, առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- տրամադրված վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը և
- սեփական կապիտալի գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Վերջիններս չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով ներկայացված ֆինանսական ակտիվի վերադասակարգումը չի բավարարում ապաճանաչման պահանջները: Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ներառված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Իրական արժեքի չափման հիմունքներ

Ֆինանսական գործիքների իրական արժեքը հիմնված է հաշվետու ամսաթվի դրությամբ գնանշված շուկայական գնի վրա՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները: Եթե գնանշված շուկայական գինը առկա չէ, գործիքի իրական արժեքը որոշվում է գնորոշման մոդելների կամ զեղչված դրամական հոսքերի տեխնիկայի միջոցով:

Զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի օգտագործման դեպքում դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը հիմնվում են ղեկավարության գնահատականի վրա, իսկ զեղչման դրույքը նմանատիպ պայմաններով գործիքի համար կիրառվող շուկայական համապատասխան տոկոսադրույքն է՝ հաշվետու ամսաթվի դրությամբ: Գնորոշման մոդելների կիրառման դեպքում մոդելում օգտագործվում են հաշվետու ամսաթվի դրությամբ շուկայական տվյալները:

Բորսաներում չշրջանառվող ածանցյալ գործիքների իրական արժեքը գնահատվում է այն գումարի չափով, որը Բանկը կստանա կամ կվճարի հաշվետու ամսաթվի դրությամբ պայմանագրի գործողությունը դադարեցնելու դեպքում՝ հաշվի առնելով շուկայի ներկա պայմանները և ներկա պահին պայմանագրային կողմերի վճարունակությունը:

Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ՝

- իրական արժեքով չափվող, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, գործիքների խմբում դասակարգված ֆինանսական գործիքների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ուղղակիորեն սեփական կապիտալում՝ սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվության միջոցով (բացառությամբ արժեզրկումից կորուստների և փոխարժեքային տարբերություններից շահույթի ու վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է, և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով տոկոսները ստացման պահին ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հաշվարկվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև ամորտիզացիայի հաշվարկման միջոցով:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը ապաճանաչվում է, երբ ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքեր ստանալու իրավունքների ուժի մեջ լինելու ժամկետը լրացել է կամ երբ Բանկը փոխանցել է ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները: Բոլոր իրավունքները կամ պարտավորությունները, որոնք առաջացել կամ պահպանվել են փոխանցման ժամանակ, ճանաչվում են առանձին՝ որպես ակտիվներ կամ պարտավորություններ: Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է:

Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ, որոնց դեպքում արժեթղթերն արտացոլվում են հաշվապահական հաշվեկշռում, իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ այլ բանկերի կամ հաճախորդների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ռեպո պայմանագրի գործողության ընթացքում:

Վերավաճառքի նպատակով հակադարձ հետգնման պայմանագրերով («հակադարձ ռեպո») ձեռք բերված արժեթղթերը գրանցվում են որպես բանկերից կամ հաճախորդներից ստացվելիք գումարներ: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսագումար և հաշվեգրվում է հակադարձ ռեպո պայմանագրի գործողության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ հաշվապահական հաշվեկշռում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու՝ իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև՝ հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված՝ շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները հաշվապահական հաշվեկշռում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն տիրապետողի հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս այն տարում, որի ընթացքում կատարվել են:

Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Մետաղադրամների ինքն-

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

արժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և դրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հիմնական միջոցներ

Սեփական ակտիվներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Վարձակալված ակտիվներ

Այն վարձակալությունը, որի դեպքում Բանկին են փոխանցվում ակտիվի սեփականության հետ կապված գրեթե բոլոր ռիսկերն ու օգուտները, համարվում է ֆինանսական վարձակալություն: Ֆինանսական վարձակալությամբ ձեռք բերված սարքավորումները ներկայացված են իրական արժեքից և վարձակալության սկզբում վարձակալության նվազագույն վճարների ներկա արժեքից նվազագույնով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կիրառելով գծային մեթոդը: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Հողի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Շենքեր	10-ից 20 տարի	
Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	5 տարի	
Փոխադրամիջոցներ	5 տարի	
Այլ	5 տարի	

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Ոչ նյութական ակտիվներ

Բանկի կողից ձեռք բերված ոչ նյութական ակտիվները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիայի ծախսը հաշվառվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կիրառելով գծային մեթոդը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Համակարգչային ծրագրեր	3-ից 5 տարի	

Արժեզրկում

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են հաճախորդներին տրված վարկերը, այլ դեբիտորական պարտքերը և չգնաճշված վաճառքի համար մատչելի պարտքային արժեթղթերը («վարկեր և դեբիտորական պարտքեր»): Բանկը կանոնավոր կերպով վերանայում է վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկը կամ դեբիտորական պարտքը արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին, և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն ունի վարկի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Բանկը նախևառաջ գնահատում է՝ արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն առանձին-առանձին՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի են, և առանձին-առանձին կամ խմբային՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի համար, որոնք առանձին վերցված զգալի չեն: Եթե Բանկը որոշում է, որ արժեզրկման անկողմնակալ վկայություն առկա չէ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի համար՝ լինի այն զգալի թե ոչ, ապա այդ վարկը ներառում է պարտքային ռիսկի համանման բնութագիր ունեցող վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և կատարում է խմբային գնահատում՝ արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնց գծով առանձին իրականացվել է արժեզրկման դիտարկում և որոնց գծով ճանաչվել են կամ շարունակում են ճանաչվել արժեզրկման կորուստներ, չեն ներառվում արժեզրկման ընդհանուր գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերություն: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և անցյալի փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ճշգրտումներ են կատարվել ներկա տնտեսական պայմաններն արտացոլող առկա տեղեկատվության հիման վրա, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկման կորստի գումարը գնահատելու համար պահանջվող տեղեկատվությունը կարող է սահմանափակ լինել կամ այլևս ամբողջությամբ չհամապատասխանել ներկա հանգամանքներին: Սա կարող է լինել այն դեպքում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություններ ունի, և Բանկի տրամադրության տակ կան ոչ բավարար տվյալներ համանման վարկառուների մասին: Այս դեպքերում արժեզրկումից կորստի գումարը Բանկը գնահատում է՝ ելնելով իր փորձից ու դատողություններից:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները ներառում են վաճառքի համար մատչելի ակտիվներում ընդգրկված սեփական կապիտալի չգնանշված գործիքները, որոնք չեն հաշվառվում իրական արժեքով, քանի որ դրանք հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել: Եթե առկա է այդ ներդրումների արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարն իրենից ներկայացնում է ներդրման հաշվեկշռային արժեքի և համանման ֆինանսական ակտիվների ներկա շուկայական հատույցադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությունը:

Այս ներդրումների արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ենթակա չեն հակադարձման:

Ոչ ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը՝ իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը և օգտագործման արժեք: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի՝ շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ֆինանսական ակտիվների արժեզրկումից կորուստները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

Պահուստներ

Պահուստը հաշվապահական հաշվեկշռում ճանաչվում է, երբ Բանկն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունը էական է, պահուստները որոշվում են՝ ակնկալվող դրամական հոսքերը զեղչելով զեղչման՝ մինչև հարկումը գործող այն դրույքի կիրառմամբ, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի՝ շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում, պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

Հարկում

Բանկը ազատված է բոլոր տեսակի հարկերից, բացառությամբ ներկրվող ապրանքների համար Հայաստանի Հանրապետության սահմանին գանձվող հարկերից, տուրքերից և մաքսային վճարներից:

Տոկոսային եկամուտ և ծախսեր ու կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

Տոկոսային եկամուտը և ծախսը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հաշվեգրվելուն պես՝ հաշվի առնելով ակտիվի/պարտավորության արդյունավետ տոկոսադրույքը կամ կիրառելի լողացող տոկոսադրույքը: Տոկոսային եկամուտը և ծախսը ներառում են զեղչի կամ հավելավճարի, կամ տոկոսակիր գործիքի սկզբնական հաշվեկշռային արժեքի և մարման ենթակա գումարի միջև այլ տարբերությունների ամորտիզացիան, որը հաշվարկվում է արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա:

Տոկոսային եկամուտը, որը վերաբերում է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներին, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ներառվում է այն շահույթի կազմում, որը ստացվել է իրական արժեքով չափվող ֆինանսական գործիք-

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

ներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Վարկային կազմակերպությունների վճարները, վարկերի սպասարկման վճարները և այլ վճարները, որոնք հարակից ուղղակի ծախսերի հետ դիտարկվում են որպես վարկի ընդհանուր շահութաբերության անբաժան մաս, հետաձգվում են և ամորտիզացվում են տոկոսային եկամտի կազմում ֆինանսական գործիքի օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտը ճանաչվում է համապատասխան ծառայությունը տրամադրելիս:

Համեմատական տեղեկատվություն

Համեմատական տեղեկատվությունում տեղի են ունեցել փոփոխություններ՝ ընթացիկ ֆինանսական տարվա տվյալների ներկայացման հետ համադրելիությունն ապահովելու նպատակով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածում ներառված էին բանկերում տեղաբաշխված ավանդները և ներդրումային արժեթղթերը՝ մինչև 90 օր ժամկետով, 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Ընթացիկ տարում այս ակտիվները դուրս բերվեցին «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածի կազմից՝ դրամական միջոցների և դրանց համարժեքներին վերաբերող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունն արտացոլելու նպատակով: Համապատասխանաբար, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության համեմատական տեղեկատվության հետևողականությունը պահպանելու նպատակով, 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 151,027,144 հազար դրամ գումարով արտացոլված այս ակտիվները «Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ» հոդվածից վերադասակարգվեցին որպես՝

- բանկերում և ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ՝ 98,477,370 հազար դրամ գումարով,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ՝ 52,549,774 հազար դրամ գումարով:

Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Նախորդ տարվա ընթացքում հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների համար իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ստացված շահույթը ներառվել էր տոկոսային եկամտի կազմում՝ 1,076,365 հազար դրամ գումարով: Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների համար իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, ստացված վնասը ներառվել էր կոմիսիոն և այլ վճարների տեսքով ծախսի կազմում՝ 282,071

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

հազար դրամ գումարով: Ընթացիկ տարում զուտ շահույթը ներկայացվել է որպես զուտ շահույթ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գործարքների էությունն առավել ճշգրիտ արտացոլելու նպատակով: Համապատասխանաբար, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության 2005թ. համեմատական տեղեկատվությունը վերադասակարգվել է՝ հետևողականությունը պահպանելու նպատակով:

Հաշվապահական հաշվեկշիռ

Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում հավատարմագրային կառավարման ներքո գտնվող 47,602,452 հազար դրամ գումարով ֆինանսական գործիքները հաշվապահական հաշվեկշռում ներկայացվել են որպես օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների պարտավորություններ: Ի լրումն, այս ակտիվները հաշվանցվել էին 267,539 հազար դրամ բացասական իրական արժեքով ածանցյալ գործիքների դիմաց: Ընթացիկ տարում այս ֆինանսական գործիքները չեն հաշվանցվել և առանձին ներկայացվել են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ գործարքների էությունն առավել ճշգրիտ արտացոլելու նպատակով: Համապատասխանաբար, հաշվապահական հաշվեկշռի համեմատական տեղեկատվությունը վերադասակարգվել է, և բացասական ածանցյալ գործիքները ներկայացվել են որպես իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում Հայաստանի Հանրապետության 59,196,581 հազար դրամ գումարով բաժնեմասը (քվոտան) (անդամակցությունը) Արժույթի միջազգային հիմնադրամում («ԱՄՀ») ներկայացվել էր որպես հատուկ փոխառության իրավունքով ակտիվ ԱՄՀ-ում: Ի լրումն, Հայաստանի Հանրապետության կողմից վճարման ենթակա մուրհակը և ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող այլ վճարվելիք գումարները, որոնց ընդհանուր գումարը համապատասխանում էր բաժնեմասի գումարին, ներառվել էին պարտավորությունների կազմում՝ որպես ԱՄՀ-ի հանդեպ պարտավորություններ: Ընթացիկ տարում վերը նշված ակտիվները և պարտավորությունները դուրս են բերվել ակտիվների և պարտավորությունների կազմից, քանի որ պատկանում են Հայաստանի Հանրապետությանը: Հետևողականությունը պահպանելու նպատակով՝ այս հաշիվները չեն ներառվել 2005թ. համեմատական տեղեկատվությունում:

Նախորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում Հայաստանի Հանրապետության կողմից ԱՄՀ-ից ստացված և Բանկում տեղաբաշխված ԱԿՏԱ (Աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման) վարկը հաշվապահական հաշվեկշռում ներկայացվել էր որպես փոխառություն ԱՄՀ-ից՝ 79,411,892 հազար դրամ

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

գումարով: Այս տարվա ֆինանսական հաշվետվություններում վարկը ներառվել է Հայաստանի Հանրապետության կառավարության հանդեպ պարտավորությունների կազմում, քանի որ Բանկի կողմից ենթակա է վճարման Հայաստանի Հանրապետության կառավարությանը: Համապատասխանաբար, համեմատական տեղեկատվությունը վերադասակարգվել է՝ հետևողականությունը պահպանելու նպատակով:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

Ինչպես արդեն ներկայացվել է, հաշվապահական հաշվառման քաղաքականությունը Բանկի կողմից կիրառվել է հետևողականորեն, բացառությամբ ստորև ներկայացված փոփոխությունների:

2006թ. հունվարի 1-ի դրությամբ Բանկն ընդունել է Ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտ ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. Ճանաչում և չափում - «Իրական արժեքի ընտրանք»» փոփոխությունը: Այս փոփոխությունն ընդունելուց հետո Բանկը ֆինանսական գործիքը կարող է նախատեսել որպես իրական արժեքով չափվող, որի վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ որոշակի պայմաններ բավարարելու դեպքում: 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական գործիքները, որոնք նախատեսվել են որպես իրական արժեքով չափվող, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, համապատասխանում էին փոփոխության պահանջներին և պահպանել են այդ դասակարգումը՝ վերջինիս կիրառումից հետո:

2006թ. ընթացքում Բանկը փոփոխություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականությունում, որի արդյունքում դրամական միջոցների և դրանց համարժեքների կազմից դուրս են բերվել բանկերում տեղաբաշխված ավանդները և 90 օր մարման ժամկետով ներդրումային արժեթղթերը: Ղեկավարությունը գտնում է, որ այս մոտեցումն առավել հստակ է արտացոլում դրամական միջոցների կառավարման Բանկի քաղաքականությունը:

Դեռևս չընդունված նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Ստորև ներկայացված նոր ստանդարտները, ստանդարտների փոփոխությունները և մեկնաբանությունները չէին գործում 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Բանկը մտադիր է ընդունել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ:

- ՖՀՄՍ 7 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտում»*- գործում է 2007թ. հունվարի 1-ին կամ հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստանդարտը պահանջում է Բանկի ֆինանսական գործիքների առավել ընդլայնված բացահայտում:
- ՀՀՄՍ 1 *«Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում - Կապիտալին վերաբերող բացահայտումներ»* ստանդարտի փոփոխություն, որը գործում է 2007թ. հունվարի 1-ին կամ հետո

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Ստանդարտը պահանջում է Բանկի կապիտալի առավել ընդլայնված բացահայտում:

- ՄՖՀՄԿ 9 *«Պարունակվող ածանցյալ գործիքների էության վերագնահատում»*- պահանջում է իրականացնել գործիքների էության վերագնահատում՝ նպատակ ունենալով պարզելու, թե արդյոք պարունակվող ածանցյալ գործիքը պետք է առանձնացվի հիմնական պայմանագրից՝ միայն վերջինիս փոփոխության դեպքում: ՄՖՀՄԿ 9 պարտադիր է դառնում Բանկի 2007թ. ֆինանսական հաշվետվությունների համար:

4. Տոկոսային եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով		
Ժամկետային ավանդներ	8,118,941	4,626,547
Վաճառքի համար մատչելի ակտիվներ և մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	2,547,436	3,116,911
Նոստրո հաշիվներ	1,131,074	701,145
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	235,674	103,883
	12,033,125	**8,548,486**
Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով		
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	924,619	919,860
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	665,557	459,394
Այլ	17,688	11,813
	1, 607,864	**1,391,067**
	13,640,989	**9,939,553**

5. Տոկոսային ծախս

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
ՀՀ կառավարությանը վճարվելիք գումարներ	345,127	436,595
Այլ փոխառություններ	77,234	66,969
Այլ պարտավորություններ	69,624	20,331
	491,985	**523,895**
Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով		
Թողարկված պարտքային արժեթղթեր	1,451,430	279,940
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	445,064	1,811,279
Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ	43,642	140,845
Այլ պարտավորություններ	69,762	73,150
	2,009,898	**2,305,214**
	2,501,883	**2,829,109**

6. Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Վնաս դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից	36,013,048	16,692,821
Զուտ (շահույթ)/վնաս սփոթ գործարքներից	1,913,958	(221,843)
	37,927,006	**16,470,978**

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

7. Զուտ շահույթ իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Զուտ շահույթ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով, բացառությամբ արտարժույթի վերագնահատումից	2,147,505	794,294
Զուտ շահույթ սեփական կառավարման ներքո գտնվող օտարերկրյա արժեթղթերի գծով, բացառությամբ արտարժույթի վերագնահատումից	651,880	-
Հավատարմագրային կառավարման գծով վճարներ	(100,381)	(69,075)
	2,699,004	**725,219**

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված վնասի կազմում ներառված է 13,952,537 հազար դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից վնասը իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում (2005թ-ին՝ 1,963,005 հազար դրամ):

8. Այլ եկամուտ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Նախկինում դուրս գրված դեբիտորական պարտքերի մարում	542,551	304,504
Զուտ եկամուտ դրամագիտական արժեքների վաճառքից	62,079	26,351
Այլ եկամուտ	96,216	75,565
	700,846	**406,420**

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

9. Ընդհանուր վարչական ծախսեր

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ	2,606,728	2,032,750
Պահուստների անվտանգություն և սպասարկում	442,008	271,931
Մաշվածություն և ամորտիզացիա	739,984	760,402
Վերանորոգում և տեխնիկական սպասարկում	239,378	282,431
Մասնագիտական ծառայություններ	99,666	59,932
Այլ	449,409	418,392
	4,577,173	**3,825,838**

10. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Ժամկետային ավանդներ	255,364,239	125,169,783
Նոստրո հաշիվներ	25,470,880	28,700,242
Հաշվեգրված տոկոսներ ավանդների և նոստրո հաշիվների գծով	2,083,644	520,696
Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ	282,352	1,308,508
	283,201,115	**155,699,229**

Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում

2006թ. և 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը ուներ տեղաբաշխված միջոցներ համապատասխանաբար 7 և 4 բանկերում ու ֆինանսական հաստատություններում, որոնց մնացորդները գերազանցում էին բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2006թ. և 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 229,598,575 հազար դրամ և 104,195,383 հազար դրամ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

11. Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում

հազար ՀՀ դրամ

	2006	2005
ԱԿՏԻՎՆԵՐ		
Պարտքային և հաստատագրված եկամուտով այլ գործիքներ - Գնանշված		
Արտերկրյա կառավարությունների արժեթղթեր սեփական կառավարման ներքո	38,566,365	-
Արժեթղթեր հավատարմագրային կառավարման ներքո	40,227,658	47,602,452
	78,794,023	**47,602,452**
Ածանցյալ ֆինանսական գործիքներ - Գնանշված		
Պայմանագրեր արտարժույթով	646,928	-
	79,440,951	**47,602,452**

Սկզբնական ճանաչման պահին պարտքային և հաստատագրված եկամուտով այլ գործիքները Բանկի կողմից նախատեսվել են որպես ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հավատարմագրային կառավարման ներքո գնտվող արժեթղթերը իրենցից ներկայացնում են արտերկրյա կառավարությունների պարտքային արժեթղթեր՝ 26,166,949 հազար դրամ (2005թ-ին՝ 33,237,868 հազար դրամ) գումարով և արտերկրյա ֆինանսական հաստատությունների արժեթղթեր՝ 14,060,709 հազար դրամ (2005թ-ին՝ 14,364,584 հազար դրամ) գումարով: Բոլոր այս գործիքները գնահատվում են որպես A2 կամ ավելի բարձր՝ ըստ Մուդիի (Moody's) դրույքաչափերի:

հազար ՀՀ դրամ

	2006	2005
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		
Ածանցյալ ֆինանսական գործիքներ - Գնանշված		
Ֆորվարդային պայմանագրեր արտարժույթով	-	267,539

Հավատարմագրային կառավարման ներքո գտնվող արժեթղթերը և ֆորվարդային պայմանագրերը օտարերկրյա ֆինանսական հաստատությունների կողմից կառավարվող ակտիվներ են: Բանկի կողմից սահմանվել են ռիսկերին ենթարկվածության սահմանաչափեր և ներդրումային ուղեցույցներ:

Պայմանագրեր արտարժույթով

Ստորև, ըստ հիմնական արժույթների, ներկայացված են 2006թ. դեկտեմբերի դրությամբ Բանկի ֆորվարդային պայմանագրերի պայմանագրային գումարները, ինչպես նաև պայմանագրերով սահմանված փոխարժեքները և մարման ժամկետը: Ստորև ներկայացված արտարժույթի գումարները փոխարկվում են հաշվետու ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Չիրացված շահույթը և վնասը, որոնք ստացվել են ժամկետը չլրացած պայմանագրերից և այն պայմանագրերի գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքերը, որոնց ժամկետը լրացել է, սակայն որոնց գծով վճարներ չեն կատարվել/չեն ստացվել, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ֆինանսական գործիքների կազմում, որոնց վերաչափումից օգուտները և վնասները համապատասխանաբար ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

հազար ՀՀ դրամ

	Անվանական արժեք (հազար դրամ)		Պայմանագրային միջին կշռված փոխարժեք	
	2006	2005	2006	2005
ԱՄՆ դոլարի առք/կանադական դոլարի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	590,583	729,985	0.8764	0.8636
Եվրոյի առք/ԱՄՆ դոլարի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	282,975	-	0.7557	-
ԱՄՆ դոլարի առք/եվրոյի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	15,004,849	13,759,794	1.3322	1.1787
ԱՄՆ դոլարի առք/անգլիական ֆունտ ստեռլինգի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	1,355,374	1,544,408	1.9768	1.7433
ԱՄՆ դոլարի առք/ճապոնական իենի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	11,814,041	11,170,643	0.0087	0.0083
Ճապոնական իենի առք/ԱՄՆ դոլարի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	487,986	-	116.57	-
ԱՄՆ դոլարի առք/շվեդական կրոնայի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	1,357,790	1,191,043	0.1478	0.1252
Շվեդական կրոնայի առք/ԱՄՆ դոլարի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	133,802	-	6.8461	-
Սինգապուրի դոլարի առք/ԱՄՆ դոլարի վաճառք				
Մինչև երեք ամիս ժամկետով	416,510	-	1.5360	-

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

12. Վաճառքի համար մատչելի ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Վաճառքի համար մատչելի ներդրումներ արտարժույթով		
Պարտքային և հաստատագրված եկամուտով գործիքներ - Գնանշված		
Արտերկրյա կառավարությունների արժեթղթեր սեփական կառավարման ներքո	21,433,820	-
Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնանշված		
SWIFT	1,216	1,301
	21,435,036	**1,301**

2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ մինչև մարման ժամկետը պահվող բոլոր ներդրումները վերադասակարգվել են վաճառքի համար մատչելի ներդրումների, քանի որ 2006թ. ընթացքում ղեկավարությունը փոխել է իր մտադրությունը՝ որոշելով չպահել այս ներդրումները մինչև մարման ժամկետը:

	2006	2005
Վաճառքի համար մատչելի ներդրումներ տեղական արժույթով		
Պարտքային և հաստատագրված եկամուտով գործիքներ		
ՀՀ Կառավարության պետական գանձապետական արժեթղթեր	4,023,681	5,676,708
ՀՀ կառավարության մուրհակ	12,759,357	-
	16,783,038	**5 676 708**
Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնանշված		
Ներդրումներ չհամախմբված դուստր ընկերություններում	2,351,722	2,400,295
Այլ ներդրումներ սեփական կապիտալում	36,740	74
	2,388,462	**2,400,369**
	19,171,500	**8,077,077**

12,734,237 հազար դրամ անվանական արժեքով մուրհակը ՀՀ կառավարության կողմից թողարկվել է որպես անհատույց ներդրում Բանկում: Մուրհակը թողարկվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 12,734,237 հազար դրամ գումարով սեփական կապիտալի բացասական պահուստները ծածկելու նպատակով: 2006թ-ին մուրհակի համար սահմանվել էր տարեկան 4% տոկոսադրույք, և տոկոսագումարը վճարվում էր տարեկան կտրվածքով: Օրենքի համաձայն՝ տոկոսագումարը ենթակա է

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

վճարման յուրաքանչյուր տարի և որոշվում է շուկայական ներկա դրույքների հիման վրա: Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորում է դրա իրական արժեքը: Ակնկալվում է, որ 2007թ-ին մուրհակը կփոխարինվի ՀՀ կառավարության կողմից թողարկված նոր մուրհակով:

Ստորև ներկայացված են Բանկի ֆինանսական հաշվետվություններում չհամախմբված դուստր ընկերությունները:

Անվանումը	Հիմնադրման երկիրը	Հիմնական գործունեությունը	Վերահսկվող (%)		2006 Հաշվեկշռ. արժեք (հազար դրամ)	2005 Հաշվեկշռ. արժեք (հազար դրամ)
			2006	2005		
«Արմենիան Քարդ»	Հայաստանի Հանրապետություն	Վճարումների սպասարկում	66	74	400,722	449,295
«Հայինկասացիա»	Հայաստանի Հանրապետություն	Դրամ. միջոցների փոխադրումներ	94	94	1,951,000	1,951,000
					2,351,722	**2,400,295**

Վերը ներկայացված դուստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները չեն համախմբվել Բանկի ֆինանսական հաշվետվություններում, քանի որ համախմբումն էական ազդեցություն չէր ունենա Բանկի ֆինանսական հաշվետվությունների վրա:

Վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքները ներկայացված են սկզբնական արժեքով: Այս ներդրումների համար գործող շուկա գոյություն չունի, և վերջերս տեղի չեն ունեցել այնպիսի գործարքներ, որոնք կարող էին տեղեկություն տալ նրանց ընթացիկ իրական արժեքի մասին: Ի լրումն, զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկայի կիրառման արդյունքում ստացվել են տարբեր իրական արժեքներ, ինչը պայմանավորված է դրամական միջոցների ապագա հոսքերի առկայության անորոշությամբ:

13. Արժույթի միջազգային հիմնադրամ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով		
ՀՓԻ ԱՄՀ-ում	5,074,357	4,581,721
Հաշվեգրված տոկոսներ	43,098	30,587
	5,117,455	**4,612,308**

Բանկն ունի ՀՓԻ-ով արտահայտված ընթացիկ հաշիվ ԱՄՀ-ում, որն օգտագործվում է ԱՄՀ-ի հետ գործարքներ իրականացնելու նպատակով: Այս ընթացիկ հաշվի համար սահմանված տոկոսա-

դրույքը հաշվարկվում է ՀՓԻ տոկոսադրույքի հիման վրա, որը ստացվում է շաբաթական կտրվածքով՝ որպես ՀՓԻ-ի զամբյուղը կազմող չորս արժույթների դրամային շուկայի եռամսյա ժամկետով գործիքների ընտրված դրույքաչափերի կշռված միջին: 2006թ-ին դրույքաչափը տարեկան տատանվում էր 3.03%-ից 4.07% (2005թ-ին՝ տարեկան 2.22%-ից 3.03%):

Համաձայն ԱՄՀ կանոնադրության՝ Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ֆիսկալ գործակալ և միաժամանակ գործում է որպես ԱՄՀ-ի պահառու Հայաստանի Հանրապետությունում: Այդպիսով, Բանկը գրառումներ է վարում ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցության բաժնեմասի և ԱՄՀ-ում Հայաստանի Հանրապետության անդամակցությանը վերաբերող մուրհակի վերաբերյալ: Այս մնացորդները ներառված չեն Բանկի հաշվապահական հաշվեկշռում, քանի որ Բանկը այս գործարքների հետ կապված հանդես է գալիս միայն որպես գործակալ: Ստորև ներկայացված են համապատասխան տվյալները:

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն)	50,301,903	59,196,581
ԱՄՀ-ում անդամակցության մուրհակ (տեղական արժույթով արտահայտված) և պարտավորություններ՝ ըստ թիվ 2 հաշվի	50,301,903	59,196,581

14. Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Վարկեր տեղական բանկերին՝ KFW բանկի հետ համաձայնագրի շրջանակներում	11,917,775	11,928,247
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	3,358,937	-
Այլ վարկեր	13,590	21,619
	15,290,302	**11,949,866**

KFW բանկի հետ պայմանագրի շրջանակներում վարկեր էին տրամադրվել տեղական հինգ բանկերի (տես՝ ծանոթագրություն 19), որոնց համար սահմանված է տարեկան 6%-ից 8% տոկոսադրույք:

2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրերի գծով կրեդիտորական պարտքեր ունեին հինգ տեղական բանկեր: Այս պայմանագրերի դիմաց գրավադրված էին հետևյալ արժեթղթերը.

հազար ՀՀ դրամ

	Իրական արժեք
ՀՀ կառավարության պետական գանձապետական պարտատոմսեր	2,280,818
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մուրհակներ	1,072,786
	3,353,604

15. Հիմնական միջոցներ

հազար ՀՀ դրամ

	Հող և շենքեր	Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ	Փոխադրամիջոցներ	Այլ	Ընդամենը
Սկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2005թ.	4,772,617	3,007,898	229,627	1,555,828	9,565,970
Ավելացումներ	865,889	337,807	7,900	67,028	1,278,624
Օտարումներ	(4,193)	(79,757)	(24,169)	(15,030)	(123,149)
Վերադասակարգումներ	(99,867)	-	-	99,867	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005թ.	5,534,446	3,265,948	213,358	1,707,693	10,721,445
Մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	5,534,446	3,265,948	213,358	1,707,693	10,721,445
Ավելացումներ	1,135,740	295,118	42,203	216,842	1,689,903
Օտարումներ	(9,986)	(187,750)	-	(69,196)	(266,932)
Վերադասակարգումներ	-	(48,906)	-	48,906	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	6,660,200	3,324,410	255,561	1,904,245	12,144,416
Մաշվածություն					
Մնացորդը առ 1 հունվարի 2005թ.	896,592	2,059,678	118,383	945,217	4,019,870
Ավելացումներ	205,468	270,562	28,574	229,633	734,237
Օտարումներ	(4,193)	(79,758)	(22,528)	(14,463)	(120,942)
Վերադասակարգումներ	(20,178)	-	-	20,178	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005թ.	1,077,689	2,250,482	124,429	1,180,565	4,633,165
Մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	1,077,689	2,250,482	124,429	1,180,565	4,633,165
Ավելացումներ	207,369	297,296	25,729	176,148	706,542
Օտարումներ	(2,936)	(187,699)	-	(65,772)	(256,407)
Վերադասակարգումներ	-	(46,401)	-	46,401	-
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	1,282,122	2,313,678	150,158	1,337,342	5,083,300
Զուտ հաշվեկշռային արժեք					
Առ 1 հունվարի 2005թ.	3,876,025	948,220	111,244	610,611	5,546,100
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	4,456,757	1,015,466	88,929	527,128	6,088,280
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	5,378,078	1,010,732	105,403	566,903	7,061,116

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

16. Ոչ նյութական ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	Համակարգչային ծրագրեր
Սկզբնական արժեք	
Մնացորդը առ 1 հունվարի 2005թ.	190,376
Ավելացումներ	28,835
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005թ.	219,211
Մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	219,211
Ավելացումներ	26,012
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	245,223
Ամորտիզացիա	
Մնացորդը առ 1 հունվարի 2005թ.	115,132
Ավելացումներ	26,165
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2005թ.	141,297
Մնացորդը առ 1 հունվարի 2006թ.	141,297
Օտարումներ	33,442
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2006թ.	174,739
Զուտ հաշվեկշռային արժեք	
Առ 1 հունվարի 2005թ.	75,244
Առ 31 դեկտեմբերի 2005թ.	77,914
Առ 31 դեկտեմբերի 2006թ.	70,484

17. Այլ ակտիվներ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Դրամագիտական արժեքներ	307,197	152,574
Դեբիտորական պարտքեր	90,966	47,452
Այլ ակտիվներ	168,344	126,839
	566,507	**326,865**

18. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Պարտավորություններ արտարժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	23,628,832	22,277,775
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ	1,693,225	1,877,385
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	488,196	112,620
	25,810,253	**24,267,780**
Պարտավորություններ տեղական արժույթով		
Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ	38,721,925	29,961,284
Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ և ընթացիկ հաշիվ	332,441	544,767
Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ	247,483	497,662
	39,301,849	**31,003,713**

Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդների և մնացորդների կենտրոնացում

2006թ. և 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկում միջոցներ էին տեղաբաշխել երեք և երկու տեղական բանկեր, որոնց մնացորդները գերազանցում էին բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ընդհանուր ավանդների և մնացորդների 10%-ը: 2006թ. և 2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդների ընդհանուր արժեքը կազմում էր համապատասխանաբար 23,277,651 հազար դրամ և 18,214,734 հազար դրամ:

19. Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
ՀՀ կառավարությանը վճարվելիք գումարներ ԱՄՀ-ից ստացված վարկերի գծով	59,487,180	79,411,892
Այլ հաշիվներ	206,972	39,493,293
	59,694,152	**118,905,185**

ՀՀ կառավարությունը ԱՄՀ-ից ստացել և Բանկում է տեղաբաշխել ԱԿՏԱ (Աղքատության կրճատման և տնտեսական աճի խթանման) վարկը:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

20. Այլ փոխառություններ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Վարկեր KFW բանկից	8,028,783	8,928,045
Հաշվեգրված տոկոսներ	14,310	186
	8,043,093	**8,928,231**

Բանկին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը հատուկ վարկային ծրագրերի ֆինանսավորումն է՝ տեղական բանկերի միջոցով (տես՝ ծանոթագրություն 14): Վարկերը ենթակա են մարման 2008թ-ից 2043թ. ընկած ժամանակաշրջանում: Վարկի օգտագործված մասի համար վճարվում է տարեկան 0.75% տոկոսադրույք, իսկ չօգտագործված մասի համար՝ 0.25% տոկոսադրույք: Վարկերի մարումը KFW-ին երաշխավորվում է ՀՀ կառավարության կողմից:

21. Այլ պարտավորություններ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Աշխատակիցների ցպահանջ ավանդներ	684,632	555,151
Այլ պարտավորություններ	262,029	149,996
	946,661	**705,147**

22. Սեփական կապիտալ

Թողարկված կապիտալ

Բանկի թողարկված կապիտալը Հայաստանի Հանրապետության սեփականությունն է և չի կարող գրավադրվել, վաճառվել կամ օտարվել:

Լրացուցիչ կանոնադրական կապիտալ

Լրացուցիչ կանոնադրական կապիտալը մուրհակի տեսքով ՀՀ կառավարության կողմից կատարած ներդրում է (տես՝ ծանոթագրություն 12):

Գլխավոր պահուստ

Գլխավոր պահուստը ձևավորվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման:

23. Ռիսկերի կառավարում

Ռիսկերի կառավարումը էական գործոն է բանկային ոլորտի համար և Բանկի գործառնությունների կարևոր տարր է: Բանկի հիմնական ռիսկերը կապված են շուկայական ռիսկի, որը ներառում է գնային, իրական արժեքի տոկոսադրույքի և արժութային ռիսկերը, ինչպես նաև վարկային և իրացվելիության ռիսկերի հետ: Այս ռիսկերը կառավարվում են հետևյալ կերպ.

Շուկայական ռիսկ

Գնային ռիսկ

Գնային ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի արժեքը կտատանվի որպես շուկայական գների փոփոխության արդյունք, անկախ այն բանից՝ այդ փոփոխություններն առաջացել են առանձին գործիքի, թե շուկայում շրջանառող բոլոր գործիքների վրա ազդող գործոնների պատճառով: Գնային ռիսկն առաջանում է, երբ ֆինանսական գործիքի գծով Բանկի դիրքը դառնում է «երկար» կամ «կարճ»:

Իրական արժեքի տոկոսադրույքի ռսիկ

Իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկն այն ռիսկն է, որ ֆինանսական գործիքի իրական արժեքը կտատանվի որպես շուկայական տոկոսադրույքի փոփոխության արդյունք: Իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկն առաջանում է այն ժամանակ, երբ տվյալ ժամանակահատվածի փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են (կամ պակաս են) տվյալ ժամանակահատվածի փաստացի կամ կանխատեսված պարտավորությունները: Ծանոթագրություններ 29-ում և 30-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն իրական արժեքի տոկոսադրույքի ռիսկին Բանկի ենթարկվածության մասին:

Արժութային ռիսկ

Բանկն ունի մի շարք արտարժույթներով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ: Արտարժույթի ռիսկն առաջանում է, երբ արտարժույթով արտահայտված փաստացի կամ կանխատեսված ակտիվները գերազանցում են (կամ պակաս են) նույն արտարժույթով արտահայտված պարտավորությունները: Ծանոթագրություններ 11-ում և 31-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն արժութային ռիսկին Բանկի ենթարկվածության մասին:

Բանկը շուկայական ռիսկը կառավարում է՝ կիրառելով բաց դիրքի սահմանափակումներ ֆինանսական գործիքի, տոկոսադրույքի ժամկետայնության և արժույթի դիրքերի հանդեպ, որոնք կանոնավոր վերահսկվում, ուսումնասիրվում և հաստատվում են ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

Վարկային ռիսկ

Վարկային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ փոխառուն կամ պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարելու իր պարտավորությունները Բանկի հանդեպ: Բանկը մշակել է քաղա-

քականություն և ընթացակարգեր՝ վարկային ռիսկը կառավարելու համար, ներառյալ կենտրոնացվածության սահմանափակմանը վերաբերող ցուցումները և Ներդրումային կոմիտեի ստեղծումը, որն ակտիվորեն վերահսկում է Բանկի վարկային ռիսկը: Բանկի վարկային քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը, այն ռիսկն է, որ Բանկը կհանդիպի դժվարությունների՝ ֆինանսական գործիքների հետ կապված պարտավորությունները մարելու համար միջոցներ հայթայթելիս: Բանկի կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտավորությունները մարելու համար: Բանկի իրացվելիության ռիսկի քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից: Ծանոթագրություն 30-ում ներկայացված է լրացուցիչ տեղեկատվություն իրացվելիության ռիսկին Բանկի ենթարկվածության մասին:

24. Պարտավորվածություններ

2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալի գծով պարտավորվածությունները, որոնք վերաբերում էին Բանկի շենքերի շինարարությանը, կազմում էին 48,725 հազար դրամ:

25. Պայմանական դեպքեր

Իրավական պարտավորություններ

Բանկի ղեկավարությունը տեղյակ չէ Բանկի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

Երաշխիքներ

2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկը տրամադրել էր 2,458,000 հազար դրամ գումարով երաշխիքներ, որոնցից 1,800,000 հազար դրամ գումարով երաշխիքները տրամադրվել էին տեղական բանկի անունից, իսկ 658,000 հազար դրամ գումարով երաշխիքները տրվել էին 1994թ-ից 1995թ. ընկած ժամանակաշրջանում շինարարական ընկերությունների անունից՝ երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքներն իրենցից ներկայացնում են չեղյալ չհամարվող հաստատումներ առ այն, որ Բանկը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարել իր պարտականությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի:

Deleted: Գ ***Ապահովագրություն Գ*** Գ. Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկի շենքերը և սարքավորումները ապահովագրված չեն: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Բանկի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասի արդյունքում: Քանի դեռ Բանկը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ ... [1]

26. Գործարքներ կապակցված կողմերի հետ

Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ» հոդվածում ներառված ընդհանուր վարձատրությունը (տես՝ ծանոթագրություն 9):

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Ղեկավար անձնակազմը, ներառյալ Բանկի խորհրդի անդամները	117,863	104,303

Ստորև ներկայացված են 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2006 *հազար դրամ*	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2005 *հազար դրամ*	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Պարտավորություններ				
Ավանդներ	134,000	12%	91,659	16%

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային ծախս	12,828	13,089

Գործարքներ դուստր ընկերությունների հետ

Դուստր ընկերությունների հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Ընդհանուր վարչական ծախսեր	346,434	185,522

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Գործարքներ ՀՀ կառավարության հետ

Ստորև ներկայացված են 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

	2006 *հազար դրամ*	Միջին արդյունավետ տոկոսադրույք	2005 *հազար դրամ*	Միջին արդյունավետ տոկոսադրույք
Հաշվապահական հաշվեկշիռ				
Ակտիվներ				
ՀՀ կառավարության պետական գանձապետական արժեթղթեր	4,023,681	6,72%	5,676,708	6,72%
Որպես լրացուցիչ կանոնադրական կապիտալ ՀՀ կառավարության կողմից Բանկի համար թողարկված մուրհակից (ծանոթագրություն 12)	12,759,357	4,00%	-	-
Պարտավորություններ				
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ (տեղական արժույթով)	61,532,562	1,75%	21,993,849	1,00%
ՀՀ կառավարությանը վճարվելիք գումարներ՝ ԱՄՀ-ից ստացված վարկերի հետ կապված (ՀՓԻ)	59,487,180	0,50%	79,411,892	0,50%
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ (այլ արտարժույթով)	206,972	0,00%	39,493,293	0,00%

ՀՀ կառավարության հետ գործարքների գծով ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն		
Տոկոսային եկամուտ ՀՀ կառավարության պետական գանձապետական արժեթղթերի գծով	344,584	459,394
Տոկոսային եկամուտ որպես լրացուցիչ կանոնադրական կապիտալ ՀՀ կառավարության կողմից Բանկի համար թողարկված մուրհակի գծով	320,973	-
Զուտ շահույթ/(վնաս) սփոթ գործարքներից	(2,299,807)	274,511
ԱՄՀ-ից ստացված վարկերի հետ կապված ՀՀ կառավարությանը վճարվելիք գումարների գծով վճարված տոկոսներ	(345,127)	(436,596)
ՀՀ կառավարության հանդեպ այլ պարտավորությունների գծով վճարված տոկոսներ	(445,064)	(1,811,279)

Սփոթ գործարքներից ստացված վնասի կազմում ներառված 2,688,214 հազար դրամ գումարով վնասը վերաբերում է ՀՀ կառավարության հետ իրականացված գործարքին:

Deleted: շուկայական փոխարժեքներից տարբեր փոխարժեքներով

Deleted: ներ

27. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար ՀՀ դրամ

	2006	2005
Դրամական միջոցներ	491,363	269,956
Նոստրո հաշիվներ	25,470,880	28,700,242
ՀՓԻ ԱՄՀ-ում	5,074,357	4,581,721
	31,036,600	**33,551,919**

28. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Բանկը իր ֆինանսական գործիքների գնահատումը իրականացրել է ՀՀՄՍ 32 *«Ֆինանսական գործիքներ. Բացահայտում և ներկայացում»* ստանդարտի պահանջների համաձայն, պարզելու համար ժամանակի և ծախսի սահմանափակումների ներքո դրանց իրական արժեքը բավարար արժանահավատությամբ որոշելու հնարավորությունը:

Բանկի գնահատմամբ՝ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված գործիքների իրական արժեքի, էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերում պահվող վաճառքի համար մատչելի ակտիվների, հաշվարկվում են՝ կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկական դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա՝ օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի զեղչման դրույքը:

Ինչպես ներկայացված է ծանոթագրություն 12-ում, 2,388,462 հազար դրամ (2005թ-ին՝ 2,400,369 հազար դրամ) հաշվեկշռային արժեքով սեփական կապիտալի չգնանշված արժեթղթերի իրական արժեքը հնարավոր չէր որոշել:

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ կողմերի միջև «պարզած ձեռքի հեռավորության գործարքի» ժամանակ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի՝ ակտիվների անմիջական վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

29. Միջին արդյունավետ տոկոսադրույքներ

Աղյուսակում ներկայացված են 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի տոկոսակիր ակտիվները և պարտավորությունները և վերջիններիս համապատասխան՝ միջին արդյունավետ տոկոսադրույքներն այդ ամսաթվի դրությամբ: Այս տոկոսադրույքներն իրենցից ներկայացնում են մինչև այս ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետն ընկած ժամանակահատվածի մոտավոր եկամտաբերությունը:

	Արժեք *հազար դրամ*	2006թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք	Արժեք *հազար դրամ*	2005թ. Միջին արդյունավետ տոկոսադրույք
ՏՈԿՈՍԱՅԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ				
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ				
Նոստրո հաշիվներ				
- ԱՄՆ դոլար	19,777,226	5,19%	19,166,051	3,44%
- եվրո	4,903,265	2,08%	8,773,477	3,55%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	673,108	4,00%	670,691	3,50%
- այլ արժույթներ	123,876	0,00%	90,023	0,00%
Ավանդներ և այլ մնացորդներ օտարերկրյա բանկերում				
- ԱՄՆ դոլար	157,709,310	5,44%	80,775,827	4,60%
- եվրո	58,788,462	3,54%	13,203,744	2,26%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	33,164,714	5,17%	32,471,628	4,52%
- այլ արժույթներ	8,061,154	7,00%	547,788	0,00%
	283,201,115		**155,699,229**	
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում				
Արտերկրյա կառավարությունների արժեթղթեր՝ սեփական կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	38,566,365	4,86%	-	-

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Արժեթղթեր հավատարմագրային կառավարման ներքո				
- ԱՄՆ դոլար	11,463,019	4,91%	12,420,086	4,14%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	1,383,044	4,37%	1,949,646	4,40%
- եվրո	14,708,355	3,27%	17,106,365	2,99%
- ճապոնական իեն	11,430,834	0,39%	13,641,432	0,28%
- այլ արժույթներ	1,889,334	3,59%	2,484,923	3,70%
	79,440,951		**47,602,452**	
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր				
- ՀՀ դրամ	15,290,302	6,80%	11,949,866	7,38%
Վաճառքի համար մատչելի ակտիվներ				
- ՀՀ դրամ	12,759,357	4,00%	-	-
- ՀՀ դրամ	4,023,681	6,72%	5,676,708	6,72%
- ՀՀ դրամ (ներդրումներ սեփական կապիտալում)	2,388,462	0,00%	2,400,369	0,00%
- ԱՄՆ դոլար	12,493,077	3,78%	-	-
- անգլիական ֆունտ ստեռլինգ	8,940,743	4,46%	-	-
- եվրո (ներդրումներ սեփական կապիտալում)	1,216	0,00%	1,301	0,00%
	40,606,536		**8,078,378**	
Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ				
- ԱՄՆ դոլար	-	-	77,937,768	3,61%
- անգլիական ֆունտ ստեռլինգ	-	-	46,518,761	2,34%
- եվրո	-	-	10,714,857	4,44%
	-		**135,171,386**	
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ				
- ՀՓԻ	5,117,455	4,07%	4,612,308	3,03%
ՏՈԿՈՍԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ				
Տեղական բանկերի ավանդներ				
- ՀՀ դրամ	7,400,000	1,75%	7,700,000	1,00%
Լորո հաշիվներ տեղական բանկերում				
- ՀՀ դրամ	31,321,925	0,00%	22,261,284	0,00%
- այլ արժույթներ	23,628,832	0,00%	22,277,775	0,00%

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

Այլ ժամկետային ավանդներ				
- եվրո	1,693,225	4,23%	1,877,385	3,30%
- ՀՀ դրամ	332,441	4,23%	544,767	3,30%
Այլ հաշիվներ				
- ՀՀ դրամ	247,483	0,00%	497,662	0,00%
- այլ արժույթներ	488,196	0,00%	112,620	0,00%
	65,112,102		**55,271,493**	
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ				
- ՀՀ դրամ	61,532,562	1,75%	21,993,849	1,00%
- ՀՓԻ	59,487,180	0,50%	79,411,892	0,50%
- ԱՄՆ դոլար	206,972	0,00%	39,493,293	0,00%
	121,226,714		**140,899,034**	
Այլ փոխառություններ				
- եվրո	8,043,093	0,75%	8,928,231	0,75%
Թողարկված պարտքային արժեթղթեր				
- ՀՀ դրամ	38,987,836	5,70%	21,482,856	4,31%
Այլ պարտավորություններ				
Ցպահանջ ավանդներ				
- ՀՀ դրամ	684,632	12,00%	555,151	12,00%
Այլ պարտավորություններ				
- ՀՀ դրամ	262,029	0,00%	149,996	0,00%
- այլ արժույթներ	29,897	0,00%	104,115	0,00%
	976,558		**809,262**	

30. Ժամկետայնության վերլուծություն

Աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը առ 31 դեկտեմբերի 2006թ.: Քանի որ Բանկի ֆինանսական գործիքների մեծ մասն ունի հաստատագրված դրույքներ, պայմանագրային մարման ժամկետները ներկայացնում են նաև պայմանագրային տոկոսադրույքի վերանայման ամսաթվերը:

հազար ՀՀ դրամ

	Մինչև 1 ամիս	1-ից 3 ամիս	3 ամսից 1 տարի	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	Անժամկետ	Ընդամենը
Ակտիվներ							
Դրամական միջոցներ	491,363	-	-	-	-	-	491,363
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	79,893,876	122,392,337	80,914,902	-	-	-	283,201,115
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	646,928	24,047,559	27,982,003	20,791,358	5,973,103	-	79,440,951
Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր	3,358,937	217,775	4,500,000	7,213,590	-	-	15,290,302
Վաճառքի համար մատչելի ակտիվներ	89,043	5,757,808	30,028,626	2,341,381	-	2,389,678	40,606,536
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	5,117,455	-	-	-	-	-	5,117,455
Այլ ակտիվներ	223,726	-	-	-	-	-	223,726
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	**89,821,328**	**152,415,479**	**143,425,531**	**30,346,329**	**5,973,103**	**2,389,678**	**424,371,448**
Պարտավորություններ							
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	-	-	-	-	-	226,841,135	226,841,135
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	63,272,626	146,251	1,693,225	-	-	-	65,112,102
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	121,226,714	-	-	-	-	-	121,226,714
Թողարկված պարտքային արժեթղթեր	5,368,761	19,122,684	14,496,391	-	-	-	38,987,836
Այլ փոխառություններ	14,310	-	-	233,022	7,795,761	-	8,043,093
Այլ պարտավորություններ	896,608	19,242	-	-	-	-	915,850
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**190,779,019**	**19,288,177**	**16,189,616**	**233,022**	**7,795,761**	**226,841,135**	**461,126,730**
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2006 թ.	**(100,957,691)**	**133,127,302**	**127,235,915**	**30,113,307**	**(1,822,658)**	**(224,451,457)**	**(36,755,282)**
Զուտ դիրքը առ 31 դեկտեմբերի 2005 թ.	15,545,438	43,656,957	44,016,594	7,148,901	25,730,893	(155,274,723)	(19,175,940)

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

31. Արժութային զամբյուղ

Աղյուսակում ներկայացված է ակտիվների և պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների 2006թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	Անգլիական ֆունտ ստեռլինգ
Ակտիվներ				
Դրամական միջոցներ	-	488,856	2,408	-
Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ	-	177,486,536	63,695,727	33,837,822
Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում	-	50,029,384	14,708,355	1,383,044
Վարկեր և այլ պահանջներ	15,290,302	-	-	-
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	19,171,500	12,493,077	1,216	8,940,743
ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ	-	-	-	-
Հիմնական միջոցներ	7,061,116	-	-	-
Ոչ նյութական ակտիվներ	70,484	-	-	-
Այլ ակտիվներ	566,507	8,631	157,509	-
Ընդամենը ակտիվներ	**42,159,909**	**240,506,484**	**78,565,215**	**44,161,609**
Պարտավորություններ				
Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ	226,841,135	-	-	-
Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ	39,301,849	21,407,382	4,402,357	-
Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ	61,532,562	206,972	-	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	38,987,836	-	-	-
Այլ փոխառություններ	-	-	8,043,093	-
Այլ պարտավորություններ	946,660	19,242	2,469	-
Ընդամենը պարտավորություններ	**367,610,042**	**21,633,596**	**12,447,919**	**-**
Զուտ հաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2006թ.	**(325,450,133)**	**218,872,888**	**66,117,296**	**44,161,609**
Զուտ արտահաշվեկշռային դիրքը առ 31 դեկտեմբերի 2006թ.	**-**	**28,801,365**	**(14,721,874)**	**(1,355,374)**
Զուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2006թ.	**(325,450,133)**	**247,674,253**	**51,395,422**	**42,806,235**
Զուտ հաշվեկշռային և արտահաշվեկշռային դիրքերը առ 31 դեկտեմբերի 2005թ.	**(263,139,913)**	**168,165,252**	**53,825,084**	**44,028,271**

Անգլերեն լեզվով պատրաստված փաստաթղթի թարգմանություն: Տես՝ թարգմանության ծանուցում, էջ 111:

հազար ՀՀ դրամ

Ընդամենը	Այլ արժույթներ	ՌԴ ռուբլի	ՀՓԻ	Ճապոնական իեն
491,363	99	-	-	-
283,201,115	30,068	8,141,533	-	9,429
79,440,951	1,889,334	-	-	11,430,834
15,290,302	-	-	-	-
40,606,536	-	-	-	-
5,117,455	-	-	5,117,455	-
7,061,116	-	-	-	-
70,484	-	-	-	-
732,755	108	-	-	-
432,012,077	**1,919,609**	**8,141,533**	**5,117,455**	**11,440,263**
226,841,135	-	-	-	-
65,112,102	514	-	-	-
121,226,714	-	-	59,487,180	-
38,987,836	-	-	-	-
8,043,093	-	-	-	-
976,558	5,598	-	2,589	-
461,187,438	**6,112**	**-**	**59,489,769**	**-**
(29,175,361)	**1,913,497**	**8,141,533**	**(54,372,314)**	**11,440,263**
-	**(1,398,062)**	**-**	**-**	**(11,326,055)**
(29,175,361)	**515,435**	**8,141,533**	**(54,372,314)**	**114,208**
(12,634,237)	**34,982**	**55,090**	**(15,603,003)**	**-**

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Բանկի շենքերը և սարքավորումները ապահովագրված չեն: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց՝ Բանկի տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասի արդյունքում: Քանի դեռ Բանկը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Բանկի գործունեության և ֆինանսական վիճակի վրա: